Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

Վ. ՓԱՓԱԶԵԱՆ

ՊԱՏՄՈՒԱԾՔՆԵՐ

ԹՈՒՐՔԱՀԱՅԵՐԻ

ԿԵԱՆՔԻՑ

1904

Տպարան Մ. Վարդանեանցի Դանովսկ. № 3.

ԹԻՖԼԻՍ

891.99
Փ-31

891.99
Փ-31 1-2
-6 NOV 2011
20 06 09
04 OCT 2010

ՊԱՏՄՈՒԱԾՔՆԵՐ

ԹԻՒՐՔԱՀԱՅԵՐԻ ԿԵԱՆՔԻՑ

Փ-31

1904

Տպարան Մ. Վարդանեանցի, Գանովսկ. № 3.
ԹԻՖԼԻՍ

29.08.2012

60047

1904 года.

4866-2010

Լ. Փափազյան

Այս գրքի մէջ ամփոփուած պատմուածքներից նրանք, որոնք տպուած են եղել զանազան թերթերի կամ այժմ բոլորովին սպառուած գրքոյկների մէջ, ենթարկուած են գրէթէ հիմնական բարեփոխութեան, իրեն—հեղինակի ձեռքով։

Պատմուածքները դրուած են ոչ թէ գրելու ժամանակի, այլ պատմական դիպուածների, թիւրքահայերի կեանքի մէջ տեղի ունեցող փոփոխութիւնների կարգով։ Այսպէս, առաջին պատմուածքը ներկայացնում է թիւրքահայոց կեանքը սրանից 20 տարի առաջ—80-ական թւականներին և վերջինը—նրանց կեանքը այն տարիներում, երբ հեղինակի հայրենիքը արեան ծով էր դառնում և աւերակների կոյտ…

Հրատարակիչներ.

ԲԱՐԻ ՄԱՐԴ

I.

Ամառը տերևախիտ ոստերով և ձմեռը ձիւնով ծանրաբեռնւած ծառերը մեծ գեղեցկութիւն են տալիս Վանի Խաչփողան լայն փողոցին, որ սկսւում է քաղաքադռնից և ամբողջ Այգեստանը կտրելուց յետոյ, գնում հանգում է Ցանկոյների ձորակին։

Լայն փողոցի երկու կողքերին գտնւում են քաղաքի ամենագեղեցիկ շէնքերը, որոնցից շատերը, մինչև Խաչփողանի հրապարակը, պատկանում են հայերի· այնուհետև մինչև Նէմէն-աղայի աղբիւրը խառն կերպով՝ թէ տաճիկների և թէ հայերի։

Նէմէն աղայի աղբիւրից ոչ-շատ վեր, այնտեղ, ուր վերջանում է վերջին հայի տան սահմանը, փռւում է դէպի աջ մի փողոց, որ տա-

նում է ս. Յակովբ եկեղեցին։ Իր սկզբում այդ փողոցն ունի մի բոլորովին նոր շինած երկյարկ շքեղ շէնք։

Այդ տունը սրանից տարիներ առաջ պատկանում էր մի ինչ որ աղա Թիւրքի, սակայն տարեկան 25 ոսկիով վարձել նստել էր «Շէրիյը շէրիֆի» ատենի նախագահ Ջէֆէր բէյը։

Վերի յարկը նրա հարեմխանան էր. դա իմացւում էր փողոցից անգամ, որովհետև լուսամուտները ծածկւած էին մանր տախտակեայ ցանցերով։ Ցածի յարկը բէյի ընդունարանն էր, որի մօտ և ծառաների սենեակը։ Բայց որովհետև ծառաների սենեակը սաստիկ ցուրտ էր լինում, դրա համար էլ քիւրդ Մէհմէդ-չաւուշը թողել էր նրան և փաթաթւած թաղեայ վերարկուի մէջ, գլորւել քնել էր ուղղակի ընդունարանի յատակի թանձր գորգերի վրայ։

Հայաստանում թէ գիւղացին և թէ քաղաքացին ուշ չէ զարթնում քնից. աղօթարանը բացւելուն պէս ամեն ոք ոտքի վրայ է, կերել է իր կերակուրը և դուրս է եկել գործի գնալու. տան մէջ այլ ևս քնած մարդ չէ գտնւում, եթէ միայն չը կան կամ մայրաքաղաքցիներ և կամ այնտեղից սովորութիւններ բերած անձեր։

Ջէֆէր-բէյը պօլսեցի էր. նրա կինն էլ էր պօլսեցի. երկուսն էլ քնած էին դեռ. արևը ծագել էր քիւրդ Մէհմէդը երեսը լւացել, նամազը կատարել և ընդունարանի վառարանի մօտ չոքած

ծխում էր, երբ յանկարծ դուռը մեղմութեամբ բաղխեցին։ Մէհմէդը չիբուխը գետին դրեց, աջ ձեռքը քսեց երեսին և փողոցի դուռը բաց արաւ։

Դռան մօտ կանգնել էր մի կին. հայ կին էր, որովհետև վրայի ծածկոցը սպիտակ էր։ Մի երկար կարմիր շալիկ և նրա վրայ մի սպիտակ կարճ սաւան, որ հազար կարկատան և հազար ծակ ունէր իր վրայ—ահա նրա հագուստը. իսկ թէ այդ երկար կարմիր շալկի տակ ունէ՞ր նա հագուստ և կամ մերկ մարմի՞նն էր—այդ դժւար է ասել։

Միջահասակ էր, դեռ երիտասարդ, բաւական սիրուն, սակայն նիհար և տխուր խորշոմներով դէմք ունէր. աչքերը ուռած, կարմրած և կոպերը մեծացած, այտերը, քիթը ցրտից սևացած, իսկ ծնօտը անտեսանելի էր, որովհետև ծածկւած էր սպիտակ «եաշմաղի» տակ։ Դողում էր ցրտից և վեր ու վար էր անում ոտները, որ պատսպարւած էին մի զոյգ այնպիսի կօշիկներով, որոնցից հնակարկատների մօտ անգամ դժւար կարելի էր գտնել. ոչինչ չէր մնացել նրա վրայ բացի վզի մաշւած կաշիից, տակի ծակ գոմէշի մորթից և երեսի՝ ցանցի պէս ծակ-ծակ շորի կտորից։—Մի զոյգ եւրոպական կօշիկներ էին՝ երեսը շորից. յայտնի չէ թէ որտեղից ձեռք էր բերել, միայն վանեցիք մի քանի տարուց ի վեր էր, որ Արմաղանին (այդ էր կնոջ անունը) այդ կօշիկներով էին տեսնում։ Ո՞վ գիտէ այժմ ո՛ր

փողոցի անկիւնում ընկել մնացել են այդ անբաղդ կօշիկները։

Քիւրդ Մէհմէդը հէնց որ դուռը բաց արաւ, Արմաղանը ներս սլացաւ նախադաւիթը, ոտները շարժելով դէն ձգեց կօշիկները, ցեխոտ և ծակ գուլպաները մի քանի անգամ քսմսեց դռան առջև փռած փսիաթի վրայ ու սլրդեց դէպի ընդունարան։

Մէհմէդը փողոցի դռան մօտ ապշած՝ նրան էր նայում։ Դուռը փակեց, գլուխը շարժեց և ինքն էլ մտաւ ընդունարանը։

—Որի՞ն ես ուզում, ա՛յ կնիկ, հարցրեց նա Արմաղանին, որ առանց այլ և այլութեան մօտ էր քաշել մի բազկաթոռ և վառարանի առջև նստած՝ ձեռքերն ու ոտքերն էր տաքացնում։

—Բէյին եմ ուզում. ասաց նա։

—Քնել է բէյը։

—Կը սպասեմ։

—Ուշ կը զարթնի։

—Կը սպասեմ։

—Զարթնելուց յետոյ նամազ կանի։

—Կը սպասեմ։

—Յետոյ սուրճ կը խմի։

—Կը սպասեմ, կը սպասեմ, կը սպասեմ… Հասկանո՞ւմ էք, մարդի՛կ, Արմաղանը վեց տարի է, որ սպասելուց բացի ուրիշ ոչինչ գործ չունի։ Սպասում է նա փողոցից սկսած մինչև փա-

շայի տան պատերի տակ… Ես սովորել եմ սպասել։ Այժմ էլ կ՚սպասեմ։

—Ի՞նչ գործ ունես բէյի հետ. հարցրեց Մէհմէդը։

—Չեմ ասի։ Հիմա ես վախենում եմ բոլորին պատմելու, որովհետև ծիծաղում են վրաս… Բայց չէ՛, եթէ ուզում ես իմանալ, քեզ էլ կասեմ… Ամենքն էլ գիտեն, հասկանո՞ւմ ես, ամենքն էլ… Անցեալ օր քիւլհանչի Ալին ծիծաղում էր ինձ վրայ և իր հնոցի մօտ նստած՝ ընկերներին պատմում էր իմ մասին… Ամենքն էլ գիտեն և ծիծաղում են։ Դու էլ չե՞ս ծիծաղում։

—Խենթ է. մռմռաց քիւրդը ետ-ետ քաշուելով։

—Տեսա՞ր… այժմ դու էլ ինձ խենթ կոչեցիր. ինչ, կարծում ես կը բարկանա՞մ. ո՛չ. Գօղոն էլ այդպէս է կոչում ինձ, ղասաբ Օմարն էլ, քրդի լամուկներն[1]) իսկ և այժմ էլ դու… Ես խե՞նթ եմ, հա՞… Ինձ խե՞նթ էք կոչում, երբ հացս եմ ուզում ձեզնից։

—Այ կնի՛կ, ընդհատեց նրան քիւրդը—տաքացար, այժմ ելիր և գնա. բէյին տեսնել դժուար է այսօր։

—Այդ ես հասկանում եմ. ժպտաց դառնութեամբ կինը—գիտեմ ինչ ես ուզում ասել. սովորել եմ հասկանալ. փո՞ղ ես ուզում, հա՞… էլ չը

[1]) Լակոտներ։

մնաց. ինչ որ ունէի տւի, մուրացի տւի… Ա՛յ, եթէ կուզես այս գուլպան, էն էլ քեզ տամ։

Քիւրդը զարմացած Արմաղանին նայեց։

—Ի՞նչ կայ, ծիծաղեց Արմաղանը—Սատըք էֆէնտիի ծառային ճանաչո՞ւմ ես. ամեն անգամ որ ինձ ներս էր թողնում, կամ գլխիս շորը, կամ շապիկս էր պահանջում… չը լի՞նի դու էլ այդպէս ես… Ծառաների համար իմ կաշառքս դըրանից այն կողմը չէ անցնում։ Զէ՞ս ուզում, ետ եմ քաշւում… կաշառք չէ՞ս ուզում… Դու իմ ճանաչած ծառաների մէջ մի հատիկ ես։ Ուրեմն առանց կաշառքի թո՞յլ ես տալիս որ բէյի հետ խօսեմ։

—Նստիր որքան կուզես։

—Եւ բէյին էլ իմաց կը տա՞ս։

—Կասեմ։

—Շնորհակալ եմ… Բայց բաւական յիմարն ես եղել։

—Ե՞ս յիմար։

—Դո՛ւ… Այդ պաշտօնի մէջ միթէ՞ յիմարութիւն չէ կաշառք չը սիրելը… Ես կը սպասեմ բէյին։

Ասաց Արմաղանը, գլուխը կրծքի վրայ կախեց, ուռած ու ճաքճքած ձեռքերով ծածկեց դէմքը և անշարժ մնաց։

II.

—Հ՛ը, Էլի եկար… ա՜յ կնիկ. ես քեզ քանի անգամ ասացի, որ դա իմ գործը չէ, ես չեմ կարող խառնւել այդպիսի բաների մէջ։

—Ոտացդ մեռնեմ, Սահակ աղա, ձեռքդ պագնեմ…

Այդպէս էր աղաչում Արմաղանը Արարուց վարժապետ Սահակ էֆէնդիին, որ դէմքը մռայլած, չէր էլ մտածում բարձրացնել իր ոտքերի առջև փռւած խեղճ կնոջ։

—Չէ՛, շարունակեց Սահակը յուզմամբ—ես ի՞նչ անեմ ու գլուխս սաղ-սաղ՝ աւետարանի տակ դնեմ. ինչպէս ասում ես, փաշան ու քոմիսէրները… [1]) ոչինչ չը կարողացան անել իրանց կնքած թղթերով։

—Թէ կնկանդ արևը կը սիրես. լալիս էր Արմաղանը առանց արտասուքի—մեռայ ես անտէր, անտուն ու փողոցները թափառելով. վրաս հալ չի մնացել, ոտքերս ու ձեռքերս փայտ են դարձել ցրտից, աղջիկս անօթութիւնից սրա-նրա

[1]) Շատ տարիներ առաջ Վան իբր քննիչներ եկել են մի քանի փաշաներ, ի թիւս որոց և մի հայ՝ Ադաբէգեան։ Այդ փաշաներին կոչում են քոմիսէր փաշաներ։

դուռն ընկել՝ հաց է հաւաքում... Մի անգամ լաւութիւն արել ես, մէկ էլ արա, թէ քո պստիկիդ արևը կը սիրես...

Սահակ էֆէնդին, որ մի երկարահասակ երիտասարդ էր, ընչացքի ծայրը ոլորելով, ճակատը կնճռած՝ սկսեց ճեմել սենեակի մի անկիւնից դէպի միւսը։

Այդ խօսակցութիւնը կատարւում էր վարժապետի տան ընդունարանում, որ կահաւորուած էր տաճկական ձևով—մի սադիր [1]) սենեակի վերին կողմում, լուսամուտի մօտ, պատերի տակը կապերտներ փռած, լուսամուտները կարմիր կտորով վարագուրած, սենեակի մէջ տեղում թիթեղեայ վառարան, նրա մօտ երկաթեայ ծանր կրակարանը, փոքր ինչ հեռու մի հին սեղան, և մի քանի աթոռներ դրած այս—այն կողմը։

—Լսի՛ր, Արմաղան, ասաց վարժապետը կանգ առնելով դռան մօտ չոգած կնոջ առջև—Աշխարքը գիտէ որ այն տունը քոնն է և Պետրոս աղայից էլ կարող ես ետ առնել· բայց ախր դու իզուր ես նրա օձիքից բռնել· նա այդ գործի մէջ շատ մեղաւոր չէ։

—Ախ չէ, գոչեց Արմաղանը բոցափայլ աչքերով—այդպէս չէ, ոտացդ հողն եմ· Պետրոս աղային դու լաւ չես ճանաչում։ Իմ տունս 20 ոսկի՞ արժէ, որ նա քսան ոսկիով է առել և

[1]) Օթոց։

այժմ էլ չէ ամաչում վկայութիւն տալու թէ տունը քարուքանդ էր ու քսան ոսկի էլ չարժէր, թէ Մուխսի Մանուկը ինձ մի կոպէկ էլ պարտ չի... Ինչ որ անում է՝ Պետրոս աղան է անում։ Թաղում լուր է տարածել թէ Արմաղանը գժւել է և թիւրքերին է ծախում իրեն...

—Իսկ Մուխսի Մանո՞ւկը· հարցրեց Սահակը։

—Է՛ն, էն անաստւածը... Ես նրա պատանքը կարեմ, ես նրան սև հողի մէջ դնեմ... Երեկ իրիկուն լուր էր ուղարկել թէ «Արմաղա՛ն, աղջիկդ առ ու արի ինձ մօտ, խեղճ ես, բան պիտի յայտնեմ քեզ»։ Ելայ գնացի· ինձ տարաւ վերի օդէն ու ասաց· «Արմաղա՛ն, ինչ կը տաս, էնպէս անեմ, տանդ կէսը քեզ ընկնի»·—Ի՞նչ պիտի տամ, էլ ինչ ունեմ, որ ինչտամ։—Է՛հ, ասաց նա ծիծաղելով—դու արդէն ծերացել ես, բայց այ, աղջիկդ...» Քիչ մնաց ուշքից գնայի· էլ բան չը թողի՝ ասացի։ Ծառաներին կանչեց ու հրամայեց, որ ինձ իբր զրպարտողի՝ դուրս գցեն տնից... Ես էլ աղջկաս ձեռքից բռնեցի ու դուրս եկայ փողոց, դռան մօտ կանգնեցի, բերանս բաց արի և ասացի ինչ որ պէտքն էր։ Ինձ խենթ կոչեցին· անցորդները գոռում էին՝—«Խենթ կնիկ, կորիր էդ մարդու տան առջևից, ինչու ես այդպէս անպատիւ խօսքեր ասում այդ պատւաւոր աղային»... Խորեմ ես նրա «պատւաւոր» գլուխը... Երբ անցորդներին պատմեցի Մուխսի Մանուկի արածը, քիչ մնաց ինձ կը-

տուտէին թէ՝ ես ինչպէս էի համարձակւում մի այդպէս «Աստծու մարդու» վրայ զրպարտութիւններ անել…

—Թիւ, թքեց Սահակը միջահատելով նրան —Եւ դեռ ևս մենք, յիմարներս, ստիպուած գըլուխ ենք ծռում այդպիսիների առջև…

—Հա՛, քեզ ղուրբան, գոչեց Արմաղանը—դէհ, այժմ ես ինչ անեմ, դու ասա, ոտներիդ տակը մեռնեմ. է՛, ինչ անեմ… Սկսած ծառայից, մինչև փաշային՝ տուի փողերս, աղաչեցի, ոտներն ընկայ։ Էսօր էլ Ջաֆար-բէյին գնացի. կընիկը իմացել էր, հասկացել էր, թէ իր մարդն ինչ վարձով է ինձ օգնում, քիչ մնաց սպանել տար։ Հազիւ փախայ… Մի խելք սովորցրու ինձ, խելքիդ ղուրբան, Սահակ աղա. մի անգամ լաւութիւն արել ես, մէկ էլ արա. Աստուած քեզ նայում է վերևից, նա հասկանում է ինձ, նա կը փոխարինէ քեզ…

Եւ սկսեց լալ Արմաղանը։ Արտասուք չէր թափում—արտասուքը վաղուց էր որ ցամաքել էր. նրա փոխարէն արիւնով լցւում էին աչքերը. հեկեկում էր խռպոտ կերպով, դէմքն ուռչում էր, կարծես սիրտը պոկ էր գալիս իւրաքանչիւր հեկեկումի հետ… Աւելի մի կատաղածի էր նմանում, քան լացողի։

—Հանգստացի՛ր, կնի՛կ, բացագանչեց Սահակը կոկորդը ղառնացած և փղաքշելով այդ կատաղի լացից—Հանգստացի՛ր։ Աստուած էլ գիտէ,

որ այս բոպէիս ձեռքիցս եկածը չեմ խնայիլ քո այդ սոսկալի լացը վերջացնելու համար. Չը նայելով որ ընտանիքիս և իմ ապրուստը այդ անօրէններից է կախուած, կանեմ ամեն ինչ- եթէ ձեռքիցս գայ։ Բայց—հաւատացի՛ր, խեղճ կին, որ ձեռքիցս ոչինչ չի գալ։ Դու ինքդ տեսար որ ձեռքիդ եղած քօմիսէր փաշաների արդար վըճիռը միայն մի թեթև հեգնական ժպիտ գոյացըրեց դատաւորների դէմքերի վրայ… Բայց, - յարեց նա սենեակում մի պտոյտ գործելուց յետոյ կանգ առնելով Արմաղանի առջև—եթէ կուզես, ես այս բոպէիս կը նայեմ օրէնքի գրքերի մէջ և կասեմ թէ ո՞ր օրէնքով դու կարող ես տանդ տէր համարուել… Այ, յարեց նա պահարանից Դէստուրի մի հատորը հանելով—ես փնտռեցի և գըտայ մի օրէնք. լսի՛ր. Վ ա ս ի ա թ ո ւ թ ե ա ն [1]) օրէնքների մէջ կայ մի յօդուած, որ ասում է. եթէ «վ ա ս ի ն կամ վ է լ ի ն [2]) շռայլել- ոչնչացրել են որբի ժառանգութիւնը, նրանց երաշխաւորներից նա, ով կարող է, պիտի տուժէ, եթէ ինքը —վասին՝ ոչինչ չունի»… Արդ, քո վասիդ—Հաջի-Մանուկ աղան, հարուստ է և պարտաւոր է իրեն յանձնուած կայքը վերադարձնել քեզ… Այս օրէնքը կայ գրքերի, կայ փաստաբանների բերանի մէջ և երբեմն գործադրւում է բացառա-

[1]) Հոգաբարձական։

[2]) Հոգաբարձու։

պէս մայրաքաղաքի մէջ միայն. իսկ այս խուլ անկիւնում այդ օրէնքների բերանը ցեխոտող շատ կայ... Քո բանը չէ խթանի դէմ կուելը. գոնէ մի փաստաբան...

—Ոտացդ մեռնեմ, գոռաց Արմաղանը—վըրայիս շապիկն անգամ ծախեցի ու տուի էդ անխիղճ քօռ ու թօփալ փաստաբաններին. մինչև իսկ... այո՛, էն Նորաշէնայ Մարտիրոսը ինձնով զուարճացաւ. բայց ո՛չ ոք, բացի վնասից, բացի խայտառակութիւնից, ոչինչ չը տուեց ինձ. երեսիս կաշին պատռեցին այդ անօրէնները, ինձ թիւրքերի ճանկը ձգեցին մի հասարակաց կնոջ պէս... ինձ սպանեցին... Ես այդ բոլորը յանձն առի աղջկանս համար, նրան անօթի թողի, անօժիտ չը թողնելու, նրան էլ իմ օրիս չը հասցնելու համար. ես աղջկանս սուրբ և կուշտ պահելու համար զոհեցի ամէնը... Էլ ի՞նչ մնաց ինձ տալու. Աստուած իմ, Աստուած իմ, ի՞նչ մնաց ինձ, հերիք է ինձ ցեխի մէջ թաթախես, հերիք է ինձ տանջես, անգո՛ւթ Աստուած...

Յանկարծ փողոցից մի ձայն ընդհատեց խեղճ կնոջ յուսահատ աղաղակը։ Այդ զուարթ սուր ձայնը կանչում էր.

—Սահա՛կ էֆէնդի, ա՛յ Սահակ էֆէնդի...

Սահակը դողաց, իսկ Արմաղանը կատաղած վեր ցատկեց։

—Հանդա՛րտ, դարձաւ նրան Սահակը—եթէ ներս գալու լինի՝ հեռացի՛ր. խայտառակութիւն

չը հանես, թէ չէ ինձ էլ ու ընտանիքս էլ կ՚անբաղդացնես։

Եւ մօտենալով լուսամուտին, բաց արաւ փեղկը, ստացաւ մի ժպիտ ու կռացաւ դէպի փողոցը։

Այնտեղ—փողոցի մէջ կանգ էր առել մի պատուական երկար մուշտակով, ալեխառն մօրուքով, կարմիր թշերով, վառ աչքերով ու զուարթ դէմքով յիսնամեայ անձ, որ ձեռքի բարակ փայտով ծեծում էր գետնի ձիւնը և երբեմն էլ կապում էր կարմիր ֆէսի վրայ փաթաթած հաստ մետաքսեայ եազմայի ծայրը։

—Հրամեցէք, Մանուկ աղա՛. գոչեց նրան Սահակը։

—Մենա՞կ ես. հարցրեց զուարթ ծիծաղով Մանուկ աղան։

—Այո՛, մենակ եմ։

—Հա՛, այսօր էլ խօ դպրոց չունիք. քէֆը ձեր քէֆն է. մի տօն մահանայ էք անում ու գալիս էք տաք սենեակում նստում... հա՛, հա՛, հա՛, սո՞ւտ եմ ասում։ Վարժապետութեան պէս հանգիստ ու հեշտ ի՞նչ արհեստ կայ... Գնա դպրոց, մէկ երկու աղայի կարդացուր, քէֆի համար էլ մէկ երկու աղայի ճղճղացուր, յետոյ արի տուն, ս օ բ ա ն [1]) վառիր, նստիր ու ամիսը լրանալուն պէս՝ ջնգջնգալէն փողը ստացիր։ Հա՛,

[1]) Վառարան։

հա՛, հա՛… Համաքը մէկ կողմը կենայ, ձեր արհեստի պէս հեշտ արհեստ չը կայ. երանի՜ ձեզ. ո՛չ ցաւ ունիք, ո՛չ դարդ. մեզ նման տասը փարայի ետևից էլ էս զիամաթին տասը ձիով չէք վազվզում։

Փողոցից այդ միջոցին անցնում էին երկու փաթթոցաւոր տաճիկներ։ Մանուկ աղան ընդհատեց խօսքը, բարևեց նրանց, քէֆերը հարցրեց և երբ հեռացել էին, նորից դարձաւ Սահակին, ծիծաղեց ու ասաց.

—Այ, էդ անօրէնները… քէֆը դրանցն է, որ մինչև երեկոյ ուտում, խմում են, իրանց սիրուն կնիկների հետ քէֆ քաշում. գործե՞րն ինչ է—ոչինչ. օրեկան երկու ժամ դատարանում նստում յօրանջում են, կամ տաքութիւնից քընում. դեռ չեմ հաշւում և այն, որ ուտած-փըքւած ման են գալիս չարշիում ու զւարճանում, տեսնելով թէ ինչպէս ամեն անցնող մինչև կէս մէջքը գլուխ է տալիս իրանց. խօսելիս էլ եթէ էֆէնդի են՝ բէյ են կոչւում, եթէ բէյ են՝ փաշայի տիտղոսին են արժանանում…

—Ցուրտ է այդտեղ, Մանուկ աղա՛. ընդհատեց նրան Սահակը—համեցէք վեր մի սուրճ էլ կը խմենք միասին։

—Ա՛յ սատանայ, ծիծաղեց Մանուկ աղան—երևի վախենում ես որ սենեակդ ցրտի բաց լուսամուտից։ Ես չեմ մըսում, առաւօտեան մի քանի հատ «ծերոց գաւազանով» փորս տաքացրել

եմ… հա՛, հա՛, հա՛։ Ի՞նչ արած, սկսում եմ ծերանալ. օղին էլ մեր գաւազանն է… է՛, խեղճ ես, կը մրսես, ներս գամ։ Դէհ, դու պատւիրիր որ մի լաւ ներգիլէ շինեն, մինչև ես էդ քո անիծած, երկար սանդուխքներից կարողանամ բարձրանալ։

Ասաց, ծիծաղեց, յետոյ ուշադրութեամբ զննեց փողոցից անցնողներին, բարևեց մի քանիսներին ժպիտով, ընդունեց ուրիշների բարևը հպարտութեամբ, երրորդի բարևին թեթև գլուխը շարժեց հեգնական ժպիտով և վերջապէս դիմեց դէպի դուռը, մուշտակի քղանցքը ժողվեց ու ներս մտաւ։

Իսկ Սահակն այդ միջոցին փակեց լուսամուտը և պատրաստւեց միւս սենեակն անցնելու, երբ տեսաւ որ սենեակի դռան առջև դեռ ևս նոյն դիրքով նստած՝ մնացել էր Արմաղանը։

—Վա՛հ, գոչեց նա վախեցած—դեռ դու այստե՞ղ ես… շո՛ւտ, շո՛ւտ անցիր միւս սենեակը—կնոջս մօտ. այժմ այլ ևս դուրս գնալ չի լինիլ։

Արմաղանը ծանրութեամբ բարձրացաւ, սրբեց—տրորեց կարմրած աչքերը և հրելով կողքի դուռը, մտաւ միւս սենեակը։

—Ասա երկու սուրճ ու մի լաւ ներգիլէ պատրաստեն. գոռաց նրա ետևից Սահակ վարժապետը։

III.

Լուեցան ծանր ոտնաձայներ և յետոյ Մանուկ աղայի ձայնը։

—Վա՜հ, տնաշէ՛ն, մռմռում էր նա բարձրանալով —էդքան էլ երկար սանդուխք կը լինի. էս խօ արքայութեան քիչ մնաց։

Եւ դուռը հրեց ու սկսեց կրկնակօշիկները հանել։ Սահակը շտապով ուղղեց սաղիրի սպիտակ շորը ու մի քաղցր ժպիտով դիմաւորեց նրան։

Սակայն Հաջի-աղան դուռը հրած, կրկնակօշիկը հանած, կիսովին կանգ առնելով շէմքի վրայ, դիտում էր գետնին ընկած մի զոյգ քրքրուած կօշիկները։ Նա իսկոյն ճանաչեց այդ ցեխոտ ու հազար տեղից ծակ կաշիների գլնդերը։ Դէմքը կնճռած կանգ առաւ, մի «հը՛մ» արձակեց ու սկսեց մտածել թէ ի՞նչ գործ պիտի ունենար Արմաղանը Սահակ վարժապետի տան մէջ. Սահակ վարժապետի, որը գոնէ ամուրի էլ չէր...—«Հըմ—մտածեց նա—ջահիլ է, Արմաղանն էլ դեռ վատ պառաւ չէ... Բայց ախր վարժապետի կինը շա՜տ սիրունն էր. տեսել էր նրան եկեղեցում. մեծ-մեծ սև աչքեր ու կարմիր թշեր ունէր. խօ գիժ չէ՞ր վարժապետը, որ իր «խուրնի-խրեղէն» 1) կինը թողնէր ու Արմաղանի

1) Հուրի-հրեղէն։

տանից ընկնէր... Չէ՛, այստեղ մի ուրիշ բան կը լինէր...

—Ինչո՞ւ էք կանգնել ցրտումը, հաջի-աղա, ասաց վարժապետը նրան—Այդ ի՞նչի՞ն էք այդպէս նայում ու մտածում։

Եւ մօտ գնաց ու կամենում էր տեսնել թէ հաջին ի՞նչի՞ն էր նայում։

—Ոչի՛նչ, ոչի՛նչ. թոթովեց հաջին շտապելով ներս գալ ու դուռը տանից փակել—ձեր կատուին էի նայում. շատ սիրունն է...

—Կատո՞ւ. մենք կատու չունենք։

—Հա՜, ասաց հաջին առանց կարմրելու—ուրեմն դրացիի կատուն կը լինէր... Է՛, բարև վարժապետ. քէ՞ֆդ—հա՞լդ. լա՞ւ ես խօ...

Ասաց, ուղղակի քայլեց դէպի սաղիրը, բարձրացաւ նրա վրայ, մուշտակի երկար քղանցքները ծնկների տակն առաւ, նստեց դերձակի պէս ու մէջքը տուաւ անկիւնի բարձին։

—Է՛, շարունակեց նա գրպանից հանելով քէհրիբարի երկար մի մեղեսիկ—ասա տեսնենք, ի՞նչ նոր լուր կայ դէսից—դէնից... Հա՛, ներգիլէ՞դ ուր է։

—Հիմա կը բերեն։

– Աստուած տունդ աւիրի 1), ծիծաղեց հաջին – որ կնիկդ տանը չէ, ո՞վ պիտի պատրաստի ներգիլէն. փոքր եղբա՞յրդ։

—Ինչի՞ց իմացաք որ կինս տանը չէ. հարց-

1) Մի ոճ է։

րեց զարմացած վարժապետը—տանն է ու հիմա էլ ներգիլէն ու ղահուէն կը բերեն։

—«Հը՛մ, խօսեց ինքն իրան հաջին—սուտ էլ ասես՝ կը լինի, որովհետև Արմաղանն էլ կարող է ներգիլէ ու սուրճ պատրաստել։

Բայց այդ միջոցին կարծես ջրելու համար նրա այդ կեղտոտ մտածութիւնը, դրացի սենեակից լսւեց մի սուր ճիչ, որին և հետևեց մանկական լացի ձայն։

Հաջիի դէմքը փոխուեց և փոխանակ կարմրելու՝ կնճռոտուեց։

—Պատի՞կդ է, հարցրեց նա—ի՞նչ սուր ձայն ունի... Եւ իսկոյն մտածեց«—ուրեմն ինչ գործ ունի այստեղ Արմաղանը. մինչև որ չիմանամ, ոտքս դուրս չեմ դնելու այս տանից»...

—Այո՛, ժպտաց վարժապետը—շատ լալկան է, մօրը շատ նեղութիւն է տալիս, իսկ ինձ էլ չէ թողնում քնելու։

—Ի՞նչ կայ, հեգնեց հաջին—դու էլ ջիգրը դպրոցումն ես հանում, ուր ով գիտէ մինչև երեկոյ քնում ես։

—Ե՞ս, ծիծաղեց վարժապետը - ո՞վ է լսել որ Սահակը դասի ժամանակ քնի։

—Լա՛ւ, լա՛ւ, ի՞նչու ես նեղանում, ես հանաք արի։ Հանաք էլ որ չանեմ, ի՞նչ կայ. քնելը մե՞ղք բան է։ Մինչդեռ աշակերտները կը գրաղւեն դաս սերտելով, դու էլ քնիր, ի՞նչ կայ։ Չը քնես՝ ի՞նչ պիտի անես. խօ պարապ չե՞ս նստելու

և ճանճ կուլ տաս... հա՛, հա՛, հա՛։ Սկի չե՞ս ասում թէ այժմ ձմեռ է, ճանճ ո՞րտեղից կը լինի... Բացի դրանից, դասարանն էլ լաւ տաք կը լինի, ի հարկէ մարդու քունը կը տանի։ Ապա ի՞նչ անի հաջի Մանուկ աղան կամ ուրիշները, որոնք էս ցրտերին օրը քսան անգամ քաղաք են գնում—գալիս։ Մենք էլի լաւ ենք, քիւրք ունենք, սաքօ [1]) ունենք. ապա էն խեղճերը, որ սկի մէկ լաւ շոր չունեն, նրա՞նք ինչ անեն. օրինակ... էդ ծուռ Արմաղանը... Խօ գիտե՞ս, էն գիժ կնիկը...

Եւ լռեց ու մի սուր ակնարկ ձգեց վարժապետի դէմքին։

—Գիտեմ. ասաց վերջինս փոքր ինչ կարմրելով։

—Ա՛... մտածեց հաջի-աղան—կեցիր տեսնենք ի՞նչու կարմրեց։

Եւ շարունակեց բարձր ձայնով.

—Ո՞վ չէ իմանում որ Արմաղանը խենթ է, ջադդի ծուռ է [2])։ Նրա մանգալը, խօսելը, նրա շորերը—բոլորը վկայում են որ նա խենթ է... Բայց, չէ՞ որ խենթն էլ գիտէ ցուրտը. բաս ի՞նչ անի խեղճը... Քանի անգամ կինս կանչել՝ իր շորերից հագցրել է նրան. ես էլ (լաւ չէ ասելը, բայց խօսք եկաւ՝ նրա համար եմ ասում) կանչել փող եմ տուել, հրամայել եմ որ նրան հաց տան ուտելու, տեղ տան քնելու, որովհետև ա-

---

[1]) Վերարկու։

[2]) Փողոցային խենթ։

տում են, որ տան վարձ չէ կարողանում տալ՝ դուրս են ձգում... Այդ ես անում եմ։ Ի հարկէ պիտի անել, Աստծու ծեծածն է, պիտի պահել — պահպանել... Է՛հ խեղճ կնիկ։ Մի հասած աղջիկ էլ վզին է ընկել. տեսնես մէկ... Մեր թաղումն էն լինում շատ անգամ. մտն են գալիս փողոցները, ձեռքեր—ոտները ցրտից ուռած – կապտած, դողում են... Ոչ ոք էլ չէ խղճում էդ թշուառներին։ Էլի մերոնք են նրան կանչում տաքացընում, տաք կերակուր են տալիս. ես էլ հրամայում եմ որ օգնեն նրան, խեղճ է... Ի՞նչ անեմ, սիրտս փուխր է, չէ դիմանում այդպէս խեղճութիւններ տեսնելով... Խե՜ղճ, խե՜ղճ կնիկ...

Եւ ճկոյթի ծայրով սրբեց իսկապէս թրջուած աչքերն ու գլուխը կրծքի վրայ կախելով՝ շարունակեց մեղեսիկի հատերը ձգել։

Սահակը նոյնպէս գլուխը կախեց, որպէս զի հաջի-աղան չը նկատի իր գունաթափ դէմքը։ Արիւնը եռ եկաւ, քիչ մնաց բերանը բանար ու մի լաւ լւանար այդ հրէշին, բայց մտաբերելով, որ հաջի-աղան իր հոգաբարձուն էր, իր ռոճիկ տուողը և եթէ կուէր նրա հետ, պիտի քաղցած մնար իր ընտանիքը՝ ճիգ գործեց, դառնացած կոկորդը թրջեց թուքով և նկատելի չանելու համար իր շփոթութիւնը, գոռաց դէպի միւս սենեակը.

—Շուտ արէք, ո՞ւր է ձեր ներգիլեն։

Դուռը բացւեց, վարժապետի փոքր եղբայրը ներս բերեց ներգիլէն և յետոյ մի փոքրիկ ափսէի

վրայ դրած երկու ֆինջան սուրճ, որոնցից մէկը հաջի-աղան առաւ, իսկ միւսը վարժապետը։

—Հա՛, շարունակեց աղան՝ շառաչմամբ ծըծելով սուրճը—էն էի ասում... Էդ Արմաղանը գիժ լինելը խօ գիժ է, բայց արի տես, որ ա դ ա բ ս ը զ [1]) էլ է։ Հալա էն մէկ կողմը մնայ, որ օրը մինչև երեկոյ թիւրքերի տներում քարշ է գալիս։ Էդ մէկ կողմը։ Չէ ամաչում ու փողոցներն ընկած՝ պատւաւոր աղաների վրայ ինչե՜ր ասես չէ խօսում։ Օրինակ հէնց ինձ համար. գոռում է թէ ես եմ խլել նրա ձեռքից տունը։ Ծօ, ես ղալա՞թ արի, որ նրա մարդու մեռած ժամանակ, թաղականների այնքան աղաչանքներից յետոյ, սախլւեցի վ ա ս ի ո ւ թ ի ւ ն ը [2]) վրաս առնել... Ո՛չ բարով յանձն առնէի։ Մէկ փարայ չունէր, մէկ աւերած – քարուքանդ տուն էր բոլոր կայքը. էն էլ քան ոսկի հազիւ կարողացայ ծախել ու իրեն յանձնել... Հալա շատ ծախս էլ ջիբիցս է գնացել։ Էդ ծուռ ադաբսըզը, արաւ—չարաւ՝ ստիպեց մարդուն փախչել Ստամպօլ, ուր խեղճը ծանր աշխատանքից մեռաւ... Հիմա էլ եկել եախիցս բռնել է թէ տունը քան ոսկից աւել արժէր, ես աւելիով եմ ծախել ու կերել, ի՞նչ իրաւունքով եմ ծախել... ու հազար ու մէկ անամօթ ու ադաբսըզ այդպիսի խօսքեր...

—Այդ ո՞րն է նրա տունը. համարձակեց

[1]) Անամօթ։

[2]) Հոգաբարձութիւն։

հարցնել վարժապետ—Զալխիողանի Պետրոս աղայի նստած տունը չէ՞։

—Հա՛, հէնց նա է... Դու էդ տունը չես տեսել երբ շինուած չէր։ Խեղճ Պետրոս աղան 50–60 ոսկի ծախսեց մինչև որ տունը տուն դարձրեց. հիմա էլ ծուռ կնիկը եկել՝ ուզում է էն խեղճի ձեռքիցը խլի տունը. հա՛, հա՛, հա՛... ծուռ չէ բաս ի՞նչ է։

Վարժապետը նորից գլուխը կախեց և լեզուն կծեց։ Շատ լաւ գիտէր, որ այդ տունը երբէք նորոգուած չէր, այլ իր այդ դրութեամբ արժէր 100—150 ոսկի։ Նորից քիչ մնաց խօսէր, բայց զսպեց իրեն։

—Հէմ ծուռ է, հէմ աղաբալղ. շարունակեց հաջի-աղան տաքութեամբ.—բաւական չէ որ ինքը լրբացել է, հիմա էլ ուզում է աղջկան լրբացնել... աղաբալղ—անամօթ, թիւ... Ես առաջնորդարան քանի օր է չեմ գնացել. թող մէկ երթամ Պօղոս եպիսկոպոսին ասեմ, տես ինչպէս բերել տայ, ժամկոչի շալակը հանի, մի լաւ ծեծել տայ ու աղջիկն էլ խլի ձեռքիցը... Ծօ ախպէր, էն ո՞ր անամօթ մայրը լինի, որ իր աղջիկը ուրիշին ծախի... Թիւ, աշխարքումս էլ ոչ կրօն մնաց, ո՛չ ամօթ, ո՛չ պատիւ... Ա՛յ, քեզ մէկ բան ասեմ, թող մեր մէջ մնայ հա՛մ... Էդ անամօթը երեկ երեկոյ աղջկայ հետ եկել էր ինձ մօտ. ինչ առաջարկի, որ հաւնես... Թիւ, թիւ... Իսկոյն հրամայեցի որ դուրս գցեն տնից... Աղաբ-

ալղը տեսաւ որ ես իր սաածներիցը չեմ, ելաւ փողոցի դռան վրայ՝ ու Աստուած աղա՛տ... Ողջ թաղը թափեց գլխին, էլ բան չը թողեց՝ ասաց... Ծօ՛, աղաբալղ, ասա՛, ես քո գիտցածնե՞րիցն եմ... Տեսնո՞ւմ էք անամօթ, սև-կապած, սէվդի[1]) ծուռին... աղջկանն է ծախում... անամօթ դէլլը...[2]) ասում են ծուռ է։ Ծօ ինչն է ծուռ, աղաբալղ է, աղաբա՛լղ...

Վարժապետը նորից լեզուն կծեց, բայց այլևս չը կարողացաւ զսպել իրեն. ցատկեց նստած տեղից և արագութեամբ մտաւ միւս սենեակը, դուռը ետևից փակեց, մօտեցաւ կնոջ ու աղայի օրօրոցի մօտ նստած Արմաղանին, կռացաւ դէպի նա և ասաց զունաթափ դէմքով.

—Ե՛կ, Արմաղա՛ն, եկ լսիր թէ այդ հրէշը ինչե՜ր է ասում... Այնտեղ դռան ետևից լսիր... Բայց տես, ներս չը գաս, թէ չէ տունս կը քանդես։

Յետոյ երկու անգամ յուզմամբ մի անկիւնից միւսը գնաց, բեխերի ծայրերը ոլորեց, ճակատը շփեց, շրթունքները կծեց, լուսամուտի փեղկերը ուժգնութեամբ բաց անելով, քրտնաթոր ճակատը ներս հոսող ցուրտ օդին տուաւ և մռմռաց կատաղութեամբ.

—Թքե՜լ եմ ես այսպիսի ապրուստի վրայ...

---

[1]) Յուսահատ սէր. բայց գործածւում է «լիրբ» բառի փոխարէն։

[2]) Անպիտան կին կամ աղջիկ։

—Ի՞նչ է եղել, մա՛րդ․ հարցրեց կինը օրօրոցի մօտից։

—Ի՞նչ է եղել… ասաց խուլ ձայնով Սահակը—ի՞նչ պիտի լինի… Ամբողջ մթնոլորտը ապականուել է կեղտոտութեամբ և մենք բացի նրանից որ ստիպուած ենք շնչել այդ օդը, ստիպուում ենք ինքներս էլ կեղտոտուել նրանով։ Լռել և գլուխ ծռել հրէշների առաջ, կեղծել, ստել, խարդախ միջոցներով զսպել քեզ… և այդ բոլորը՝ այս անիծեալ կոկորդի համար… Աւելի լաւ է շան պէս սատակել անօթութիւնից, քան ստիպուել լսելու այդ բոլոր հրէշային սուտերը։ Չես էլ կարող լռել կամ անորոշ մնալ․ հրէշներին անպատճառ պէտք է ձեր համաձանութիւնը, ապա թէ ոչ, նրանք ձեզ հետ կը վարուեն նոյն կերպով, ինչպէս որ վարուում են թշնամու հետ… Չե՛ս համաձայնուի, քեզ անօթի կը թողնեն, ամեն քայլդ առջև քարեր կը գլորեն, քեզ կը մատնեն, կը տանջեն… կը ստիպուես թողնել ամեն ինչ և փախչել… Իսկ կի՞նդ, զաւա՛կդ… Աստուած իմ, Աստուած իմ, կամ խլիր իմ միջից այս գիտակցութիւնը և կամ ազատիր մեզ այս ապականող, այս կեղտոտ դրութիւնից։

—Հանդարտուի՛ր, ասաց կինը—ներս գնա՛․ հիւրըդ այժմ կը զարմանայ թէ ի՞նչու դուրս գնացիր։

—Այո՛, իրաւունք ունես․ մռմռաց վարժապետը կատաղութեամբ—կարող է մտածել թէ ես համաձայնութիւն տալուց խուսափեցի… պիտի

գնալ փարատել նրա մտածութիւնը… Կասկածոտ էլ են հրէշները։ Մինչև որ իրանց ասած և արած կեղտոտութիւնները չը քաջալերես, քեզ վրայ կասկածանքով կը նայեն և քեզ թշնամի կը նկատեն իրենց… Իսկ թէ ինչպէ՞ս են վարուում իրանց թշնամիների հետ, այդ մենք փորձով գիտենք…

Ասաց, ճակատը նորից շփեց, յետոյ աշխատեց զուարթ դէմք ստանալ, նորից պատուիրեց Արմաղանին չ՚երևալու և ներս մտաւ։

—Այս ո՞ւր գնացիր․ գոչեց հաջի-աղան —ինչպէս դուրս փախար, որ վախեցայ տունը այրուում է։ Հը՞, օրհնած, ո՞ւր այդպէս փախար…

Եւ մի սուր, կասկածոտ հայեացք ձգեց նրա վրայ։

—Փոքրիկս փոքր ինչ հիւանդ է… կմկմաց վարժապետը։

—Լա՛ւ, լա՛ւ, ծիծաղեց հաջի-աղան հեգնութեամբ—սաս գնացիր կնոջդ երեսին նայելու, էլի… ի՞նչ ամօթ բան կայ այստեղ…

Վարժապետը կատաղեց հաջի-աղայի այդ վարմունքից, բայց շրթունքը կծեց և աշխատեց ժպտելու։

Տիրեց փոքր ինչ լռութիւն, որի ընթացքում լսուում էր միայն ներգիլէի խուլ կկլոցը։

IV.

Դրսում սկսել էր ձիւնել և որովհետև կէսօրւայ մօտ էր, անցուդարձը խիստ սակաւացել էր։ Վանի Այգեստան արւարձանում անցուդարձ շատ լինում է միայն առաւօտեան վաղ և երեկոյեան, երբ բոլորը գնում են դէպի քաղաք և երեկոյեան վերադառնում են. իսկ ցերեկը այդ փողոցները ամայի են. հազիւ մի քանի մարդիկ են անցկենում. ամեն ոք զբաղւած է իր գործով։

Հաջի-Մանուկ աղան նէրգիլէի փողը բերնի անկիւնին դրած, սկսեց լուսամուտից դէպի փողոցը նայել։

Այդ միջոցին հէնց, փողոցից անցնում էր Արարուց վարժապետներից մէկը, որ շալակել էր մի ինչ որ տոպրակ և աջ ձեռքով էլ քաշ էր տալիս մի բահ։

—Էս ո՞ւր է գնում էդպէս Միհրդատ վարժապետը. ասաց հաջի-աղան առանց դէմքը դարձնելու։

—Ի՞նչպէս. հարցրեց Սահակը մօտենալով։

—Ա՛յ, նայիր. տոպրակն ուսին և բահը ձեռքին։

—Երևի այգին է գնում բողկ հանելու. ասաց վարժապետը մտացրիւ կերպով, իր ասածն իսկ չը հասկանալով։

— Տնաշէնի տղան, ծիծաղեց աղան—բողկը ինչու է տարել այգումը թաղել. չէ՞ր կարող իրանց տան բագումը պահել... Չէ, երևի մէյդանն է գնում. ով գիտէ ինչ անելու... Խեղճ մարդը մի շնորքով սաքօ իսկ չունի վրան... Առածն ինչ է, որ ընտանիքին ուտեցնի ու սաքօ էլ ունենայ։

—Աւելացրէք ռոճիկը. դիտեց Սահակը։

—Ասում ես հա՛ա... ժպտաց աղան նրան դառնալով—Ես չե՞մ ուզում որ բոլորդ էլ լաւ ապրէք, սաքօ ունենաք, որ չը մրսէք, չը հիւանդանաք. բայց մենակ խօ ես չե՞մ թաղականը. այն կողմ ուրիշ ջահիլ-ջուհուլ աղաներ էլ կան, որոնք ինձ չեն լսում... Մէկ էլ որ ես մտադիր եմ շուտով հրաժարական տալու։ Ախպէր, չես կարողանում քո գործերդ տեսնել, դեռ այդ անշահ գործն էլ են ուսիդ դրել։ Էսօր վարժապետն է վազում փողոցում դէմդ կտրում և փող ուզում, էգուց ժամկոչն է գալիս առջևդ կանգնում... ես ինչ գիտեմ. մէկ սիւրիւ [1]) քաղցած գայլերի նման—օրը մինչև երեկոյ եախիցս են բռնում... Ախպէր, ինչ էք ուզում ինձնից, խօ մենակ ես չե՞մ թաղականը, գնացէք Պետրոս աղայի մօտ, Մկրտիչ էֆէնդու դուքանի առաջը կտրէք... Չէ, ասում են, մենք մենակ քեզ ենք ճանաչում, քո մէջ էլի ռահմ [2]) կայ... Լա՛ւ, բաս որ մենակ ես եմ, էդ ջահիլ-

[1]) Հօտ։

[2]) Գութ։

ջուհուլները ի՞նչու երբեմն համարձակւում են պատասխան էլ տալ ինձ, հակառակել... Յիշո՞ւմ ես ջաղացի խնդիրը. ես ասացի թէ՝ ախպէր, մի՛ տաք էդ ջաղացը էն ծուռ Մնօյին, ինձ տւէք, ես ազգին մեծ շահ կը տամ։ Չը լսեցին, վերցըրին տւին նրան։ Տւին ու խէրն էլ տեսան. խօ տեսա՞ն թէ ինչպէս Մնօն քարուքանդ արաւ ջաղացը ու մինչև այժմ էլ մի կօդ ցորեն չը տւեց. խօ տեսա՞ն...

Նորէն վարժապետը գլուխը կախեց։ Նրան լաւ յայտնի էր, թէ ինչպէս Մանուկ աղան Մընօյին սովորեցրել էր (խոստանալով պաշտպանել իրեն, եթէ գործը դատի ընկնի) փչացնելու ջաղացը, որպէս զի իր գուշակութիւնը իրականանար։

Սահակը այդ յիշելով՝ քիչ մնաց խօսէր, բայց բարեբաղդաբար յանկարծ մտաբերեց հաջի-աղային մի հարց առաջարկելով՝ զպել իրեն։

—Հաջի-աղա, հարցրեց նա շտապով.—էն խեղճ Բարաղամ վարժապետին ի՞նչու հանեցիք դուրս։

Իզուր հարցրեց, որովհետև գիտէր արդէն։ Հարցրեց, որպէս զի չը պոռթկար և իր տունը չը քանդէր յանդուգն պատասխան տալով։

—Հա, Բարաղամ վարժապետի՞ն ես ասում... Տօ, ես ի՞նչ գիտեմ նրա գիժ գլուխը. մէկ օր Աղուէսենց տան առջև եախից բռնել կանգնեցրել է ու ասում է՝ «Հաջի-աղա, չորս ամիս է, որ ռոճիկից մի փարայ չեմ ստացել, մի 100 դուռուշ տուր ինձ, պարտքի պէս լինի տուր, տոկոսով լինի տուր, ընտանիքս անշոր է, քաղցած է»։ Ես, ի հարկէ, խղճացի, սիրտս փուխր է, այդպիսի խօսքեր չեմ կարող լսել. «Ախպէր, ասացի, լաւ, ի՞նչ կայ, էգուց արի խորհրդարան՝ քեզ մի քանի ղուրուշ կը տանք...» Ի՞նչ պատասխան տայ լաւ է. նեղանում է ու գոռում. «Երկու ամիս է ամէն օր խորհրդարան եմ գալիս, խնդրում եմ, աղաչում, ինձ մի փարայ տւող չը կայ...»։—Տօ, ես ի՞նչ անեմ, մենակ ե՞ս եմ թաղականը։ «Դու ես գանձապետը, ասում է, դու պիտի տաս ռոճիկս, ինչու չես տալիս»... Մէկ էլ էն տեսնեմ՝ ձայնը բարձրացրեց ու էլ բան չը թողեց՝ ասաց. ասում է.—«դուք ազգային փողերը վերցնում շահեցնում էք ձեզ համար, ուտում էք, ասում է, ձեր խնամիներին էք տալիս»... Ես ի՞նչ գիտեմ, էլ բան չը թողեց... Ամօթից քիչ մնաց գետին մտնէի... Բարկացայ. «Կորիր, շուն... գոռացի ես, ո՞վ է քո փողդ կերել, ի՞նչ ես տւել, որ ինչ ուզես. մէկ փարայ էլ քեզ տալիք չենք, էլ ոտ չը կոխես մեր դպրոցը, դեռ հերիք չէ, որ փռօտների ուսումնարանում գիշերները դասեր ես տալիս, հիմա էլ եկել մեզ վրայ շառեր ես դցում...» Միւս օրը, աղխ ասեմ, պատմեցի թաղականներին. արդէն ամէնքը լսել էին։ Ես իմ կողմից շատ խնդրեցի, որ չը դիպչեն Բարաղամին, որովհետև ես աւետարանի հաւատացող եմ, պարտքս է ներել. շատ

աղաչեցի, որ նրան չը զրկեն, բայց չը լսեցին ինձ։ «Չէ, ասացին, նա ամբողջ խորհրդին է անպատւել»... Եւ իսկոյն դուրս գցեցին... Դէհ, հիմա դու ասա, ես այստեղ ի՞նչով եմ մեղաւոր... Չէ՞ որ էդ ջահիլ-ջուհուլ ընկերներս ինձ չեն լըսում, խօսքիս ականջ չեն դնում... Էդ էլ չը լինի էն ծուռ Արմազանի խնդիրը, որ ինձ չը լըսեցին ու անպիտանին մէկ ոսկի տւին էսպէս սուղ ժամանակներում...

—Այդ ե՞րբ էր. հետաքրքրւեց վարժապետը.

—Անցեալ օրն էր... Խեղճ է, անօթի է ասացին ու տւին։ Ես քանի անգամ ասացի, թէ ախպերներ, փոխանակ դրան տալու, խեղճ աղքատներին տւէք, որոնց վիճակը տեսնելով միշտ սիրտս մխկտում է... Չը լսեցին ինձ, առին ու էդ անպիտանին տւին թէ՝ սա էլ է աղքատ... Ծօ, ի՞նչ աղքատ, ի՞նչ ծուռ, Արմազանը քեզնից էլ ու ինձնից էլ համ հարուստ է, համ խելօք, օրը մինչև երեկոյ թիւրքերի մէջն է, ուտում է, խմում։ Էգուց էլ աղջկանը կը ծախի... Ու տես թէ ինչպէս ինձնից ու քեզնից էլ հարուստ կը լինի...

Յանկարծ կողքի սենեակի դուռը ուժգնութեամբ բացւեց և նրա շէմքի վրայ երևաց Արմազանը։ Արմազանը կատաղի աչքերով, անկարգ մազերով, բոբիկ, ուռած ոտներով, ցրտից ճաքճքած բուռերը սեղմած, գլխի շորը ուսերի վրայ թողած և սրունքները բաց։

Նա առաջացաւ դէպի սարսափած Հաջի-աղան, որ նրան տեսնելուն պէս՝ մեռելի գոյն ստացաւ. վախեցած՝ թողեց ներգիլէի փողը ու ցած թռաւ սադիրից։

Վարժապետը գունաթափ՝ վազեց դէպի Արմազանը։

—Սպասիր, գոչեց նրան հրելով Արմազանը —մի վախենալ, տանդ մէջ ոչինչ չեմ անիլ. միայն երկու խօսք պիտի ասեմ այդ աղային...

Հաջի-աղան ուզեց դէպի դուռը գնալ, բայց Արմազանը փակեց նրա դէմը և խռպոտ ձայնով ասաց.

—Ես թիւրքերի՞ն եմ ծախում պատիւս և էգուց էլ աղջկանս ծախելով պիտի հարստանա՞մ... Լաւ. այն ճիշտ է- որ դու և քո բէյերդ ու ընկերներդ ինձ այս օրը գցեցին, բայց ոչ թէ դու, քո էն ամենամեծ պապդ, քո էն ցեղի բոլոր գանձն էլ առջևս լցնէք, իմ աղջիկս է և կը մնայ քեզնից էլ, քո կնոջից էլ, քո աղջկանիցդ էլ և քո ցեղակիցներիցդ էլ սուրբ. հասկացա՞ր... Դէ, հիմա, Հաջի-աղա, էլ այս տան մէջ քեզ ասելիք չունեմ, որովհետև գիտեմ թէ ինչ օձն ես...

—Բայց... թոթովեց աղան, դէմքը կնճռած դէպի վարժապետը դառնալով,—այս անառակը...

—Սպասիր, մէջ մտաւ վարժապետը վճռելով այլ ևս չը զսպել իրեն,—այդքանն էլ հերիք էր, Արմազան, որ այս բարի մարդու բարկութիւնը հրաւիրես ինձ վրայ... Ես քեզ խընդ-

րել էի լռելու, բայց քանի որ սկսեցիր, վերջացրու...

—Սահակ, Սահակ, գոչեց Հաջի-աղան դողդոջուն և սպառնալից կերպով—թող ուէք ես գնամ, կամ այս անպիտանին հեռացրու, քանի դեռ չեմ բարկացել... Ես կը ներեմ քեզ, որ այս անառակին տունդ ես ընդունել... Ես բարի մարդ եմ...

—Օ՛ օ, ծիծաղեց դառնութեամբ վարժապետը—դու այնպիսի օձ չես, որ քեզնում ուշ գոյանայ թոյնը. այժմ արդէն պատրաստ է քո մէջ և մտածում ես թէ Երբ թափես վրաս... Ես այդ փորձով գիտեմ, բարի Հաջի-աղա... Բայց թող լինի ինչ որ լինելու է, քանի որ եղաւ, ինչ որ չը պիտի լինէր առ այժմ. թող քաղցած մնանք մենք... Խօսիր, Արմաղան, գիտցիր որ սա մի քիչ առաջ պնդում էր, որ իբր թէ երէկ դու ինքդ առաջարկել ես նրան աղջիկդ. բայց ինքը Սաղմոս և Նարեկ քաղող ծեր մարդ է եղել և մերժել ու մինչև իսկ վռնդել է ուել քեզ—անամօթիդ. խօսիր։

—Ե՞ս, Ես, որոտաց Արմաղանը փրփրած—Ես եմ առաջարկել...

Եւ այլ ևս ոչինչ չը կարողանալով ասել, կորզեց վառարանի մօտի ծանր երկաթեայ կրակարանը, կատաղած աչքերով՝ մեգերայի պէս պտըտեցրեց այդ սարսափելի ծանրութիւնը գլխի վրայ և մի քայլ արեց դէպի աղան, որի շունչը կտրուեց վախից։

—Սպասիր, մէջ մտաւ վարժապետը խլելով Արմաղանի ձեռքից կրակարանը—սպանութիւն պէտք չէ. եթէ դու չես կարող խօսել, այժմ թող ինձ...

Ասաց, կրակարանը հանդարտութեամբ դրեց վառարանի մօտ, բուռերը սեղմած դիմեց դէպի աղան, մի խորին զզւանք արտայայտող հայեացք ձգեց նրա վրայ, յետոյ պարզեց վիզը, մի գունդ թուք շպրտեց նրա ճիշտ երեսի վրայ և ասաց խռպոտ ձայնով.

—Դո՛ւրս այստեղից, ապականութեան մըրուր, դո՛ւրս, քանի չես թունաւորել դեռ ևս սենեակիս օդը...

Յետոյ հրեց աղային դէպի դուռը, մղեց նրան սենեակից դուրս, դուռը փակեց նրա ետեւից և սկսեց կատաղի ճեմեր անել սենեակի մի անկիւնից դէպի միւսը՝ մռմռալով.

—Հրէ՜շ օձ... և սրան բոլորը բ ա ր ի են կոչում... Մեռնէք դուք, բարինե՛ր, եթէ բոլորդ էլ այս օձի պէս էք...

Արմաղանը, որ զարմացած դիտեց բոլորը և այժմ նայում էր վարժապետի կատաղի ճեմին, շա՛րժուեց, յենեց պատին և յանկարծ մի այնպիսի բարձրաձայն քրքիջ արձակեց, որ միւս սենեակից վարժապետի կինը ներս վազեց։

Սահակը կնճռեց դէմքը և կանգ առաւ։

—Կի՛ն, գոչեց նա խստութեամբ—համարձակւում Ես ծիծաղել. ծիծաղել, երբ ես այստեղ

տանջւում եմ, որ դ՛եռ սիրտս ուռած է, դեռ ես լիքն եմ զզւանքով և ատելութեամբ... Եւ դու ծիծաղո՞ւմ ես։

Արմաղանը շարունակեց ծիծաղել։

—Քեզ վրայ եմ ծիծաղում, քեզ, ասաց նա ծիծաղի միջից և յետոյ դառնալով վարժապետի կնոջ, յարեց—տեսա՞ր, տեսա՞ր թէ ինչպէս մարդըդ քաջութեամբ և որպէս խիստ, շատ խիստ նախատեց աղային. հա՛, հա՛, հա՛, չափազանց խիստ։

—Ի՞նչ արեց. գոչեց վախեցած կինը։

Արմաղանը լրջացաւ, ուղղւեց և ասաց.

—Ոչինչ. այսպէս աչքերը ոլորեց և թքեց երեսին... հա՛, հա՛, հա՛, կեցցես... Լա՛ւ... լրջացաւ նա նորից և մօտենալով բռնեց վարժապետի թևը—ուզո՞ւմ ես տեսնել թէ ինչ ազդեցութիւն ունեցաւ քո այդ «ծանր նախատինքը». ե՛կ, ե՛կ նայիր...

Քաշեց դէպի դուռը, բաց արաւ, տարաւ դէպի սանդուխքների գլուխը, այնտեղից ցոյց տւաւ ծանր քայլերով ցած իջնող աղային և ասաց.

—Նայի՛ր։

Վարժապետը նայեց։

Հաջի-աղան ամենայն հանդարտութեամբ իջնելով, կանգ առաւ մի աստիճանի վրայ, գրպանի հանեց մի կապոյտ թաշկինակ, նրանով մաքուր սրբեց երեսի թուքը և դառնալով դէպի վեր՝ ժպտաց։

—Տեսա՞ր, ծիծաղեց Արմաղանը նորից ներս

քաշելով վարժապետին—աղան թուքդ սրբում է և ժպտում։ Ժպտում է ու մտածում՝ թէ որքա՜ն միամիտ է եղել այդ վարժապետը, որ կարծեց թէ երեսիս թքելով մի շատ մեծ բան արած եղաւ... Ծօ՛, միամիտ վարժապետ. Է՞դ էր քո ամենամեծ նախատինքը... Էդպէս նախատինքներ Հաջի-աղան օրը խօ քանի անգամ կլում է. մենակ ես, ես մենակ, 100 անգամ թքովս լւացել եմ նրա երեսը, իսկ նա փէշերովը սրբել է և ժպտել. եթէ մարդ է եղել տեսնող, իբր «բարի և երկայնամիտ մարդ»՝ ներել է որպէս թէ. իսկ եթէ ոչ՝ մտածել է թէ անձրևից է թրջւում...

Սահակը ապշած կանգ առաւ։ Տիրեց փոքր ինչ լռութիւն։

Արմաղանը յանկարծ դադարեց ծիծաղելուց, յուսահատ ակնարկով նայեց չորս կողմը, գլուխը կախեց և մռմռաց տխրութեամբ.

—Իսկ այժմ, այժմ համեցէք դուք էլ քաղցած մնացէք. այսպէս է. որի հետ որ խօսում եմ, թշւառացնում եմ նրան. իմ ներկայութիւնս անբաղդացնում է ամենքին, ես անիծեալ եմ...

Ասաց, գլուխը կախած նստեց դռան մօտ, դէմքը ձեռքերով ծածկեց և երկար մնաց այդ դրութեան մէջ. յետոյ յանկարծ ցատկեց, մօտեցաւ տխուր կանգնած վարժապետի կնոջ և ասաց դառնութեամբ.

—Մի տխրի՛ր, աչքերիդ մեռնեմ. ես, ես պիտի մուրամ, ծախեմ ինձ և ձեզ պիտի քաղ-

ցած չը թողնեմ. հասկանու՞մ էք, գլուխս քարերի պիտի խփեմ և ձեզ ապրեցնեմ. ես ձեզ թշւառացրի...

Գրկեց կնոջ, գլուխը կախած՝ բռունցքներով տրորեց դուրս ցայտող կարմրած աչքերը, ձգեց ուսերին սպիտակ սաւանը, ոտները կոխեց իր ցեխով լիքը կօշիկների մէջ, հեկեկաց, նայելով երկու ամուսիններին սկսեց իր սառսռեցուցիչ լացը և սանդուղքներից ցած իջաւ օռնալով.

—Ես անիծեալ եմ, անիծեա՜լ, անիծեա՜լ...

Դեռ և երկար, լսում էր փողոցից նրա խռպոտ ձայնը։

V.

Անցան շաբաթներ։ Արարուց վարժապետ Սահակ էֆէնդին դեռ շարունակում էր իր պաշտօնը. քիչ էր մնում մտածէր թէ Մանուկ-աղայի վրէժխնդրութիւնից ազատուել էր։ Մի քանի անգամ իսկ, երբ հանդիպել էր աղային, վերջինս իրեն բարևել էր ժպտալով։

—Այս ի՞նչ է, մտածում էր վարժապետը— չը լի՞նի զգացել է որ ես իրաւունք ունէի իր երեսին թքելու։

Ամեն կողմ խաղաղ էր։ Արմաղանը այլ ևս չէր երևում, նրա մասին զանազան լուրեր էին պտտում, մանաւանդ նրա աղջիկ—Ալմաստի մասին. ոմանք ասում էին թէ աղջիկը մեռել է, ոմանք թէ՝ խենթացել է, իսկ ուրիշները պնդում էին թէ Վանի փողոցներում նոր երևան եկող ծուռ Ալմաստը՝ Արմաղանի աղջիկն է. ո՞վ գիտէր. այդ ծուռ Ալմաստը այնքան տգեղ էր և խորշոմներով լիքը դէմք ունէր, որ չէր կարելի ասողներին հաւատ ընծայել։ Մի օր էլ մէկը պատմեց վարպետին, որ Ալմաստին յանկարծ փախցրել են, երբ նա տաճկաց թաղից անցնում էր։

Ճիշտն այն էր, որ Արմաղանը վարժապետին չէր երևում։

Դասերը կանոնաւոր կերպով ընթանում էին, երբ մի օր Սահակը դասարանում նստած ժամանակ, ուսումնարանի ծառան ներս մտաւ, մօտեցաւ նրան և յայտնեց, որ թաղական աղաները խորհրդարանից ուզում են իրեն։ Սահակի մտքից անգամ չանցաւ Մանուկ-աղան. մտածեց թէ ռոճիկ տալու համար կարելի է կանչած լինէին, որովհետև երեք ամիս էր, որ ռոճիկ չէր ստացել։

Դասը կիսատ թողեց և հետևեց ծառային։

Այնտեղ—խորհրդարանում, սեդիրների վրայ նստոտել էին հինգ աղաներ. վերին գլուխը բռնել էր աւագ-քահանան, որը համարւում էր նախագահ։ Նրա կողքին մուշտակով չոքել, քէհրիբարէ մեղեսիկն էր դարձնում Հաջի-Մանուկ աղան, յետոյ հետզհետէ չոքել՝ նէրգիլէ էին ծխում երեք երիտասարդ հարուստներ և մի մի-

ջահասակ։ Անկիւնում դրած ծուռ գրասեղանի առջև, գրիչը ականջի ետև ցցել՝ նստել էր Յովհաննէս վարժապետը, որ ատենադպիրն էր և իր առջևը դրած մեծ տետրակի մէջ պատրաստւում էր վճիռները գրելու։

Սենեակը մեծ չէր. ունէր երկու լուսամուտ, որոնք վարագուրած լինելով կապոյտ կտորով, մի մութ-խորհրդաւոր լոյս էին սփռում միմի-[illegible]ադիրներով կահաւորած և յատակը թաղիքած այդ հին սենեակի վրայ։ Մի անկիւնում վառւում էր վառարանը և գռռում, իսկ աղաները բոլորն էլ լուռ, ոմանք նէրգիլէ և ոմանք էլ պապիրոսներ էին ծխում։

Խորհրդաւոր էր մթութիւնը, ծուխը, վառարանի և նէրգիլէների ձայնը և աղաների խոր լռութիւնը ու իրենց չոքած անշարժ դիրքը։

Քիչ յետոյ դուռը ճռնչալով բացւեց, յետոյ, որովհետև ետևից ծանր զապանակ ունէր, թրխկաց և շէմքի վրայ երևաց Սահակը։

—Ինձ կանչե՞լ էիք. հարցրեց նա առաջանալով։

Ամէնքը միմեանց երեսի նայեցին և վերջապէս քահանան շարժւելով ասաց.

— Այո, Սահակ վարժապետ, կանչել էինք. նստիր, ահա այնտեղ նստիր։ Եւ ցոյց տւեց սադիրի ցածի կողմը։ Սահակը նստեց. սիրտը սեղմւեց, զգում էր որ մի վատ բան պիտի լինէր։

Տիրեց լռութիւն փոքր ինչ, որից յետոյ տէր-

հայրը նորից շարժւեց, նախ աղաների երեսին նայեց, յետոյ դարձաւ վարժապետին ու ծանր, շեշտելով, վարդապետական ձևով ասաց.

—Սահակ վարժապե՛տ, քեզ վրայ զանազան վատ լուրեր ենք լսում, որ վայել չէ մի վարժապետի։ Այդ լուրերը, հը՛մ, շատ վատ լուրեր են... Երկար ժամանակ չուզեցինք հաւատ ընծայել դրանց, մանաւանդ որ պատւարժան Հաջի-Մանուկ աղան դէպի ձեզ մի առանձին համակրութիւն ունենալով և ի սրտէ բարի էլ լինելով, յորդորեց մեզ ամէն խօսքի ուշադրութիւն չը դարձնել...

—Հա՛, Աստւած գիտէ. գիտեց հաջի-աղան— ինչքան խնդրեցի, աղաչեցի որ չը լսեն, բայց ի՞նչ անեմ, չը լսեցին ինձ...

—Վերջապէս անկարելի է դիմանալ այդ լուրերին, մէջ մտաւ մի երիտասարդ աղա։—Զադիի ծուռ-մուխսիից սկսած մինչև կանայք անգամ խօսում են... Ինչե՞ր ասէք չեն ասում։

—Դեռ երեկ իրիկուն, գոչեց մի ուրիշ աղա—իմ կինս էր հարցնում ինձ, թէ ճի՞շտ է ինչ պատմում են Սահակ վարժապետի համար։ Ես, ի հարկէ, ասացի որ ճիշտ չի լինի, բայց տաքացայ. ի՞նչու այն թաղում, ուր ես թաղական եմ, գտնւի մի վարժապետ, որի վրայ վատ խօսեն...

—Ախպէ՛ր, գոչեց երրորդը—ձեզ ճիշտն ասեմ, ես չեմ ուզեր վարել պաշտօնս այնպէս տեղ,

ուր իմ ենթարկեալներիս մէկին բան ասեն։ Ես պատւախնդիր մարդ եմ... Մեր տունը յայտնի է իր պատւաւորութեամբ։

—Հանդարտեցէք, ախպէրներ, ժպտաց Հաջի-Մանուկ աղան—ինչու էք յուզւում․ մարդու վրայ շատ բան են խօսում․ ինձ վրայ էլ ու ձեզ վրայ էլ մինչև իսկ խօսում են... Ախպէր, ես իմ կողմից բան չունիմ ասելու վարժապետին։ Ես ոչ [illegible]անից...

—Բարեսրտութիւնդ է այդպէս խօսում․ դիտեց քահանան։

—Ի հարկէ, Հաջի-աղան յայտնի է իբր բարի մարդ․ ասաց մի աղա։

—Ի՞նչ անեմ, ախպէրներ—սիրտս փուխր է, չէ կարող դիմանալ... Ինձ լսէք, եկէք բանի տեղ մի դնէք այդ խօսքերը ու վարժապետին թողէք հանգիստ սրտով իր գործը տեսնի։ Ես իմ Աստւածը, երկու հատ էսպէս լաւ վարժապետ չը կայ Վանայ մէջ․ ի հարկէ որ նախանձելուց կը սկսեն վատ լուրեր տարածել վրան։ Մի հաւատաք, չար մարդու խօսքեր կը լինին...

—Ո՛չ, ո՛չ, գոչեց մի աղա—այդպէս չէ կարելի թողնել․ մեր և դպրոցի պատիւը պահանջում է, որ քննւի այդ գործը։

—Այո, այո, քննւի․ գոչեցին միւսները։

—Ախպէրնե՛ր, խօսեց նորէն Հաջի-աղան—ի սէր Աստուծոյ...

—Ո՛չ, ո՛չ, ո՛չ, միջահատեցին նրան միւսները—թող քննւի։

—Տեա՛ր, վարժապետ, դարձաւ հաջի-աղան Սահակին—տեսա՞ր որ ինձ չեն լսում։ Դէհ, հիմա ես ինչ անեմ... Ախպէրներ, ես էլ գործ չունիմ, դուք գիտէք․ դարձաւ նա միւսներին—թողէք ես հանգիստ երթամ գործիս։

Եւ տեղից շարժւեց դուրս գալու համար։

—Նստի՛ր, նստի՛ր, ամեն կողմից վրայ հասնելով բռնեցին նրան քահանան և աղաները—չէ կարելի․ պիտի մնաս մինչև վերջ։

Վարժապետը այդ միջոցին գունաթափ՝ հեգնօրէն ժպտում էր։ Նա շատ լաւ հասկանում էր թէ դրանք բոլորը ինչ կեղտոտ կոմեդիա էին խաղում․ սիրտը տրոփել սկսեց․ զգաց որ ոտքի տակից գետինը փախչում է և ամրապնդւելու համար հազաց, տեղը փոխեց, ու քիչ աւելի բարձրացաւ սադիրի վրայ, յետոյ լռութեամբ նայեց բոլորին, աչքի տակով իրեն նայող Հաջի-աղային և մռմռաց․

—Վերջացաւ, օձը փաթաթւեց շնքիս, այժմ ակռան ցոյց կը տայ։

—Ատենադպիր, գոչեց քահանան քարոզի ձևով—կարդա ամբաստանագիրը, որ ստացւել է մի շաբաթ առաջ և ունի իր վրայ տասն և հինգ ստորագրութիւններ։

Ատենադպիր վարժապետը մի ցաւակցական

ակնարկ ձգեց իր պաշտօնակցի վրայ, բարձրացրեց մի թուղթ և դողդոջուն ձայնով կարդաց։

Այդ թղթով թաղի մի քանիսները ամբաստանում էին Սահակին, իբր թէ նա Արմաղանի հետ յարաբերութիւն ունի և միշտ տեսնուած է, որ Արմաղանը գիշերով վարժապետենց տունն է գնացել այն ժամանակ, երբ վարժապետի կինը հօրանց տանը հիւր է եղել օրերով. ամբաստանւում է և նրանով, որ սովորեցրել է այդ «լիրբ» կնոջ՝ անդադար անպատիւ խօսքեր ասելու «մեծարոյ» հաջի-Մանուկ աղային։

—Վա՜յ, վա՜յ, վա՜, գոչեց Հաջի-աղան ընդհատելով—սուտ է, սուտ, մի հաւատաք. սուտ կասեն անիծածները. Արմաղանը արդէն ինձ հետ թշնամի է, այդ աղաբուրդ կնոջ հաւատացրել են, որ ես նրա փողերն եմ կերել և նա նրա համար է, որ միշտ ինձ անպատիւ խօսքեր է ասում...

—Հա՜, գոռաց մի աղա—հէնց այդ հասկացնողը, գրպարտողը՝ Սահակ վարժապետն է եղել։

—Աղո՞րթ [1]), բացականչեց Հաջի-աղան իբր թէ զարմացած—չեմ հաւատալ. աղո՞րթ ի, վարժապետ, դո՞ւ ես սովորեցրել... Չ՚է, չէ՛, ես չեմ հաւատայ, ես վարժապետին լաւութիւնից բացի վատութիւն չեմ արել, ի՞նչու կանի այդպէս... սուտ կասեն էդ մուռտառները. վարժապետը այդպէս բան չէ արել... էն որ էլ կասեն թէ

[1]) ճի՛շտ։

Արմաղանը նրանց տուն կերթայ կը գայ, այդ ճիշտ է, բայց...

—Հա՜, տեսա՞ք, գոչեց մի աղա—ուրեմն դուք էլ էք վկայ, որ...

—Բայց, համբերեցէք, աղաղակեց հաջի-աղան—ես գիտեմ, որ վարժապետը այդպէս բան չի անի։ Արմաղանը նրա կնոջ մօտ էր գնացել... Մէկ էլ, ախպէր, ի՞նչի այդպէս բան անի, իր կնիկը բոլորից համ սիրուն է, համ ջահիլ...

—Լի՜րբ... մռմռաց Սահակը ատամները կրճտացնելով։

—Սուտ է, սուտ, շարունակեց Հաջի-աղան—անպատճառ այդ ստորագրութիւնները օղիի ույժով են հաւաքուած։ Ով գիտէ ո՞ր շուն-շան-որդին է արել,.. Աստուած այդպիսի մարդու տունը քանդի... Խեղճ, խեղճ վարժապետ, մի վախենայ, քաջ կաց, ես քո կողմիցն եմ... Ախպէրներ, դարձաւ նա աղաներին—ես դատ չունիմ վարժապետի հետ. իմ մասին գրածը ոչինչ. եթէ սխալուել արել էլ է, ես ներում եմ...

—Որքան բարի ես, Հաջի-աղա, ժպտաց շողոքորդութեամբ քահանան—շատ բարի ես, այնպէս որ բարութեամբ մի օր փորձանքի պիտի հանդիպիս։

—Թող հանդիպեմ, տէր-հայր—իմ յոյս ու ապաւէնս Աստուած է... «եթէ Տէր ընդ իս կայ, ո՞վ կարէ կալ հակառակ»։

—Շատ ճիշտ է, Աստուած քեզ օրհնէ. ասաց քահանան հիացած։

Սահակի համբերութիւնը հատաւ, տեսնելով Հաջի-աղայի այդ աստիճան լիրբ դերասանութիւնը, շարժուեց և գոռաց·

—Թոյլ տուէք ինձ խօսել։

Նրա ձայնը դողդողում էր, ինչպէս և շըրթունքներն ու ձեռքերը· բոլորը լռած՝ նրան նայեցին, նա մի հեգնական դառն ժպիտով նայեց հաջի-Մանուկին և ասաց·

—Ըֆէնդիներ, եթէ ուզում էք իմանալ թէ բանը ինչումն է, ես ձեզ բոլորը կասեմ, այնուհետև ինչ որ կուզէք, արէք։ Այժմ լսեցէք ինձ։ Սրանից երկու ամիս առաջ Արմաղանը եկել էր ինձ մօտ և յայտնում էր թէ ինչպէս «այդ շատ բարի և փուխր սիրտ ունեցող» մարդը, բացի նրանից որ կերել է իր փողերը, առաջարկել է նաև որ աղջիկը յանձնէ իրեն... Կամաց, Հաջի-աղա, դեռ բոլորը չասացի, խնդրում եմ չընդհատել ինձ... Ինձ քաջ յայտնի է, թէ ինչպէս այդ «բարի մարդ»ը Մնօյին սովորեցրեց ազգային ջաղացն աւերելու, որպէս զի իր արած գուշակութիւնը կատարուի· քաջ յայտնի է, որ քանի անգամ դա ոչ միայն իր կրքերին, այլ և իր տան մէջ խնջոյք կազմելով, հիւր եղող տաճիկներին է յանձնել այն թշուառ, ընկած կնոջ... Դեռ ևս շատ շատ բաներ ինձ յայտնի են· ոչ միայն ինձ, այլ բոլոր նրանց, որոնք վախենալով ձեր ճանկերի հարուածներից, փսփսալով են իրար պատմում։ Այն օրը աղան ինձ ուզեց հաւատացնել,

որ ընդհակառակն Արմաղանը եկել է իրեն առաջարկելու աղջիկը... Այդ հրէշային զրպարտութիւնը լսեց Արմաղանը, որ միւս սենեակում կնոջս մօտն էր, ներս վազեց, ուզեց սպանել դրան, բայց ես չը թողի, մօտեցայ, թքեցի երեսին և դուրս ձգեցի տնիցս... Այս բոլորը ես արի և այժմ շատ լաւ զգում եմ թէ ով է այն, որ ժողովել է այդ ստորագրութիւնը, ձեզ դրդել է հարուածելու ինձ և ինքը մի կողմ քաշուած՝ ուրախանում է իր խորամանկութիւնով... Ես դեռ շատ բան կարող եմ ասել, բայց այսքանն էլ հերիք է· եթէ ամբաստանում են ինձ, ահա առաջնորդարան, ուր կայանում են դատաստանական և այլ խորհուրդներ· ձեր և այդ մեղադրութիւնները ուղարկէք այնտեղ և ես ցոյց կը տամ թէ մեղաւորը ո՛վ է...

Ասաց, ոտքի ելաւ, քայլեց դէպի դուռը, այնտեղ կանգ առնելով դարձաւ, արհամարհական ակնարկ ձգեց ժողովի վրայ և գոչեց·

—Ես ձեզ այս րոպէիս ասացի այն, ինչ որ ասելու եմ առաջնորդարանում· իմ հրաժարականս դուք չէք ստանայ, բայց ես կը սպասեմ ձեր պաշտօնագրին, որը ձեռքս բռնած՝ կը դիմեմ Ուսումնական Խորհրդին։

Եւ նորից դառնալով, դուռը բաց արաւ ու դուրս գնաց։ Նրա դուրս գնալուց յետոյ, աղաները խառնուեցան իրար այնպէս, որ փողոցից անց-

նողները կանգ առան, կարծելով թէ ներսումը թաղականները ծեծում են իրար։

Քիչ յետոյ բոլորը տեսան թէ ինչպէս Հաջի-Մանուկ աղան շտապով դուրս եկաւ խորհրդարանից, գնաց տուն, ձին թամբել տուաւ և շտապով քաղաք գնաց։

Սահակ վարժապետը մի ժամից յետոյ ստանում էր արտաքսման պաշտօնագիրը։

Եւ երբ միւս օրն այդ պաշտօնագիրը մի խնդրի հետ ներկայացրեց Պօղոս եպիսկոպոսին, իբր բոլոր ժողովների նախագահին, Պօղոսը մի կատաղի ակնարկով չափեց նրան ոտից մինչև գլուխ և գոռաց.

—Կորի՛ր, դեռ համարձակւում ես առջևս ելնել... Կորի՛ր, քանի քեզ շան պէս ծեծել չեմ տուել։

Եւ տուած պաշտօնագիրն ու խնդիրը պատռտելով՝ շպրտեց խեղճ վարժապետի դէմքին։

Սահակ վարժապետը յուսահատ կերպով տուն եկաւ մռմռալով.

—Օձի կծածը երբ կը սաղանայ օձերի բըժշկութիւնով...

Նոյն երեկոյեան նրա կինը բագում ընկած գտաւ մի տոպրակ հաւաքած հաց և պանիր։ Այնուհետև մի քանի օր շարունակ այդպիսի տոպրակներ գտնւեցան նրանց բագում։

Վարժապետն իմացաւ, որ Արմաղանի գործն էր դա. նա աւելի ևս տխրեց և ով գիտէ ինչ

պիտի անէր, եթէ յանկարծ մի օր չը բռնւէր և չը բանդարկւէր, իսկ բանդից էլ աքսորւէր Աստուած գիտէ թէ որ կողմը...

Բարի, իսկապէս բարի մարդիկ՝ խղճացին նրա կնոջ ու որդու վրայ և տարան պահելու իրանց մօտ...

VI.

Ձմեռն այդ տարի շատ ձիւն եկաւ, շատ էլ ցուրտ արաւ, այնպէս որ շատ ծերունիներ ասում էին, թէ իրանց կեանքում երկրորդ անգամն է, որ այդպիսի ցուրտ ձմեռի էին հանդիպում։

Ձիւնով ծածկւել էին ծառերը, փողոցը, առուակները և տները։ Խաչփողանի հրապարակից միայն երկու շաւիղներով կարելի էր անցնել. իսկ հրապարակի խանութպանները մի քանի ժամ միայն բաց էին թողնում իրենց խանութները՝ օրապահիկ հայթայթելու համար, յետոյ փակում և ամեն ոք շտապում էր դէպի տաք քիւրսիի տակ։

Այդ փոքրիկ հրապարակի վրայ բաց էր լինում միայն մի սրճատուն, ուր լցւում էին Վանի սրիկաները և խաղում ու պարում էին, նաև փուռը, որն իր առջևը ծածկել, յաճախորդներին կողքի դռնից էր ներս թողնում ու հանում։

Շներն անգամ, ուրիշ հնար չը գտնելով, բարձրանում էին փակւած խանութների առջևի

բարձր հողէ պատւանդանի վրայ, որ վերևից պատսպարւած էր տախտակեայ հովանոցով, փորում էին հողը իրանց ճանկերով, թաթերը ժողովում, դնչերը ոտների մէջ առնում և քնում էին. քիչ չէր պատահում, որ այդպէս քնած էլ նրանք սառում, սատկում էին և փայտանում ու կպչում գետնին։

Շարունակ երկու շաբաթ էր, որ Վանը արևի երես չէր տեսել և ոչ էլ պարզ երկինք. միշտ ամպամած էր և ձիւնը առատութեամբ հոսում էր. բուքն էլ աւելի հաւաքելով ձիւնը, ուժգին պտոյտներ էր գործում փողոցների մէջ։

Ուշ լուսանում էր և շուտ մթնում։

Ամէն ոք շտապում էր տուն գնալ, տաք սենեակում նստել, կամ պառկել տաք անկողնի մէջ. ոչ ոք չէր կամենում բակից փողոցը ելնել և տեսնել թէ ինչ էր պատահում մի գիշեր՝ Խաչփողանի հրապարակի վրայ։

Մի մութ, աղջամղջային գիշեր էր. սփռւած ձիւնն էր, որ քիչ լուսաւորում էր. վերից էլ ձիւնը հոսելուն պէս խլւած քամիից՝ փողոցից փողոց էր վազվզում և ապա գալիս բլրակներ էր կազմում Խաչփողանի հրապարակի վրայ։ Ամէն կողմ տիրում էր լռութիւն. շներն անգամ չէին շարժւում իրանց տեղից, միայն քամին էր, որ երբեմն շւացներ էր արձակում։

Այդ ժամանակ, խանութների առջևի պատւանդանի վրայ երեք-չորս շներ շրջապա-

տել մի տարօրինակ երկար բանի՝ կծկւել մրափում էին։

Այդ երկար բանը՝ «Ջաղդի Լալօն» էր, Վանի փողոցային խենթերից մէկը, որ քնում էր միշտ այդտեղ և նրան խղճացող շները, որոնց նա իր կերածի կէսը բաշխում էր, եկել շրջապատել էին նրան։ Մէկը նրանցից Լալօյի կողքին էր կպցրել իր դունչը, միւսները ոտներին, երրորդը մէջքին, չորրորդը իր մռութը տարածել էր կիսովին ձեռքերի և կիսովին դէմքի վրայ։

Քնել էր Լալօն. ո՞վ էր մտածողը, թէ ուր է քնում նա։ Նրան ծաղրում, նրանով զւարճանում էին — այդքանը բաւական էր։

Իսկ շները, որոնց նա տալիս էր իրեն իբր ողորմութիւն տւած հացերից մի մի կտոր, այդ շները գալիս էին Լալօի մօտ իրենց դունչերը մօտեցնում թշւառին և ամէն կողմից շրջապապատում, տաքացնում էին նրան։

Եւ քնել էր Լալօն հանգիստ. նա տաք էր, շների դունչերը ամէն կողմից տաք օդ էին փըչում նրա վրայ։

Բայց յանկարծ երևաց մի ինչ որ սպիտակ ստւեր, որ եկաւ կանգ առաւ քնած Լալօի մօտ։

Այդ ստւերն ունէր մի քրքրւած ձիւնաթաթախ հագուստ, բոբիկ էին նրա ոտները, մերկ կուրծքը և ձեռքերը, անկանոն—ցան ու ցրիւ երկար մազերը։ Նա դողում էր, հեւում և կատաղի աչքերով չորս կողմը նայում։

Տեսաւ Լալօին, պահ մի կանգած նայեց նրան, յետոյ յանկարծ պարզեց ձեռքը և շարժեց։

—Ո՞վ է, ասաց Լալօն գլուխը բարձրացնելով։

Շները նոյնպէս զարթնեցին, նայեցին այդ անձի վրայ, բայց չը մռմռացին։

—Ես եմ, Լալօ, ասաց անձը խռպոտ ձայնով—ես էլ եմ ուզում քնել, ինձ տեղ կը տա՞ս կողքիդ։

—Նեղ է տեղը, տրտնջաց Լալօն։

—Հոգ չէ, ես նեղ կը պառկեմ։

—Լաւ, ասաց Լալօն, փոքր ինչ առաջ գալով տեղ բաց արեց և նորից գլուխը գետնին դընելով քնեց։

Արմաղանը բարձրացաւ. շները տեղ տուին նրան. նա պառկեց։

Շներն էլ պառկեցին։

Եւ բոլորը քնեցին։ Բուքը սաստկացաւ, գիշերը աւելի մթնացաւ և ձիւնը փոշիի նման գալիս լցնում էր ամեն կողմ...

—

Առաւօտեան Լալօն միայն զարթնեց. շարժեց պառկած Արմաղանին. բայց թշւառ կինը փայտացել էր և շները հեռու կանգնած, բիզ-բիզ մազերով նայում էին Արմաղանին և աղիողորմ ձայնով ոռնում։

—Ո՜ւֆ, ասաց խենթը—երանի՜ նրան, ինչ հանգիստ քնել է...

1891.

ՉԷԼԷԲ[1]

I.

Երզրումի չէլէբ Մուստաֆան շահաւէտ էր համարել տուն ունենալ Մալ-մէյդանի-կոչւող հրապարակի մօտ, ուստի և Մուստաֆա—Չրի վրայ գտել էր նա մի բնակարան, որի լուսամուտները նայում էին այդ հրապարակին։

Առաւօտները Մուստաֆա աղան զարթնում էր հրապարակի վրայ տեղի ունեցող աղմուկից, իսկոյն լւացւում, իջնում էր ցած, նստում, սըրճատուն, մի սուրճ խմում, ծխում էր նարգիլէն և որովհետև սրճատուն էին լցւում միշտ իր ծանօթ մատրաբազներ[2]) և ուրիշ չէլէբներ ևս, սկսում էր նրանց հետ խօսակցութիւն բանալ, չը

[1]) Անասունի առևտուրով զբաղւող։

[2]) Անասունի և այլ առևտուրով օգտւող խաբեբաներ։

մոռանալով հայեացքը միշտ հրապարակի վրայ պահել և զննել թէ այնտեղ ինչ էր կատարւում ժխորի մէջ։

Աշնանային մի առաւօտ, երբ նոր էր ներգիլէի փողը բերանին տարել ծալապատիկ նստած թախտի վրայ և յենած լուսամուտի քիւին, —սրճատուն մտաւ մատրաբազ Սաքօն, բարևեց, նստեց Մուստաֆա աղայի կողքին և երբ վերջինիս հրամանով Սաքօն առաւ սրճագործի մատուցած սուրճը, Մուստաֆա աղան մի սուր հայեացք ձգելուց յետոյ հրապարակի վրայ, այսպիսի խօսակցութիւն սկսեց Սաքօի հետ։

—Սաքօ, հարցրեց նա—այսօր տաւար բերե՞լ ես ծախելու։

—Շատ եմ բերել. երէկւայ ոչխարներս դեռ չեն ծախւել։

—Ի՞նչու. դասաբ Հասանը որի՞ց էր առել ուրեմն 15 հատ դ ո չ ոչխարները։

—Հինգը ինձնից առաւ, իսկ միւսները Օմարից։

—Էդ ո՞ր Օմարն է։

—Գեաւուր-բողանցի [1]) Օմարը։

—Հա, ճանաչում եմ. նրան ո՞րտեղից էր այդքան ոչխար։

—Մի քիւրդից առաւ երէկ, և տեղն ու տեղ էլ ծախեց դասաբ Հասանին, տաս ղուրուշ աւելով։

[1] Մի թաղ է Էրզրումում։

—Հայի՞ն... Լաւ աշխատանք է, Ալլահ ի ւ չ ու ն [1]). ես երկու օրւայ մէջ էլ չեմ կարող աշխատել. եզներ էլ չունի՞ս։

—Երկու հատ կայ, որ էսօր եթէ չը ծախեմ, էգուց կը սատկեն. հալ չէ մնացել վրաները։

—Երևի խոտ չես տալիս։

—Ի՞նչու իզուր տեղ խոտ տամ. թաց եօնջա եմ տալիս. հերիք չէ՞։

—Տունդ չը քանդւի, ծիծաղեց Մուստաֆան—թաց եօնջան խօ տաւարին կուռեցնի միայն, չի կշտացնի։

—Ի՞նչ եմ անելու ծախւելիք տաւարի կշտանալը, ծիծաղեց մատրաբազը—իմ ուզածը նրանից ուռիլ ու չաղ երևալն է. այդպէս էլ անում եմ։

—Վարպետ ես եղել, Ալլահ իւչուն... Ի՞նչ արիր էն կաղ ձիդ. ծախեցի՞ր։

—Ուզածիդ պէս. մի յիմար գիւղացի գտայ ու 300 ղուրուշով կպցեցի գլխին։

—Վայ, էդ խօ շա՞տ վարպետն ես եղել. դաղած ձի էր. որ տէրը գտնի, ձեռքիցը կառնի։

—Ինձ՞ ինչ. ես 300 ղուրուշ գրպանս դրի. ինքը գիտէ իր ձին, կուզէ տիրոջը տայ, կուզի պահի։

—Որ կարողանայ՝ չի տալ. տէրը միւսլիմա՞ն էր թէ հայ։

—Հայ էր. ես գողացած ապրանքը կը ծախե՞մ միւսլիմանի։

[1]) Աստւած վկայ։

—Կրկնում եմ, ասաց Մուստաֆան—վարպետ ես եղել։ Ո՞վ գիտէ, գուցէ ծախելուց յետոյ էլ տիրոջը իմաց ես տուել թէ գողացած ձին որի մօտն է։

—Ի՞նչ ես ասում. գոչեց մատրաբազը—ես այդչափ ինսաֆըզ[1]) էլ չեմ. ինձ ինչ. կարող է՝ թող գտնի. մանաւանդ որ ձիու տէրն էլ հայ է...

—Հըմ, ժպտաց հեգնութեամբ Մուստաֆան—ա՛յ, այդտեղ դու խամ ես վարուել, տաս—տասնուհինգ ղուրուշից զրկուել ես։

—Ի՞նչպէս։

—Այ, լսիր քեզ պատմեմ թէ անցեալ շաբաթ մատրաբազ Համիդը ինչ արաւ։ Քիւրդի մէկը գնացել Օվայի մի գիւղից մի լաւ ձի էր գողացել ու բերել 5 ոսկիով ծախել Համիդին։ Համիդը շունն է. իսկոյն իմացաւ որ ձին գողացած է. բռնեց քիւրդի օձիքից ու սպառնաց նրան կառավարութեան յանձնելու, եթէ չը յայտնէր թէ ձին ումն է և որ գիւղից։ Քիւրդը անուանեց տիրոջը. բանից դուրս եկաւ որ Օվայի մի գեաւուրի գիւղի քեհեայինն էր։ Համիդը բաց թողեց քիւրդին, ձին ծախեց քեաթիբ[2]) Արիֆ էֆէնդիին 15 ոսկիով, յետոյ լուր ուղարկեց գեաւուր քեհեային, թէ՝ «ես գիտեմ ո՞րտեղ է գողացած ձիդ»... Հասկանո՞ւմ ես։ Գեաւուրս է,

[1]) Անխիղճ։

[2]) Գրագիր։

եկաւ քաղաք, Հիւսէյինին մի ոսկի մուշտուլուղ տուեց և գնաց Արիֆ էֆէնդիի օձիքից բռնեց։ Արիֆ էֆէնդին սկզբից էլ գիտէր որ ձին գողացուած էր, բայց էժան էր առել ու ետ չէր ուզում տալ. գիտե՞ս, արաբական սերունդից էր ձին.—լաւ ոտներ, լաւ գլուխ, հանգիստ վազք. մի խօսքով 30 ոսկիանոց մի քէօլան... Ի՞նչ գլուխդ ցաւացնեմ. էս ութ օր է, որ Օվացին Արիֆ էֆէնդիի հետ կռիւ է անում. բանը դատաստանի է ընկել ու ես էլ գիտեմ, դու էլ, թէ դատը ո՞րի կողմը կը վճռուի... Տեսնո՞ւմ ես, ինչքան վարպետ լինիս, էլի Համիդին չես հասնիլ...

Այդ միջոցին սրճատուն մտաւ մի հարկահաւաք, զինուորական ֆէսը ծոծրակի վրայ դրած. բարևեց երկու խօսակիցներին և նրանցից քիչ հեռու նստելով, հպարտութեամբ գոչեց սրճագործին.

—Սուրճ և ներգիլէ. շո՛ւտ...

—Բարի եկար, Իզէգդին էֆէնդի. թէմէնդէ արին խօսողները։

—Այդ ո՞ւր ես շտապում այդպէս. հարցրեց Մուստաֆան—չը լի՞նի գործերդ շատացել են։

—Շատանալ ասացիր ու պրծա՞ր. գոչեց նեղացած ձայնով հարկահանը—գործ շատ լինէր՝ էլի վնաս չունէր. բանից դուրս է գալիս, խաբեբայ կապալառուն ինձ յանձնել է այնպիսի գիւղեր, որոնց բնակիչները ոչինչ չունեն հարկ վճարելու համար. բացի դրանից, կատաղեցնելու չափ ըմբոստ են. շատ որ գոռում ես, ասում են՝

«որ ոչինչ չունենք, ի՞նչ տանք»... Դու ասա, Մուստաֆա աղա, էլ ի՞նչ անես դրանց հետ. 1000 ղուրուշ եմ ուել, հասկանում ես. 1000 ղուրուշ եմ վճարել այդ գիւղերի համար, յոյս ունենալով որ 3000 կը շահեմ. բայց ահա երեք օր է, որ տանջւում եմ, գնում—գալիս և դեռ 1000 ղուրուշ էլ չեմ հաւաքել։

Եւ նեղացած՝ մեծ-շառաչիւնով խմեց սուրճը։

—Հըմ, արեց Մուստաֆան մտախոհ—այդ խօ վատ բան է եղել. ո՞վ գիտէ որքա՛ն պիտի չարչարուես դեռ ևս։

—Ո՞վ, ես... գոչեց կատաղած հարկահանը—այսօրուանից շուտը չը կայ. կերթամ գանգատ կը տամ կապալառուի վրայ և իր գիւղերը իրեն կը յանձնեմ. գոնէ 1000 ղուրուշս կը ստանամ։

—Վատ չի լինիլ. դիտեց Մուստաֆան—վատ չի լինիլ, եթէ 1000 ղուրուշդ ետ կարողանաս ստանալ. հաւաքածիդ հետ գումարելով՝ 2000 կանէ. երեք օրուայ մէջ մի գումար՝ մէկին—մէկ շահ բերելը, հանգստութեամբ ու անվրդով՝ մեծ երջանկութիւն է. բայց...

—Բայց ի՞նչ. գոչեց հարկահանը նեղացած, տեսնելով թէ ինչպէս իր խորամանկութիւնը հասկացուեց։

—Բայց, շարունակեց Ջէլէբը - մարդս ստեղծուած է աշխատելու և չարչարուելու համար. մի ամսուայ չարչարանքը 3000 ղուրուշ եկամուտի համար՝ շատ չէ։

—Ի՞նչ ես ուզում ասել։

—Ուզում էի ասել թէ, եթէ ցանկանայիր փոքր ինչ շուտ չը յուսահատուել և ծուլանալ, 1000 ղուրուշով գնածդ հարկերը կարող են մի ամսուայ մէջ զուտ շահ բերել 3000-ից աւելի։

—Ինչե՛ր ես խօսում. գոչեց նեղացած հարկահանը—կոկորդս պատռեց գոռալով. գինուորի և իմ ձեռները ցաւեցին ծեծելով. բանտերը լցուել են չը վճարող գիւղացիներով. բայց որ չունեն, ի՞նչն առնես։

—Տաւա՞ր էլ չունեն։

—Տաւար ունեն, բայց գիւղում գնո՞ղն ով է. ես էլ չեմ կարող 50 ղուրուշի համար տաւարներ առաջ անել ու քաղաք գալ։

—Միամիտ մարդ ես, Իզէդդին էֆէնդի, ծիծաղեց Ջէլէբը—երևի չես փորձել։ Ի՞նչ հարկաւոր է տաւարը քաղաք բերել և կամ 50 ղուրուշի համար եզն ու կովը խլել, որ յետոյ ղալմաղալ դուրս գայ։ Ես լինէի քո տեղը, երկու գինուոր կը վերցնէի հետս, թևիս տակը կը դնէի քօչանների տետրակը, մի հատ Ջէլէբ էլ հետս կառնէի ու գիւղերը կերթայի. տաւար ունեն, Ջէլէբին կը ծախէի, տուրք ունեն՝ տաւարով կառնէի... հասկանո՞ւմ ես... ես լինէի քո տեղն՝ այդպէս կանէի։

Հարկահանը զարմացած՝ Ջէլէբի երեսին նայեց։

—Այո՛, շարունակեց Ջէլէբը—եթէ կուզես,

տհա ես պատրաստ եմ. փող ինչքան ուզես, ունեմ. միայն դու ինձ տաւար տուր և զինուորներիդ էլ հրաման, որ չունեցողի տաւարն ինձ մօտ քաշ տան և ինչ պայմաններ որ առաջարկեմ, ստիպեն գիւղացուն՝ ծախելու...

—Ա՛յ լաւ խելք, ծիծաղեց մատրաբազը—ես իմ Աստուած, ինձ էլ որ տանեք՝ կը գամ։

—Դու քո տեղդ ծանր նստիր. ասաց խրատութեամբ Չէլէբը—քո բանը չէ գիւղացիների հետ խօսելն ու առուտուր անել իր գիւղում. գիւղացին իր գիւղում քաղաքի պէս չէ. այնտեղ նա կուարար է, անհասկացող է, ուշ համոզւող. ես կեանքս նրանց մէջն եմ անցկացրել և քիչ չէլէբներ կան, որ ինձ նման սիրելի լինեն գիւղացիներին... Իզէդդին էֆէնդի, դարձաւ նա հարկահանին ո՞ր կողմի գիւղերն են յանձնուել քեզ։

—Խնուսի մէջ։

—Լաւ ուրեմն, ողջ Խնուսն ինձ ճանաչում է. կուզե՞ս ես քեզ հետ գամ ու հարկերդ սաղացնեմ։

—Ա՛րի, բայց նաղդ կուզեմ։

—Ձեռքդ տուր... Երբ մէկ գիւղի գործը վերջացնենք և հեռանալու լինենք այնտեղից, մինչև միւսը հասնելը, հաշիւը կը տեսնենք և առաջին գիւղի հարկը կանխիկ կը վճարեմ։ Համաձա՞յն ես։

—Համաձայն եմ. ե՞րբ գնանք։

—Վաղը. քանի որ ցորենը չէ վերցուել կալից։

—Ինչո՞ւ, ցորենի վերցուելը մեզ ինչ կը խառնի։

—Շատ կը խառնի, գիւղացին չի դժուարանայ տաւարը ծախելու, երբ աչքի առաջ ունենայ ցորենի դէզը և մտածի թէ դուցէ ցորենի արդիւնքից նորէն կարողանայ տաւար գնել։

—Իմ գիւղերում այժմ ցորենը հաւաքուած կը լինեն։

—Հը՛մ, դէմքը կնճռեց Չէլէբը—այդ վատ է. բայց ինչ և իցէ. ի՞նչ տեսակ հարկ է քո հարկը։

—Տաւարի. ի հարկէ, փետակների էլ կայ։

—Ես փետակներ էլ կառնեմ. ուրեմն վճռուե՞ց։

—Վճռուեց. էգուց առաւօտեան զինուորների հետ տունդ կը գամ։

—Շատ լաւ, ես էլ կասեմ, որ մի լաւ կերակուր եփեն. կուտենք, կը խմենք ու ճանապարհ կընկնենք։

II.

Այն գիւղը, ուր երկու օրից ի վեր Չէլէբ Մուստաֆան և տուրք հաւաքող Իզէդդին էֆէնդին առաջին անգամ մտնելով՝ սկսել էին իրանց գործը,—Խնուսի Քօփալ գիւղն էր։ Մի գեղեցիկ այգեզարդ գիւղ, բնակուած կէսը մահմեդական քիւրդերով և կէսը հայերով։ Խրճիթներից իւրա-

քանչիւրը ոչ միայն իր մօտ, այլ և գիւղի ծայրում ունէր իր սեպական այգին, լիքը զանազան պտղատու ծառերով և խաղողի թուփերով։

Ունենալով այգի, ունենալով շրջապատող գեղեցիկ լեռներ և դաշտեր, ուր սփռուած էին անհամար անուշահոտ ծաղիկներ, գիւղացիք փեթակներ էլ էին պահում. իսկ անասուն նրանք շատ ունէին. շրջակայ մարգագետինների վրայ արածում էին բազմաթիւ ոչխարներ և կովեր, դաշտերից տուն էին գալիս ամեն երեկոյ լծի այնպիսի եզներ, որոնք իրանց հուժկու կազմուածքով հիացում էին ազդում։ Թէջիրները, երբ գիւղից գիւղ մանգալով Հալէբ տանելու ոչխար էին գնում, մի շաբաթ անպատճառ անց էին կացնում այդ գիւղում և դուրս էին գալիս՝ 100-ից աւելի գառներ և ոչխարներ էին տանում։

Գիւղացին, թէ քիւրդը և թէ հայը աշխատասէր, քրտնող գիւղացի էր. նա հերկում էր, տնկում, խաշնը շատացնում, իր գեղածիծաղ շրջապատից օգտւում և այնտեղ մնում, այդտեղը կապելով առնող ոչ մի հարկահան, տուրք հաւաքող, իանէ ժողովող, ոչ մի քիւրդ, և ոչ էլ մի բէգ՝ չէր զղջում. վաշխառուն ուրախութեամբ էր Քօփալցիին փոխ տալիս, վաճառականը՝ ապառիկ։

Ոչխարների տուրք հաւաքող Իզէդդին էֆէնդին ի հարկէ չէր նեղանայ, եթէ իր կապալով վերցրած բոլոր գիւղերը Քօփալի պէս լինէին.

Բայց արի տես, որ Քօփալ գիւղն իսկ այդ տարի չէր կարողանում տուրքը հեշտութեամբ տալ, որովհետև ամառը նրանց անասունների մէջ մի այնպիսի հիւանդութիւն ընկաւ, որ երբ Ռէս հարուստ Մկօի և Հիւսէյն աղայի տաւարներից վեցը կոտորւեցին, գիւղացիք նրանց երանի էին տալիս, որ այդպէս հեշտութեամբ են ազատւել։ Հոտը բռնել էր ամեն կողմ. անգղերը և ցիները ճախրում էին գիւղի վրայ...

Կար գիւղացի, որ մի գիշերւայ մէջ կորցրել էր 3 կով, մի եզ և 10—15 ոչխար. և այդքանը շատ մեծ բան է գիւղացու համար, որովհետև ամենահարուստը նրանցից, երկրի այդ դրութեան ժամանակ, հազիւ կարողանում է ունենալ 4—5 կով, 4 եզ և 20—30 ոչխար։

Այդ տարի Քօփալ գիւղը աղքատ էր տաւարի կողմից, այնու ամենայնիւ նա տւել էր տուրք հաւաքողին աւելի քան 500 ղուրուշ. էլ աւելի չէր կարող տալ. սակայն Իզէդդին էֆէնդիի հաշիւները այդքան չէին. նա միայն Քօփալ գիւղի վրայ նշանակել էր 1500 ղուրուշ տուրք... Սատանան տանէ, պէտք էր գոյացնել այդ առաջին գումարը, ապա թէ ոչ նա միւս գիւղերում ոչինչ չէր կարող հաւաքել։

Երկու օր էր, որ նա ջէլէբի հետ գիւղը հասել, Հիւսէյն աղայի տունն իջել և սկսել էր գործի։

Նրանց գալու լուրը կայծակի արագութեամբ

տարածուեց միւս գիւղերումն էլ և այս անգամ սարսափ պատճառեց, որովհետև լսում էին, որ ջէլէբ Մուստաֆան շատ փող ունի, տաւար գընելու անյագ փափագ և Իգդիրն էֆէնդիի հետ 3 սւարիներ կան, որոնք գիւղացոց տաւարները գոմերից հանելով, ջէլէբի գննողութեան են ներկայացնում։

Քօփալ գիւղից ոչ շատ հեռու, լեռան ետևի լծքի վրայ փռւում էր նոյնպէս կէս քիւրդ և կէս հայ բնակիչներով Խնուսի Աղջամելիք գիւղը։

Այդ գիւղը այգի քիչ ունէր, բայց փետակ ունէր· աղքատիկ գիւղ էր և շատ հարկահանների տետրակների մէջ նա նշանակւում էր իբր մի մաս Քօփալ գիւղի։

Ի հարկէ, հարկահանի նորից գալը և սւարիներ ու ջէլէբ բերելը՝ ամենից առաջ այդտեղի գիւղացոց սարսափեցրեց· հայերը յուսահատ՝ կորցրին իրանց, իսկ քիւրդերը մի երեկոյ հաւաքուեցին և գնացին Շէրիֆ աղայի մօտ, նրա գոմի լօնջան, ու շաբաթւայ մէջ մի քանի անգամ ծերունի Շէրիֆը հաւաքում էր գիւղացիներին, եթէ տաք էր, նրա առջևի մայթի վրայ էր նիստ կազմում, իսկ եթէ ցուրտ՝ գոմի մէջ։

Շէրիֆ աղան 70 տարեկան էր· քաջառողջ մի ծերունի, որ գործից քաշւած, ապրում էր հանգստութեամբ և զւարճանում էր իր տան մեծութեամբ ու բազմութեամբ։ Հինգ որդի ունէր, չորս հարս, վեց թոռներ, 3 մշակ, երկու հոտաղ,

10 կով ու եզ և 150-ի չափ գառ, ոչխար, խոյ և այծ։ Հիւանդութիւնն այս տարի կոտորեց նրա տաւարների կէսը և այժմ Շէրիֆ աղան ամեն անգամ երբ համարելով տաւարները, գտնում էր օրը մի քանի հատ պակասած, մի տեսակ տըխրութիւն էր զգում և անդադար ասում իր որդիներին·

—Երևի ծերունի Շէրիֆն էլ այս տարւայ ձիւնը չի տեսնի, որովհետև մեռան նրա բոլոր ընկերները։

Եւ իրաւ, մի շաբաթւայ մէջ սատկոտեցին այն երկու եզը և մի ձին, որոնց Շէրիֆը իր երիտասարդ ժամանակ բանեցրել էր դաշտում և ճանապարհորդութեան ժամանակ։

Շէրիֆը լաց եղաւ երբ իմացրին, որ սատկել է նրա ծերունի ձին· մի օր ամբողջ տխուր մնաց, երբ տեսաւ իր ընկեր երկու եզների դիակները, որոնց նրա որդիները գոմից քաշ տալով՝ տարան ձգեցին դաշտը։ Շէրիֆը աչքը չը զատեց այդ դիակներից, մռայլ դէմքով դիտեց թէ ինչպէս անգղերը և ցիները նախ պտոյտներ գործեցին դիակների վրայ, յետոյ իջան և սկսեցին գիշատել։ Մինչև իսկ կռացաւ քար վերցնելու, որ հալածէր իր բարեկամներին կտցահարող թռչունները, բայց իսկոյն սթափւեց, բարձրացաւ, մի խոր հառաչ արձակեց և ամբողջ օրը տխուր մնաց·

Հէնց այդ օրւայ երեկոյեան էր, որ գիւղի

քիւրդ ժողովրդից վեց աղ-սախկալներ եկան Շէրիֆի մօտ։ Շէրիֆ աղան նստել էր «բաւէժ»-ը,[1]) գլուխը կռացրել, ծնօտը ձեռքի փայտին կռթնեցրել, մտածում էր։

Աղ-սախկալները պատկառանքով մօտեցան, թէմէննաէ արին և ասացին.

—Սալամ ալէյքում, Շէրիֆ աղա։

Ծերունին դանդաղութեամբ բարձրացրեց գլուխը, տխրութեամբ նրանց նայեց և պատասխանեց.

—Ալէյքում սալամ։

Աղ-սախկալները քիչ հեռաւորութեամբ նըստեցին գետնի վրայ։ Պահ մի լռութեամբ մտածում էին ամենքը։

—Ի՞նչ նոր բան կայ, հարցրեց վերջապէս Շէրիֆը գլուխը բարձրացնելով։

—Հարկահաւաքը եկել է. ասաց մէկը։

—Հը՛մ, նորի՞ց եկել է. կնճռեց դէմքը Շէրիֆը— մի՞թէ նա չը լսեց, որ գիւղացիք ոչինչ չունեն տալու... Ահա, այն կողմը նայեցէք. յարեց նա գաւազանը պարզելով—տեսնո՞ւմ էք այդ ցիները և անգղերը. սրանք իմ հին բարեկամ երկու եզների դիակներն են ուտում։

—Աստուած գլուխդ ողջ պահի, Շէրիֆ աղա։

—Է՛հ, էհ, որդիներս, հառաչեց ծերունին— զգում եմ որ ես էլ գնալու եմ նրանց ետևից... Բայց խղուր է այդ հարկահաւաքը մտածում, որ

[1]) Մայթ, ուրի վրայ արև է ընկել։

եթէ անցեալ անգամ Շէրիֆը նրան տուրք տւաւ, այս անգամ էլ աւելորդ կը տայ. այս անգամ, երբ դեռ նոր մեռան նրա հին ընկերները... Հին ձիս էլ սատկեց. յարեց նա փոքր ինչ լռելուց յետոյ —այդ այն ձին է, որ երկու անգամ ինձ ազատեց մահից։ Այո՛, նա էլ մեռաւ. մնացել է միայն ծերունի Շէրիֆը։

Աղ-սախկալները տխրութեամբ գլուխները ծռեցին և նրանցից մէկը պարտք համարեց նորից մռմռալ.

—Գլուխդ ողջ մնայ, Շէրիֆ աղա. հայւանների համար այդքան ցաւելը՝ մեղք է։

Շէրիֆ աղան գլուխը բարձրացրեց և խօսողին նայելով ասաց.

—Մե՞ղք է. այդպէ՞ս ասացիր, կաղի՛ր, անասունների համար ցաւելը մե՞ղք է։ Այդ նրանք են, որոնք քեզ, քո կնոջ, քո որդիներին և թոռներին հաց են տալիս, պահում մեծացնում են. այդ նրանք են, որոնք մի կտոր խոտով բաւականացած, իրենց ամբողջ կեանքը նւիրում են քեզ, քաշում քո բեռը, հերկում քո հողը, կրում քո մորակի հարւածները և ոչինչ լաւութիւն չը տեսած, տաժանելի քրտինք են թափում քեզ համար, քեզ կաթ տալիս, միս տալիս, գաւակ են ծնում քեզ համար և ամբողջ գոյութեամբ քեզ պատկանում... Չէ, կաղի՛ր, երբ Աստուած նրան քեզ է տւել, չէ ասել թէ տանջիր, օգտւիր նրա ոյժերից անխնայ և մի ցաւիլ նրա համար...

Աղ-սախկալներից մէկը շարժուեց և ըստ երևոյթին յուզուած լինելով գիւղի նահապետի խօսքերից, ասաց.

—Շատ իրաւ է ասում Շէրիֆ աղան—ես այս րոպէիս երկու անասուններ ունեմ, որոնց չեմ փոխի իմ բոլոր միւս ոչխարների, այծերի և ձիաների հետ. մէկը մի կաղ էշ է, միւսը մի կով. նրանցից մէկն ընկերացել է ինձ իմ բոլոր ճանապարհորդութիւնների ժամանակ, իսկ միւսը իմ գոմի առաջին անասունն է, իմ գոմի հիմքը. 10 տարի է նա իր կաթով կերակրում է տունս. այժմ նրա ծծերը ցամաքել են, նա նախիր է գնում և տուն գալիս առանց օգուտ տալու, բայց նա 10 տարի տուել է իր օգուտը... Ի՞նչ էք ասում, պէտք է նրան մորթե՞լ, որովհետև միսը դեռ պէտք կը գայ և կաշիից կարելի է տրեխներ շինել... Ես չեմ մորթի, թէկուզ քաղցած էլ մնամ...

—Ի՞նչ կանէիր, եթէ հարկահանը հէնց այդ կովին քաշ տար ջէլէբի առաջ. դիմեց մի ուրիշը։

—Ի՞նչ ջէլէբ. հարցրեց Շէրիֆ աղան զարմացած։

—Հարկահանն այս անգամ ջէլէբ է բերել հետը։

—Երեք հատ էլ սւարիներ. աւելացրեց երկրորդը։

—Ջէլէբն էլ Մուստաֆա աղան է. յարեց երրորդը։

Շէրիֆը գունատուեց և չը կարողացաւ ոչինչ ասել։

—Քօփալից եկողներն ասում են, որ ջէլէբը շատ փող է բերել և անխտիր գնում է փետակ ու ամեն տեսակ անասուն. նորից խօսեց մի աղսախկալ։

—Սւարիներն էլ, աւելացրեց երկրորդը—ուխնի առաջն արած գիւղացիներին, տաւարները քշում են գոմից և տանում ջէլէբին։

—Ինձ էլ պատմեցին, մէջ մտաւ երրորդը—որ Դաւութենց Մարտիրոսի էն չաղ կովը գիտէ՞ք, ջէլէբը նրան 5 մէջիդից աւելի չէ տուել ու այդ 5 մէջիդն էլ հարկահանը գրպանը դնելով, փոխարէնը Մարտիրոսին է տուել իր տետրակից մի կտոր թուղթ։

—Հը՛մ, արեց Շէրիֆը մօրուքը թափահարելով, այս անգամ հայերի բանը վատ է, ես կարծում եմ, որ խալամներն էլ զուլում պիտի անեն...

Ասաց, խոր հառաչեց ու ծնօտը յենեց գաւազանին։

III.

Ի հարկէ ոչինչ ելք չունեցաւ Շէրիֆ աղայի մօտ ժողովուած խալամների այդ խորհուրդը, բացի այն, որ նորոգեց ծերունու թախիծը և յու-

սահառեցրեց միւսներին, որոնք երկար, իրենց բազմաթիւ ցաւերի վրայ խօսելուց յետոյ, ցրւեցան։

Մինչ այս մինչ այն, հարկահան Իզէդդինը և Ջէլէբ Մուստաֆան սկսում էին մեծ քայլերով առաջ դիմել։

Երրորդ օրը նրանք անցկացրին 15 հայ և Թիւրք գիւղացիների տաւարների գրահատումով։ Հաւաքեցին ինչ որ կարողացան, ծեծեցին որին կամեցան, Ջէլէբը՝ ռէսի զոմում ժողովեց բաւական տաւար, որոնց բոլորի վրայ նա ծախսել էր 1000 ղուրուշ և քաղաքում 3000-ով անշուշտ կը ծախէր։ Անխիղճ, անխիղճ էր նրա առևտուրը՝ Թագնւած քաղցրաբարոյութեան, համոզողական ձևերի և խորհրդաւոր բարերարի դիմակի տակ։ Ժպտում էր հարկահանը երբ տեսնում էր թէ ինչ հեշտութեամբ կարողանում է իր տետրակի երեսները քչացնել և գրպանը ուռեցնել. դւարճանում էր գիւղացիների մխկտոցներով և ծիծաղաշարժ էր գտնում նրանց մռայլ, յուսահատ դէմքերը, վախկոտ սարկական հայեացքները, տեսնում էր սւարինների եռանդը, որով լցւած, զոմերը դատարկում էին, վազն ի վազ մի տնից ենելով միւսն էին մտնում և այնքան անզգուշութեամբ էին բան գողանում, որ նրանց գրպաններից դուրս էին կախւած լինում ճոթերի ծայրեր, գդալներ, Թաշկինակներ, իսկ ծոցում մղւած զանազան յափշտակած իրերը, նրանց

կրծքին տալիս էր «Ստամբօլի մադամների կուրծքերի ձևեր»։ Այս բոլորը կուշտ ծիծաղեցնում էր հարկահանին և նա զարմանում էր թէ ինչպէս Ջէլէբ Մուստաֆան չէր կամենում մասնակցել իր ծիծաղին, այլ վախկոտ հայեացքներ էր ձգում գիւղի մի քանի կողմում խմբւած գիւղացիների վրայ։

—Ի՞նչ է եղել քեզ, Մուստաֆա էֆէնդի, հարցնում էր նա Ջէլէբին—կարծես թէ կինդ է մեռել կամ առևտուրդ լաւ չէ գնում։

—Հը՛մ, ասում էր Ջէլէբը մտախոհ—վախենում եմ, որ քամի չը լինի։

—Քամին քեզ ինչ կանի. խօ չես մրսում. ծիծաղում էր հարկահանը։

—Ո՞վ գիտէ, մռմռում էր Ջէլէբը առանց ուշք դարձնելու, որ հարկահանը բոլորովին չէր հասկանում իրեն—ով գիտէ. թէև այս երկրում քամին փոթորիկի դժւար է փոխւում, բայց աշխարհիս երեսին ինչե՛ր չեն պատահում։

Չորրորդ օրը երբ Ջէլէբը գնում էր մի Թիւրքի կով, Թիւրքը չը կամեցաւ 5 մէջիդով իսկ տալ անասունը։

—Իմ անասունը շատ արժի. ասաց նա դողդոջուն ձայնով։

Ջէլէբը զարմացաւ, որովհետև կովը շատ հասարակ անասուն էր և սկի իր ուածի կէս գինը չարժէր. ուստի Թիւրքին նայեց և տեսնելով նրա մոլեգին ակնարկը՝ գունաթափւեց։

—Ի՞նչպէս, հարցրեց նա—կովդ դեռ աւե՞լի էլ արժի։

—Ի հարկէ, խօսեց Թիւրքը աւելի հաստատուն ձայնով—իմ կովս 3 մէջիդով եմ առել ես։

Ջէլէբը ապշում էր. նա կարծեց թէ Թիւրքը ցաւից գժուել էր։

—Ի՞նչ ես ասում, միւսիլման, 3 մէջիդով առած կովիդ հինգ մէջիդ եթէ տամ, չե՞ս տայ։

—Չեմ տայ. շրթունքները պրկեց Թիւրքը։

—Վա՜հ, էլ ի՞նչ ունիս ասելիք, քեզ երկու մէջիդ էլ շա՜հ է տալիս, մէջ մտաւ հարկահանը։

—Շնորհակալ եմ, ժպտաց դառնութեամբ Թիւրքը—իսկ քեզ ի՞նչքան եմ պարտ։

—Հինգ մէջիդ։

Թիւրքը քիչ վարանեց, յետոյ ցնցուեց, և կարծես վճռելով չը վախենալ, խօսեց.

—Այդ ի՞նչպէս բանէ, որ չորս օրից ի վեր բոլոր հարկ վճարողներն էլ 5 մէջիդ պարտք ունեն քեզ. ոչ աւելի և ոչ էլ պակաս.

Հարկահանը նոյնպէս գունաթափուեց, դէմքը կնճռեց և գոռաց.

—Քեզ ի՞նչ, դու քո հարկդ վճարիր և կորուիր գնա։ Յետոյ նայեց սուարիներին, որոնք մի քայլ առաջ եկան դէպի գիւղացին։

Գիւղացին տեսաւ այդ առաջացումը, ետ քաշուեց, մի շեշտակի հայեացք ձգեց Ջէլէբի վրայ և ասաց.

—Այնու ամենայնիւ կովս 5 մէջիդով չեմ տայ.

—Ի՞նչպէս, հարցրեց Ջէլէբը քիչ զսպուած ձայնով։ Վախ էր զգում. մի ինչ որ վատ բանի հոտ էր առնում։

—Որովհետև, ասաց գիւղացին—եթէ հինգ մէջիդ տաս, իմ գրպանս ոչինչ չի մնալու, իսկ դրա փոխարէն ես կորցնելու եմ կովին տուածս 3 մէջիդը։

Ջէլէբը նստած տեղից բարձրացաւ, մի ակնարկ ձգեց հարկահանի վրայ և իր շփոթութիւնը ծածկեց մէջտեղ բերած կովը քննելով։

—Եւ դու կորուած ես համարում թագաւորին տուած փողդ. գոռաց հարկահանը.

—Աստուած չանի... պատասխանեց գիւղացին, յետոյ ուզեց շարունակել, բայց բերանը փակեց, մի քայլ յետ քաշուեց ու առանց ետ նայելու՝ հեռացաւ։

Նրա հեռանալու ժամանակ, Ջէլէբը կանգ առաւ կովին զննելուց, նայեց գիւղացու ետևից, մօտեցաւ հարկահանին և ցած ձայնով ասաց.

—Շատ անենք, քանի քամին փոթորիկի չէ փոխուել... Ես հրաժարւում եմ այլ ևս այստեղ անասուն գնելուց։

—Իսկ միւսնե՞րը. հարցրեց զարմացած հարկահանը։

—Որքա՞ն է ժողովածդ։

—2000 ղուրուշ։

—Բաւականացիր առ այժմ. գնանք միւս գիւղերը, յետոյ այս գիւղին էլի կայցելենք։

Եւ այսպէս, չորրորդ օրուայ երեկոյեան, հարկահանը, ջէլէբը և սւարիները դուրս գալով Քօփալից՝ Աղջամէլիք հասան։

Աղջամէլիք եկողը միշտ Շէրիֆ աղայի տանն էր իջնում. ուստի հարկահանը և ջէլէբն էլ նրա տունը գնացին։

Շէրիֆ աղան սառնութեամբ ընդունեց նրանց, հրաւիրեց իրիկնահացի, լռութեամբ քնն[illegible]ղ ցոյց տուաւ և առանց մի բառ իսկ խօսելու հարկերի մասին՝ հեռացաւ։

Ջէլէբը հետզհետէ մռայլւում էր։

—Ի՞նչ է եղել սրանց, մռմռում էր նա ինքնիրեն—հինգ տարի առաջ դողում էին ամեն ոյժի առաջ, իսկ այժմ... կարծես էլի նոյն Խընուսը չէ։

Խնուսը նոյն չէր գտնում Մուստաֆա աղան, որը հինգ տարի առաջ ոտի տակ էր տալիս գիւղերը և իբր փաշա էր ընդունում իր հետ խօսել ուզող գիւղացիներին։

Խնուսը փոխուած էր գտնում նա. մի ինչ որ քամի՝ նրա կարծիքով, մտել էր այդ կողմերում և աւելի փչում էր քիւրդ ժողովրդեան կողմից։

—Սրանք գեաւուրներին էլ կը փոխեն, մտածեց կատաղած ջէլէբը—էլ սրանց հետ խօսել չի լինում...

IV.

Միւս օրը ամպամած էր երկինքը, օդը խոնաւ և մինչև իսկ ցուրտ. կաթկաթում էր երբեմն անձրև և շրջակայ մարգագետնի խոտերը փայլում էին թացութեան մէջ։

Հարկահանը դեռ քնել էր, երբ ջէլէբը զարթնեց, իջաւ առւի վրայ լւացւեց, նամազը կատարեց և ուշադրութեամբ դիտեց գիւղից դուրս գնացող նախիրը։

—Երեկոյեան պիտի գործի սկսել, մռմռաց նա—ինչպէս երևում է, այստեղ էլ կան լաւ անասուններ։

Քիչ յետոյ հարկահանն էլ զարթնեց, բայց Շէրիֆ աղան դեռ չէր երևում։ Գիւղացիք եթէ պատահմամբ անցնում էին երկու պաշտօնեաների առջևից, վախկոտ հայեացքներ էին ձգում նրանց վրայ, խոնարհութեամբ բարևում էին և կարծես փախչում, վախենալով նրանց հարցմունքներից։

Վերջապէս Շէրիֆ աղան էլ դուրս եկաւ խրճիթից և նստեց դռան առաջ դրած գերանի վրայ։ Հարկահանը և ջէլէբը մօտեցան նրան։

—Բարև, Շէրիֆ աղա, ասաց հպարտու-

թեամբ հարկահանը նստելով նրա կողքին—ի՞նչ ես կարծում, անձրև չի՞ գալ։

—Կը գայ. ասաց ծերունին—բայց ոչ թէ ցերեկը, այլ գիշերը կը գայ։

—Այս անձրևները ձեզ օգտակա՞ր են, մէջ մտաւ Ջէլէբը.

Շէրիֆ աղան շեշտակի նրան նայեց և սառն ու կէս բերնով պատասխանեց։

—Անձրևները ամեն ժամանակ օգտակար են։

—Բայց, խօսեց հարկահանը—ես լսել եմ, որ հունձքի ժամանակ անձրևները վնաս են տալիս։

—Այո՛, եթէ չափազանց գայ. ամեն բան իր չափն ունի. չափից երբ դուրս գայ՝ վնաս կը տայ... Այո՛, ամեն բանը իր չափն ունի. նոյն իսկ ուտելը, նոյն իսկ...

Եւ կանգ առաւ ու վարանեց։

—Նոյն իսկ ի՞նչ, հարցրեց Ջէլէբը, որ սկըսում էր տաքանալ, հասկանալով թէ ծերունին ուր պիտի հանէր։

—Նոյն իսկ, գոչեց ծերունին վճռական ձայնով—նոյն իսկ նախատելը, գրկելը։

Ասաց, նայեց Ջէլէբին, ծնօտը դրաւ գաւազանի վրայ և սկսեց աղօթել։

Հարկահանը և Ջէլէբը մնացին միմեանց երեսի նայելով։

—Հը՛մ, ասաց Ջէլէբը—մարդիկ կարողանում են փակել քարի, ծառի և հողի բերանը, կարել նրանց լեզուն։

Շէրիֆը մի վեհ ակնարկ ձգեց նրա վրայ, դանդաղութեամբ բարձրացաւ, քայլեց դէպի խըրճիթը և ասաց.

—Ինձ ներեցէք. պէտք է դաշտ գնամ...

Հարկահանը, որ մինչև այդ ժամանակ լռութեամբ ունկնդիր էր այդ խօսակցութեան, ծերունու խրճիթ մտնելուց յետոյ, դարձաւ Ջէլէբին և ծիծաղելով ասաց.

—Լաւ մօլլա է այս ծերունին չէ՞, Մուստաֆա աղա...

—Վտանգաւոր մօլլա է, պատասխանեց մըտախոհ Ջէլէբը—նրան դիպչել չէ կարելի. նրանից էլ առնելիք ունե՞ս։

—167 ղուրուշ։

—Ձեռք քաշիր դրանից, ապա թէ ոչ կը կորցնես բոլորը։

—Ձե՞ռք քաշեմ, ծիծաղեց հարկահանը—ամենից առաջ այդ շատախօս մօլլայի մօրուքը պիտի թափահարեմ։

—Վախեցիր այդ մօրուքից թափւելիք սատանաներից։

—Ա՛յ իմ թալիսմանները. ասաց հարկահանը հեռւում կանգնած սւարիները ցոյց տալով։

—Դու գիտես, խօսեց Ջէլէբը ուսերը թօթւելով—ես չեմ գնի դրա անասուններից։

—Չե՞ս գնի, գոչեց կատաղած հարկահանը—ուրեմն դու վախենո՞ւմ ես այդ քաֆթառ մօլլայից։

—Վախենում եմ։

—Դո՞ւ... և դեռ եկել ես ինձ օգնելո՞ւ... Լսիր, Մուստաֆա, եթէ դու քեզ ներկայացրած տաւարներից մէկը մերժես գնելու, կը հրամայեմ սւարիներիս, ձեռքիցդ խլել բոլոր ունեցածներդ։

Ջէլէբը մի լուռ հեգնական ժպիտով նրան նայեց և թողնելով հարկահանին կատաղած դըրութեան մէջ, հեռացաւ դէպի գիւղը։

—Լաւ ուրեմն, մռմռաց նրա ետևից հարկահանը—տեսնենք ի՞նչ ունի այս ծեր շատախօսը, որ Մուստաֆան շան պէս վախենում է նրանից... տեսնենք... Սւարինե՛ր—գոռաց նա զինուորներին դառնալով—ետևիցս եկէք։

Եւ ձեռքը կանթելով մէջքին, դիմեց դէպի Շէրիֆ աղայի խրճիթը։

Շէրիֆը մտել էր տանտուն։ Այնտեղ նրա թոռնիկները սողալով մօտեցել էին, մէկը նրա մօրուքի հետ էր խաղում, երկրորդը ցուպին յենվելով՝ աշխատում էր բարձրանալ դէպի գիրկը, իսկ երրորդը թքոտ և կրծած մի խնձոր պարզում էր ծերունի պապին։

Կանայք երեսները կիսովին ծածկած, կերակուրի պուտուկները իջեցնում էին թոնիրը. իսկ տանտիկինը մի կողմում նստած, աշխատում էր թոռան կորտած վերարկուն կարկտնել։

Հարկահանը կոպտութեամբ հրեց դուռը և դաժան դէմքով ներս մտաւ։ Կանայք փախան թո-

նիրի կողքից, Շէրիֆը ւրջացրեց իր թոռներին ուղղւած ժպտող դէմքը և զարմացած՝ մտնողի շարժւացքներին էր նայում։

Հարկահանի ետևից ներս մտան նաև սւարիները, ձեռքերը սրերի վրայ դրած։

—Ծերո՛ւնի, ուղղակի դիմե՛ց դէպի Շէրիֆը՝ հարկահանը և կանգ առաւ նրա առջև—քո տուրքերից տալիք է մնացել 167 ղուրուշ, որ գումարելով իմ և սւարիների ճանապարհածախսի հետ անում է 200 ղուրուշ. վճարի՛ր այդ գումարը։

Շէրիֆն ապշութիւնից նախ ոչինչ չը խօսեց, յետոյ գունատ, դողդոջուն ձեռքով ալիւրի տոպրակին յենլով բարձրացաւ, շեշտակի հայեացքով նայեց յոխորտութեամբ կանգնած հարկահանին և ասաց.

—Ես ոչինչ չունեմ տալու ձեզ. հեռացէք այստեղից...

Հարկահանը, որ կարծես սպասում էր այդ դիմադրութեան, աչքերն ոլորեց և գոռաց.

—Դու յանդգնո՞ւմ ես պարտքերդ չը տալ։

—Ես յանդգնում եմ քեզ յայտնելու, որ այժմ իմ տաւարներից մնացել են 4 կով, 2 այծ և 20 ոչխար... այդ բոլորի համար, յանդգնում եմ յայտնելու, յարեց նա հեգնելով—որ ես վճարեցի քեզ 100 ղուրուշ փող, այսինքն որոշեալ դամջուրից 9 ղուրուշ էլ աւելի... դու ինձ

մօտ ունիս մի քօչան 100 ղուրուշի... ներո՛ւմ էք իմ յանդգնութեանը։

Հարկահանը կատաղում էր, նա մի քայլ ես արեց դէպի ծերունին և գոռաց.

—Ծերունի շատախօս, ասում եմ քեզ, որ 167 ղուրուշ էլ պարտ ես ինձ. վճարի՛ր, քանի դեռ չեմ բարկացել։

—Բարկանալը արդէն բարկացել ես. ասաց Շէրիֆը հանդարտութեամբ, որ յատուկ է միայն նրանց, որոնք գիտեն թէ դիմացի յոխորտացողը չէ կարող փնասել—Բարկանալը արդէն բարկացել ես,—շարունակեց նա—միայն յայտնիր ինձ թէ ինչ հաշւից ես գոյացրել նորից 167 ղուրուշը։

—Ինչ հաշւի՞ց, բացականչեց հարկահանը—ղամջուրի հաշւից, շատախօ՛ս մօլլա. ինձ էլ չես կարող Ղուրանից անգիր արած խօսքերով վախեցնել... Դու ունես 10 կով, 50 ոչխար և այծ, 3 ձի, 4 գոմէշ և աւելի քան 6 եզը...

—Սպասիր, ընդհատեց Շէրիֆը—թոյլ տուր ինձ խօսել, առ այժմ մի բարկանալ, իսկ յետոյ, եթէ կուզես, ծախիր անասուններս ու ուզածդ առ...

—Եւ կը ծախեմ, գոռաց հարկահանը—կը ծախեմ անխնայ. Շէրիֆ աղա ես, ինչ ես, քեզ նման շատախօս մօլլաների շատ ենք հանդիպել... Աստ ինձ տաք կաթ տան, շուտ... յարեց նա կամենալով այդ մանէվրով վախեցնել ծերունուն։

Ասաց, աւելի ևս կնճռեց դէմքը և նստեց ալիւրի տոպրակի վրայ։

—Կաթ ուէք էֆէնդուն. դիմեց ծերունին կանանց, յետոյ հանդարտութեամբ կոթնեց փայտին և շարունակեց.

—Լսիր, Իզէդդին էֆէնդի—մեզնից այժմ ոչ ոք անգիտակ չէ, որ ղամջուրի տուրքը 3½ ղուրուշ է՝ գլխից։

Հարկահանը ցատկեց նստած տեղից, նա երբէք չէր կարող երևակայել, որ մի գիւղացի յանդգնի ղամջուրի գինը գիտենալ և մանաւանդ արտասանել իր առջև։

—Ի՞նչպէս, գոռաց նա—3½ ղուրո՛ւշ։

—Այո՛, շարունակեց ծերունին—ոչ ոք նաև անգիտակ չէ, որ օրէնքով չեն վճարում տուրք՝ սատկած անասունների, ինչպէս և մեռած մարդու համար... բացի դրանից, չեն վճարում տուրք եզան, գոմէշի ու ձիու համար, որովհետև սրանք երկիրը մշակողներ լինելով, ազատ են ամեն տուրքից... այժմ, էֆէնդի, երբ օրէնքը կայ, ես զարմանում եմ թէ ինչ ոյժով դուք բոլորդ կամենում էք ղամջուրի 3½ ղուրուշը 10 ղուրուշի դարձնել, սատկածները կենդանացնել և երկիր մշակողները՝ ղամջուրի ենթարկել... Համեցէք, կաթը խմէք։

Այդ միջոցին ծերունու մեծ թոռը ներկայացնում էր հարկահանին հողէ թասի մէջ լցրած տաք կաթ։

Հարկահանը ետ մղեց ամանը. շւարել էր. կարծում էր թէ երազումն է։

—Ի՞նչպէս, մռմռաց նա—ինչ ոյժով... օրէնքի ոյժով, օրէնքի...

—Օրէնքի ձայնը մեզ էլ է հասել։

—Օրէնքի ձա՞յն... ասաց հարկահանը, յետոյ ցատկեց տեղից, հեռացաւ մի քայլ, և դիմելով սւարիներին՝ աւելացրեց։

—Սւարինե՛ր, կորեցէք այդ ձայնը... դուր չէ՛ գալիս ինձ...

Սւարիները առաջացան։

—Այդպէ՛ս, ժպտաց գունաթափ ծերունին—օրէնքի ձայնը ձեզ դուր չի՛ գալիս... Ես իմը ասացի, ահա ես, բռնէք, ինչ որ կուզէք արէք, ահա տունս և տաւարներս,—ծախեցէք, եթէ օրէնքը թոյլ է տալիս։

Հարկահանը յանկարծ սթափւեց ծերունու այդ վճռական խօսքերից, վախեցաւ, որովհետև իսկոյն մտածեց իր բռնելիք ընթացքի հետևանքը։

Ուստի մի շեշտակի հայեացք ձգեց ծերունու վրայ, քայլեց դէպի դուռը և ասաց.

—Կը տեսնւենք քեզ հետ, ծերունի։

—Ես միշտ գիւղումն եմ. խոնարհւեց ծերունին։

—Գնա՛նք, զինւորներ, դարձաւ հարկահանը սւարիներին—մենք դրա հետ հաշիւը կը վերջացնենք երեկոյեան, երբ նախիրը գիւղումը կը լինի։

Ասաց ու շտապեց դուրս գալու խրճիթից։

Դռան մօտ դէմ առ դէմ եկաւ Ջէլէբին, որ նայեց նրան հետաքրքրութեամբ և հարցրեց։

—Հը՞, ստացա՞ր... Բայց այդ ինչ գունաթափւել ես։

—Շատ կծանն է, մռմռաց հարկահանը քայլելով—երեկոյեան կը տեսնենք։

—Երեկոյեան էլ մութը կը լինի և դու այլևս չես կարող ոչինչ տեսնել այս խաւար խրճիթի շուրջը... Խորհուրդ եմ տալիս փախչել խաւարից։

Հարկահանը չը պատասխանեց։ Մտածում էր։

V.

Բայց Ջէլէբն էլ պակաս չէր մտածում։ Նա մտածում էր թէ կարող էր փոթորիկ բարձրանալ և ոչնչնացնել իր ժողոված տաւարները, խլելով ձեռքից։

Այդ միտքը նրան զբաղեցրեց ամբողջ օրը։ Պէտք էր նոր առևտուրը սկսելուց առաջ, անպատճառ ապահովացնել պատրաստի գնւած ապրանքը։

Մէկ մտածում էր թողնել հարկահանին, ձի հեծնել, տաւարներն առաջն առնել և ուղղակի քաղաք իջնել ու յետոյ վերադառնալ. բայց վախենում էր թէ հարկահանին կը բարկացնէր։ Մէկ էլ մտածում էր տաւարները դնել Քօփալ գիւղի

քիւրդ Հիւսէյն աղայի պատասխանատուութեան ներքոյ։ Ո՛չ, կարող էր պատահել, որ փոթորիկը նրա տանն էլ մտնէր...

Յանկարծ կանգ առաւ մտածելուց և ծիծաղեց։

—Ինչե՞ր եմ մտածում, գոչեց նա—փոթորի՜կ... ինչքա՜ն վախկոտն եմ եղել. մեր երկիր և փոթորի՜կ... Դա մինչև իսկ երազում չէ կարելի տեսնել... Այն գիւղացին ու այս յիմար ծերունին վախեցրին ինձ... Ինձ ի՞նչ. ես խօ չե՞մ ստիպողը, որ ծախեն. ես մի կողմնակի մարդ եմ. տաւար են առաջարկում ինձ առնելու — ես էլ իբր վաճառական, ի հարկէ, միշտ իմ օգուտս եմ փնտռում և ուզածս գինը տալիս եմ. կը տան՝ կառնեմ, չեն տայ, խօ ես չե՞մ զոռով գնողը...

Այդպէս ինքն իրեն խօսելով, ճաշից յետոյ գիւղից դուրս եկել, գետն ի վեր քայլում էր։ Օդը սկսել էր աւելի խոնաւանալ, անձրևը դեռ կաթկաթում էր, փչում էր մի սառը քամի, իսկ երկինքը սև ամպերով հետզհետէ մթնանում էր։ Դաշտուորները սկսում էին գիւղ վերադառնալ. հեռւում, մի սարի կրծքի վրայ, պարզ երևում էր արածող նախիրը և չոբանը, որ մի ժայռի վրայ կանգնած, դիտում էր շրջակայքը։ Բաւական հեռու երեք անձինք կռացած գետի վրայ, լւանում էին ինչ որ շորեր։

Մուստաֆա աղան դեռ նրանց չէր տեսել, թէև ուղիղ դէպի նրանց էր գնում։

—Այո՛, շարունակեց նա մտածելով.—գժու-

թիւն է մտածել, թէ այս գիւղացիք կարող են ինձ կամ հէնց նոյն իսկ հարկահանին վնաս տալ... Օրէնքի ձայն—ասել է գիւղացի ծերունին... Հը՛մ... Գիւղերը բաւական հեռու են և դրա ձայնը մինչև հասնելը խեղդւում են բազմաթիւ պաշտօնեաների մթնոլորդի մէջ... Ի՞նչ պիտի անէ ծերունին։ Ինձ ոչինչ չէ կարող անել. ես մի կողմնակի թէջիր [1]) եմ. քի՞չ գին եմ տալիս, թող չը ծախեն. ե՞ս եմ զոռողը նրանց որ ծախեն. 100 ղուրուշանոց բանին 10 ղուրուշ եմ տալիս, ախպէր, չէք ուզում, մի՛ ծախէք. ես 10 ղուրուշից աւելի չունեմ մի 100 ղուրուշանոց անասունի համար... Մնաց հարկահանը.—նրան էլ ոչինչ չեն կարող անել. նա էլ յիմար չէ, գիտէ թէ ինչ է գրում քօչանների մէջ. կարդացո՞ղն ով է. 100 է ստանում՝ գրում է այն, ինչ որ օրէնքով պահանջ ունի. քօչանի մէջ 20 է գրած, 50 է առնում. ապա՛, գնա՛ հաստատիր, որ 20-ից աւելի է առել. ո՞վ է վկայ. գիւղացի՞ք... Հը՛մ, ասենք դեռ բարեկամների կամ թշնամիների վկայութիւնները չեն ընդունում... Հէնց ասենք թէ ընդունեցին ու Իզէդդին էֆէնդին մեղադրւեց... շատ մե՞ծ բան է, որ մեղադրւեց. մեր պաշտօնեաներից ո՞ր մէկը չէ մեղադրւում և ո՞ր մէկն առանց արդարանալու է մնում։ Մեղադրւե՞ց,—մէկ 10 ոսկի սրան-նրան՝ և ահա արդարացաւ։

[1]) Այդ բառն արաբերէն և նոյնն է ինչ որ «չէլէպ» բառը։

Այդ միջոցին նրա աչքն ընկաւ նախիրին։

—Հը՛մ, կանգ առաւ նա և դէմքը կնճռեց—բանը դրանում չէ. գանգատով ոչինչ չեն կարող անել. բանը նրանումն է, որ յանկարծ վրայ կը տան, տաւարներս կը խլեն ու ինձ էլ... Սաենք վերջն իրանք կը փսաւեն, բայց ինձ ինչ. ինձ սպանելուց յետոյ կուզեն՝ թող սկի էլ չը պատժեն... Չէ, եթէ ինձ էլ ձեռք չը տան, տաւարներս կը տանեն, կը խառնեն այս նախրի մէջ ու յետո՞յ... յետոյ թէ մարդ ես, արի ու գոռա որ քեզնից տաւար են խլել գիւղացիք... կը ծիծաղեն քթիդ բոլոր մատրաբազները... Չէ, մի կերպով տաւարները պիտի քաղաք ուղարկել... Թէև ոչինչ չի լինիլ, բայց աւելի լաւ է ապահովացնել ապրանքս...

Յանկարծ նա կանգ առաւ. աչքերը փայլեցին. ձեռքը ճակատին դրեց և գոչեց.

—Գտա՛յ։

Եւ արագ քայլերով դիմեց դէպի երեք անձերը, որոնց նկատել էր։ Զինւորներն էին դրանք, որոնցից մէկն իր գուլպաներն էր լւանում, միւսը ոտները մաքրում, իսկ երրորդն իր հնամաշ նշանազգեստը հանած՝ նրա վրայից կախ ընկած դեղին ժապաւէններն էր կարկտում։

Երեքն էլ նստել էին գետափում և դէմքը ջրին դարձրել. միայն 50 քայլ հեռուից Չէլէբը տեսաւ նրանց և նշանազգեստից ճանաչեց։

Յանկարծ նրա մէջ մի միտք էր յղացել։

Արագ քայլերով մօտեցաւ զինւորներին և երբ 10 քայլ էր մնացել նրանց հասնելու, հանդարտացրեց քայլերը, զբօսնողի ձև ստացաւ, պոկ տւեց մի քանի փունջ խոտեր և կռանալով մի ծաղկի վրայ, հազաց։

Նրա հազի ձայնից զինւորները գլուխները դարձրին։

—Ա՛... գոչեց Չէլէբը ժպիտը դէմքին դէպի նրանց առաջանալով—այդ դո՞ւք էք, չաւուշներ, ի՞նչ էք անում այստեղ այս ժամանակ։

Զինւորները պատկառանքով ոտքի ելան, բայց նրանցից մէկը, որ իր կեանքում շատ Չէլէբներ և նոյն իսկ բէգեր էր խաղացրել մատի վրայ և դրանով բաւական լըբացել էր, ծիծաղեց և ասաց համարձակութեամբ.

—Շոր ենք լւանում, Մուստաֆա աղա—մոռացանք մեր կանանց էլ հետներս բերելու. իսկ այստեղի կանայքն դեռ չեն ծանօթացել մեզ հետ...

—Համ... ծիծաղեց Չէլէբը—այդ լաւ բան է. թէ զինւոր և թէ տանտիկին... Աֆֆէրիմ, եղբայրներ, զինւորը ձեզ պէս պէտք է լինի, կնոջ պէտք պիտի չունենայ։

—Աֆ էդարսըն [1]), Մուստաֆա աղա—ծիծաղեց նորից զինւորը, որ կոչւում էր Շէֆքի չաւուշ—ես կարծում եմ, որ զինւորն էլ մարդ է և նրան էլ կնիկ է պէտք։

---

[1]) Կը ներես։

—Ի հարկէ, ի հարկէ, չաւուշ, իմ ասածս այդ չէր… Բայց ինչ որ է, էգուց երբ գործի սկսենք, յոյս ունեմ որ ձեր շորերը այլ ևս դուք չէք լւանայ… լւացողներ շատ կը լինեն… սիրուններ շատ կան համ։

Բոլորն էլ ծիծաղեցին։ Նկտի խօսակցութիւնները մահմետականների միշտ հաճոյք են պատճառում, միշտ նրա խօսակցութիւնն է և նրանց մէջ է նա վայելում ամեն քէֆ։

—Բայց գիտէ՞ք, աւելացրեց Ջէլէբը հոգացողութեամբ—օդը խոնաւ է և կարող էք մրսել, հիւանդանալ. խորհուրդ եմ տալիս ձեզ շատ չը մնալ այստեղ։

—Վերջացրինք, ասաց Շէֆքի չաւուշը—ես գոնէ վերջացրի զուլպաներս լւանալը. մնացել է չորացնել։

—Տար գիւղում մի թոնիրի վրայ չորացրու։

—Լաւ ասացիր. ժպտեց չաւուշը։

—Է՛հ, ուրեմն ով է գալիս հետս. ասաց Ջէլէբը դառնալով—ես վերադառնում եմ գիւղ. գնանք միասին։

—Ես դեռ ոտներիս լւանալը չը վերջացրի։

Ջէլէբը ուրախացաւ և սրտատրոփ սպասեց միւսի մերժմանն էլ, նա կամենում էր անպատճառ Շէֆքի չաւուշի հետ մենակ մնալ, բայց այնպէս, որ կարծիք չը տար թէ բուռն փափագ ունէր նրա հետ մենակ մնալու։

—Ես էլ կը մնամ, ասաց միւսը—դեռ երկու օղակ մնաց կարելու։

—Ուրեմն դու արի գնանք. դարձաւ Ջէլէբը Շէֆքիին։

—Իսկ սրա՞նք։

—Դրանք յետոյ կը գան. խօ երեխայ չեն, որ մոլորուեն։

Եւ մի զւարթ ծիծաղ արձակեց։

Զինւորներն էլ ծիծաղեցին։ Շէֆքի չաւուշը հագաւ կօշիկները, ձեռքն առաւ թաց զուլպան և ասաց.

—Գնանք։

Ջէլէբն ու զինւորը սկսեցին դէպի գիւղը բարձրանալ։

—Շէֆքի՛ չաւուշ, հարցրեց Ջէլէբը զինւորին—միթէ՞ դուք տարին տասներկու ամիս շարունակ ճանապարհորդում էք։

—Ի հարկէ, պատասխանեց չաւուշը—միայն ձմեռն է, որ փոքր ինչ հանգստանում ենք. այն էլ ինչ հանգստութիւն. քաղցած կը գլտանք, եթէ չը համաձայնւենք այն ցրտաշունչ եղանակներին՝ պօստի հետ ընկերանալ քաղաքից քաղաք։

—Եւ միթէ՞ ձեզ այդքան քիչ են վճարում։

—Վճա՞ր, ծիծաղեց չաւուշը—միթէ՞ դու չը գիտես որ մեզ շատ քիչ անգամ և կամ բոլորովին չեն վճարում. ինչ որ էլ ձեռք ենք բերում, այն էլ ձեզ պէս աղաներից ենք ձեռք բերում։

—Ի հարկէ նրանց ծառայելով։

—Ի հարկէ. առանց աշխատեցնելու ո՞վ փող կը տայ մեզ։

—Ուրեմն, խորամանկ ժպիտով հարցրեց Ջէլէբը—ես էլ որ ուզենամ քեզ մի ոսկի տալ ու աշխատեցնել...

—Մի ոսկի՞, ընդհատեց չաւուշն ուրախ—մի ոսկի՜... աշխարհիս ծայրն էլ կերթամ, եթէ կամենաս։

—Ի՞նչ գործ ունեմ մինչև աշխարհիս ծայրը, ծիծաղեց Ջէլէբը—շատ-շատ՝ քեզ մինչև քաղաք կ՚ուղարկեմ։

—Երզրո՞ւմ։

—Ո՛չ, Խնուս։

—Հրամայի՛ր. ե՞րբ գնամ. այս րոպէի՞ս։

—Հը՞... ո՛չ. շտապեց ասել Ջէլէբը—ո՛չ, այս րոպէիս չէ կարելի. գիշերը։

—Գիշե՞րը... գիշերները քիչ մութ են։

Ջէլէբը կանգ առաւ, չաւուշի երեսին նայեց և հեգնութեամբ ժպտելով ասաց.

—Հը՞, չը լինի թէ Շէֆքի չաւուշը վախենում է։

—Ո՞վ, ե՞ս վախենամ. գոչեց զինուորը յոխորտանօք—ե՞ս, որ մինչև այժմ քանի մարդու գլուխ եմ թռցրել ու... Բայց ես նրա համար ասացի, որ ճանապարհները քիչ վատ են, գիշերն էլ մութ։

—Յիմար ես, չաւո՛ւշ. այս գիշեր էլ երէկւայ նման փառաւոր լուսին կը լինի. իսկ այստեղից

մինչև Խնուս ճանապարհներն էլ այնքան վատ չեն, թէև ձորեր շատ կան։

—Հէնց այդ ձորերը... կմկմաց չաւուշը։

—Է՛ է, ձեռքը թօթուեց Ջէլէբը—ուրեմն քեզ ոչինչ չէ կարելի անել. քեզ որ ձորերից վախենում ես և առիթը փախցնում 2 ոսկի շահելու։

—Երկո՞ւ... Ես պատրաստ եմ։ Ի՞նչ անելու պիտի գնամ։

—Տաւարներ պիտի տանես, ասաց յանկարծ Ջէլէբը և ուշադրութեամբ նայեց զինուորի դէմքին։

Զինուորը բերանը բաց՝ կանգ առաւ։

—Տաւարնե՞ր, կմկմաց նա—կով, եզ, ոչխար։

—Այո՛, կով, եզ և ոչխար։

—Ինչո՞ւ։

—Է՛ բարեկամ, երբ ծառայում են, չեն հետաքրքրւում, այլ առնում են վարձը և լռում։

Չաւուշը կոտրվեց։ Ծոծրակը քորեց և մտածեց։

—Հը՞, հարցրեց Ջէլէբը—էլ չե՞նք խաղում։

—Խաղում եմ, խաղում. բացականչեց զինուորը—միայն թէ կանխիկով...

—Կէսը կանխիկով. այո՛, կամ ոչ։

Եւ Ջէլէբը մի քանի քայլ առաջ անցաւ։

—Համաձայն եմ. տո՛ւր ոսկին... վազեց նրա ետևից զինուորը։

Ջէլէբն ուշադրութեամբ զննեց զինուորի դէմքը, յետոյ լռութեամբ մի քանի քայլ արաւ և առանց կանգնելու՝ ասաց.

—Երբ կը մթնանայ, այսինքն կէս գիշեր կը լինի, ես քեզ հետ Բօփալ կը գամ տաւարները քեզ կը յանձնեմ և ոսկին էլ ձեռդ կը դնեմ։

Ջինւորը չը պատասխանեց.

—Հը՞, ինչ է համաձայն չե՞ս. հարցրեց Չէլէբը։

—Ո՞վ ասաց որ չէ, գոչեց զինւորը—համաձայն եմ։

—Լաւ ուրեմն, կանգ առաւ Չէլէբը և ստացաւ լուրջ դէմք—մի բառ պիտի չասես այդ մասին ոչ ոքին։

—Եւ ոչ իսկ էֆէնդիի՞ն։

—Եւ ոչ իսկ նրան։

—Եւ ոչ իսկ ընկերների՞ս։

—Մանաւանդ նրանց։

—Լաւ։

—Կէս գիշերին ձի կը հեծնես, կը գաս ինձ մօտ. ես կը լինեմ գիւղից դուրսը գտնւող գմբէթի մօտ և մենք կերթանք Բօփալ։

—Տաւարներ շա՞տ կան։

—50—60 հատ։

—Վա՜հ... այդչափ շա՜տ... ես մենակ ինչպէս տանեմ։

—Դժւարը մինչև Բովանդուկ գիւղը հասցնելն է. իսկ այնտեղ ես կասեմ, որին պիտի դիմես, որ քեզ ընկերներ տայ տաւարները քշելու։

—Իսկ մինչև Բովանդու՞կ։

—Շատ հեռու չէ. եղները և կովերը կը

կապենք միմեանց, ոչխարներն առջև կանես և իմ քիւրդ ծառայիս հետ կերթաս։

—Քիւրդ ծառա՞դ էլ է գալու։

—Այո՛...

Նրանք մօտենում էին գիւղին։

—Այժմ բաժանւիր ինձանից. և ուրիշի առաջ երբէք չը խօսես ինձ հետ այդ բանի մասին. ասաց Չէլէբը զինւորին։

—Ապահով կաց։

Ջինւորն առաջ անցաւ, իսկ Չէլէբը նստեց մի քարի վրայ և սկսեց սարից դէպի ձորն իջնող նախիրը դիտել, որոնց շուրջը վազում էր քրդական կուլաբը [1]) վրան առած՝ քիւրդ նախրեպանը։

Արևը մայր էր մտնում. դաշտւորները ետ էին դառնում իրանց լուծերով։ Քիւրդ և հայ կանայք թաց շորերի կապոցները գլխների վրայ դրած գետից դէպի գիւղն էին ելնում, իսկ գիւղից լսւում էր հայոց եկեղեցու կոչնակի ձայնը...

VI.

Հարկահանը, որը սպասում էր նախիրի գիւղ մտնելուն, երբ մթնացաւ, առաւ թեւի տակ իր քոչանների տետրակը, կանչեց ուարիներին և պատրաստւեց գործի սկսելու։

[1]) Մի անթև թաղիքէ վերարկու։

—Ո՞ւր է Մուստաֆա աղան. հարցրեց նա ուարիներից մեկին դառնալով։

Այդ միջոցին Ջելեբը երևաց։ Ինչ որ մեծ ֆեսով հայի հետ խօսելով մօտենում էր։

—Այս ո՞ւր մնացիր, Մուստաֆա աղա, գոչեց հարկահանը հեռուից—ուշացանք. արի, որ այս գիշեր այս գիւղը վերջացնենք։

Ջելեբի հետ խօսող հայը լսելով նրա ձայնը, դադարեց խօսելուց, վախեցած կանգ առաւ, և երբ Ջելեբը քայլում էր դէպի հարկահանը, հայը զգուշաւոր քայլերով նրա ետևից գնաց և հինգ քայլ հեռու կանգ առնելով՝ մի մեծ խոնարհութիւն արաւ հարկահանին։

—Զը սկսենք. հարցրեց հարկահանը Ջելեբին։

—Սկսենք, ժպտեց Ջելեբը—ահա, սա հայերի աղ-սախկալներից է, և իմ բարեկամ Սերգօ քեհեան. յարեց նա հեռու կանգնած վախեցած դէմքով հային ցոյց տալով։

Հարկահանը բարձրից նայելով նրա վրայ, ընդունեց պաշտօնական մի խիստ կերպարանք, ոտքից գլուխ չափեց նրան և ասաց դառնալով Ջելեբին։

—Սրանից սկսենք։

—Ես, էֆէնդըմ, մի քայլ մօտենալով կըմկմաց հայը—ես անցեալ անգամ վճարեցի տուրքը։

—Մենք այդ կը տեսնենք, ասաց խստութեամբ հարկահանը և դառնալով Ջելեբին, աւե-

լացրեց—գնանք առաջ այդ գեաւուրների գործը վերջացնենք։

—Հէնց ես էլ այդ էի ուզում ասել. վրայ բերեց Ջելեբը—ուրեմն գնանք... Դէ, Սերգօ քեհեա, դարձաւ նա հային—վազիր օդադ պատրաստիր մեզ համար. սուրճ էլ խօ կուտենաս... Ի հարկէ չես մոռանայ մի գառ էլ մորթել տալ... Քեզ տեսնեմ, երեսս պարզ հանես էֆէնդիի մօտ, ես քեզ շատ եմ գովել, որ հիւրասէր ու լաւ մարդ ես... Գնա, մենք էլ գալիս ենք։

Սերգօ քեհեան նորից գլուխ տւաւ և վազնիվազ մտաւ գիւղի փողոցները։

Ջելեբը, որ չարանենգ ժպիտով նայում էր նրա ետևից, դարձաւ հարկահանին։

—Որտեղի՞ց գտար այդ գեաւուրին. հարցրեց նրան հարկահանը։

—Ի՞նչպէս թէ որտեղից գտար. ծիծաղեց Ջելեբը—Խնուսում էլ մարդ կայ, որ ինձ չը ճանաչի... Սերգօն լաւ մարդ է. խեղճ մարդ է. բոլոր հայերն էլ հէնց խեղճ, իրանց գործին նայող, հնազանդ, հիւրասէր մարդիկ են. վալլահ, մեր միւսիւլմաններից տասը՝ սրանց մէկի չափ բարութիւն չունի... Ա՛յ, հիմա կերթանք ու կը տեսնես թէ հայը ինչպէ՜ս պատրաստութիւններ կը տեսնի մեզ համար ու ինչպէ՜ս մեզ կը պատուի։

—Հա՛, լաւ ասացիր, գոչեց հարկահանը—այսօրուայ այդ շատախօս քիւրդ մօլլայի ճաշից

ոչինչ չը հասկացայ… գիտես, քիչ մնաց այդ յիմար մօլլայի մօրուքը փետէի…

—Ինչո՞ւ, հարցրեց վախեցած Ջէլէբը։

—Ա՛յ, գնանք ու քայլելով պատմեմ… Արիւնս եռ եկաւ ու էլ չը կարողացայ դիմանալ, վերկացայ որ ղալմաղալը քցեմ, բայց էլի «նահալաթ շէյթանին» ասացի ու համբերեցի… Քայլենք ու պատմեմ լսիր։

Նրանք սկսեցին դէպի հայոց եկեղեցին քայլել։ Հայոց այդ խղճուկ եկեղեցին, որ միայն իր բարձրութեամբ և վրայի փայտեայ եռոտանի զանգակատնով (կոչնակատեղի) էր զանազանւում միւս խրճիթներից, գտնւում էր գիւղի մէջտեղը և շրջապատուած էր մանր ու մեծ կլոր տանիքներ ունեցող խրճիթներով, որոնց միջից թողուած էին մի քանի նեղ անցքեր՝ իբր փողոց։

Հարկահանն ու Ջէլէբը, որոնք գտնւում էին գիւղի աղբիւրի մօտ, մտան այդ փողոցներից մէկը և ծանր քայլերով անցնում էին խրճիթների առջևից։ Դռներից երևում էին երբեմն վախկոտ գլուխներ, իսկ եթէ պատահում էր, որ նրանց հանդիպում էին մարդիկ, աւելի ևս կպչելով պատին, ճանապարհ էին տալիս և մի խոր գլուխ իջեցնում իրանց վրայ անգամ չը նայող պաշտօնեաներին։

Հարկահանից ու Ջէլէբից երկու քայլ հեռաւորութեամբ քայլում էին սւարիները՝ ձեռքերը սրերի վրայ դրած, և անպատկառ ու հետաքրք-

քիր հայեացքներ ձգելով բաց դռներից ներս կամ այս-այնտեղ երևցող կանանց ու աղջիկների։

—Հա՜… դու առաջ այն ասա, սկսեց հարկահանը Ջէլէբին դառնալով—ո՞րտեղ ճաշեցիր և մինչև այժմ ո՞ւր էիր։

—Ճաշեցի այս հայի մօտ. իսկ մինչև այժմ ման էի գալիս։

—Լաւ ճաշ տւա՞ւ քեզ այդ գեաւուրը։

—Թագաւորի ճաշ. ծիծաղեց Ջէլէբը—հաւ մորթեց, փլաւ շինեց, ձւազեղ պատրաստեց… իսկ նրա սիրուն հարսն էլ մի աման այնպէս սերախառն կաթ դրեց առջևս, որ քիչ մնաց մատներս էլ հետը ուտէի…

—Լաւ բաղդաւոր ես եղել. իսկ ես… Ա՛յ, լսիր պատմեմ թէ այդ շուն մօլլան ինչպէս պատւեց ինձ։ Քիչ մնաց տունը տակն ու վրայ անէի։ Դեռ այն չեմ ասում, որ ձիուս առջևն էլ սկի գարի չէին լցրել։ Բայց, սպասիր կարգով սկսեմ։ Հա՜… գալիս եմ տուն մտնում, տեսնեմ այդ քեաֆթառը էլի հաւաքել է իր մօտ լակոտներին, մէջքը ալիւրի տոպրակին է տւել ու նրանց մէկի բերանը մածուն է կոխում, իսկ միւսը, որ երեսը ու շորերը մածնաթաթախ էր արել, թաւալելով հողերի մէջ գւարթ ծիծաղներ էր արձակել տալիս… Հայւանը… դեռ համարձակւեց շարունակել ծիծաղը, երբ ես ներս մտայ։ Հազիւ շարժւեց տեղից ու… անամօթ անասունը… ներողութիւն է խնդրում թէ «ծեր եմ,

չեմ կարողանում հեշտութեամբ ոտքի ելնել»... Ես, ի հարկէ, խիստ կերպարանք ընդունեցի ու հրամայեցի ինձ ճաշ տալ։—«Ճաշ բերէք էֆէնդիին», գոռաց նա ամեն կողմ գործով զբաղուած հարսներին, որոնք բոբիկ սրունգներով վազվզում էին խրճիթի մէջ... Պիտի ասել, որ դրանց մէջ մէկը կար, որ խիստ գրաւեց ինձ։ Այնպէս սիրուն էր, տաս հատ մեր քաղքցի կանանց արժէր. վառվռուն աչքեր, սև սիրուն երկար մազեր, վայելուչ հասակ, մէջքը կուրծք... մի խօսքով, լեռնային հուրի—փէրի... որ գայ իմ հարեմը, իմ երկու կանանցս դուրս կանեմ նրա համար...

—Պատմութիւնդ կիսատ թողիր. ծիծաղեց ջէլէբը։

—Հա՛, իրաւ, ծիծաղեց նաև հարկահանը—այդ աղջիկը խելքը գլխիցս տարաւ... «Ճաշ բերէք էֆէնդիին», գոռաց ախմախ մօլլան... Իսկոյն դրին սինին, մի քանի հատ սև հաց շարեցին վրան, մի կուշ մածուն, մի թաս կաթ, մի կտոր ժաժիկ և ուրիշ ոչինչ։ Զարմացայ առաջ. «Այս ի՞նչ է—գոռացի, արիւնս եռ եկաւ—ուրիշ ոչինչ չունի՞ք տալու»... «Ներիր էֆէնդի, պատասխանեց կեղծաւորութեամբ մօլլան—երէկ վերջացաւ միսը. այդ կերէք, մերոնք մի քիչ թան կամ վռոշ եփած կը լինեն»։ Բարկացայ, դէն հրեցի սինին ու գոռացի.—«Ես այս չեմ ուտի և ոչ էլ ձեր թանը կամ հոտած վռո-

շը. ինձ միս տուէք, շուտ։ «Միս չունենք, ասաց մօլլան»։ «Զունի՞ք—գոռացի ես—մորթեցէք մի գառ ու խորուած պատրաստեցէք»։ «Գառներ քիչ ունենք ու եղածն էլ նախիրումն են»։ «Ինչպէ՞ս—գոռացի ես կատաղած—ինձ մածունո՞վ էք ուզում կերակրել, շուտ, մի հաւ մորթէք»։ «Մեր հաւերը բոլորը թխսկան հաւեր են...» Բարկութիւնս եկաւ. ցատկեցի տեղիցս և ուզեցի սուարիներին կանչել, որոնք դրսում մի աման մածունի վրայ ընկած՝ անյագութեամբ ուտում էին։ Ուրեմն փլաւ եփեցէք, գոռացի ես վերջին անգամ և լեզուս կծեցի, որ չը բարկանամ. բայց ինչ կասես, եթէ ասեմ, որ այդ անօրէնը համարձակուեց հանդարտութեամբ ասել, որ բրինձ էլ չունեն և որովհետև դեռ ցորենը չեն սկսել աղալու՝ ձաւար ու կորկոտ էլ չէ մնացել։ Արիւնը գլխիս խփեց, վեր թռայ տեղիցս, սինին մի կողմ շպրտեցի, սառնութեամբ ինձ վրայ նայող մօլլային վազեցի և գոռացի. «Անհաւա՛տ...» «Ես անհաւատ չեմ, ասաց նա հանդարտութեամբ—ես էլ քեզ նման միւսիւլման եմ»։ «Անօ՛րէն, գոչեցի ես — այդպէ՞ս ես ընդունում թագաւորի հարկահանին — ապստամբ...» «Ես ապստամբ չեմ, ասում է նա—ես թագաւորի հաւատարիմ ծառան եմ. բայց որ ունեցածս այսքանն է միայն, ձեռքիցս էլ ինչ կը գայ. ես էլ եմ մածուն ու կաթ ուտում, որովհետև ուրիշ բան չունեմ ուտելու։ «Նահլաթ շէյթանին»,

տասցի ու լեզուս նորից կծելով, որպէս զի չը կատաղեմ, որովհետև այդ յիմար մօլլայի հանդարտութիւնը կատաղեցնում էր ինձ։ Ինչ արած, մի կերպով նստեցի մածունը կերայ, յետոյ թան տւին, մի լաւ ձւազեղ էլ բերին վրան լիքը եղ, մի քիչ էլ ալիւրից մեղրով փոխինդ շինեցին. յետոյ երբ մ ա զ ա կարագ ու մեղր բերին և ես ստիպւած այսպէս մի անպիտան ճաշ արի, որովհետև չուզեցի բարկանալ ու գերեզմանին մօտ եղող մի ծերունու սիրտը կոտրել, նրա վրայ ձեռք բարձրացնել...

—Լաւ համբերութիւն ես ունեցել, ախպէր, աֆֆէրիմ քեզ, ասաց Ջէլէբը—ես լինէի, տունը տակն ու վրայ կանէի։

—Ես էլ պակաս պատւապահանջ չեմ. պարծեցաւ հարկահանը—բայց ի՞նչ արած. առաջին՝ որ քաղցած էի և երկրորդ՝ որ խիղճս եկաւ այդ ծերունին, մանաւանդ նրա սիրուն հարսը, որ անշուշտ վախից կը մեռնէր, եթէ ղալմաղալ սարքէի... Ջէ, անպատճառ այդ կնոջ պիտի տիրապետեմ ես, խելքը գլխիցս տարաւ։ Ջես իմանում, եղբայր, հիւրի-փէրի է կատարեալ... Մարդ զարմանում է թէ ինչպէս սրանց պէս հայվաններն այդպէս հիւրի-փէրիներ են ունենում.,.

—Ասում ես հարս է, չէ՞, խօսեց Ջէլէբը—ուրեմն մարդ էլ ունի։

—Ի հարկէ. կէս ժամ առաջ տեսայ մարդուն. մի այլանդակ մարդ... երկար, առողջ,

կարմիր թշերով, մեծ, բուի աչքեր... Մարդ ապշում է թէ ի՞նչպէս են յանդգնում այդպիսի չընչին արարածները այդպէս հիւրի-փէրի կանանց տէր լինել...

—Լա՛ւ, լա՛ւ, ծիծաղեց Ջէլէբը—շատ մի տաքանալ, դեռ նոր ես. եթէ այս կողմերը պտտես, հարիւր հատ այդպէս հիւրի-փէրիներ կը տեսնես, մէկը միւսից սիրուն... ա՛յ, հիմա կը տեսնես դեւուրի հարսն էլ, որ պակաս չէ քո քիւրդի կ ճ է ի ց... Հասանք, ա՛յ տես, թէ ինչպէս մեր հիւրընկալը դռան մօտ կանգնած՝ մեզ է սպասում... Ահա դիմաւորում է մեզ։

Եւ իրաւ, մի մեծ խրճիթի մօտից դէպի նրանց սկսեց գալ պատկառանօք՝ Սերգօ քեհեան։

Հարկահանը ընդունեց պաշտօնական վեհ կերպարանք ու քայլւածք, և շատ դանդաղ կերպով գլուխը շարժեց՝ ի պատասխան մօտեցող հայի խոնարհ ողջոյնին։

—Հը՛, Սերգօ, ասաց ծիծաղելով Ջէլէբը—օդան պատրա՞ստ է։

—Հրամանք ես, աղա, ձեր ծառան աղաների օդան պատրաստեց. համեցէք, աչքիս, գլխիս վրայ, տունը ձերն է։

—Շատ ապրես. ասաց քիչ դէմքը զւարթացնելով հարկահանը—իսկ լաւ կերակուրներ ունի՞ս։

—Տունը ձերն է, խոնարհ ողջոյն տւաւ քեհեան—ինչ որ հրամայէք, իսկոյն պատրաստ կը լինի.

Յետոյ մի կողմ քաշւեց ու թողեց հարկահանին և ջէլէբին, որոնք ներս մտան խրճիթը։

VII.

Սենեակը մտնելու ժամանակ, ջէլէբ Մուստաֆան թողեց, որ հարկահանը առաջ անցնի. ինքը ետ մնաց, մօտեցաւ տանտիրոջ, քաշեց նրան մի կողմ և ականջին մի բան փսփսաց։ Տանտիրոջ դէմքի վրայ երևաց մի ժպիտ. նա գլխով հաւանութեան նշան տւաւ ու կամենում էր հեռանալ։

—Լաւը լինի, ա՛յ... ասաց բարձր ձայնով ջէլէբը։

—Շատ լաւը չէ. բայց կարելի է խմել.. պատասխանեց քեհեան։

Այնուհետև ջէլէբը մտաւ սենեակը, ուր արդէն հարկահանը նստել էր բարձրում փռւած օթոցի վրայ և պապիրոս էր շինում։

—Գիտե՞ս, քաղցած եմ. դիմեց նա ջէլէբին։

—Ես էլ եմ քաղցած. պատւիրեցի, որ մի փոքրիկ նախաճաշ տան, մինչև որ կերակուրներըն եփւեն։

—Նախաճա՛շ... այդ խօ շա՛տ կ՚երկարի. նախաճաշից յետոյ ճաշ, և մենք հազիւ մինչև կէս գիշերին պրծնենք ուտելուց. ես չեմ սիրում շտապով ուտել. իսկ ե՞րբ կը սկսենք գործի։

—Մէկ կողմից կուտենք, միւս կողմից գործ կը տեսնենք, ժպտաց ջէլէբը—ես կը հրամայեմ, որ կանչեն աղ-սախկալ հայերին ու քեշիշին, դու նրանց կը ներկայացնես հաշիւդ, յետոյ կը յայտնես, որ սւարիներն այդ ցանկով պիտի փող հաւաքեն և չունեցողի տաւարներն ինձ ներկայացնեն, և ահա ամեն ինչ կը վերջանայ։

—Այդպիսով գործը շատ կ՚երկարի։

—Ինչու, քանի՞ տուն հայ կայ այստեղ, որ քեզ տալիք ունենայ։

—20 տուն հայ են, բոլորն էլ տալիք են..։ Չէ, այդ կերպով ես վնաս կը տեսնեմ. պիտի կանչել մէկ մէկ բոլորին և պահանջել, իսկ եթէ չունենան, այս գիշեր և եթ ծախել ու առնել նրանց տաւարները։

Ջէլէբը մի րոպէ չը պատասխանեց, լռութեամբ ծխեց շինած պապիրոսը, շփեց մազերը և ծանրութեամբ ասաց.

—Գիտե՞ս ինչ կայ, եղբայր, ես այս գիշեր տրամադիր չեմ տաւար գնելու, մինչև որ ունեցածներս փոխադրել չը տամ Խնուս... տանելը դժւար է։

—Ի՞նչ ասացիր, տաքացաւ հարկահանը—տրամադիր չես, չը լինի՞ թէ այլ ևս փող չունիս։

—Փո՛ղ, ժպտաց ջէլէբը—դեռ տասը գիւղի բոլոր տաւարները գնելու չափ փող ունիմ. սակայն չեմ կամենում գնած տաւարներից նախը

կազմել· ես այս գիշեր մտադիր եմ Թօփալ գիւ-
ղից տաւարները Խնուս ուղարկել, իսկ վաղը
որքան տաւար ուզես՝ կը գնեմ։

—Ո՞վ պիտի տանէ տաւարները։

—Ես մարդիկ գտել եմ։

Այդ միջոցին ներս էր մտնում տանուտէր
Սերգօ քեհեան մի սինիով, որի մէջ դրած կար
երկու հատ Վանի եփուած տառեխներ, հաց, մի
շիշ օղի և երկու գաւաթ։

Հարկահանը տեսնելով շիշն ու ձուկը, զը-
ւարթ կերպարանք ստացաւ և գոչեց·

—Ես ու իմ Աստուածը, Մուստաֆա աղա—
այս գեաւուրը լաւ մարդ է եղել։ Ապրիս, Սեր-
գօ քեհեա, լաւ ես մտածել այդ շիշն ու տառեխ-
ները բերելով· ի փոխարէն դրանց, քո տուրքե-
րից մի մասը կը բաշխեմ քեզ։

—Բայց… կմկմաց տանուտէրը սինին նրանց
առջև դնելով—ես արդէն վճարել եմ տուրքերս։

—Հա՛, ժպտեց հարկահանը—իմ միտս չէ
սակայն· եթէ վճարել ես, ի հարկէ, քօչան կու-
նենաս։

—Քօչա՞նը… գռմռեց տանուտէրը—քօ-
չանը փոքր որդիս… մի՞թէ անպատճառ այդ
թղթի կտորը պէտք է։

Ջէլէբը հասկացաւ թէ խեղճ քեհեայի քօչա-
նի գլխին ինչ եկած պիտի լինէր, ծիծաղեց և
ասաց ծաղրածութեամբ։

—Խեղճ Սերգօ, բանդ բուրդ է, եթէ քօչա-

նդ կորցրել ես· որովհետև իմ բարեկամ Իզէդ-
դին էֆէնդին շատ մոռացկոտ մարդ է· երէկուայ
ասածն այսօր մոռանում է։

—Է՛հ, այո, սիրելի քեհեաս, աւելացրեց
հարկահանը կլանելով մի գաւաթ օղի—իմ խեղճ
միտքս շատ սուր չէ· այ, օրինակ, ես մոռացել
եմ մինչև իսկ թէ երէկ ինչ եմ կերել… Եթէ
քօչանդ կորցրել ես, շատ վատ բան է եղել· ո-
րովհետև ես չեմ յիշում, որ քեզնից փող առած
լինեմ… չեմ յիշում։

Սերգօ քեհեան կանգնած տեղը դողում էր·
ջէլէբը տեսնելով այդ, շարունակ ծիծաղում էր
ու միմեանց վրայ դատարկելով օղիի գաւաթներ,
ասում էր հեգնութեամբ·

—Խեղճ քեհեաս, խեղճ… Ի՞նչ արած, Աստ-
ւած անիծի բութ միտքը։

—Բայց ախր… կմկմաց քեհեան—ես վկա-
ներ ունիմ, որ անցեալ անգամ տուրքս վճարեցի։

—Է՛հ, քեհեա, ինչ երեխայ-երեխայ խօսում
ես, գոչեց հարկահանը—ե՞րբ է լսուել, որ տուր-
քերի համար վկայութիւն ընդունեն· բաս քօչան-
ները ինչի՞ցու են· եթէ բանը վկայութիւնով
վերջանայ, Թագաւորի գանձը միշտ դատարկ կը
մնայ· որովհետև ո՞ր գիւղացին միւսի համար կը
վկայի թէ տուրքերը չէ տուել… Գնա՛, գնա դու
առ այժմ ընթրիքը շուտ պատրաստիր, յետոյ կը
տեսնենք ինչ կանենք։

Սերգօ քեհեան երերալով դէպի դուռը դիմեց։

—Հա՛, սպասիր, կանգնեցրեց նրան հարկահանը և յետոյ Չելեբին դառնալով հարցրեց—ի՞նչ ես կարծում, Մուստաֆա աղա, չը սկսենք գործի։

—Սկսենք, ասաց Չելեբը կէս բերնով։ Նա շատ փափագ չունէր այլ ևս նոր տաւար գնելու։

—Ուրեմն, դարձաւ հարկահանը քեհեային—մարդիկ ուղարկիր իսկոյն տէրտէրին ու գզիրին և ասա, որ ղամչուրի տուրք հաւաքողը եկել է և տուրք է պահանջում... Թող մինչև երկու ժամ ամեն մարդ բերէ և տայ... Հասկացա՞ր։

—Հրամանք ես... Թոթովեց քեհեան։

—Դէ՛հ, շուտ արա, աւելացրեց հարկահանը—մի մոռանալ իմացնելու փող չունեցողներին, որ այստեղ կայ մի Չէլէբ, մի պատուական մարդ, որ համաձայնւում է ձեռնտու գներով անասուններ գնել... Գնա։

Քեհեան դուրս գնաց։

—Հը՛մ, արեց Չելեբը նրա դուրս գնալուց յետոյ—ես կը ցանկայի այդ գործը վաղուան թողնել։

—Ես չեմ ցանկանում, նորից տաքացաւ հարկահանը—ես այժմ մի կողմից փող պիտի հաւաքեմ, իսկ միւս կողմից քէֆ պիտի անեմ... Լա՛ւ օղի է—յարեց նա մի գաւաթ ևս խմելով—այս անիծեալ չոր ձուկը լաւ խմացնում է... Հա՛, յետոյ, էֆէնդըմ, պիտի ուարիները վերցնեմ և այն շատախօս քիւրդ մօլլայի մօրուքը թափահարելու գնամ։

—Ի՞նչ, գոչեց սարսափած Չելեբը—էլի այն ըմբոստի մօտ պիտի գնաս... Քո քէֆն է, կուզես գնա, բայց ես ոչ կը գամ և ոչ էլ նրանից անասուն կը գնեմ։

Հարկահանի գլուխը խմած օղիից հետզհետէ տաքանում էր։

—Է՛հ, գոչեց նա—ես սկի անասուն էլ չեմ թողնի, որ դու գնես. ինադ իւչիւն օլսա [1]), բոլոր տաւարներին մէկ մէկ պիտի մորթեմ, տիրոջ մօրուքը կտրեմ և այն հիւրի-փէրիին հետս պիտի տանեմ... Այո՛, այս բոլորը պիտի անեմ. ինադ իւչիւն օլսա, պիտի անեմ... Հա՛, լաւ միտս ընկաւ, Մուստաֆա, դարձաւ նա հարկահանին բորբոքած աչքերով—ո՞ւր է, դու ինձ ասում էիր որ այս գեաւուրի աղջիկը թէ հարսն էլ շատ սիրուն է...

—Սպասիր, ծիծաղեց Չելեբը—այդպէս ամեն բան իրարու չեն խառնի. դեռ ուտենք, յետոյ տուրքերը ժողովենք ու վերջում այդպէս բաներ մտածենք... Հը՛, օղին սկսում է պրծնե՞լ։

—Հրամայենք էլ կը բերեն։

—Բերելը կը բերեն, ասաց Չելեբը, որը նոյնպէս արագութեամբ խմում էր—բայց տես, Իզէդդին, խօսք տուր ինձ, որ քիւրդերի հետ այսօր գործ չես ունենալու, թէ չէ՝ էլ օղի չեմ բերել տայ։

—Հա՛, լա՛ւ, թող քո ասածը լինի. այսօր

[1]) Աջուղի համար լինի։

հայերը մեզ հերիք են. խօ հայերից էլ չե՞ս վախենում։

—Հա՛, հա՛, հա՛, ծիծաղեց Ջելէբը—հայերի՞ց վախենալ. Նրանցից 500 հազարը որ հաւաքես Էրզրումի դաշտը, յետոյ հեռուից մի թնդանօթ արձակես օդի մէջ՝ բոլորը վախից կը մեռնեն... Ո՞վ է վախենում հայից, որ ես վախենամ. իմ մէկ գոռալը հերիք է, որ նրանք լեղապատառ լինեն... Դու այժմ կը տեսնես թէ ինչպէս պիտի գան այստեղ բոլորն էլ դողդողալով, գունաթափ ու մեր ոտքերի մօտ դնեն տուրքը...

—Իսկ եթէ փող չունենա՞ն։

—Որքան կուզես՝ տաւարները ծախիր. շատ-շատ՝ լաց կը լինեն. այն էլ եթէ գոռաս՝ իսկոյն արտասուքները կը սրբեն. ո՞վ է իրաւունք տւել նրանց լալու... Հոգիները կը հանեմ, հատը 50—60 դուրուշով, պիտի տեսնես, թէ ինչ տաւարներ պիտի առնեմ...

—Աֆֆէրիմ, Մուստաֆա, գոռաց հարկահանը—լեզուդ բացւել է... Դէհ, ասա որ այս շիշը լցնեն։

Եւ իրաւ, օղիի շիշը դատարկւել էր։ Ջելէբը կանչեց տանտիրոջ և հրամայեց շիշը նորոգել, յետոյ ընթրիք պահանջեց և երբ քիչ յետոյ ընթրիքն էլ եկաւ, նրա հետ քեհեան յայտարարեց, որ տէրտէրը և մի քանի իշխանները եկել, դրսումը սպասում են։

—Տուրքերը բերե՞լ են. գոչեց հարկահանը։

—Ո՛չ, կմկմաց քեհեան—ասում են որ փող չունեն։

—Տաւար թող ծախեն ինձ. գոռաց Ջելէբը—հատը 50—60 ղուրուշով կառնեմ կով և ոչխար, քանի հատ ունեն թող բերեն։

—Լսեցի՞ր, շարունակեց հարկահանը—թող առանց տուրքի երեսիս չը գան, թէ չէ, Աստւած վկայ, բոլորովին մէկ մէկ սւարիների ձեռքը կը տամ, որ մտրակի տակ կաշին քերթեն... տէրտէրից սկսած մինչև յետինը...

—Խեղճ են, աւելացրեց Ջելէբը—ասա որ ճարեն բերեն. ես լաւ եմ ճանաչում Իգէդլին էֆէնդիին, նա իր ասածը կանի և բոլորիդ էլ ջարդել կը տայ։

—Աստւած վկայ որ կանեմ, գոռաց հարկահանը ոտքի ելնելով։ Քեհեան վախեցած՝ ետ ետ քաշւեց ու կպաւ պատին։

—Հա՛, շարունակեց հարկահանը գոռալով—բոլորիդ էլ, մինչև իսկ քեզ էլ, կաշեհան անել կը տամ... Շուտ, մինչև երկու ժամ կամ տաւարներ և կամ տուրք... Դու էլ գնա. և եթէ քօչան ունես, քօչանդ բեր, եթէ չունիս՝ տուրք...

Ջելէբը ծիծաղում էր։ Նրան հաւասարապէս զւարճացնում էին թէ հարկահանի կատաղի շարժւացքները, և թէ քեհեայի մեռելային կերպարանքն ու դողալը։

Երբ քեհեան դուրս գնաց, ներս բերին մի փոքրիկ գառ խորոված, իւղալից փլաւ և ձւա-

գեղ, լաւ գոմէշի մածուն, սեր, կարագ և մեղր։

Հարկահանն ու Ջէլէբը սկսեցին ուտել, չը մոռանալով յաճախ օղիով մաքրել կոկորդները։

Հարկահանը արդէն հարբել էր, իսկ Ջէլէբը դեռ փոքր ինչ լուրջ էր, սակայն սկսում էր գինովնալ։ Նա երերալով ուտում էր փլաւը, կէսը թափելով շորերի և գետնի վրայ։ Նրանց ձեռքերը խղոտւում էին, ընչացքը և շորերը մածունոտւում, իսկ խորոված գառից մի մի մեծ շերտ կտրած, լափում էին գայլերի պէս։

Մի բարձր ճրագկալի վրայ դրւած ձէթէ կանթեղը աղօտ լոյս էր տալիս այդ գարշելի տեսարանին։

Հարկահանը մոռացած տուրքերը՝ անդադար խմում էր և ուտում. իսկ Ջէլէբը թէև ուշ, սակայն վերջապէս սկսեց մոռանալ իր մտահոգութիւնը և տաւարները։

Երկու պաշտօնեաները քիչ յետոյ սկսեցին բարձրաձայն վիճաբանութիւն. հարկահանը մինչև իսկ տաճկերէն երգերի մի այլանդակ խառնուրդ արտադրեց կոկորդից և վերջ ի վերջոյ երկուսն էլ վեր թռան նստած տեղից, բռնեցին միմեանց ձեռք ու սկսեցին երերալով՝ պար բռնել։ Հէնց այդ միջոցին էր, որ Ջէլէբը կանգ առաւ- թողեց հարկահանի ձեռք, հրեց, բաց արաւ սենեակի դուռը և գոռաց.

—Զալկի [1])։

[1]) Նւագածութիւն։

VIII.

Էրզրումի և Խնուսի գիւղերի խրճիթները առհասարակ միատեսակ են լինում թէ արտաքին և թէ ներքին ձևով։

Մանաւանդ հայերինը, որոնք քաղաքի մէջն անգամ ունեն նոյն խոհանոցի նմանող մեծ սրահը՝ երթիկով, թոնիրներով, սաքիներով և մառաններով։

Սերգօ քէհեայի խրճիթը, Աղջամելիքի լաւ խրճիթներից մէկը լինելով, կազմւած էր մի քանի կտորներից. կենտրոնում գտնւում էր մեծ՝ կլոր սրահը, որի մէջն էին թոնիրները, ալըրտունը,[1]) պատերի տակ շարւած զանազան մեծութեամբ կարասներ, պղնձեղէններ և ամեն ինչ, որ պէտք էր Սերգօի ընտանիքի համար, սկսած անկողնից մինչև բահն ու թիակը։ Այդտեղից երկու դուռ բացւում էր մէկը դէպի փողոցի նրբանցքը, իսկ միւսը՝ օդան։ Օդան սրահից բարձրանում էին քարեայ սանդուղքներով։ Սենեակների շուրջը գտնւում էին քէհեայի ախոռը և մարագը, որոնց կողմից երբեմն լսւում էին կովերի բառաչներ և մէկ մէկ էլ էշի զիլ զռոց։

Երբ Ջէլէբը և հարկահանը սենեակում նրա-

[1]) Մի մեծ զարան է, որի մէջ ալիւր են պահում։

տած ուտում և խմում էին, Սերգօ քէհեան քահանայի և մի քանի զանազան հասակի անձերի հետ նստել էին սրահի բարձր սաքուի վրայ։ Նըրանց շրջանի մէջտեղը մի բարձր ճրագկալի վըրայից լուսաւորում էր ձէթէ կանթեղ, որ հազիւ հազ լոյս էր ձգում սրահի հեռաւոր անկիւնը, ուր կծկւել նստել էին մի երկու կանայք և անլսելի ձայնով, կռացած՝ միմեանց ականջին փըսփսում էին, վախենալով խանգարելու սաքուի վրայ շրջան կազմած, լռութեամբ ծխող քէհեային և ընկերութեան և, որը առաւելն էր, օդայի մէջ քէֆ անող երկու պաշտօնեաներին։

Տեսարանն այդպէս էր։ Սրահում ոչ մի ձայն չէր լսւում։ Օդայից դուրս մղւող խառնաձայն խայտառակ երգն էր, որ գալիս խզում էր այդ լռութիւնը։ Մի ինչ որ խուլ շշուկ էլ դրսից միանում էր դրանց։

Դրսումն անձրևում էր և ընկնելով կտուրի վրայ, շառաչում էր ու իր կաթիլները բաց երթիկի վրայ դրւած գմբէթաձև թղթեայ վեղարի ծակոտիքներից ներս ցայտելով, պտտւում էր ու ընկնում, թրջում սրահի մի փոքրիկ կողմը։

Դրսում բացի անձրևից ոչինչ չէր խառնում գիշերային լռութիւնը։ Գիւղական շները վաղուց լռել էին, քամին դադարել և Խնուսի մէջ սովորական աշնանային յորդ անձրևն առատութեամբ ողողում էր Աղջամելիքը։

Սերգօ քէհեան լուռ էր։ Լուռ էին նաև նրա

բոլոր ընկերակիցները։ Կանթեղը պլպլում էր, վարկենապէս լուսաւորում այդ վշտաբեկ մտահոգ դէմքերը, որոնք կռացած՝ նմանւում էին մըտածելու անընդունակ սորուկների։

Տեսարանն այդ էր, երբ յանկարծ մեղմութեամբ ճռնչեց սրահի վրայ բացւող փողոցի դուռը և նրա շէմքի վրայ երևաց մի երկարհասակ, առողջ և ամրակազմ անձ, կարմիր թշերով, կոշտ ընչացքով, մեծ սև սև աշխոյժ աչքերով, որոնք փայլում էին մթութեան մէջ։

Այդ անձը, որ իր հագուստով չէր զանազանւում սաքուի վրայ բազմածներից, մի հայեացք ձգեց խրճիթի ներսը, նախ իր ձեռքի մեծ ցուպն առաջացրեց, յետոյ աջ ոտքը և ակնարկն ուղղելով բազմողներին, որոնք նայում էին նրան, ասաց.

—Բարի երեկոյ ձեզ։

—Ռզկօն է... խօսեց քէհեան դառնալով իր ընկերներին—այ, Աստուծու բարին, Ռզկօ, ժըպտալով դարձաւ մտնողին քիւրդերէն լեզւով—տնաշէն, այդ ինչ տեսակ մտնել էր. վախեցրիր մեզ։

—Վախեցայ խանգարելու ձեր քէֆը. ժըպտաց Ռզկօն մի քայլ ևս առաջանալով դէպի սաքուն։

—Ա՜յ լաւ քէֆ,—ասաց դառնութեամբ քահանան—համեցէք, վեր եկիր, արի դու էլ մեզ հետ քէֆ արա։

Ռզկօն բարձրացաւ, բայց լսելով օդայից դուրս ժայթքող երգերի խուպոտ ձայները, կանգ առաւ, նայեց քէհեայի երեսին և ժպտալով ասաց.

—Էֆէնդիներն են… Աֆֆէրիմ… քաղաքի էֆէնդիները բիւլբիւլներից քաղցր են երգում…

—Մ՛ս֊ սուս… վախեցած կտրեց նրա խօսքը քահանան—կըլսեն անօրէններն ու…

—Թող լսեն, ասաց Ռզկօն նստելով և հաստ ցուպը ծնկների վրայ դնելով—սուտ եմ ասում…

—Ամեն ճշմարտութիւն մի՞թէ կարելի է ասել. դիտեց մի գիւղացի։

—Ի հարկէ ոչ, եթէ ատողները ձեզ պէս քաջ մարդիկ լինեն. ասաց Ռզկօն — է՛, ասէք տեսնե՞նք, այս ինչո՞ւ էք հաւաքւել այստեղ և «լալ-օյինի» [1]) խաղում…

—Էլի Ռզկօն իր սրախօսութիւնները սկսեց, ժպտաց քահանան, որ գիւղի մէջ նոյնպէս սրախօսի անուն ունէր—եթէ դու լինես մեր տեղը, ոչ միայն «լալ-օյինի» կը խաղաս, այլ և աքլորի նման կըկանչես… Դու այն ասա, թէ հայրդ ինչպէ՞ս է մտածում, դո՞ւք ինչ պիտի անէք։

—Հա՞յրս, ասաց Ռզկօն—հայրս ոչինչ չէ մտածում, որովհետև մտածելու էլ ոչինչ չըկայ.

[1]) Դա մի տեսակ խաղ է, որի ընթացքում բռնաւոր կառավարիչն ամեն տեսակ նեղութիւններ և ապտակներ է տալիս խաղացողներին, իսկ սրանք պարտաւոր են լռել և չըզժգոհել իսկ. ձայն հանողն իսկոյն խստութեամբ պատժւում է։

Նա իր տուրքերը տւել է և մտադիր չէ աւելորդ տուրք տալ։

—Դէ, ամեն մարդ էլ խօ Շէրիֆ աղա չէ՞ կարող լինել. խօսեց մի ծերունի—հայրդ քաղաքում պաշտպաններ ունի. ինչ որ ուզի, կարող է անել։

—Ի զուր էք այդպէս մտածում, ասաց Ռըզկօն—հայրս երբէք դէմ չէ հարկ վճարելու. անասունի գլուխ 3 ու կէս ղուրուշ տուրք է նըշանակւել. նա տւել է և քօչան էլ ունի։

—Է՛հ, մէջ մտաւ քահանան—մեզնից շատերն էլ ունեն այդ թղթի կտորներից, բայց որ օգուտ չունի. հարկահանն անպատճառ ուզում է իր տետրակը մի քանի հազար ղուրուշով ծախել։

—Բացի դրանից, ասաց քէհեան — մեզնից շատերն էլ կարծելով թէ այդ թղթի կտորներն ոչինչ են, երբ տուրքդ վճարել պրծել ես, կորցրել են թղթերը… ա՛յ, օրինակի համար, մի քիչ առաջ ինձանից քօչանն ուզեց. մեր պատիկը քօչանը պատռել է և բանից դուրս է գալիս, որ հարկահանը խիստ մոռացկոտ մարդ է եղել. գիտե՞ս ինչ էր ասում. — «բոլորիդ կաշին քերթել կըտամ»—ասում էր,—«եթէ տուրքերը չը բերէք» —ասում էր։

Ռզկօն, Շէրիֆ աղայի այդ առողջակազմ որդին, նայեց ամենքի երեսին, յետոյ հազաց և ասաց.

—Լսեցէք ինչ եմ ասում… Հայրս իմացաւ,

որ ջէլէբը և հարկահանն այստեղ են եկել, ուստի ինձ ուղարկեց ձեզ մօտ...

Հէնց այդ միջոցին էր, որ հարկահաւաքի ձեռքը թողնելով, հարբած ջէլէբը ցատկել էր դէպի օդայի դուռը, հրել, բաց արել, գլուխը դուրս պարզել և որոտընդոստ խռպոտ ձայնով գոչել.

—Չալկի՛...

Այդ ձայնը ընդհատեց Ոգկօի խօսքը, վեր թռցրեց քէհեային և միւսներին։

—Քէհեա, գոռաց նորից ջէլէբը այնպիսի ձայնով, որ քնած մանուկները զարթնեցին, թառած հաւերը կչկչացին, իսկ շունը ախոռի մէջ հաչեց։

—Քէհեա՛... չալկի՛, շո՛ւտ... չալկի՛ բերել տուր։

Քէհեան ցատկեց առաջ և ուզում էր սաքիւից ցած վազել դէպի հարկահանը, բայց Ոգկօն արագութեամբ բռնեց նրա թևից և հեգնական ձայնով պատասխանեց ջէլէբի խօսքերին.

—Աղա, սաստիկ անձրևից, չալկջիի չալկին փչացել է։

Ջէլէբը որչափ որ հարբած էր, այնու ամենայնիւ զգաց, որ խօսողը քէհեան չէր. զարմացած կանգ առաւ, յենեց դրան և ասաց.

—Այդ ո՞վ է խօսողը, քէհեա։

Քէհեան նորից ուզեց ցած վազել, բայց Ոգկօն ուժգնութեամբ քաշեց, նստեցրեց նրան

և ինքը երևցնելով իր մեծ դէմքը աղօտ լոյսի մէջ, ասաց.

—Այդ մի մարդ է, ջէլէբ էֆէնդի, մի մարդ է, որ ձեզ ասում է թէ Աղջամելիքը չալկջի չունի և ունենայ էլ՝ այս անձրևին ոչ ոք չի գայ։

—Քէհեա՛, որոտաց ջէլէբը—ո՞րտեղ է քէհեան։

—Սպասիր, մէջ մտաւ հարկահանը, որը կարողացել էր երերալով մօտենալ ջէլէբին և բռնել նրա թևից—սպասիր, յարեց նա ուժգնութեամբ հրելով ջէլէբին—նախ և առաջ օղլի չի-
ՉԸ պիտի լցնել, դատարկւել է։

—Ա՛, գոչեց Ոգկօն բարկացած և կոտրելու չափ սեղմելով քէհեայի թևը—դուք օղի՞ էլ էք գտել սրանց համար և այստեղ միւսիլմաններ կան, որոնք գեաւուրների տան մէջ զբաղւած են պիղծ արբեցողութեամբ...

—Ո՞վ է այդ անօրէնը. ոտքը առաջ ձգեց ջէլէբը և իջաւ սրահը—ո՞վ է, որ համարձակւում է մեզ հետ խօսել։

Քէհեան տեսաւ որ բանը վատ էր լինելու, ճիգ գործելով կարողացաւ ազատել իր թևը, վազեց դէպի ցած, վախվխելով մօտ գնաց ջէլէբին և խոնարհութեամբ ասաց.

—Աղա՛... Աստուծու սիրուն, հանդարտեցէք, ձեր հրամանները կըկատարւեն։

—Այդպէս, հանդարտւեց ջէլէբը և ետ դարձաւ դէպի օդան—շուտ չալկջի և օղի... իսկ ա-

ուսուտեան մենք կըտեսնենք թէ ձեզանից ո՞րն էր այն լիրբ խօսքեր խօսողը... այժմ ես փոքր ինչ քէֆով եմ. իսկ էգո՞ւց... օ՛, ես նրա կաշին պիտի քերթեմ...

Եւ ներս մտաւ օդան, առջևից դէպի ներս հրելով հարկահանին։

Երբ դուռը պիտի փակէր, կիսովին ետ դարձաւ դէպի քէհեան և ասաց խստութեամբ.

—Սերգօ քէհեա, ներս արի, քեզ հետ գործ ունեմ։

Քէհեան մտաւ ներս. Ջէլէբը գնաց դէպի օթոցը, նստեց նրա վրայ, թողեց որ հարկահանը ընկնի կողքին և դառնալով դէպի Սերգօն, որ ձեռքերը կուրծքին դրած սպասում էր, ասաց խստութեամբ.

—Հը՛մ... Սերգօ՛ քէհեա, դու կարծում ես որ Մուստաֆան այնքան հարբած էր, որ ոչինչ չիմացա՞ւ։

Քէհեան գունատուեց և կմկմաց։

—Ի՞նչ, աղա։

—Ի՞նչ, գեաւուր, ես քեզ ցոյց կը տամ «ինչը»... դու համարձակւո՞ւմ ես թողնել, որ այն ըմբոստ մօլլայի որդին ծաղրէ ինձ, դու համարձակւո՞ւմ ես միւսիւլմաններին իմաց տալ, որ մենք այստեղ զբաղուած ենք արգելուած խմիչք գործածելով։

—Վա՛հ... մէջ մտաւ հարկահանը ցատկելով տեղից և մօտենալով քէհեային—դու այդ արե՞լ ես, գեաւուր... ես քեզ...

Բարձրացրեց ձեռքը և մի քայլ արաւ դէպի լեղապատառ եղած դողացող հային, որ աւելի ևս կծկւեց. բայց Ջէլէբը շտապով բռնեց հարկահանի բարձրացած ձեռքը։

—Հանդարտ կաց, Իզէդդին էֆէնդի, ասաց նա հրելով և ձգելով հարկահանին դէպի օթոցը —այս գեաւուրի հետ ես պիտի գործ տեսնեմ... Մօտ եկ, քէհեա...

Քէհեան վախվխելով մօտեցաւ։

—Լսիր, Սերգօ քէհեա, գոչեց խստութեամբ Ջէլէբը—այս րոպէիս կերթաս և դուրս կանես տնիցդ այդ լիրբ մօլլայի լիրբ որդուն, ապա թէ ոչ, Աստուած գիտէ, Իզէդդին էֆէնդին շատ բարկացկոտ է, կըկանչի սւարիներին ու մի ժամից յետոյ տունդ գլխիդ փլեցնել կըտայ...

—Այո՛, օռնաց հարկահանը—ես շատ բարկացկոտ եմ և կանեմ... Աստուած գիտէ, որ կանեմ... ա՛յ, այս րոպէիս ես կանեմ... Սւարինե՛ր... գոռաց նա կամենալով դէպի դուռը գնալ։

—Սպասիր, սպասիր, բռնեց նրա թևը Ջէլէբը—մեղք է Սերգօն, սա էլ մերն է, խեղճ է... սա ինչ մեղաւոր է որ լիրբը եկել է այստեղ... Նստիր, Սերգօն մեղք չունի և նրան պէտք է խղճալ, մեր Սերգօն է...

—Աստուած կեանք տայ, աղա, Աստուած օրերդ երկարացնէ. կմկմաց քէհեան, որ հարկահաւաքի խօսքերից քիչ մնաց մեռնէր։

—Այդպէս ուրեմն, շարունակեց Ջէլէբը—

կերթաս և նրան դուրս կանես այստեղից. հասկանո՞ւմ ես... և իմ ձին էլ պատրաստել կըտաս:

—Ջի՞ս, նորից մէջ մտաւ հարկահանը—ինչու, ո՞րտեղ ես ուզում գնալ:

—Քիչ ուզում եմ օդ ծծել դաշտերում. ժըպտաց Չէլէբը, որ կարծես հետզհետէ սկսում էր լըջանալ:

—Սաստիկ անձրև է գալիս, աղա, մէջ մըտաւ քէհեան:

—Աւելի լաւ, ասաց Չէլէբը—գլուխս սաստիկ ցաւում է, ուզում եմ քիչ օդ ծծել:

—Իսկ իմ քունս տանում է, ասաց հարկահանը և պառկեց օթոցի վրայ—ես էլ կը քնեմ:

—Լաւ կանես... Հա՛, այդպէս, դարձաւ Չէլէբը քէհեային—դուրս կանես այդ լըբին և ձիս կըպատրաստես... Կէս գիշեր կըլի՞նի:

—Կը լինի:

—Լաւ... կանցնես սւարիների մօտ էլ և Շէֆքի չաւուշին կասես, որ Չէլէբը հրամայում էր, թէ կարող են քնել հանգիստ... Հասկացա՞ր, Շէֆքի չաւուշին կասես...

—Հասկացայ, աղա, ասաց քէհեան, որ ըսկսում էր ուրախանալ տեսնելով թէ ինչպէս էժան ազատեց Չէլէբի բարկութիւնից:

—Հա՛, շարունակեց Չէլէբը—Սերգօ քէհեա, այդ մօլլայի որդին քիչ լիրբն է երևում, ղալմաղալ չըսարքես, որքան կարող ես քաղաքավարութեամբ խնդրիր որ հեռանայ... Բայց, տես, անպատճառ հեռացնես... և մի մոռանալ—այնպէս արա, որ կռիւ չը դուրս գայ... քաղաքավարութեամբ վարուիր... Գնա:

Քէհեան քայլեց դէպի դուռը:

—Քաղաքավարութեամբ վարուիր այդ անզգամի հետ, կրկնեց Չէլէբը նրա ետևից:

—Հրամանք ես, աղա, ասաց քէհէան մօտենալով դռան:

—Ջին շուտով թամբիր:

—Հրամանք ես, աղա, ասաց քէհեան և դուռը բաց արաւ:

—Շէֆքի չաւուշին ասա, որ հանգստութեամբ քնեն և շուտով, հասկացա՞ր...

—Հասկացայ, աղա, ասաց քէհեան և դուրս գնաց:

Սաքուի վրայ նստածները լուռ դիտում էին այդ տեսարանը:

IX.

Սերգօ քէհեան, օդայից դուրս գալուց յետոյ, կանգ առաւ թոնրի կողքին և մտախոհ՝ ծոծրակը քորեց:

Քահանան, Ոզկօն և միւսները զարմացած՝ դիտում էին նրան:

—Սերգօ, Սերգօ, կանչեց քահանան շշուկով—վեր արի, այդ ինչ եղաւ քեզ:

Սերգօն վեր նայեց, խէթ աչքով մի ակ-

նարկ ձգեց Ոգկօի վրայ, յետոյ սենեակի մի անկիւնում խլրտող կանանց և մանուկների վրայ գոռաց, որ քնեն և դանդաղութեամբ բարձրացաւ դէպի սաքիւն։

Բարձրացաւ, յուսահատ դէմքով նստեց քահանայի մօտ և նորից նայեց Ոգկօին։

—Հ՛ը, ի՞նչ է եղել, հարցրեց Ոգկօն բարձր ձայնով—ի՞նչու ես այդպէս նայում ինձ։

—Կամաց խօսիր, Աստուծու սիրուն—ասաց քէհեան—առանց էն էլ կատաղել են, որ դու այդպէս յանդուգն խօսքեր ասացիր։

—Բարկացել են, թող գլուխները անձրևին տան, լó... [1]) գոչեց Ոգկօն—ձե՞զ ինչ կայ վախենալու. օրէնքի առաջ ոչ միւսիլման կայ, ոչ հայ, ոչ մէջք ունեցող կայ, ոչ էլ անմէջք. օրէնքի առջև ամենքն էլ հաւասար են. իսկ օրէնքը թոյլ չէ տալիս, որ երկու լրբեր գան տունդ, ձրի ուտեն, խմեն, քեզ լեղապատառ անեն, կնգանդ, երեխաներիդ վախեցնեն ու աւելորդ հարկ վերցնելով՝ տաւարդ չնչին գնով ծախեն ու ծիծաղեն վրադ. հասկանո՞ւմ էք, լó, օրէնքն այդ թոյլ չէ տալիս։

—Գիտես ի՞նչ կայ, Ոգկօ, մէջ մտաւ քէհեան—հարկահանը շատ բարկացկոտ մարդ է երևում. օրէնք-բան չի հասկանում և քո քարոզներդ աւելի կատաղեցնում են նրան. թէ ինձ

[1]) Քրդական մի բացականչութիւն է, որ նշանակում է «ա՛յ մարդ» կամ «էյ»։

սիրում ես, թի ուզում ես, որ մեր տունը չըքանդեն, վեր կաց գնա տունդ...

—Ա՛մ... ծիծաղեց Ոգկօն — երևի նրանք քեզ հրամայել են, որ ինձ դուրս անես, լա՛ւ...

—Չէ, Ոգկօ, շտապեց ասել քէհեան—դուրս անել չէ, Աստուած գիտէ, որ չէ. բայց բարկացել են, գիտես, անօրէն են, որ ուզեցին, տուն ու տեղս կը քանդեն... արդէն կէս գիշեր էլ է, քնելու ժամանակ է։

—Լա՛ւ, լա՛ւ, ասաց արհամարհութեամբ Ոգկօն—մէկ կողմ թող այդ ձևերը. ես երեխայ չեմ, հասկանում եմ. նրանք քեզ հրամայեցին, որ դուրս անես ինձ. վնաս չունի, ես չեմ ուզում քեզ լեղապատառ անել և կերթամ, սակայն երթալուց առաջ մի բան պիտի հարցնեմ քեզ։

—Հարցուր, ղո՛ւրբան, տասը բան հարցուր. ասաց քէհեան ուրախացած, որ այդպէս հեշտութեամբ համոզեց քիւրդին՝ հեռանալու։

—Ուրախացա՞ր, որ հեշտ համոզեցիր. ժըպտաց Ոգկօն արհամարհութեամբ — վնաս չունի, ես կերթամ և դու շարունակիր դրանց ոտները լզել... Բայց դու ինձ այն ասա, թէ ինչո՞ւ էր ջէլէբը քեզ պատւիրում, որ Շէֆքի չաւուշին ասես՝ «հանգիստ քնեն»։

—Ինչպէ՞ս թէ «ինչու», զարմացաւ քէհեան—դա շատ հասկանալի է. ուզում էր ասել թէ իրենք գտնւում են մի հաւատարիմ մարդու տան մէջ և ոչնչից վախ չունեն, ուստի և ւա-

րները կարող են հանգստութեամբ քնել։

—Ի՞նչ վախ պիտի ունենային, հարցրեց Ոգկօն—նրանք չը գիտե՞ն, որ ոչ մի հայ, որ մեռնի էլ, ձեռք չի բարձրացնիլ իրենց նման անիրաւների դէմ։

—Երեխայ-երեխայ խօսում ես, ժպտաց քահանան—ո՞վ չի վախենայ, եթէ վրան մի քանի հարիւր լիրա ունենայ։

—Մի քանի հարիւր լիրա՜... ապշութեամբ գոչեցին միւսները։

—Ի հարկէ, ասաց քահանան—մի մարդ, որ եկել է գիւղերից տաւարներ առնելու, այդքան փող կունենայ մօտը։

—Այդ լաւ յիշեցրիր ինձ, տէրտէր, խօսեց քէհեան—իսկի միտս չէր։

Ասաց ու ուզեց բարձրանալ։

—Ո՞ւր ես գնում, բռնեց նրան քահանան։

—Հարբել է ու չէ իմանում թէ ինչ է անում, պատասխանեց քէհեան—ուզում է ման գալու գնալ այս գիշերով։

—Ո՞վ, հարցրեց Ոգկօն։

—Ջէլէբը, ասաց քէհեան—հիմա ինձ ասում էր որ ձին պատրաստեմ, որովհետև ուզում է գնալ դաշտերում քիչ օդ ծծել։

—Այս անձրևո՞վ։

—Հարբել է. ժպտաց քէհեան—ասում էր, որ գլուխը ցաւում է. կերթամ ու չեմ թողնի...

Ոգկօի աչքերը փայլեցին. նա արագու-

թեամբ բռնեց քէհեայի թևից և հրեց իր տեղը։

—Նստիր, գոռաց նա սպառնալից։

Քէհեան և միւսներն ապշած՝ Ոգկօի այդ յանկարծական բարկութիւնը դիտեցին։

—Նստիր, ասաց Ոգկօն աշխատելով իր նախկին ձայնը ստանալ—քե՞զ ինչ. թող երթայ ման գալու, գուցէ մի փոսի մէջ ընկնի ու մենք էլ ազատուենք ձեռքից։

—Այ ասում ես հա՛, ասաց քէհեան—այդպէս լինի, որ յետոյ մեզ քաշ տան քաղաք իբր մարդասպանների. չէ, ախպէր, ես չեմ թողնի որ այդ դրութեան մէջ դուրս գայ տնից։

—Սերգօ՛, ասաց Ոգկօն—նստիր և թող ջէլէբն իր ուզածն անի, ապա թէ ոչ, Աստուած գիտէ, որ ձեռքից չես պրծնի։ Տօ՛, ախմա՛խ, ով քեզ մարդասպան կասի, երբ ջէլէբի դիակը գտնուի մի ժայռի տակ կոտր կոտր եղած և կամ մի ջրի փոսի մէջ՝ խեղդուած։

—Իրաւ է ասում Ոգկօն, դիտեց մի ուրիշը—քեզ ինչ գործ, քէհեա՛, քեզ ասել է ձին պատրաստիր, դու էլ արա, քե՞զ ինչ եթէ նա վտանգի հանդիպի։

—Իսկ եթէ մեզ մեղադրեն յետո՞յ... հարցրեց քէհեան վարանելով։

—Լօ՛, ասաց Ոգկօն աշխոյժով—ոչ ոք քեզ չի մեղադրիլ. դու վկաներ ունես, որ նա հարբած էր և բացի դրանից, ասում եմ քեզ, հարբածները շատ կամակոր են լինում. եթէ սկսես

նրանց խորհուրդ տալ, գլուխդ կըջարդեն... Գնա՛, գնա ինչ որ ասել է քեզ, դու այն արա և ձայնդ կտրիր։

Ասաց և ոտքի ելնելով, ցուպն առաւ։

—Գնո՞ւմ ես, հարցրեց քահանան։

—Ի՞նչ անեմ, ժպտաց Ոգկօն—ես այնքան սիրում եմ Սերգօին և նա հօրս լաւ բարեկամն է—որ ստիպւած եմ գնալ։

—Ապրւած կեանք տայ հօրդ. ասաց քէհեան ոտքի ելնելով—ես էլ գնամ ձին պատրաստեմ։

—Հա՛, գնանք ուրեմն... Բարի գիշեր, աղաներ, ասաց Ոգկօն և ցած իջաւ սաքուից։

Նրա ետևից իջաւ քէհեան։

—Շուտ կըգա՞ս, Սերգօ, հարցրեց քահանան։

—Մենք էլ գնանք, ասաց մէկը—կէս գիշեր է ու դրանք էլ հարբել են։

—Լաւ էլ կանէք. դիտեց Ոգկօն ցածից—գնացէք քնէք ու լաւ լաւ երազներ տեսէք։

Եւ բոլորն էլ դուրս գնացին խրճիթից։

Փողոցում նրանք միմեանց բարի գիշեր մաղթելուց յետոյ, շտապեցին փախչել հեղեղի նման տեղացող անձրևի տակից։ Իսկ Ոգկօն մի քանի քայլ առաջանալուց յետոյ կանգ առաւ, շուրջը նայեց և երբ տեսաւ որ մենակ է, կուլաբը գլխին քաշելով, դիմեց դէպի մի դուռ, մտաւ ստւերի տակը, ցուպը ոտների մէջ առնելով նստեց և կծկւեց մի կողմում։

Ամեն կողմ տիրում էր լռութիւն. միմիայն լսւում էր անձրևի խշխշոցը և երբեմն էլ գիւղի զանազան ծայրերից շների ձայները։

—Ցո՜ւհ, մռմռաց Ոգկօն—ի՜նչ վատ անձրև է...

Եւ լռեց այլ ևս։

Չէր անցել տասը րոպէ, երբ լսեց, որ ոտնաձայն է գալիս և բացւում է քէհեայի խրճիթի դուռը։

—Նա է... մռմռաց Ոգկօն, աշխատելով ծածկւել մթութեան մէջ։

Քիչ յետոյ նա տեսաւ թէ ինչպէս մէկը, դուրս քաշելով խրճիթի դռնից մի ձի, հեծաւ, մտրակեց և տաճկերէն ասաց.

—Ի՛նչ յիմար անձրև է. թրջւելը երկու ոսկի չարժէ...

Ոգկօն գլուխը պարզեց և երբ ձիաւորը գալիս՝ իր կողքից էր անցնում, անշարժ մնաց ու աշխատեց տեսնել ձիաւորին։

—Ա՛, մռմռաց նա զարմացած, երբ ձիաւորն անցել էր—Շէֆքի չաւուշն էր... Այստեղ մի բան կայ, որ փոխանակ քնելու, ձի են հեծնում և պտոյտի գնում։

Ձիաւորն անհետանում էր։ Ոգկօն բարձրացաւ, արագութեամբ մագլցեց պատից, իջաւ կըտուրի վրայ և աշխատեց տեսնել թէ ո՞ւր էր գընում չաւուշը։

Ձիաւորը սրարշաւ անցաւ գիւղի աղբիւրի

մօտից, յետոյ ծռեց դէպի Շէրիֆ աղայի փողոցը, պահ մի աներևոյթ մնալուց յետոյ, նորից երևաց միւս ծայրում և արշաւակի իջաւ դէպի բլրակը։

—Հը՛մ... մռմռաց Ռզկօն—Քօփալ է գնում։

Յետոյ իջաւ ցած ու նորից կծկւելով, մտաւ դռան սուերի մէջ։

Քիչ յետոյ նորից բացւեց քէհեայի խրճիթի դուռը և այս անգամ քէհեան էր, որ մի ձեռքում մի կանթեղ բռնած, միւսով դուրս էր քաշում Ջէլէբի ձին, իսկ ինքը—Ջէլէբը հրացանը ձեռքին՝ հետևում էր ձիուն։

Երբ ձին դուրս եկաւ, Ջէլէբը հրացանը կախեց ուսից և մօտեցաւ ձիուն. քէհեան բռնեց ասպանդակը. Ջէլէբը հեծաւ և ասաց քէհեային.

—Սերգօ, գուցէ ես ուշ վերադառնամ և կամ թէ գիշերս ուրիշ տեղ գնամ. առաւօտեան եթէ հարկահանը ինձ կը հարցնի, ասա որ շուտով կը վերադառնայ. մինչև էգուց երեկոյեան թող սպասի ինձ և միամիտ կենայ։

—Հրամանք ես, աղա, պատասխանեց քէհեան և աւելացրեց—էլի աղաչանք եմ անում, աղա, այսպիսի գիշեր դաշտ գնալը անխոհեմութիւն է։ Գիտե՞ս, մեր գիւղի քիւրդերը շատ աւազակ մարդիկ են... Բացի դրանից, գիւղի չորս կողմը փոս, ժայռ ու անդունդներ շատ են պատահում։

—Ի զուր ես մտածում, քէհեա՛, ասաց Ջէ-

լէբը—ես քո կարծածիդ չափ էլ հարբած չեմ և հետս զէնքեր ունեմ։

—Էլի՛, ասաց քէհեան—քո կեանքդ ինձ համար թանգ է. կրկնում եմ, որ մեր գիւղի քիւրդերն աւազակ մարդիկ են...

—Միամիտ կաց. ասաց Ջէլէբը և մտրակեց ձին։

Ռզկօն, որ այդ բոլորը լսում էր, կատաղութեամբ ատամները կրճտացրեց և մռմռաց.

—Սո՛ր, ցած գեաւուր...

Ջէլէբը մտրակեց ձին. Ռզկօն կծկւեց և ձիաւորը, առանց նկատելու նրան, անցաւ, մինչդեռ քէհեան դրան վրայ պահ մի կանգնելուց յետոյ ներս էր մտնում և դուռը ետևից փակում։

Ռզկօն ցատկեց պահուած տեղից, նորից մագլցելով պատն ի վեր, բարձրացաւ կտուրը և նայեց հեռացող Ջէլէբի ետևից։

Ջէլէբը նոյնպէս անցաւ գիւղի աղբիւրի մօտից, նոյնպէս մտաւ Շէրիֆ աղայենց փողոցը և շուտով միւս ծայրից դուրս գալով, արշաւակի իջաւ դէպի բլրակը, որից յետոյ դէպի Քօփալ գիւղը։

—Ա՛ն... մատը կծեց Ռզկօն—այժմ հասկացանք... Այստեղ մի բան կայ, որ երկու հոգով է կատարւում... Հոգ չէ, մենք էլ տաս հոգի կը լինենք։

Պահ մի մտածելուց յետոյ գլուխը ցնցեց, արագութեամբ ցած թռաւ կտուրից և վազն ի վազ

մեկնելով, անհետացաւ գիւղի փողոցների մէջ։

Անձրևը շարունակում էր տեղալ։ Երկու ձիաւորների ոտնաձայները զարթեցրել էին մի քանի շների, որոնք հաչում էին։ Այժմ նրանք էլ լռեցին և քիչ յետոյ անձրևն էր միայն, որ շառաչմամբ տեղում էր կտուրների և փողոցների վրայ…

Դրանից մի քանի օր յետոյ, Խնուսի Քօփալ գիւղից ոչ-շատ հեռու, մի ձորակի մէջ գտան սպանուած Ջէլէբ Մուստաֆայի դիակը՝ մեռցնելու չափ ծեծուած Շէֆքի չաւուշի և երկու վիրաւորուած թիւրքերի միջում։

Հարցուփորձից իմացւեց, որ Ջէլէբ Մուստաֆան Քօփալից իր տաւարների նախիրը Խնուս տանելու ժամանակ, ձորակում յարձակում էր կրել 10 ձիաւոր քիւրդերից, սպանւել էր և տաւարներից զրկւել։

Քննութիւնից էլ յայտնւեց, որ այդ տաւարները վերադարձւել էին Քօփալ, որ գիւղացիները մինչև վերջը պնդում էին, թէ իրենք ոչ մի տաւար չեն ծախել Ջէլէբ Մուստաֆային։

Բանն այն էր, որ քօփալցիները քթի տակից ծիծաղելով քննիչների վրայ, այնքան վարպետութեամբ պատասխաններ տւին, որ ոչ ոք չըկարողացաւ հաստատել թէ նրանք իրենց տաւարներից ծախել էին Մուստաֆային։

Իսկ տաւարները Ջէլէբի առաջնորդութեամբ գիշերային մի պտոյտ անելուց յետոյ, առաւօտեան դէմ բերւել էին իրենց ախոռները։

Քննիչները դիմեցին Շէֆքի չաւուշին և երբ նա փոքր ինչ կազդուրւելուց յետոյ, հարցուփորձի ենթարկւեց, իր տւած տեղեկութիւնները կազմեցին այսպիսի յօդւածներ։

Ջէլէբին սպանող, իրեն ծեծող և տաւարները յափշտակողները հագնւել էին քիւրդի պէս և խօսում էին քիւրդերէն։ Նրանց մէջ նա յիշում էր մի լայնալանջ հսկայ քիւրդի, որ ցուպի մի հարւածով՝ թռցրել էր իր հրացանը ձեռքից։

Աղջամելիքից մեկնելու մասին, բացի Սերգօ քէհեայից, ոչ ոք տեղեկութիւն չունէր․ ուրեմն այդ սպանութեան մէջ գլխաւոր գործողը հայ քէհեան էր։

Քննիչներն այս երկրորդ յօդւածը կազմելուց յետոյ, մատները կծեցին և զարմացած գոչեցին.

—Տեսնո՞ւմ էք, գեաւուրներն էլ են աւազակութիւն անում։

Մի քանի օր յետոյ հարկահանն էլ քաղաք իջաւ և իր քիթը կոխեց այդ գործի մէջ։ Փորձեց ձեռք տալ Շէրիֆ աղային, բայց տեսաւ որ այդ քիւրդի քաղաքային մէջքը բաւական ամուր էր և անմատչելի. ուստի ինքն էլ, ինչպէս մի «լաւ միւսլիման», պարտք համարեց յայտնել, որ աւազակները անպատճառ հայեր «պիտի լինէին»…

Տապով քննիչներն իրենց վճիռը կայացրին, ուարիներ ուղարկեցին դէպի Խնուս, հեռագրեցին այս—այն կողմ, որ եթէ Աղջամելիքից փախչող հայեր լինեն, իսկոյն բռնեն կամ մեռած և կամ կենդանի։

Հեռագիրները իզուր անցան, որովհետև ուարիները ձիեր ճաթեցնելով Խնուս հասան և զարմացան, որ բոլորին էլ բռնեցին գիւղի մէջ՝ առանց ընդդիմադրութեան։

Եւ բոլոր այդ անձերին կապեցին, առին ուարինների առաջ, ծեծելով և տանջելով Խնուս բերդաքաղաք իջեցրին և Խնուսից էլ Էրզրում տարան, սկզբից շատ անգամ ճեպընթացներ ուղարկելով՝ թէ ահա քաջ ուարիները աւազակներին բռնած՝ քաղաք են բերում։

Այդ արշաւանքի պատմութիւնը Էրզրումի «Ջնվարը շարքի է» թերթին բաւական նիւթ տւաւ։

Նոր ճանապարհորդները սակայն ասում են, որ Աղջամելիք գիւղը այժմ ոչ թէ քսան տուն հայ ունի, այլ 5—6 տուն միայն։

Մնացածները դռնէ դուռ, գիւղից գիւղ ընկած՝ հաց և օթևան են մուրում և ապա գնում մեռնելու մի յետ ընկած անկիւնում։

Եւ եթէ տեսնել էք այն խեղճ մուրացիկները, որոնք դաւազանը ձեռքին քարշ են գալիս քաղաքից քաղաք և գնում սփռւում, անհետանում են Կ. Պոլսից սկսած մինչև Եգիպտոսի խուլ ան-

կիւնները, որոնք թողած ամեն ինչ, ցրւում են ամեն կողմ, կանգնեցնում իւրաքանչիւր հանդիպողի, ձեռք պարզում և «փշուր մը հաց» խնդրում,—դրանք զանազան Աղջամելիքների զանազան թշւառ գիւղացիներն են…

1891

ԼԱԼՕ

I

Երբ դեռ Վանայ Այգեստանից դէպի քաղաք տանող ճանապարհը չէր կանոնաւորած Հայկավանք եկեղեցու ճիշտ դէմ ու դէմը, Օմար էֆէնդու մեծ արտի եզերքում, մի փոքրիկ խրճիթ կար կանգնած, որի բաց դուռը պատսպարւած էր միայն կիսաւեր կարճ պատով։ Խրճիթի աջ կողքին բոլորովին դատարկ արտն էր, որ և փռւում էր նրա ետևում. ձախ կողքին կանգնած կար իր նման մի խրճիթ, առջևն էլ մի փոքրիկ հրապարակ. այդ տեղից հոսում էր և մի առւակ, որ պտոյտ գործելով եկեղեցու առջևից, գնում թափւում էր ծովը։

Խրճիթը միայն մի փոքրիկ մութ սենեակ էր, որին հազիւ-հազ լուսաւորում էր կտուրից բաց արած երդիկը. առաստաղի գերանները թոնիրի ծուխից փայլուն սևութիւն էին ստացել. սև էին նաև պատերը, իսկ յատակը թողած էր այն դրութեամբ, ինչպէս որ եղել էր խրճիթը շինե-

լուց առաջ։ Միայն մի քանի գզգզած փսիաթներ կային փռւած թոնիրի շուրջը, ուր նստոտած խաղում էին երեք, միմեանցից մի տարով մեծ, մանուկներ։

Խրճիթի անկիւններից մէկում մի կապուտաչեայ հասակաւոր կին՝ կապոցներ էր տեղաւորում ցորենի տոպրակի վրայ, իսկ խրճթի դռան մօտ, չոր գետնի վրայ նստած՝ ծխում էր մի մուշտակաւոր մարդ։

Մարդ ու կին էին։ Իրենց որդիների հետ Կ. Պօլսից էին եկել և հազիւ մի քանի ժամ կը լինէր որ մտել էին Վան, գտել իրենց միակ խրճիթը, ուր և տեղաւորւում էին։

Մարդը երկարահասակ, թուխ, առողջ դէմքով, կլոր, խուզած մօրուքով, սուր, երկայն բեխերով, թիկնաւէտ անձն էր. Նրա ամբողջ հագուստը՝ գլխին դրած մի կեղտոտ ֆէս, մի շապիկ և մի մուշտակ էր,—մի հին մաշւած մուշտակ, որով և աշխատում էր փաթաթել մերկ մարմինը։ Ոտներն առանց գուլպայի, պատսպարւած էին մի զոյգ ամենահասարակ եամանիներով [1])։

Կինը որ կապուտաչեայ էր, սպիտակ, գեղեցիկ դէմքով, նուրբ գծագրութիւններով, բազմաթիւ նեղութիւններից առաջացած մի քանի մելամաղձոտ խորշումներ ունէր—Պօլսեցի էր. Նրան հաւանել էր Կ. Պօլսում եղած ժամանակ,

[1]) Փափուկ կաշուց կարած շատ էժանագին կօշիկ։

իրեն կին առել վանեցի Ալեախը, երկար տարիներ այնտեղ իւր անգութ բաղդի հետ կռուելուց յետոյ, այժմ ահա ետ էր դարձել հայրենիք աւելի խեղճ, աւելի աղքատ, քան թէ իր այնտեղ եղած ժամանակն էր։

Մի կերպով Տրապիզոն էին հասել, փոքր ինչ փող հաւաքելով գնացել էին Էրզրում, այնտեղ էլ մի քիչ հաւաքելով՝ իրենց ձգել էին Վան և եկել ընկել խարխուլ խրճթի մէջ, ապաւինելով Աստծու գթութեանը, որից նոքա զուրկ էին մնացել տասներեք տարուց ի վեր։

Երեք որդի ունէին։—Երկուսը աղայ և մէկը աղջիկ։ Բոլորն էլ համարեա մերկ էին, առանց գուլպաների, առանց կօշիկների, առանց գոնէ մի տաք պահող հագուստի... Մայրը իւր հին չթէ վերնազգեստից յաջողել էր կարել նրանց համար մի մի հատ շապկանման հագուստ։

Երեկոյ էր, երբ Ալտօն ընտանիքի հետ քաղաք մտաւ, խրճիթն իջաւ, մօտիկ դրացիներից մի քանի կտոր փայտ առնելով՝ թոնիրը վառել տւեց, իւր միակ շապիկը, որ երկար ճանապարհ գնալուց կեղտոտւել էր, տւեց կնոջը լւանալու և հագնելով մերկ մարմնի վրայից հին մուշտակը, նստեց խրճթի դռանը։

Ծխում էր և մտածում։

Մտածում էր, որ թէև ոչինչ չունէր, թէև չըգիտէր թէ վաղը ինչ պիտի ուտէին, սակայն ունէր գոնէ մի անկիւն, որ իւր սեփականն էր

և ուր կարող էր քնել գիշերը... իսկ միւս օրը նա կերթար քաղաք... մշակութիւն կանէր—նոր շինւող ճանապարհի վրայ կաշխատէր։ Բայց ոչ... չէ՞ որ այստեղ աշխատողները ձրի են աշխատում, մինչև անգամ մի փոր հաց չեն ստանում... Հոգ չէ... կերթար Այգեստան։ Լսել էր, որ այնտեղ հարուստ աղաներ, տներ էին շինում... Ուժեղ էր, մշակութիւն կանէր, հող կըկրէր... Թող օրավարձը լինէր նոյն իսկ 40 փարայ... հաց կըգնէր... գոնէ ցամաք հաց. սակայն ունէր մի անկիւն, մի բուն, որ կարող էր իր սեփականը համարել և ուր կարող էր ապրել առանց վարձ վճարելու։

Իբրև բուն վանեցի՝ ատում էր նա վարձւոր լինելը։

... Եւ ծխելով ներս նայեց իւր ունեցածի վրայ։

Այնտեղ խրճիթում կային միայն ճանապարհի հայ գիւղերից ժողոված մի տոպրակ ցորեն, նրա վրայ երկու երեք նիհար կապոցներ, գետնին փռւած մի քանի հատ փախթներ էին երևում, մի բարակ դեօշէկ, մի կեղտոտ շալէ վերմակ, անկիւնում՝ մի աղտոտ կուժ, փոքրիկ կաթսայ, թիթեղեայ թէյաման։ Այդ էր Ալեախի տան բոլոր կահ-կարասիքը... Դրա վրայ պէտք էր աւելացնել նաև մի նիհար կատու, որ ծուլութեամբ նստած թոնիրի տաք շրթունքի վրայ՝ ննջում էր։

Այդ երեկոյ դեռ հաց չէին կերել. և չունէին էլ ուտելու. դրացիներից մէկը խոստացել էր կերակուր ուղարկել։ Սպասում էին... իսկ վաղը—Աստուած ողորմած էր. ի հարկէ Աւետիսը մշակութիւն կանէր և մի կտոր հաց կըճարէր...

Երկարատև էր եղել այդ թշւառ կեանքը, որին և վարժւել էին։

II

Օսմանեան կառավարութիւնը հայերից զինւորական տուրքը ժողովելու համար իւրաքանչիւր թաղից ընտրում է մի խիստ, գործունեայ մարդ և նրան է յանձնում այդ տուրք ժողովելը, ընկերացնելով նաև մի հասարակ զինւորի, որպէս զի, պէտք եղած ժամանակ, չըտւողին կարողանար բանտարկել, ծեծել կամ կայքը գրաւել։

Հայկավանքի թաղն էլ ունէր իւր հաւաքողը—մի կարճահասակ դաժան մարդ, որ միշտ զինւորի հետ, քօչանների [1]) տետրակը ձեռքին՝ տընից տուն էր գնում և հաւաքում տուրքերը։ Այդ բանին շատ նախանձախնդիր էր նա. ոչ մի օր ուշացնել չէր կամենում, խլում էր, թէ ունէին, բանտարկում, ծեծում և կամ իր զինւորի ձեռքը տալով՝ խոնաւ ամբարներն [2]) էր ուղարկում նը-

[1]) Տուրքերի ստացագիրներ։ [2]) Մի տեսակ ներքնատներ են, ուր բանտարկեալին թողնում են առանց ծածկոցի, անօթի և թաց գետնի վրայ։

րան, ով մի օր ժամանակ էր ուզում վճարելու։ Նախանձախնդիր էր, որովհետև իւրաքանչիւր նիւֆիւսից [1]) 2 ղուրուշ շահ ունէր։

Բէրբէրենց Սերգօ էր կոչվում նա և ամբողջ 20 տարի էր, որ միայն այդ պաշտօնումն էր ապրում. ունէր երկյարկ մեծ տներ, մեծ այգիներ և խանութներ։

Ոչ ոք չէր սիրում նրան, որովհետև ամենքի հետ անգութ էր։

Սերգօն բնակւում էր Ս. Յակոբի Թաղում։ Միւս օրը առաւօտեան միայն լսեց, որ Հայկավանցի Ոսկնէպասենց Աւդօն Կ. Պօլսից եկել էր։

Իսկոյն զինւորը հետն առաւ, թևի տակը դրեց քօչանների տետրակը և ուրախ-ուրախ՝ գնաց դէպի Հայկավանք։

Ճանապարհին մտածում էր, թէ 13 անգամ 37-ը քանի՞ է. և երբ եկեղեցու առջևն էր հասել՝ ուրախութեամբ գտաւ, որ 13 անգամ 37 ղուրուշ՝ անում է 481 ղուրուշի մի մեծ գումար։

Ջեռները սկսեց շփել ուրախութիւնից. այդ փողը մի ժամից յետոյ կարող էր գրպանումն ունենալ։ Կառավարութիւնը իրաւունք չունէր այդ գումարն առնելու, որովհետև Սրգօն արդէն 12 տարի առաջ յայտնել էր, որ Ոսկնէպասենց Աւտօն մեռել էր։

Իսկ այժմ Աւտօն իր ճանկն էր ընկել. ի՞նչպէս կարելի էր բաց թողնել նրան առանց գին-

[1]) Անձնական տուրք։

ւորական տուրքն առնելու... 481 ղուրուշ, դա մի մեծ գումար էր Վանի համար։ Իսկ հողային հարկը... չէ՞ որ 200 ղուրուշ էլ դա կանէր։ 481 և 200 անում է 681, մոտ 700 ղուրուշ—7 ոսկի, այսինքն 35 հատ արծաթ մեծ մէջիդիէներ։ Եւ եթէ Աւդօն այդ փողը 2 ղուրուշնոց արծաթ դրամներով տար... այն ժամանակ Բէրբէրենց Սրգօն գրպանում կունենար 350 հատ կլորիկ, սիրուն և փայլուն դրամներ...

Այդպէս մտածելով, Սրգօն փոքրիկ կամուրջից անցաւ և Աւտօյի խրճթի առաջ կանգ առաւ։ Այնտեղ—բակում խաղում էին երեք երեխայ։

Ուրախութիւնից քիչ մնաց թռչէր, որովհետև տեսաւ, որ Աւդօն երեք որդի ունի. ի հարկէ և մի կին... Չէ՞ որ չորս մարդու մի տարուան տուրքն անում է 148 ղուրուշ... ա՛յդպէս պէտք էր հաշւել... Ուրեմն մոտ 1000 ղուրուշ պիտի մտնէր գրպանը։

—Աւդօ՛, հէ՛յ Աւդօ...

Աւդօն, որ նստել էր կնոջ հետ թոնիրի վրայ և ոտները կախած տաքանում էր, ոտքի ելաւ և խրճթից դուրս եկաւ։

—Ա՛յ բարի ես եկել, Աւդօ՛,—գոչեց ծիծաղելով Սրգօն,—ինչպէս ես. ծերացել ես... կնիկ էլ ունիս. ա՛յ ինչ սիրուն որդիներ ես ունեցել... Ինձ չե՞ս ճանաչում։

Աւդօն, որ գուշակել էր արդէն ամեն ինչ, գունատ ետ-ետ քաշւեց ու կմկմաց.

—Ճանաչում եմ...

—Տնաքանդ, ա՛յդպէս կըհանդիպեն բարեկամի... Բայց, հոգ չէ, Պօլսում ես մեծացել... էլ ի՞նչ լայեղ կանես մեզ նման խեղճ մարդկանց հետ խօսելու... Բօլ փարայ էլ բերած կըլինիս հա՛։ Ո՞ր Պօլիս գնացողը փարայ չի բերել... Հա՛, չե՞ս կարող մեր հին հաշիւները մաքրել։

Աւդօն պատի գոյն էր առացել, երերում էր և կռթնել էր դուռը՝ ցած չընկնելու համար։ Խրճթի ներսում երևում էր նրա կնոջ տխուր և յուսահատ դէմքը։

—Ի՞նչ հաշիւ,—կմկմալով հարցրեց Աւդօն։

—Է՛, հանա՞ք ես անում,—ժպտեց Սրգօն.—նիւֆիւսի փողը չե՞ս յիշում։ Հոգիս հանեցին, ախպէր. տասներեք տարի էլ նիւֆիւս չըտալ կըլինի՞։ Ասենք մի մեծ փող էլ չի, մէկ 500 ղուրուշի չափ է... Պօլսում մի օր քէֆի համար ծախսելու փող։ Նե՛րս գնանք, ներս գնանք, քօչաններդ տամ։

Եւ մի քայլ արաւ ներս գնալու, բայց Աւդօն անշարժ կանգնել էր շէմքի վրայ։

—Վա՛յ,—գոչեց Սրգօն,—ինձ նե՞րս էլ չես ընդունում... Շա՛տ ես մեծացել հա՛։ Բայց հոգ չէ. մեր հաշիւը վերջացրու՝ գնանք։ Չըմոռանամ, որ մոտ 500 ղուրուշ էլ տան տուրքից է մնացել... Յոյս ունիմ, որ այն էլ կըտաս։

Աւդօն չէր պատասխանում, իսկ երեխաները

գետնի վրայ փռուած՝ դիտում էին այդ տեսարանը։

—Է՜, ի՛նչ ես ապուշի պէս կանգնել. վերջացրու,—գոչեց Սրգօն փոքր ինչ կոպտութեամբ.—դեռ ևս քեզ պէս քանիսնե՞րը կան. հոգիս դուրս է գալիս ման գալով։ Շո՛ւտ արա։

—Ես... ես...—կմկմաց Աւզօն փոքր ինչ ուշքի գալով,—ես ոչինչ, ոչինչ չունիմ տալու...

—Ոչի՞նչ... Ձօ, ո՞ւմն ես խաբում, հօ հօրդ տղան չե՞մ, հօ խելքս հաց ու պանրի հետ չե՞մ կերել։ Մարդ 13 տարի Պօլիս մնայ, յետոյ ետ դառնայ ու ասի ոչինչ չունի՞մ... Բայց ինձ ի՞նչ. ես իմը կառնեմ, ախպէր. ունիս թէ չունիս, ինձ համար միևնոյնն է։ Դու գիտես, որ առանց նիւֆիւս և տուրք տալու չի կարելի... Եթէ ոչինչ չունէիր, ի՞նչու եկար. հազըր քեզ մեռած էի գրել։ Էլ ո՞ւր եկար։ Դէ՛հ, շո՛ւտ արա։

—Ասացի որ ոչինչ չունիմ,—խօսեց Աւզօն դողդոջիւն ձայնով—կուզես ներս մտիր և տես։

Բայց Սրգօն արդէն սկզբից, երբ գլուխը խրճթի դռնից ներս էր կոխել, ամեն ինչ տեսել էր, ուստի և ասաց.

—Ախպէր, ես ի՞նչ գործ ունիմ քո տանդ մէջ. լինի չլինի—ի՛նձ ինչ. ես իմ նիւֆիւսը կառնեմ։—Ա՛յ,—վրայ բերեց նա տետրակը բանալով,—այստեղ է բոլոր քօչանները. դու լաւ գիտես, որ ես այստեղ մի շահ չունիմ, բայց նիգամը [1]) այսպէս է. ի՞նչ անեմ։ Եթէ չառնեմ,

[1]) Օրէնքը

հոգիս կըհանեն, ինչ որ ունիմ-չունիմ, ձեռքից կառնեն։

Աւզօն ճիգ գործեց, մի քայլ առաջ եկաւ և ասաց.

—Սրգօ՛, ինչո՞ւ ես երկարացնում, ոչինչ չունիմ տալու. ժողովարարութեամբ եմ եկել տեղս հասել. թող գնամ մշակութիւն անեմ ընտանիքիս այս օրւայ հացը ճարելու համար... Ի՛նչ որ կուզես, արա՛... Բանտ էլ տանես ինձ, այդտեղ ո՛չ դու օգուտ ունիս, ոչ էլ կառավարութիւնը, որովհետև ուտելու հաց պիտի տաք և քնելու անկողին... Ահա՛, ունեցածս այս խրճիթն է. կուզես ծախիր ու ա՛ռ։

Եւ սառնութեամբ մի քանի քայլ արեց դէպի փողոցը, յետոյ ետ դարձաւ, պահ մի մանուկներին նայեց, պահ մի ևս խրճթի դռան մութ անկիւնում լռութեամբ արտասւող կնոջն ու դառնութեամբ աւելացրեց.

—Հանգիստ թողէք մեզ... Գնացէք խրճիթս ծախեցէք...

—Լաւ, լաւ, հեգնութեամբ ժպտեց Սրգօն խրճիթը դիտելով,—տուրքը կըհանէ. էլ ինչո՞ւ ես նեղանում։ Դու գիտես, որ իմ ձեռքից եկածը չեմ խնայիլ... Մնաս բարով, ախպէր, Աստուած գործիդ յաջողութիւն տայ։ Դու էլ խեղճ ես։ Ա՛խ, այնպէս սիրտս այրւում է... Բայց ձեռքից ի՞նչ կըգայ։

Եւ դէմքը ծամածռելով, ճկոյթովը սրբեց

աչքի երևակայական արտասուքը, յետոյ կռանալով գգւեց մանուկներից մէկին ու ժպտելով դուրս գնաց։

Երբ կամուրջիցն անցնում էր, կանգ առաւ, դարձաւ կամուրջի ծայրին կանգնած Աւդօին և ասաց.

—Էգուց տունդ կըծախւի... Մի՛ յուսահատւիր, Աստւած ողորմած է։ Հա՛, այս էլ իմացիր, որ եթէ տունդ 10 ոսկուց աւելիով ծախւեց, միամիտ կաց, մնացածը քեզ կըհասցնեմ։

Եւ հեռացաւ՝ խորամանկ ժպիտը դէմքին։

Իսկ Աւդօն ապուշի պէս փոքր ինչ կամուրջի ծայրում կանգնած՝ դիտեց հեռացող հարկահանին, յետոյ մի քանի քայլ արաւ դէպի արտը, դառնալով նայեց իր արտասւող կնոջը, որ այժմ, շէմքի վրայ կանգնած՝ գոգնոցով ծածկել էր դէմքը, փոքր ինչ էլ գետնի վրայ թաւալող մանուկներին նայեց և կամուրջից անցնելով՝ ծանր, ապուշի քայլերով սկսեց դէպի Այգեստան գնալ։

Ամեն ինչ մոռածել էր խեղճը, բայց իւր խրճիթը կորցնել՝ ոչ. ուստի և Կամարով—աղբիւրի մօտ հանելու ժամանակ հագիւ ուշքի գալով՝ թօթափեց իրեն և մրմնջաց.

—Աստւած ողորմած է։

Երբ հասաւ Նէմէն աղայի տան դռան առջև, արդէն բոլորովին ուշքի էր եկել. միայն փոքր ինչ հարթ դէմքի վրայ գոյացել էր մի տըխուր խորշոմ ևս։

III

Ծառերի տակով, վճիտ առւակների եզերքներից քայլելով, Աւդօն հասաւ Խաչ-փողոցի փոքրիկ հրապարակը, ուր կանգ առաւ մի խանութի առաջ, փոքր ինչ չորս կողմ նայեց և, երբ ուզեց ծռւել դէպի Արարուց փողոցը, ձախ կողմի մի փառաւոր տան դռան մօտ տեսաւ մի միջահասակ մարդու, որ փաշայի աստիճանաւորի մօտ կանգնած՝ խօսակցում էր։

Այդ տան մէջ նստած էր Խալիլ փաշան և դռան առջև կանգնողը Կարապետ աղան էր։

Միջահասակ մարդ էր, ճպռոտ-ցաւագար, փոքրիկ աչքերով, խոշոր գլխով, կարճ իրանով և երկայն ոտներով. դէմքն ուռած, մօրուքը սափրած, ընչացքը կարճ և թանձր, քիթը փոքրիկ. հագել էր եւրոպական հագուստ, սակայն մահուդէ շալվարն այնչափ կարճ էր, որ երևում էին նրա մերկ սրունքները և այդ մերկ սրունքների հետ եւրոպական հնամաշ փոշոտ կօշիկները. գըլխին՝ եզերքները իւղոտ և սևացած, փիսկիւլը կորուած և գզգզւած ֆէս, ֆէսի առջևից դուրս ցցւած մի փունջ խուխ մազեր.—այդ բոլորը տեսնողի ծիծաղը կարող էր շարժել։

Բայց ո՞վ կըհամարձակւէր ծիծաղել Կարապետ աղայի վրայ, որի տան մէջ նստում էր փաշան, որ քաղաքական ժողովի անդամ էր, Թաղական խորհրդի ատենապետն էր, զինուորներին վառելիք մատակարարողն էր... Էֆէնդութեան աստիճան ստացած, երկրորդ կարգի մէջիդիէի պատւանշանի արժանացած, պաշտօնական օրերին հագնում էր իւր փառաւորապէս ասեղնագործած նշանազգեստը։ Բացի այդ, նա արդարութեան ատենի անդամ էր և սիրելի՝ փաշաներին... Մի խօսքով մի այնպիսի երևելի մարդ, որից մի ժամանակ շատ կար Թիւրքաց Հայաստանում։

Եւ Աւդօն Խաչ փողոցից դէպի Արարք գընալու ժամանակ տեսաւ նրան, ճանաչեց, դողաց ու շտապեց շուտ անցնել, որովհետև յիշեց, որ 13 տարի առաջ նրանից 2 ոսկի պարտք էր առել։

Բայց Կարապետ աղան նկատեց նրան, ուստի և իսկոյն թողեց իւր խօսակցին, ժպիտը դէմքին՝ մի քանի քայլ առաջացաւ և ասաց.

—Ա՛յ բարով, Աւդօ. այդ դո՞ւ ես. մօտ արի տեսնենք։ Ե՞րբ եկար։ Որչա՜փ ծերացել ես... Հը՛մ, պանդխտութիւն, տունդ քանդւի, ինչպէս ծերացնում ես մարդու...

Եւ ձախ ձեռքում բռնած 15 խոշոր հատերից բաղկացած մեղեսիկը դարձնելով մատների մէջ՝ մի քայլ էլ առաջ եկաւ։

Աւդօն ստիպւեց մօտ գնալ, ֆէսը հանեց գլխից և մի խոր բարև տւաւ նրան՝ աշխատելով միևնոյն ժամանակ իւր բաց կուրծքը մուշտակով ծածկել։

—Է՛, ասա տեսնենք,—ժպիտը երեսին նորից խօսեց Կարապետ աղան.—ի՞նչպէս ես. ե՞րբ ես եկել։

—Երէկ եմ եկել, աղա՛։

—Զօ ո՞ւր մնացիր այսչափ տարի. կարծեցի թէ, մեռա՛յ, մեռա՛յ... մեռել ես... Ինչևիցէ, փառք Աստծու, որ ողջ ես։ Պսակւա՞ծ ես։

—Հրամանք ես, աղա։

—Տեսնո՞ւմ էք այս տղային—ծիծաղեց Կարապետ աղան։—Կինդ պօլսեցի՞ է։

—Հրամանք ես, աղա։

—Սիրուն կըլինի... Պօլսեցիք սիրուն են միշտ։ Որդիներ էլ ունի՞ս։

—Հրամանք ես, երեք հատ։

—Զօ, ի՞նչ շատ... Աստուած էլ աւելի տայ... է՛, ասա տեսնենք... հա՛... Այժմ ո՞ւր ես գնում։

—Արարք, աղա։

—Հա... բան-ման առնելու. լաւ. ո՞րտեղ ես իջել։ Իրա՛ւ, ձօ, մոռացայ որ տուն ունիս...Ե՞րբ տանը կըլինիս, գամ կինդ ու որդիներդ տեսնեմ. բոլորը հօ առո՞ղջ են...Խեղճ մա՛րդ, որչափ փոխւէլ ես... հէյ դ ի ւ ն ի ա [1]), տունդ քանդւի։ Քանի՞ տարի է, որ գնացել ես։

[1]) Աշխարհ։

—Տասներեք տարի է, աղա։

—Հէյ դիւնիա, տունդ քանդւի. կարծես երէկ էր... է՜, Պօլիս գադ-մադ [1]) աշխատեցի՞ր... աղ ո՛ րթ [2]) մոռացայ հարցնելու. մեր Մարկոս աղայի՞ն տեսա՞ր այնտեղ։

—Հրամանք ես, աղա։

—Ո՞ղջ էր, առո՞ղջ էր։

—Շատ լաւ էր, աղա։

—Աստուած քեզ էլ կեանք, առողջութիւն տայ։

—Աստուած կեանք տայ...

—Է՛. սամ է... հօ լա՞ւ ես։ Դէհ, բայց այժըմ գուցէ գործ ունիս... գնա՛, գնա՛, երեկոյեան ես կը գամ ձեր տուն։

Եւ դէմքը դարձնելով՝ Խաչ փողոցից դէպի վեր եկող մի ստրճանաւորի դիմաւորեց, մի կողմ քաշւելով՝ ձեռքը մինչև գետին պարզեց և յետոյ մինչև գլուխ տանելով թ է մ է ն դ է [3]) արեց ու նրան ընկերանալով՝ հեռացաւ։

Իսկ Աւդօն պահ մի նրա ետևից նայելուց յետոյ, գլուխը կուրծքի վրայ կախեց ու յամր քայլերով դէպի Արարք գնաց։

Երբ Զաղլի փողոցի ծայրից անցնելով մօտենում էր Արարուց հրապարակին՝ նկատեց, որ փողոցի աջ կողմում մի նոր տուն է շինւում. մշակները հող, ցեխ, քար էին կրում՝ մի երկար փայտ ձեռքին բռնած վերակացուի հսկողութեան տակ։

[1]) Բան-ման։ [2]) Ճշմարիտ։ [3]) Տաճկական բարև։

—Ինձ էլ գործ չի՞ լինի այստեղ։ Մտածեց նա, և մօտեցաւ վերակացուին։

Վերակացուն Աւդօյի մուշտակը տեսնելով (մուշտակը հին էր, բայց հարուստներն էլ հին մուշտակ են հագնում ու կարկատած շորեր), ետ-ետ քաշւեց ու բարևեց։

Աւդօն կարմրեց, բայց մի ճիգ գործեց և հարցրեց.

—Ինձ էլ գործ կըտա՞ք այստեղ։

Վերակացուն մի քայլ առաջ եկաւ, զարմացած չափեց նրան ոտից մինչև գլուխ և հեգնութեամբ ասաց.

—Դո՞ւ, աղա՛, ուզում ես սարեկութի՞ւն [1])անել։

—Այո՛։

—Այդ մուշտակո՞վդ։

Աւդօն մուշտակի քղանցքը բաց արաւ և մերկ մարմինը ցոյց տւեց լռութեամբ։

Վերակացուն մի քըքիջ արձակեց, որ տևեց երկու րոպէ, յետոյ լըջացաւ և ասաց ծիծաղելով.

—Մենք էլ հէնց մշակ էինք փնտրում. այ, հող կրիր, մինչև երեկոյ 100 փարայ կըստանաս։

—Շնորհակալ եմ։

—Նոյնպէս կէսօրւայ հացդ։ Բայց մուշտակդ չի՞ խանգարիլ գործիդ։

—Կըժողովեմ քղանցքը։

—Դէ, հայդէ՛. առ, ա՛ռ այս ամանը և հող կրիր։

[1]) Օրավարձով մշակութիւն։

Աւզօն փոքր ինչ ղւարթացաւ։

100 փարայ պիտի տանէր տուն. իսկ կէսօրւայ հացից կէսը կուտէր և կէսը կըպահէր ու կէսօրին տուն կըտանէր ընտանիքի համար...

Մի չւանի կտոր գտաւ, մուշտակի քղանցքը ետ ժողովելով գունդ արեց մէջքի վրայ, կապեց և ամանն առնելով սկսեց աշխատել։

Կէսօրին մօտ արդէն յոգնել էր. դեռ խամ էր։

—Հոգ չէ,—մտածում էր նա շարունակ աշխատելով,—կըվարժուեմ։

Կէսօրին երբ հաց ու ժաժիկը [1]) բաժանեցին, նա իրաւունք խնդրեց կէս ժամով տուն գնալու և հաց ուտելու. յետոյ մուշտակի քղանցքը արձակեց, ժաժիկը հացի մէջ փաթաթեց, դըրեց կռնատակը և արագ քայլերով դէպի տուն գնաց։

Ուրախ էր և մինչև իսկ շա՛տ ուրախ, որովհետև հա՛ց էր տանում տուն...

IV

Տան բագը մտնելիս՝ երեխաներին չըտեսաւ։

—Ներսն են,—մտածեց նա.—ա՛յ, կուրախանան՝ հացը տեսնելով...

Եւ ներս մտաւ, բայց շեմքի վրայ զարմացած կանգ առաւ։

[1]) Մօթալ։

Այնտեղ, խըճիթում, ցորենի տոպրակի վըրայ նստել էր Կարապետ աղան և մեղեսկի հատերն էր դարձնում. կինը մի անկիւն քաշուել, երեխաներին շուրջը ժողոված՝ կանգնել էր և դողում, իսկ կատուն մլաւում էր։

—Այս ո՞ւր մնացիր, Աւզօ,—գոչեց Կարապետ աղան.—մի ժամ է սպասում եմ քեզ։

Նրա ձայնը առաւօտեան նման այլ ևս քաղցըր չէր, մինչև անգամ փոքր ինչ խիստ էր. դէմքըն այլ ևս չէր ժպտում։

—Ներեցէք, աղա՛,—թոթովեց Աւզօն,—բանում էի։

—Բանո՞ւմ էիր... Ուրեմն ճի՞շտ է որ ոչինչ չունիս,—գոչեց նա ոտքի ելնելով։

Յետոյ չորս կողմը նայեց, դէմքը ծամռեց, անկիւնում դողացող կնոջը նայեց և Աւզօին դառնալով՝ կոպտութեամբ ասաց.

—Աւզօ, մեր հին հաշիւը պէտք է վերջացնես։

Աւզօն դողաց, բայց իրեն չըկորցրեց, որովհետև առաջուց սպասում էր այդ հարւածին։

—Ժամանակ տուր, աղա՛,—ասաց նա դողդոջուն ձայնով,—կաշխատեմ կըտամ. ինքդ տեսնում ես, որ ոչինչ չունիմ։

—Հա՜յ-հօ՜յ...—գոչեց Կարապետ աղան.—Էլ ժամանակ տամ. արդէն տասներեք տարի է. տասը անգամ խնդիրք եմ աւել, որ չըկորչի փո-

ղըս [1]). և մինչև ե՞րբ պիտի կարողանաս մշակութիւնով 10 ոսկին վճարել։

—Տաս ոսկի՞...—գոչեց սարսափած Աւդօն.—չէ՞ որ երկու ոսկի էր բոլորը։

—Հը՛մ,—ծիծաղեց Կարապետ աղան—ուրեմն ես անմիտ եմ, յիմար եմ, որ երկու ոսկին առանց շահի թողնեմ քեզ վրայ. չէ, ախպէր, 4—5 ոսկի դատաստանական ծախս եմ արել. տոկոսն էլ վրան եկ և տես թէ 15 ոսկի կըլինի՞ թէ ոչ. բայց որովհետև խեղճ ես, տեսնում եմ, ընտանիքի տէր ես,—ես էլ ընտանիք ունիմ, որդիներ ունիմ,—խղճում եմ քեզ։ Տասը ոսկի տուր, մուրհակդ ետ տամ։ Տեսնո՞ւմ ես, որ Կարապետ աղան անխիղճ մարդ չէ, ոչ ոքի վատը չէ ուզում...

—Բայց... թոթովեց Աւդօն։

—Տե՛ս, Աւդօ, ընդհատեց նրան Կարապետ աղան,—ինձ մի՛ բարկացնիլ... ես մի քիչ շատ համբերող մարդ եմ... բայց դուք էլ շատ անխիղճ էք։ Մէկ խղճմտանքիդ հարցրու, խեղճ չե՞մ ես. իմ 2 ոսկին գիտես ի՞նչ չարչարանքներով... ա՛յ, այս ճակատի քրտինքովս եմ վաստակել. դու լինիս, կանե՞ս այն, ինչ որ ես եմ անում. արդէն 5 ոսկին քեզ բաշխեցի. հա՛յդէ. քանի որ կինըդ լաց է լինում... խեղճ է, սիրուն աչքերը կը

[1]) Տաճկական օրէնքով 10 տարուայ ընթացքում չըբողոքուած պարտքը ոչնչացած է համարւում։

վնասուեն, թող 2 ոսկին էլ նրա չարը տանի. 8 ոսկի տուր և մուրհակդ քեզ տամ։

—Աղա՛,—խօսեց Աւդօն,—այժմ ես մի փարայ էլ չունիմ. ժամանակ տուր, աշխատեմ՝ տամ։

—«Էշ մի խատնի, գարունը կըգայ քէ կորընդեան կըբուսնի» [1]),—ժպտեց Կարապետ աղան,—էլ համբերեմ, հէրիֆ [2]). ո՞վ տասներեք տարի կըհամբերի։ Չէ՛, ախպէր, չունիս, տունդ ծախիր՝ տուր։

—Տունս ծախուած է։

—Ծախուա՞ծ,—գոչեց Կարապետ աղան կոտաղած,—արդէն ծախե՞լ ես, էլ սկի ինձ չե՞ս յիշել... Ա՛յ, այսպէս էք բոլորդ. լաւութիւն անեմ, փող տամ և ա՛յժմ... Ո՞ւմ վրայ ես ծախել։

—Կառավարութիւնը պիտի ծախէ նիւֆիւսի համար։

—Հա՛, Սրգօն է. ապա ես ի՞նչ անեմ հիմա։ Տեսնո՞ւմ էք, հէնց միշտ գոռում էք, որ մենք ձեզ նեղացնում ենք. ախպէր, փող ես առել, ետ տուր՝ չընեղացնենք. դու լինէիր, ի՞նչ կանէիր։ Ախմախը ես եմ, որ ձեզ նման մարդկանց փող եմ տալիս։ Չէ՛, Աւդօ, ո՛րտեղից որ լինի, գտի՛ր տուր. Աստուած գիտէ,—յետոյ չասես թէ Կարապետ աղան վատ մարդ էր,—բանտ ձգել կըտամ քեզ... դու գիտես։

Եւ մի քայլ արաւ դէպի դուռը։

[1]) Էշ մի սատկիլ, գարունը կըգայ, քեզ համար յոնջայ կըբուսնի. (ժողովրդ. առած է)։ [2]) Մարդ։

—Աղա՛,—գոչեց Սուդօն,—բանտ ձգել տալով ի՞նչ շահ կունենաս, հացս էլ պէտք է դու տաս։

—Հա՛… Տեսնո՞ւմ էք. հէնց այդպէս էք մըտածում, որ չէք ուզում պարտքներդ տալ. մտատածում էք, թէ ի՞նչ կայ, բանտ ձգել կը տան, հացս էլ կըտան, ընտանիքս էլ կըպահեն… Այդպէս գիտես. էլ չըգիտես, որ Կարապետ աղան քեզ մի կտոր հաց էլ չի տալ բանտի մէջ…Հը՛մ, շատերն այդպէս ասացին, բայց վերջը խրատւեցին, երբ քաղցած մնացին։ Ախպէ՛ր, թէ մարդ ես, թէ խիղճ ունիս, թէ հայ քրիստոնեայ ես, արի ինձ մեղքի մէջ մի՛ ձգիր, մի՛ ստիպիր, որ քեզ բանտ ձգել տամ, յետոյ ընտանիքդ դռնէդուռն ընկնի։ Քար-ճար արա ու փողս տուր։

—Ի՞նչ անեմ, աղա,—գոչեց արտասւալից ձայնով Սուդօն,—որ չունիմ, ո՞րտեղից տամ. ահա, վիզս կտրի՝ առ։

—Աստուած չանի,—ասաց Կարապետ աղան, —ինչո՞ւ վիզդ կտրեմ… Հը՛մ, որ դու պարտքդ ճանաչող մարդ լինիս, խիղճ ունենաս. ամեն բան կըծախես, կըտաս… Լսո՞ւմ ես, ամեն բան։

—Ի՞նչ ծախես՝ աղա. բոլոր ունեցածս խակի 10 ղուրուշ էլ չարժէ։

—Գիտեմ, գիտեմ. բայց ասում եմ էլի… որ պատւաւոր մարդ լինիս, ամեն բան… հը՛մ, ճըշմարիտ… Ես որ լինէի՝ կինս էլ կըծախէի։

Սուդօն սաստիկ գունաթափւած՝ ետ-ետ քաշ-

ւեց։ Կինը մի ճիչ արձակեց, երեխաները սկսեցին լալ։

—Ի՞նչ, ի՞նչ,—գոչեց Սուդօն, մի քայլ դէպի Կարապետ աղան ցատկելով,—ինչ ասացի՞ր…

—Հը՛, ի՞նչ է,—գոչեց բարկութեամբ աղան,—քէֆի՞դ դիպաւ։ Ի հարկէ այդպէս է։ Գիտե՞ս ինչ բան է պատիւը… Բայց քեզ նման մարդն ի՞նչ գիտէ թէ ինչ է պատիւը։

—Կինս ծախե՞մ,—գոչեց Սուդօն կատաղած,— դու համարձակւեցի՞ր ասելու…

—Սրան է… սրան է,—քրքիջ արձակեց ա- ղան։—Ջօ, ո՞ւմ վրայ ես գոռում. ո՞վ է առջեդ կագնած. ճանաչո՞ւմ ես ինձ. ձօ, հոգիդ կըհանեմ է… Ջէ՞ որ բանտի մէջ կըփտեցնեմ քեզ… Տէս, դեռ ինձ հայհոյում է… Շո՛ւն, ախմախ, էշ…

Եւ իրար ետևից մի կոյտ հայհոյանքներ թափեց Սուդօյի գլխին։ Սուդօն ընկճւեց, յիշեց իւր դրութիւնը, ուստի զսպեց իրեն և ասաց.

—Ներէ՛ր, աղա՛։ ես ո՞վ եմ, որ քո դէմ խօսեմ… հայհոյէր, կինս էլ առ, ո՞վ է ինձ լսողը… Իրաւունքը քոնն է։

—Հը՛մ, այդպէ՛ս,—ասաց հպարտութեամբ աղան,—այդպէս, խելօքացիր։ Ես գնում եմ, վաղը կըգամ. փողս պատրաստ լինի։

—Աղա՛…

—Ձա՛յնդ… վաղը փողս պատրաստիր։

—Ո՞րտեղից պատրաստեմ։

—Որտեղից կուգես... Շան որդիներ,—ա-
սաց նա դէպի դուռը քայլելով,—կատաղում են,
երբ որ փողդ ես ուզում... Շա՛ն որդիներ... Դի-
տէ՞ք ով է Կարապետ աղան:

Դուրս գնաց, բագի մէջ կանգնած եա նա-
յեց:

—Էգուց փողս պատրաստիր, Թէ չէ...—գո-
ռաց և հեռացաւ կրկնելով.

—Շա՛ն որդիներ.. Սրի այսպիսիներին փող
տուր:

Երբ աղան դուրս գնաց, Աւգօն գնաց ըն-
կաւ տոպրակի վրայ, գլուխը ձեռների մէջ ա-
ռաւ և սկսեց արտասուել: Կինն էլ մի անկիւնում
լռութեամբ արտասւում էր: Արտասուքն էր նը-
րանց միակ զէնքը...

—Ա՛խ, Աւգօ,—մրմնջաց կինը,—ինչո՞ւ դու
այդպէս խեղճ ես. տեսա՞ր ինչեր ասաց...

—Է՛հ, կնիկ,—ասաց դառնութեամբ Աւգօն,
—կասի էլ, կըմարսի էլ. աղքատին վկայութիւն
է պէտք իւր ասածը հաստատելու համար...
Վերցրէք այդ հացը կերէք, ես գնում եմ աշխատելու:

V

Այդ դէպքից մի շաբաթ յետոյ, Հայկավանքի
եկեղեցում, մի կիւրակի օր, երբ պատարագը
պիտի սկսէր, Տէր-Ռուբէնը երեսը ժողովրդին
դարձրեց և ասաց.

—Սիրելի ժողովուրդ, մեր Թաղի մէջ կ.
Պոլսից դարձած մի նոր պանդուխտ խիստ նե-
ղութեան մէջ է իւր կնոջ և որդիների հետ. ա-
նօթի, օրւայ հացի կարօտ... դիմում է ձեզ օգ-
նութիւն խնդրելու, որպէս զի իւր մերկ մարմի-
նը ծածկէ և կարողանայ գնալ աշխատելու: Այ-
ժըմ Յակոբ էֆէնդին մի Թաս կըպտտեցնէ, յա-
նուն ամենողորմ Աստուծոյ, շնորհեցէք ձեր ո-
ղորմութիւնները:

Այո, Աւգօն մնացել էր մերկ: Կարապետ ա-
ղան չկարողանալով համոզել նրան որ իւր կինը
ծախէ, խլել էր նրա վրայի միակ մուշտակը, ուս-
տի և Աւգօն մերկ՝ նստել էր տանը:

Դրացիները մի քանի օր կերակուր և հաց
ուղարկեցին, յետոյ դիմեցին Թաղի մէջ յայտնի
մի անձի և խնդրեցին, որ Աւգօի մերկ մարմինը
ծածկելու համար եկեղեցու մէջ գանձանակ պըտ-
տեցնեն:

Աւգօի համար ժողովուրդը, այն էլ միայն
խեղճ ժողովուրդը, գանձանակ էր ձգել 100 դու-
րուշի մի գումար, որով կարելի էր ծածկել նրա
մերկութիւնը ու մի շաբաթ էլ չոր հաց մատա-
կարարել նրա ընտանիքին:

Հաւաքած փողը տարան տւին Աւգօին:

Աւգօն առաւ, արտասուեց և մինչև ան-
դամ շնորհակալութիւն յայտնելու ույժ չունե-
ցաւ:

Խնդրեց իր դրացիներից մէկին, որ կէսօրից

յետոյ գնայ իւր համար մի ձեռք հագուստ առնի, զատեց մի կողմ դրեց 60 ղուրուշ, իսկ մնացածը՝ մի շորի մէջ փաթաթած՝ յանձնեց կնոջը։

Ապա սկսեց մտածել, թէ Աստուած ողորմած է։

Փոքր ինչ հաց գնեցին, կինը թոնիրը վառեց, վռոշ եփեց և նստեցին հաց ուտելու։ Բայց յանկարծ խրճիթի դուռը նորից բացուեց և դրան շէմքի վրայ երևացին Կարապետ աղան և մի զինուոր։

Աւդօն սարսափեց. զգաց, որ մի վատ բան պիտի լինէր։

—Ասքեար աղա՛,—դարձաւ աղան զինուորին,—ահա այս մարդն է։

Զինուորը մօտեցաւ Աւդօին, դէմքը խոժոռեց և գոչեց.

—Վե՛ր կաց գնանք։

—Ո՞ւր, հարցրեց Աւդօն դողդոջուն ձայնով։

—Բանտը։

—Բա՜նտը, ինչո՞ւ։

—Այս աղայի պարտքը չտալուդ համար։

—Բայց...—թոթովեց Աւդօն ապշած,—չէ՞ որ մուշտակս խլեց առաւ... էլ ի՞նչ է ուզում այդ անաստուածը...

—Տեսնում է՞ք,—գոռաց Կարապետ աղան...—Դէ՛, արի լաւութիւն արա. տեսնո՞ւմ էք ինչպէս զրպարտութիւններ է անում։ Ա՛յ մարդ, ո՞վ առաւ քո մուշտակը. գժուե՞լ ես։

Աւդօն վեր թռաւ տեղիցը և գոչեց

—Ո՛չ, չեմ գժուել, բայց պիտի գժուեմ..

—Բռնի՛ր,—հրամայեց աղան,—ուզում է մարդ խաբել։

Եւ որովհետև լսել էր, որ Աւդօի համար փող է հաւաքուել, աւելացրեց.

—Դեռ ինձ խաբում էր, թէ փող չունի... անիրաւ, անխիղճ, հիմա որ փնտռել տամ, փող չի՞ գտնուիլ մօտդ։

—Աստուծու սիրուն,—գոչեց կինը առաջ գալով,—խղճացէք։ Անիրա՛ւ մարդ,—գոչեց նա պօլսական ամենամաքուր տաճկերէնով դիմելով աղային,—5 օր առաջ չէ՞ր, որ այս խեղճի մուշտակը խլեցիր պարտքիդ փոխարէն։

—Լսի՛ր, ա՛յ կին,—խօսեց աղան,—նախ՝ ես յիմար չեմ, որ 10 ոսկի առնելիքիս փոխարէն մի 3 ոսկի չարժող մուշտակը առնեմ, և երկրորդ՝ ո՞վ է վկադ, որ մուշտակը ես վերցրի... Ահա ձեր մուրհակը... Երևի ծախել էք մուշտակը. լա՜ւ... Զինուո՛ր,—դարձաւ նա զինուորին,—քեզ հրամայուած է փնտռել նրա տունը, գտած փողը առնել և իրեն էլ բանտը տանել. դու գիտես, կուզես՝ պարտքդ մի կատարիլ։

Ասաց և ետ քաշուեց։

Զինուորը կոպտութեամբ սկսեց փնտռել, գըտած փողը ժպտելով ցոյց տուեց աղային, յետոյ գրպանը դրեց և Աւդօի թևից բռնելով՝ գոչեց.

—Հա՛յդէ, խաբեբա՛, գնանք բանտը։

Աւգօն էլ չըհակառակեց. առանց նայելու որ մերկ էր, առանց ուշադրութիւն դարձնելու կնոջ և երեխաների արձակած աղիողորմ ճիչերին, առաջ ընկաւ և գնաց։

Աւգօին տարան բանտ։

Դրացիները միւս օրը իմացան այդ դժբախտութիւնը և իրենց տուն տարան Աւգօի կնոջն ու որդիներին։

Տունն արդէն ծախուած էր։

Դրանից մի ամիս յետոյ Վանի փողոցներում յայտնեց մի բարձրահասակ մարդ, պատուած սպիտակ շապիկ հագին, բաց կուրծքով, գզգզուած մազերով, գունաթափ դէմքով և չորս կողմը անհանգստութեամբ նայող աչքերով։

Նա ուղղակի մտաւ Խաչ փողոցը և սկսած Կարապետ աղայի տնից՝ մինչև Զաղլի փողոցի ծայրը վազելով անցաւ, յետոյ դարձաւ և նստեց Կարապետ աղայի դռնից փոքր ինչ հեռու գտնուող աղբիւրի մօտ, ջուր խմեց և սկսեց անցուդարձ անողներին նայել։

Այդ օրւանից այդ մարդը միշտ այդպիսի դրութեան մէջ՝ անդադար կանոնաւոր քայլերով Կարապետ աղայի տնից մինչև Զաղլի փողոցի ծայրը և այնտեղից մինչև Կարապետ աղայի տունը քայլում է՝ քթի տակին երգեր մռմռալով,

անցնողների երեսին ծիծաղելով, երբեմն բռունցքով երկնքին սպառնալով և երբեմն դռների մօտ կանգնած հաց խնդրելով...

Խօսելիս նա անդադար լ ա լ օ [1]) բառն է կրկնում, ուստի ժողովուրդը նրա անունը դրել է ծ ո ւ ռ Լ ա լ օ [2])... Իր քայլելու շրջանից նա դուրս չէ գալիս, կանգ է առնում միմիայն Կարապետ աղայի տան դրան առջև և Զաղլի փողոցի ծայրում, յետոյ մի քրքիջ է արձակում և նորից վերադառնում։

Տարին մի անգամ, ամառը, Վանի սրիկաները ժողովւելով՝ բռնում են Լալօին, որ չէ ընդդիմանում, հանում են շորերը, Խաչ փողոցի Նաղարա-դուռառւակի մէջ մերկ նստեցնում, նան ածում են և նրան սապոնով լողացնում։

Ժողովուրդը խուռն բազմութեամբ գալիս է հանդիսատես լինելու այդ լւացման. յետոյ փող են հաւաքում և Լալօի համար հագուստ առնում... չեն մոռանում այծի մազից ք ե ա զ ա խ ի կ ը, որ Լալօն շատ է սիրում, և վա՜յ նրան, ով կըհամարձակւի նրա այդ մուշտակին ձեռք տալ. նա կամ քարերով կըհալածէ նրան, կամ բերանին եկած հայհոյանքը կըթափէ գլխին։

Ամեն մարդ պարտք է համարում փոքր ինչ նեղացնել Լալօին և զւարճանալ։ Նոյնիսկ կա-

---

[1]) Երևի այդ բառը ծագել է քրդական «լօ-լօ́» բացականչութիւնից։ [2]) Խենթ Լալօ։

րապետ աղան շատ անգամ իր դրան մօտ կանգ-նած՝ մեղեսիկը ձեռքին՝ մօտ է կանչում նրան, կատակներ է անում նրա հետ... ասում է որ շուտով կամուսնացնէ նրան... Երբեմն էլ տասը փարա է տալիս նրան և քրքիջներով ծիծաղում, երբ Լալօն առած փողը բերանն է ձգում։

Ամեն մի վանեցի կամ Վան գնացող ճա-նաչում է Լալօին։

Դա Աւգօն է...

1889.

ԱՒԱԶԱԿՆԵՐԸ ԲՌՆՒՈՒՄ ԵՆ...

I

—Հայ հաւա՜ր... հասէ՜ք, սպանեցի՜ն, տա-րա՜ն...

Այս ձայնը լսւեց կէս գիշերին Ջիթողք գիւ-ղի մէջ։ Գիւղը գտնւում է Երզրումից 2 ժամ հեռաւորութեան վրայ, շամբի մօտ։

«Հաւար» կանչելու ձայնը նախ հեռւից էր լսւում, յետոյ հետզհետէ մօտեցաւ և գիւղը մտաւ։

Շներն սկսեցին հաչել, կովերը բառաչել, գիւղացիք դուրս թռան խրճիթներից, մանուկնե-րը ճչում էին... Մի խօսքով՝ գիւղը յանկարծ տակնուվրայ եղաւ։

Ձայնը մօտենում էր։ Երևեցաւ որ «հաւար» կանչողը մի ձիաւոր էր, որ արագութեամբ գիւ-ղը մտնելով՝ գլուխն ու ձեռքերն էր շարժում և անդադար գոռում։

Գիշերը լուսնկայ էր, փչում էր մի սառը քամի, լսւում էր գետի խուլ խոխոջիւնը, և գիւ-ղի մէջ գտնւող շները բոլորը հաւաքւած ձիաւո-րի շուրջը՝ ոռնում էին խռպոտ ձայներով։

Ձիաւորը գունդ-գլուխ (գլխարկը գլխին չէր), մազոտ կուրծքը բաց, ցից ճակատով մի մարդ էր. մի թևի տակը դրել էր մի արիւնոտ սուր, իսկ միւսով բռնել էր մի զամբիկի սանձը։

Քշում էր առանց կանգնելու և անցած ճանապարհի վրայ գոռում.

—Հասէք... Թւանջի վրայ աւազակներ են յարձակւել, տաւարները քշում են ու մարդկանց կոտորում։

—Բղտօ, ա՜յ Բղտօ, գոչում էին նրան շատերը ճանաչելով—քանի՞ հոգի են։

—Տօ ի՜նչ քանի հոգի, մարդ խմանում է որ... մինչև այժմ երեք մարդ սպանեցին, չորսին եարալու արին... էլ տաւար չմնաց, դուրս ածեցին...

Այդ ժամանակ «հաւարի» ձայնից դրդւած՝ շատ գիւղացիներ առան իրենց զէնքերը. ոմն իր ժանգոտ հրացանը, ոմն գերանդին, մի ուրիշը կացին և վազնիվազ գնացին դէպի Թւանջ։

Բղտօն «հաւար» կանչելով պտոյտ արեց գիւղի մէջ, յետոյ զամբիկին մորակի հարւած տւաւ և հեռւեց գիւղացոց։

Խումբն առանց միմեանց հասկանալու, գոռգոռալով, աղմուկով՝ կէս ժամից յետոյ Թւանջ հասաւ։

Այդ գիւղի կէսը թրքաբնակ է, իսկ կէսը հայաբնակ։ Թիւրքերի կողմում ոչ մի ձայն չըկար. հայերի թաղից լսում էին աղմուկ, ճիչ,

լաց, հայհոյանքներ, տարճանակների ձայներ և խառնաշփոթ լեզուներով խօսքեր։

—Տղե՛րք,—գոչեց տանուտէրը, որ ամենից առաջ էր վազում—կանգնէ՛ք, ձեզ բան ասեմ։

Խումբը կանգ առաւ աւերակների մօտ, որ զատում էր հայոց թաղը թիւրքերից։

—Տղե՛րք,—գոռաց տանուտէրը—եամա՜ն, թէ Աստւած կըսիրէք, թէ ձեր մանչերուն կըսիրէք, աշխատեցէք անիրաւներին ո՛չ սպանել և ո՛չ էլ վիրաւորել. մի խօսքով արիւն չըթափէք. գոռանք, հայհոյենք, ծեծենք, դուցէ փախչեն. դէհ, էլ դուք գիտէք, ես նայելու եմ. եթէ ձեզնից մէկը խփեց մի թիւրքի ու արիւն հանեց, ապագայում ինձ հարցնեն՝ թէ ով էր, ես ստիպւած եմ ասելու... Գնանք։

Կատաղութեամբ վազող, զէնքերը ճոճացընող, սպառնացող և թիւրքերի «թօզը բարձրացընել» խոստացող ամբոխը, տանուտիրոջ խօսքերից յետոյ, յանկարծ լռեց. զէնքերը ցած իջան, կատաղութիւնն անցաւ, նրան յաջորդեց վախ և այժմ առաջւայ պէս վազելը չըշարունակեցին, այլ քայլում էին։

Տանուտիրոջ խօսքերը մի վայրկեանի մէջ կոտրեց նրանց թևերը։

Այնուամենայնիւ, երբ գիւղը մտան, սկսեցին գոռգոռալ, հայհոյել, «հա՜յ եկանք, հա՜յ կըսպանենք» աղաղակել։

Տեսարանը սոսկալի էր։

Մի խումբ փաթոթաւոր թիւրքեր ատրճանակ և սուր ձեռքերին՝ անխնայ աջ ու ձախ հարւածում էին, տներն էին մտնում, տաւարներ դուրս քաշում, կահ-կարասիք փողոցը շպրտում և արգելք լինողին կամ սրով շամփրում և կամ մի գնդակի հարւածով գետին գլորում։

Ձիթողցիք նախ շւարած կանգ առին. թիւրքերը տեսնելով նրանց՝ թողին գիւղացիներին և յարձակւեցին նրանց վրայ։

Ամեն ինչ խառնւեց իրար։

—Տղերք, գոռում էր քեհեան—աշխատեցէք բռնել այդ անիրաւներին։

Անհաւասար, այլանդակ կռիւը տևեց տասը րոպէ, և երբ ծուխը փարատւում էր, աղմուկը դադարում, գիւղի փողոցը ներկայացնում էր մի այսպիսի տեսարան։—

Փողոցի մէջ ընկել էին սպանւած և կամ ծանր վէրքեր ստացած հայեր, իսկ աւազակների խումբը ցրւել էր՝ թողնելով այնտեղ միայն երեք հոգի։

Հետաքրքիր էր այդ երեքի դրութիւնը։ Նրանց շրջապատել էին ձիթողցիները, որոնցից մէկի թևս էր վիրաւորել, միւսի ճակատից արիւնը հոսելով երեսը ծածկել, միւսի մատն էր կտրւած։ Բայց նրանք յաղթութեան աղաղակներ էին արձակում, որովհետև յաջողւել էր աւազակներից երեքին բռնել։

Ձիթողցի տանուտէրը նոյնպէս ականջից

վիրաւորւել էր, բայց որչափ ոյժ ունէր, գոռում էր.

—Տղերք, բան չանէք դրանց. կապոտեցէք, պահենք, էգուց քաղաք կըտանենք ու կառավարութեան կըյանձնենք։

Թւանջի հայերը այդ գիշեր կորցրին իրենց տաւարների կէսը, հինգ սպանւած ունեցան, տասը ծանր վիրաւոր, մի քանի թեթև վէրք ստացածներ և դրանց բոլորի փոխարէն բռնել էին միայն երեք աւազակներ։

Աւելի լաւ էին համարել վիրաւորել, քան սպանել մի աւազակի, վախենալով կառավարութեան ապագայ տնօրէնութիւններից։

Եւ ահա կապեցին երեք աւազակների ձեռքերը ետևից, ձիթողցիք շրջապատեցին նրանց ու մոռանալով որ իրանցից կէսը վիրաւոր էր, յաղթութեան աղաղակներով վերադարձան դէպի գիւղը։

II

Միւս օրը, ով ձի ունէր՝ հեծաւ, ով չունէր՝ ոտով, ընկերացած 10 հոգի Թւանջի հայ իշխանների հետ, մի սայլի մէջ դրին ձեռքերն ու ոտները կապած երեք աւազակներին և այդպէս խմբով քաղաք իջան։

Ճանապարհին մինչև քան անգամ նրանք առիթ ունեցան պատմելու իրենց «քաջութիւնը»,

ցոյց տալու վէրքերը և նկարագրելու աւազակների սխրագործութիւնը։

Քաղաք իջնելով՝ տարան աւազակներին դէպի սարայ (կառավարութեան պալատը) և յանձնեցին կառավարութեան։

Փաշան ինքը պատիւ անելով գիւղացոց՝ դուրս եկաւ աւազակներին տեսնելու, դէմքը կնճռեց. երբ իմացաւ որ թիւրքեր էին, ծանր խօսքեր ասաց աւազակներին և բարկութեամբ հրամայեց, որ նրանց բանտարկեն և խիստ դատի ենթարկեն։

—Անամօթներ,—գոչեց նա,—չէ՞ք ամաչում, որ քաղաքին այդքան մօտ, օ ր ը ց ե ր ե կ ո վ յարձակւում էք գիւղի վրայ։

—Ցերեկով չէ եղել, ձերդ մեծութիւն, փութաց նրա ականջին քեաթիբը,—գիշերով է եղել։

—Հա՜... այդ աւելի վատ,—շարունակեց նա բարձր ձայնով.—գիշերով յարձակւել էք գիւղի վրայ և այդքան աղմուկ հանել... Իմացէք, որ օրէնքը խիստ է գիշերով յարձակւող աւազակների համար, շա՜տ խիստ է... վերջը թիապարտութիւն է, իսկ եթէ, Աստուած ոչ անէ, արիւն էլ թափել էք, խկոյն ձեզ կըկախեն, այո, կըկախեն...

—Հինգ մարդ են սպանել, տասը հոգու վիրաւորել... գոչեցին խմբով հայ գիւղացիները։

—Լաւ, լաւ, նեղացաւ փաշան,—քննիչները

դատարանին կըհաղորդեն թէ այդ որքան ճիշտ է։ Գնացէք, սիրելիներս,—դարձաւ նա հայ գիւղացիներին,—հանգիստ և միամիտ եղէք. աւազակները կըպատժւեն և խիստ կըպատժւեն...

Փաշան ճառը դրանով վերջացրեց և հեռացաւ։ Գիւղացիները գիւղ վերադարձան, իսկ աւազակներին բանտարկեցին։

Մինչև եօթ օր ոչինչ չէր լսւում այդ դէպքի մասին։ Երևի քննիչները քննութեամբ էին զբաղւած։

Եւ իրաւ, կառավարութեան կողմից օր չէր լինում, որ կամ զաբթիէ, կամ քննիչ, կամ մի այլ պաշտօնեայ չըմտնէր Թւանջ։

Նրանք իջնում էին գիւղի մէջ։ Գիւղացիք նրանց համար գառներ էին մորթում, պատւում, հիւրասիրում, և պաշտօնեաները մի քանի ժամ զւարթ ճաշ անելուց յետոյ կանչում էին գիւղացիներին, հարցուփորձ անում, կոտորածի տեղը նայում, գրում, գրում ու ձի հեծնելով հեռանում էին։

Օր չէր լինի, որ Թւանջցիք մի քանի այդպիսի հիւրեր չունենային. գործերը թողել՝ հիւրասիրելով և պատասխաններ տալով էին զբաղւած։

Մի ամբողջ շաբաթ տևեց այդ։

Եւ վեցերորդ օրը, իրիկնապահին, Թւանջ մտաւ մի քննիչ, ուղղակի ճանապարհի վրայ գտնուող թիւրքի սրճատունը իջաւ և սրճագոր-

ծին հրամայեց, որ գիւղի մէջ բնակւող Խալիլ-բէյին կանչեն իր մօտ։

Յետոյ դուրս եկաւ, մի աթոռ առաւ և գընաց նստելու սրճատան առջևից վազող առւակի մօտ, մի ուռենու ստւերի տակ։

Քննիչի գալը չիմացւեց, որովհետև ինքը քննիչը չըյայտնեց իր ով լինելը. սրճագործին միայն յայտնեց, այն էլ խիստ պատուիրեց որ ոչ ոքի չասի։

Սրճագործը գունատւեց երբ տեսաւ պաշտօնեայի այդպէս անծանօթ մնալու կամքը. ըզգաց, որ վատ բան էր լինելու և շտապեց բէգի մօտ։

Խալիլ-բէյը Թւանջի մէջ կալուածներ ունէր և ինքն էլ միշտ այդտեղ էր բնակւում. նա հին մնացորդ բէգերից չէր. ինքն իր փողով էր գնել այդ հողերը և 5 տարի էր որ մշակում էր ու գիւղից չէր հեռացել։

Երբ լսեց որ քննիչ է եկել, այդ քննիչը աշխատում է չըճանաչւել և կամենում է իր հետ խօսել, դողաց. շտապեց հագնւել և սրտատրոփ՝ սրճատուն գնաց։

Քննիչը դէմքը կնճռեց, ընդունեց բարևը և ասաց բէգին.

—Ձեզ հետ խօսելիք ունիմ. դուք Խալիլ բէյը չէ՞ք։

—Այո, ձերդ մեծութիւն...

—Նստէք...

Բէգը նստեց սրճագործի բերած աթոռի վըրայ։

—Դուք շա՞տ ժամանակ է որ այստեղ էք բնակւում,—հարցրեց քննիչը փոքր ինչ լռութիւնից յետոյ։

—Հինգ տարի է։

—Հեռացի՛ր... գոռաց քննիչը սրճագործին, նկատելով որ նա կանգնել լսում էր։

—Հողե՞ր ունիք այստեղ,—դարձաւ նա բէգին։

—Այո...

—Դուք ինքնե՞րդ էք մշակում ձեր հողերը։

—Կիսովին ես եմ մշակում, կիսովին էլ կապալով եմ տալիս գիւղացիներին։

—Ուրեմն տաւար շա՞տ ունիք։

—Ունէի. անցեալ տարի հիւանդութիւն ընկաւ և բոլորին էլ կոտորեց, բայց Աստուծոյ ողորմութիւնով...

—Հը՛մ... ընդհատեց քննիչը՝ աչքի տակով նրան նայելով.—ուրեմն տաւարներ չունի՞ք այլևս։

—Ունիմ, բայց...

Քննիչը նորից ընդհատեց նրան և յանկարծակի մի այսպիսի հարց տւաւ.

—Դու ճանաչո՞ւմ ես Հիւսէյն, Մուրադ և Ջաւադ լազերին։

Բէգը լսելով այդ անունները՝ սաստիկ գունատւեց։

—Ես...—կմկմաց նա դողդողալով—այդպէս լազերի չեմ ճանաչում։

Քննիչը լռեց և սկսեց ընչացքի ծայրը արագութեամբ ոլորել. յետոյ յանկարծ ոտքի ելաւ, մի քայլ մօտեցաւ դէպի նստած բէգը, հեգնական ժպիտ դէմքին՝ նայեց նրան և ծանր շեշտելով ասաց.

—Խալիլ բէյ, լսիր ինչ եմ ասում քեզ—ինձ հետ խաղալ շատ դժւար է. ես փորձւած մարդ եմ. եկ ճիշտը խոստովանւիր, թէ քանի տաւար ունեցար անցեալ օրւայ աւազակութեան արդիւնքից։

Բէգը վեր թռաւ տեղից։

—Բէ՜գ... կմկմաց նա։

—Ես բէգ չեմ, ժպտաց քննիչը։

—Էֆէնդի՜...

—Ասում եմ, այդ լազերը քեզ ճանաչում են և ինձ պատմեցին ամեն բան... տեսնո՞ւմ ես, թագցնել այլևս անհնար է... դուք վարպետ գողեր չէք եղել... ինչ որ է... ես եկել եմ քեզ յայտնելու, որ կադին և ես կամենում ենք վաղը կէսօրին քո այցելութիւնը ընդունել... ամեն մէկիս՝ մեր տանը... հասկանո՞ւմ ես...

—Հասկանում եմ,—ժպտաց բէգը՝ քիչ հանդարտելով։—Անհոգ կացէք, էֆէնդի, մենք փորձւած ենք։

—Աւելի լաւ... Ասա, որ ձիս տան...

—Գնո՞ւմ էք։

—Այո՛, ես քննութիւնը վերջացրի։

—Բէգի ձին... գոչեց Խալիլ բէյը՝ դէպի սըրճարան դառնալով։

Քննիչը ձին նստեց, կռացաւ դէպի բէգը և ասաց.

—Կըսպասենք...

—Անհոգ կացէք...

Քննիչը սեղմեց նրա ձեռքը և մտրակեց ձին։

III

—Ներս մտէք... գոռաց կադին, որ այդօր եկել քննիչի սենեակը՝ կամենում էր լսել թէ Թւանջի և Ջիթողքի գիւղացիք ինչպէս պիտի քննւէին։

Երկու գիւղերից քննութեան էին հրաւիրւել տասը համփաներ, ի թիւս որոց կային երկու գիւղի տանուտէրները ևս։

Գիւղացիները իրենց կօշիկները դրան մօտ հանեցին և ներս մտնելով՝ մինչև կէս մէջք խոնարհութիւն արին կադիին և քննիչին։

Քննիչը նստել էր մի ծունկը բարձրացրած և կիսովին ոլորած թուղթը ձեռքին։

Նա մի հետաքրքիր ակնարկով նայեց բոլորին, յետոյ դարձաւ մի ծերունու և հարցրեց.

—Դու ո՞ր գիւղի միւդիրն ես (տանուտէր)։

—Միւդիրը ես չեմ։

—Ուրեմն երկու գիւղի միւդիրները թող առաջ գան։

Խմբից զատուեցին երկու գիւղացիներ։

—Դո՞ւք էք միւդիրները։

—Մենք ենք։

—Ո՞րն է Թւանջի միւդիրը։

—Ես եմ,—առաջ եկաւ հաստակաւորը։

—Պատմի՛ր դէպքը, հրամայեց քննիչը և պատրաստուեց գրելու։

Տանուտէրը հազաց, ձեռքը բերնին տարաւ, իր ընկերներին նայեց և սկսեց.

—Էֆէնդը՛մ...

—Սպասի՛ր, ընդհատեց նրան քննիչը,—երբ աւազակները յարձակուեցին, դու ո՞րտեղ էիր։

—Ես քնել էի... որ աղմուկ բարձրացաւ, վեր թռայ և վազեցի։

—Շա՞տ էին աւազակները։

—Տասը հոգի կային։

—Իսկ նրանց վրայ յարձակուողներդ քանի՞ էիք։

—Մենք չէինք յարձակւում, էֆէնդի, ասաց տանուտէրը — մենք հեռւից կանգնած նայում էինք։

Քննիչը կաղին նայեց հարցական դէմքով, կաղն գլխով դրական պատասխան տուեց։

—Լսի՛ր, միւդի՛ր, դարձաւ քննիչը գիւղացուն,—դու ասում ես որ չէք յարձակուել, ուրեմն ովքե՞ր էին որ գոռգոռալով և զէնքերով թափուեցին։

—Այդ մենք էինք, էֆէնդի,—խօսեց Ջիթողքի տանուտէրը.—երբ մեր գիւղը հաւար եկաւ, մենք բահ ու փայտ առինք և վազեցինք Թւանջ։

—Սուր ու հրացան ունէի՞ք հետներդ։

—Միտս չէ, ասաց տանուտէրը։

—Լաւ ուրեմն, որ այդ միտդ չէ, գոնէ մի՞տըդ է թէ ով էր աւազակներից մէկին սպանողը։

—Սպանո՞ղը... միմեանց երեսին նայեցին գիւղացիք ապշութեամբ.—սպանող չէ եղել աւազակներից։

—Լսեցէ՛ք,—գոչեց խստութեամբ կաղին,—գեաւուրներ, դուք սպանել էք ո՛չ միայն մի միւսիւլմանի, այլ և մահու չափ վիրաւորել էք երկուսին...

—Եւ—աւելացրեց քննիչը ծանրութեամբ—հարուածները ետևից են... Օրէնքը մարդասպան է ճանաչում ետևից հարուածողներին, եթէ անձնապաշտպանութեան ժամանակ իսկ եղած լինի դա։

Գիւղացիները սարսափեցին և չըգիտենալով ինչ պատասխանել՝ սկսեցին դողալ։

—Այդ շատ ճիշտ է,—մէջ մտաւ կաղին—ես էլ հէնց այդ էի մտածում թէ այս գեաւուրների երեսին ամօթ ասած բանը չըկա՞յ, որ եկել կանգնում են երեք այնպիսի խեղճերի վրայ, որոնք երդւում են թէ ոչնչի չեն մասնակցել։

Ահա այդ ժամանակ էր, որ Թւանջցիների միջից զատուեց մէկը և առաջ գալով՝ կանգնեց

իրենց տանուտիրոջ մօտ։ Նա իր հագուստով զանազանւում էր միւսներից նրանով որ փոխանակ կարճ բաճկոնակի հագել էր եւրոպական երկար վերարկու, իսկ ոտներին ունէր փոխանակ տրեխի եւրոպական կօշիկ։

Երևում էր որ այդ Թւանջցին աւելի շատ մարդու երես և աշխարհ էր տեսել, քան իր հայրենակիցները։ Նա բոթեց քեհեային և նրանից էլ առաջ դնելով իր մի ոտը՝ համարձակւեց պատասխանել կադիին այսպէս.

—Բէյ էֆէնդի, աւազակները յարձակւեցին մեր գիւղի վրայ, մեր տաւարներին ու կանանց սկըսեցին տանել, մեզ սպանել ու տանջել...Երբ գայլը յարձակւում է վրադ, եթէ զէնք ունիս՝ պաշտպանւում ես, եթէ չունիս՝ կամ զոհւում ես, կամ փախչում. իսկ մենք մի այնպիսի բան արինք, որ ձերդ մեծութիւնը գոհ պիտի լինի, որովհետև մեր արիւնը թափեցինք, բայց մեր ձեռքի զէնքերով փոխանակ գայլերին սպանելու՝ նրանց բռնել աշխատեցինք. ուրեմն մենք սպանւեցինք, վիրաւորւեցինք, բայց գայլերին վնաս չըտւեցինք։ Այս այսպէս։

Կադին և քննիչը բերանները բաց արած՝ զարմացմամբ նայում էին այդ տարօրինակ գիւղացուն. նրանց երբեք չէր հանդիպել որ մի գիւղացի համարձակւի պատասխանել և, որ գըլխաւորն է, այդպէս «լըբութեամբ» պատասխանել։

Օսմանեան դատաւորների կարծիքով լըբեր են նրանք, որոնք դատաւորներին հակառակում են կամ նրանց մօտ տրամաբանութեամբ խօսում։

—Գալով նրան,—շարունակեց գիւղացին,—որ դուք ասում էք թէ մենք աւազակներից մէկին սպանել ենք, իսկ երկուսին վիրաւորել, ես համարձակւում եմ խնդրել, որ բարեհաճէք հրամայել մեզ ցոյց տալու սպանւածը և վիրաւորւածները և կամ այն տեղեկագիրը, որի մէջ յայտնւած է թէ մենք յարձակման ժամանակ աւազակ ենք սպանել...

Այլ ևս դիմանալ չըկարողացաւ կադին և միջահատելով յանդուգն գիւղացուն՝ գոչեց.

—Ո՞վ ես դու, անամօթ գիւղացի, որ համարձակւում ես ոչ միայն սուտ հանել մեզ, այլ և չըհաւատալ. մի՞թէ դու չըգիտես, որ օրէնքով կադին և քննիչը բացարձակ ճշմարտախօս են համարւում։

—Ես այդ գիտեմ,—պատասխանեց գիւղացին,—բայց այս էլ գիտեմ, որ վեց օր շարունակ գիւղը եկող քննիչներն անգամ, երբ գործը քըննելով տեսնում էին, որ մենք ինքներս սպանւել, վիրաւորւել ենք, իսկ աւազակների մի կաթիլ արիւնն անգամ չենք թափել, ծիծաղում էին մեզ վրայ և ասում. «Եղբայր, որ գիտենանք թէ բոլոր հայերը այդպէս են, կըթողնենք մեր պաշտօնը և աւազակութիւնով կըզբաղւենք»... Ես այս խօսքերը ասում եմ ոչ թէ ինձնից, այլ ամբողջ

գիւղացիների լաւծներից. բայց, բէյ էֆէնդի, օրէնքով՝ բժիշկը քննելուց յետոյ սպանուածներին կամ վիրաւորուածներին՝ տեղեկագիր է տալիս. ցոյց տուէք ինձ այդ տեղեկագիրը։

—Մի՞թէ դու կարդալ գիտես,—հարցրեց քննիչը, որը նոր էր դուրս գալիս ապշութիւնից։

—Գիտեմ, խօսեց գիւղացին։

Իսկ կաղին, որ աւելի և աւելի կատաղել էր, ցատկեց դէպի նրան, բռնեց թևը և գոռաց.

—Դու համարձակւում ես քննիչներին ամբաստանե՞լ... ես քեզ ցոյց կըտամ... Զարթի՛է... բռնիր սրան...

Դրան մօտ կանգնած զաբթիէն մօտ եկաւ։

—Բռնիր այս գեաւուրին,—գոռաց կաղին— սա, ինչպէս երևում է, փախստական մէկն է։

—Սխալւում էք, բէյ էֆէնդի,—ժպտեց գիւղացին,—ես անցագիր ունիմ, և ամենքը կարող են վկայել, որ ես էլ այնպէս թիւանջցի եմ, որպէս սրանք... Ինձ բանտարկելը ձեզ օգուտ չի բերի, որովհետև ես կըբողոքեմ, և այն ժամանակ հետևանքը վատ կըլինի։

Կաղին մի մեծ քրքիջ արձակեց, յետոյ գընաց իր նախկին տեղը նստելու և ասաց ծիծաղելով.

—Իրաւ է, քեզ բանտարկելը մեզ վնաս է, կառավարութեան հացը պիտի ուտես ձրիապէս... ես քեզ չեմ բանտարկի այժմ. . բայց խօսքերդ գրւեցին.. մենք քեզ հետ էլի կըտեսնուենք...

Սակայն բանից դուրս եկաւ, որ այդ յանդուգն գիւղացին Թւանջի վարժապետն էր՝ Մանուէլ անունով, ուսել էր Կ—Պօլիս, երկար ժամանակ ճանապարհորդել Ռուսաստանում և վերջապէս, որ առաւելն է, Կարնոյ երեսփոխանական ժողովի անդամ էր՝ իբր գիւղերի ներկայացուցիչ։

Նրա բողոքը և յանդուգն պատասխանը ըստ երևոյթին նշանակութիւն ունեցան, որովհետև քննիչը կռանալով դէպի կաղին՝ մի քանի խօսք փսփսաց նրա ականջում, և այդ կերպով նրանք 5 րոպէ միմեանց հետ խորհրդակցելուց յետոյ հրամայեցին գիւղացոց հեռանալ։

—Գնացէ՛ք,—ասաց քննիչը,—գնացէք ձեր գիւղը. մեզ պէտք է մի քանի բաներ քննել, յետոյ երբոր կըկանչենք, էլի եկէք։

Գիւղացիները սկսեցին սեննակից դուրս գընալ։

—Դու սպասի՛ր,—ասաց քննիչը Մանուէլին։

Եւ երբ գիւղացիները դուրս գնացին, քըննիչը լռութեամբ պահ մի նայեց Մանուէլին, յետոյ ցոյց տուեց քիչ հեռու դրած մի աթոռ և ասաց.

—Նստի՛ր այնտեղ։

Մանուէլը նստեց։ Ահա այդ ժամանակ կաղին մի համառօտ հարցափորձով իմացաւ Մանուէլի ով և ինչ լինելը։

—Օղլո՛ւմ,—ասաց նա փաղաքշական ձայնով,

—մի՞թէ կարելի է քննիչի և կադիի հետ այդպէս խօսել. դու դրանով լռեցրիր գիւղացիներին. դու չես ճանաչում թէ դրանք ինչեր են. մի անգամ երես որ տւիր, գլխիդ կընստեն... Ես չեմ ասում թէ դու իրաւունք չունես այս կամ այն պահանջելու, իհարկէ, քեզ ցոյց կըտանք բժշկի տեղեկագիրը... դու ի՞նչ գիտես, թէ քննութեան տակից ինչեր դուրս եկան...

—Այո,—աւելացրեց քննիչը,—այստեղ ինձ մօտ են բոլոր թղթերը, տակից շատ վատ բաներ են դուրս գալու։

—Ես ցանկանում էի իմանալ թէ ինչ,—ժպտեց Մանուէլը հեգնութեամբ,—գործը այստեղ շատ պարզ է. յարձակւել են մեզ վրայ, մենք երեքին բռնել յանձնել ենք արդարադատութեան... պատժեցէք նրանց. բացի դրանից, նրանք խլել են մեր ունեցածը. աւազակները շատ էին և փախան. մենք պահանջում ենք որ նրանք էլ բռնւեն։ Ծիծաղելին այն էր որ մենք սպանւեցինք, վիրաւորւեցինք, իսկ աւազակներին ոչինչ չըկամեցանք անել. դրա պատճառն այն է որ կառավարութիւնը վատ աչքով է նայում և պատժում է այն հային, որը սպանում է մի թիւրքի։

—Օ՜, ինչե՞ր ես ասում,—գոչեց կադին,—դու շատ սխալ ես հասկացել. ինչո՞ւ պիտի պատժել նրան, ով խփում է՝ իրեն խփել կամեցողին... Բայց, լսի՛ր, օղլո՛ւմ, բանը դրանումը չէ. ես քեզ, իբր կրթւած մարդու, ասում եմ այն,

ինչ որ չէի ասի գիւղացիներին. ասում եմ որ եթէ այս գործի ետևից շատ պնդենք, հետևանքը ձեզ համար շատ վատ կըլինի, որովհետև բռնւածները լազեր են, իսկ լազերը, ինչպէս գիտես, շատ վրէժխնդիր են. եթէ մենք պատժենք նրանց, էլ ձեր գիւղի մէջ քար քարի վրայ չեն թողնի. այն ժամանակ չասէք թէ «վայ մեզ, այս ի՞նչ արինք»... այսպէս չէ՞, Օսման էֆէնդի, յարեց նա՝ դառնալով քննիչին։

— Իհարկէ, իհարկէ,—շտապեց ասել քննիչը,—հէնց այդպէս էլ կանեն. անցեալ օր բանտըն էի գնացել աւազակներից մէկին քննելու, նա ի միջի այլոց այսպէս էր ասում. «Մեզ թոյլ տւէք գնանք, թէ չէ մեր ազգականները սաղ Օվան քարուքանդ կանեն»...։

—Դուք իզուր էք այդքան վախենում,—ասաց Մանուէլը,—լազերը ոչինչ չեն կարող անել, եթէ դուք մեզ պաշտպանէք. տւէք մեզ տասը զինւոր, և ես նրանցով բոլոր լազերին դէմ կըդընեմ...

—Վա՛հ...—ասաց կադին,—ինչ երեխայ-երեխայ խօսում ես, օղլո՛ւմ...բացի դրանից,—յարեց նա խորհրդաւոր կերպով,—ձեր գիւղում կան միւսիւլմաններ, որոնք կարող են ձեր հոգին հանել, եթէ բանից դուրս եկաւ որ նրանք էլ մատ ունին այդ գործի մէջ։

—Իհարկէ, ունին։

—Ա՛յ, տեսա՞ր, օղլում, և դեռ երէկ էր որ

ձեր գիւղի բէգը դռռում էր թէ ամբողջ գիւղը
կրակի կըտայ, եթէ իր վրայ մի բառ խօսէք։
—Քննութիւնը ամեն ինչ կըյայտնի,—ժըպ-
տեց Մանուէլը.—ես խնդրում եմ միայն լաւ
քննութիւն անել։
Նրա այդ խօսքերին ոչ ոք չըպատասխանեց։
Կաղին իր աթոռը մօտ քաշեց քննիչին. երկուսն
էլ նորից կռացան դէպի միմեանց, և նրանց այս
անգամւայ փսփսոցը տևեց 10 րոպէ, որից յետոյ
կաղին ժպտալով դարձաւ Մանուէլին և ասաց.
—Շատ լաւ, օղլո՛ւմ, մենք կաշխատենք,
միամիտ եղէք. կարող ես այժմ գնալ։
Մանուէլը ելաւ, բարևեց և դուրս եկաւ։
Հազիւ թէ սենեակից դուրս էր գնացել, որ
կաղին դրան մօտ կանգնած ոստիկանին դարձաւ
և ասաց.
—Ոստիկանապետին գնա և ասա՛, որ այդ
ապստամբին չըթողնեն սարայից դուրս գալու...
բանտարկեն և խիստ ծածուկ պահեն։
Եւ երբ ոստիկանը դուրս գնաց, նա դառ-
նալով քննիչին՝ աւելացրեց.
—Թո՛ղ այժմ էլ տրամաբանէ...

IV

Չորս օր յետոյ Թւանջցիք և ձիթողցիք նո-
րից սարայ կանչւեցին և նորից երկար քննւե-
ցան։

Երեկոյեան դէմ նրանք խմբով դուրս եկան
սարայից։
—Ի՞նչպէս եղաւ,—հարցրին այն հետաքրքիր-
ները, որոնք միշտ լինում են սարայի մէջ։
—Ներեցինք... ասաց գիւղի տանուտէրը։
—Ներեցի՞ք... Ուրեմն աւազակներին բա՞ց են
թողնելու։
—Այո՛, նրանցից գիր առին, որ էլ այդպէս
աւազակութիւններ չըպիտի անեն...
Հետաքրքիրները մի այնպիսի մեծ ծիծաղ
արձակեցին, որ սարայի մէջ վխտացող շները բո-
լորը միասին սկսեցին հաչել։
Այո, գիւղացիք աւազակներին ներել էին, և
այդ ներման համար շատ էր աշխատել կաղին.
չէ՞ որ նա «հաշտարար» դատաւոր էր։
Եւ այսպէս, գիւղացիք վերջացնելով ընդ-
միշտ իրենց գործը քաղաքի հետ՝ խմբովին վե-
րադարձան գիւղը։
Երբ անցել էին բաւական ճանապարհ ու
Սովուք-ջերմուկ գիւղի մօտ նստել հանգստանում
էին, նկատեցին որ քաղաքի կողմից դէպի իրենց
են գալիս երեք ձիաւորներ՝ սրարշաւ քշելով
ձիերը։
—Տղե՛րք, սրանք ո՞վքեր են, գոչեց Թւանջի
տանուտէրը,—փիս են քշում։
—Է՛հ, մե՞զ ինչ,—խօսեց Ձիթողքի տանու-
տէրը.—մենք խօ մեր գործը վերջացրինք. աֆ
ըրինք ու պրծանք... ախպէր, էս երկու շա-

բաթ էր, որ մի կտոր հալալ հաց չէի դրել բերանս։

Ձիաւորները մօտենում էին։

—Թիւրք են երեւում,—ասաց մի գիւղացի։

—Չէ, տօ, լազեր են։

Եւ նրանք մի կողմ անցնելով՝ սպասեցին որ ձիաւորներն անցնեն։

Բայց սրանք դանդաղացրին ձիերի ընթացքը և երբ հասնում էին գիւղացիներին, կանգ առին, և ահա այդ ժամանակ նրանցից մէկը գոչեց.

—Գեաւուրնե՛ր, ճանաչո՞ւմ էք մեզ։

Գիւղացիները սարսափեցին։

Իրենց բռնած երեք աւազակներն էին, որոնք այժմ ազատուած, ձիերի վրայ և ոտից մինչև գլուխ զինուած՝ գնում էին իրենց տեղը։

—Տեսնո՞ւմ էք, գեաւուրներ,—ասաց միւս աւազակը,—մեզ ոչինչ չըկարողացաք անել, բայց դուք մեզ ստիպեցիք երկու շաբաթ բանտում նստել, մենք այդ բանի վրէժը այնպէս հանենք, որ անցեալ օրւայ կոտորածին փառք տաք...

Ասաց ձիաւորը, դարձաւ միւսներին և գոչեց.

—Գնանք... այսօր յոգնած ենք. սրանց հետ մենք հաշիւ կունենանք ապագայում...

Յետոյ ծիծաղեցին, մտրակեցին ձիերը և սարսափած գիւղացիների առջևից անցնելով՝ անհետացան հեռուները...

1891.

ՇԱՀՆԱ

I

Բացի զինուորական, հողային, կալուածական, անասնական և այլ բոլոր տուրքերը Թիւրքահայաստանում օսմանեան կառավարութիւնը առնում է նաև տուրք՝ խոտից, ցորենից և առհասարակ բոլոր այն արմտիքներից և բանջարեղէնից, որոնց արտադրում կամ ժողովում է հայ գիւղացին։

Դրա համար կառավարութիւնը չունի յատուկ պաշտօնեաներ. մի խումբ որոշեալ գիւղերի տասանորդը աճուրդով նա ծախում է տաճիկ կամ հայ աղաների, որոնք առանց մտածելու որ իրենց ապրեցնողը այդ գործն է, օրէնքին ականջ չեն դնում, կամայական տասանորդներ, քառորդներ և շատ անգամ երեսնորդներ են նշանակում բերքի վրայ, հունձերի ժամանակ գիւղերն են լցւում և ցորենի բեռներ ու խոտերի դէզեր են սարքում, որը յետոյ զուտ ոսկիի են փոխում և կազմում են իրենց վաշխառուա-

կամ ապազայ արհեստի սկզբնական դրամագլուխը…

Այդ տեսակ հարկահաւաքները կոչւում են «շահնա»։

Շահնաներից շատերը գնելով տէրութիւնից տուրքերը՝ իրենք աւելի թանգ գնով ծախում են մի ուրիշի, այդ ուրիշն էլ մի ուրիշի և այդպիսով գիւղացիների տուրքերից օգտւում են շատ շատերը։

Շահնայական առևտուրով զբաղւում են նահանգական քաղաքի մէջ բնակւող մի քանի որոշեալ աղաներ։ Գնում են, ծախում, աճուրդի դընում իրենց գնած իրաւունքները և դրանից կազմում են փառաւոր գումարներ, որոնց շնորհով նրանք օրը մինչև երեկոյ թափառում են սրճարաններում և փողոցներում առանց մի գործի, առանց մի աշխատութեան։

Ով որ մտել է Թիւրքա-հայկական մի որևիցէ քաղաք, նա անշուշտ հանդիպած կըլինի բազմաթիւ Թիւրք աղաների, որոնք սրճատնից սըրճատուն են ման գալիս և ծխելով, խաղալով, զբօսնելով են անց կացնում իրենց օրերը։ Չիմացողին զարմանք է պատճառում այդ անգործ աղաների խումբը. հարց է ծնում թէ ինչո՞վ են ապրում նրանք, ինչո՞վ են կարողանում այդպիսի շքեղ պալատներ, կնիկներով լիքը հարեմներ, համադամներով լիքը սեղան ունենալ, ինչո՞վ են նրանք կարողանում գնչու կանանց հրաւիրել պա-

րելու, խնջոյքներ տալ, ձիեր և կառքեր ունենալ, շքեղ կեանք վարել և սակայն տարւայ մէջ ամեն օր միշտ անգործ և անաշխատ զբօսնել։

Բայց գիտցողը իսկոյն իմանում է, որ դըրանք սկզբնական—ուղղակի կառավարութեան հետ յարաբերութեան մէջ մտնող շահնաներ են, որոնցից գնում են երկրորդական շահնաները—գիւղացի աղաները և ծախում են երրորդականներին—գաւառի արիւն ծծող վաշխառուներին և անդադար գիւղից գիւղ վազող արինկզակ տաճիկներին և հայերին։

Նահանգական քաղաքների շրջականներում գտնւող գիւղերի շահնայութիւնը ունի իւր դըժւարութիւնները։ Պէտք է գիտենալ շողոքորթել, ժպտելով ու ժպտեցնելով կողոպտել, խորամանկութեամբ գործը սկսելով՝ մէկին տասը առնել, գանգատելու արգելք լինել և ըստ ժամանակին կարողանալ սկզբնական շահնաներին կաշառել, որպէսզի ըմբոստ գիւղացոց գանգատները (որը շատ հազիւ է լինում) չըհասնեն Բարձրագոյն Դրան…

Հէնց դրա համար է, որ քաղաքների մօտ գտնւող գիւղերի շահնայութիւնը գտնւում է միայն մի քանի յայտնի անձանց ձեռքում. ոչ ոք չէ համարձակւում խլել նրանց ձեռքից այդ առևտուրը, եթէ չէ կամենում իւր ամբողջ ունեցածը կորցնել։

Իսկ քաղաքից 20 ժամ հեռու գտնւող գիւ-

գերի շահնայութիւնը կարող է ունենալ ամեն անձ, եթէ ունի փոքր ինչ փող և ընդունակութիւն լցելու սկզբնական շահնաների ոտքերը։ Մի անգամ այդ գործը ձեռք ձգելուց յետոյ այդ տեսակ շահնան կարող է անել այն բոլորը, ինչ որ կըթելադրի իրեն իր խելքը... Կողոպտել, եռապատկել տուրքերը... ընծաներ առնել, տուրքերը ժողովելու պատճառանօք անդադար գիւղերը մտնել խմբերով, խնջոյքներ սարքել նրա հովանու ծառերի տակ, գիւղացոց կանանց իւր կրքերին ծառայեցնել և ապա ծիծաղել գիւղացոց արած անօգուտ գանգատների և բողոքների վրայ։

Հայ գիւղացին շատ լաւ է ճանաչում այդպիսի շահնաներին. գիտէ որ անօգուտ գանգատը շահնայի կատաղութիւնը և թշնամութիւնը գրգռելու միայն ընդունակ են, գիտէ որ իւր ձայնը ո՛չ միայն փաշային և Բարձրագոյն Դրան, այլ և տուրքերի մի հասարակ պաշտօնէի ականջին անգամ չի հասնի. գիտէ որ դատապարտուած է կողոպտուելու, անպատուելու, ունեցածը տալու...

Եւ նա ստիպւում է շահնայի ոտքերի տակ սողալ, իւր ամօթխած կնոջ նրա առջևը պարել տալ, նրա հետ գիւղը թափած տաճիկ պարապորդների և պռնիկների առջև գլուխ ծռել ու կերակրել... Ստիպւած է համբերել, երբ շահնան իւր կամեցած տուրքը նշանակում, առնում է,

նրա տան մէջ ուտում, խմում, օրերով մնում է և ընծաներ առնելուց յետոյ մի կեղտոտ հայհոյանքով և նրա խեղճ դրութեան վրայ ծիծաղելով է վարձատրում... զուարճանում է նրա չարչարանքներով, գոհացնում է իր հետի պռնիկներին և բեռներ կապած՝ հեռանում է գիւղից...

Այդպիսի շահնաներից էր ահա Հիւսէյն էֆէնդին, որ իր ձեռքի տակ ունէր ամբողջ Խընուս գաւառի հայաբնակ Քաղքիկ, Աղջամելիք, Մարուֆ, Բուրնազ և Եահեա գիւղերի տասանորդները։

Հիւսէյն էֆէնդին բնակւում էր Խնուսի մէջ։

II

Բերդաքաղաքի միջից անցնող Արածանիի գետափին էր գտնւում Հիւսէյն էֆէնդիի երկյարկ բնակարանը։

Գայմագամն անգամ բարեկամ էր նրա հետ, որովհետև Հիւսէյն էֆէնդին Կարինի նշանաւոր շահնա Մահմուդ աղայի պաշտպանեալն էր. Մահմուդ աղան էլ Մուստաֆա փաշայինը, և սա էլ եպարքոս Սայիդ փաշայի։

Հիւսէյն էֆէնդին ևս սիրում էր գայմագամին, որովհետև երկուսն էլ երիտասարդներ էին և համարեա թէ ամեն երեկոյ իրենց տների մէջ մեծամեծ խնջոյքներ էին սարքում ի ձայն գնչու

կանանց «սրնգի և թմբկի»… ամեն երեկոյ գաւառի միջից իրենց մօտ պարել տալու էին հաւաքում թիւրք պոռնիկներին, միասին էին առևանգում մի որևիցէ հայ աղջիկ, և Հիւսէյն էֆէնդին շատ անգամ ինքը գայմագամին շաբաթական քէֆերի տեղ և առիթ էր մատակարարում հայ գիւղերի մէջ։

Դեռ քառասունհինգ տարեկան էր. բաւական առողջ կազմուածքով, սպիտակ դէմքով, սև-խոշոր աչքերով և աւելի հայկական քան թէ թըրքական մի խոշոր քթով։ Հագնում էր երկնագոյն մահուդից մի լայն շալվար, մէջքին ունէր փաթաթած թիրմայի շալից մի լայն գօտի ևս, որի մէջ ցցուած ունէր արծաթեայ կոթով կեռ դաշոյնը. գօտիից վեր փողփողում էր նրա ոսկեթելով ասեղնագործած թաւշեայ բաճկոնը, և այդ բոլորի վրայ նա կրում էր երկնագոյն մահուդից լայն վերարկուն։ Գլխին կրում էր երկայն ֆէս, որի վրայ փաթաթել էր երկու հատ մետաքսեայ թաշկինակներ։

Հիւսէյն էֆէնդին սիրում էր լաւ հագնուել և այնպէս կեղտոտ ու ժլատ չէր, ինչպէս էին Խնուսի իւր միւս պաշտօնակիցները։

Ամառնավերջի օր էր, երբ Խնուսի փօստան եկել էր, ծառան Հիւսէյն էֆէնդիի ձեռքը տուեց Էրզրումից եկած մի նամակ։

Տանհան դեռ նոր զարթնած, չիթէ գիշերազգեստով նստած՝ սուրճ էր խմում, երբ նամակը

տուեցաւ, ուստի և առանց բանալու կողքին դըրեց, եկող ծառային հրամայեց մի ժամից յետոյ ձին թամբել և առանց շտապելու, մեծ շառաչիւն գործելով՝ շարունակեց թանձր սուրճի խմելը։

—Մահմուդ աղայից կըլինի,—մռմռաց նա խորամանկ ժպիտով,—երևի մի քանի ուրիշ գիւղեր ևս ունի ծախելու…

Եւ փակեց Ղուրանը որ բաց դրուած էր միւս կողքին։

Երբ գաւաթի մէջ մնացորդ թանձր սուրճը միայն մնաց, Հիւսէյն էֆէնդին նամակը ծանրութեամբ բաց արեց և կարդաց։

Մահմուդ աղան էր գրողը։ Գրում էր որ Էրզրումը հետզհետէ ձանձրալի էր լինում իրեն, որ կամենում էր փոքր ինչ գաւառական քաղաքներում և գիւղերում պտոյտ գործել, խնդրում էր որ Հիւսէյն էֆէնդին իրեն համար քէֆի տեղ որոշէր, որպէսզի գոնէ մի շաբաթ կարողանար փոքր ինչ զւարճանալ Խնուսի ծառազարդ և խոտաւէտ գիւղերից մէկում։

«Սիրելիդ իմ,—աւելացնում էր Մահմուդ աղան,—ես հետս բերում եմ Էրզրումի կանոնածող Հաջիին, նոյնպէս և քլարինէթ ածող և լաւ երգող Աղաբաբին, իսկ դու այդտեղ ունեցիր գնչու կանայք, որպէսզի ամեն ինչ կատարեալ լինի. իհարկէ չես մոռանայ նաև մի քանի հատ լաւ կանայք ունենալ… մի խօսքով՝ օղին և գինին և քէֆը անպակաս լինի, ո-

նի, որովհետև հետս ունիմ նաև Պօլսից նոր եկած բարեկամներիցս մէկը»...

—Հը՛մ,—ժպտեց Հիւսէյն էֆէնդին նամակը փակելով,—Մահմուդ աղան զւարճանալ է ուզում... Նայէնք, Աստւած տայ, որ Թանգ չընստի իրեն իր քաշելիք քէֆը...

Փոքր ինչ ծխելով մտածեց, յետոյ դանդաղութեամբ հագաւ հագուստը և դուրս գնաց բակը, ուր ծառան սանձից բռնած առաջ բերեց մի նժոյգ։

—Ո՞վ պիտի գայ հետս,—հարցրեց Հիւսէյնը ձի հեծնելով։

—Մուստաֆա չաւուշը, էֆէնդի...

—Պատրա՞ստ է։

—Դրսումը սպասում է ձեր բարձրութեան (գաթը ալինիղէ)։

Էֆէնդին շարժեց սանձը, դուրս եկաւ բակից, ընկերացաւ դրան մօտ սպասող մի սևադէմ զինեալ ծառայի և արշաւակի մեկնելով գոչեց.

—Մուստաֆա չաւո՛ւշ։

—Հրամայիր, էֆէնդի։

—Եահեա գիւղի ճանապարհը գիտե՞ս։

—Գիտեմ, էֆէնդի,—պատասխանեց չաւուշը, որը իւր ձին մօտեցրել, տիրոջ ետևից արշաւում էր՝ պահելով մի պատկառելի հեռաւորութիւն։

—Գիտե՞ս ինչ կայ, Մուստաֆա չաւուշ,—ասաց էֆէնդին առանց գլուխը դարձնելու և շա-

ռունակելով արշաւել.—Երզրումից մի քանի լաւ բարեկամներս ինձ մօտ հիւր են գալիս. պիտի նրանց համար լա՛ւ քէֆ և քէֆի տեղ պատրաստել։

—Հրամանք ես, էֆէնդի։

—Լա՛ւ... ի՞նչ ես կարծում, Եահեա գիւղը յարմար չէ՞։

—Այդ 28 տնով գի՞ւղը։

—Այո՛, քեհեայի պարտիզի մէջ, եկեղեցու կողքին։

—Հը՛մ... հիւրերդ կըձանձրանան։

—Ինչո՞ւ կըձանձրանան... օղին և գինին շատ կըլինի, գնչու կանայք էլ դու կըպատրաստես, հասկացա՞ր։

—Հրամանք ես, էֆէնդի։

—Ածողներ պէտք չեն, բարեկամներս իրենք բերում են, իսկ դու չըմոռանաս քաղաքից բերել ամեն պարագաները։

—Հաց և միս է՞լ։

—Յիմար ես, չաւուշ,—ծիծաղեց էֆէնդին,—28 տուն չէ՞ կարող մի քանի հոգու համար մի շաբաթ հաց և միս մատակարարել։

—Իրաւունք ունիս, էֆէնդի, ես յիմար եմ....

Էֆէնդին լռութեամբ պահ մի ևս արշաւեց և ապա նորէն խօսեց.

—Մուստաֆա չաւո՛ւշ։

—Հրամայիր, էֆէնդի։

—Գիտե՞ս որ կալերի ժամանակն է։

—Գիտեմ, էֆէնդի։

—Ուրեմն Ալիին, Օմարին, Արիֆին և Հասանին գիւղերը կուղարկես որ հսկեն գիւղացոց վրայ... Շատ անհաւատ (քաֆիր) են այդ հայերը, եթէ հսկող չլինի, ցորենի կէսը կըգողանան...

—Ճիշտ է, էֆէնդի։

—Կասես նրանց որ շատ աղմուկ չըհանեն. իսկ դու մի քանի ուրիշ ծառաներ հետդ առած՝ մի երկու հատ վրան կըկանգնեցնես Եաճեա գիւղի քեհեայի պարտիզում. լսեցի՞ր։

—Լսեցի, էֆէնդի։

Հիւսէյն էֆէնդին և ծառան քաղաքից ելած՝ մի նեղ ճանապարհով արշաւում էին։

—Այժմ մենք Քաղքիկ ենք գնում... Այնտեղ է մեր ցորենից շատը... Այս տարի այնտեղի բերքը ի՞նչպէս է։

—Շատ լաւ է, էֆէնդի։

—Աւելի լաւ, բայց պէտք է իմ երթալս, որովհետև այդ գիւղացիք շատ գող են, շատ էլ դըդռացող, յետոյ երբ արդիւնք քիչ լինի, գուցէ Օմարին ոչինչ չըտան... քեհեայի տունը երթանք։

—Հրամանք ես, էֆէնդի։

Էֆէնդին մի շինուած պապիրոս հանեց արծաթեայ տուփի միջից և՝

—Կրակ տո՛ւր,—ասաց ծառային։

Ծառան կայծաքարով վառեց աբեթը և տալով էֆէնդիին՝

—Էֆէնդի,—ասաց լըբենի մի ժպիտ դէմքին,—եթէ ձերդ բարձրութիւնը կամենայ... հը՛մ... քաղաքում մի գեղեւուր կին կայ...

—Ի՞նչ,—ժպտեց էֆէնդին,—ո՞րն է որ ես չըգիտեմ։

—Նոր է եկել, էֆէնդի, առաջ Էրզրում էր։

—Գեղեցի՞կ է։

—Շատ գեղեցիկ։

—Ինչպէ՞ս է եղել որ նա եկել է Խնուս։

—Երկար պատմութիւն է, էֆէնդի։

—Կարճ պատմիր։

—Ա՛յ, այսպէս է եղել, էֆէնդի. սրանից տասը տարի առաջ, դեռ նա Ալմազը մի սիրուն աղջիկ էր, բայց մի օր նրանց տունը իջաւ մի պօլսեցի հայ փաստաբան, վեց ամիս այնտեղ բնակւելու միջոցին խաբեց աղջկան, թէ ինքը կամենում էր նրան իրեն կին անել... իսկ երբ գոհ եղաւ, թողեց, Էրզրումից փախաւ... Նա արդէն Կ. Պօլսում կին էլ ունէր ու չորս էլ որդի...

—Ա՛յ քեզ ծիծաղելի բան,—ծիծաղեց էֆէնդին,—յետո՞յ։

—Ամենքը իմացան այդ դէպքը, էֆէնդի, որովհետև Ալմազը աշխարհք բերեց մի սիրուն աղջիկ... այնուհետև իհարկէ ոչ ոք չուզեց նրան առնել... մայրն էլ դայեակ է, ամեն կողման է գալիս։ Ալմազը իբր աղախին մտաւ Ան-

գիւղացոց ամուրի հիւպատոսի մօտ։ Դեռ ևս երեք ամիս առաջ նրա սենեակի լուսամուտից ցածում հաւաքւող ժողովրդեան էր նայում, որ եկել էր կոնսուլի աճուրդի դրւած իրեղէնները գնելու... Մէկն էլ գնեց Ալմաստին. կոնսուլի ծառան էր այդ... Գնեց և այժմ բանեցնում է. ասում են, բաւական փող է շահում այդ ծերունին... Այժմ Խնուս են...

—Ա՛յ լաւ բան,—ծիծաղեց էֆէնդին,—անպատճառ այդ ծերունին հայ է։

—Հրամանք ես, էֆէնդի։

—Գիտէի,—ժպտեց էֆէնդին,—միւսիւլմանը այդպէս բան չի անի. գեաւուրները միայն գիտեն այդպիսի բաներով առևտուր անել... Զըմռուանաս այդ Ալմաստին. բայց ծերունին թող աչքիս չերևայ...

—Անհոգ կաց, էֆէնդի... Իսկ պզտիկ աղջիկը։

—Շա՜տ փոքր է։

—Ինը տարեկան է։

—Է՛հ, դեռ փոքր է, մի երկու տարուց յետոյ...

Պահ մի լռութեամբ արշաւեցին։ Ձաւուշը ետ քաշւել ծխում էր, իսկ էֆէնդին իւր երկու կողքում փռւող արտերն էր դիտում։

III

Խնուս գաւառի հարաւային մասի կարևոր գիւղերից մէկն էր Բաղքիկ գիւղը, շինւած ապառաժների միջավայրում—բնութեան վայրենութիւնների մէջտեղը, կողքին ունենալով Ս. Դանիէլ գետակը, որը ոռոգում է Ախըրդէման դըրախտանման ընդարձակ մարգագետինը, բարեբեր դաշտերը և յաճախ յորդելով՝ շատ անգամ լըրացնում է շահնաների կատարած անգթութիւնները՝ սըբելով և իւր հետը տանելով կալերի կէսը...

Բայց դաշտերը այնչափ ընդարձակ, այնչափ արգաւանդ են, որ գիւղացիք շատ տարի չըգիտէին ինչ անել իրենց ցորենը... տալիս էին շահնային տասնապատիկ, մի կողմ էին դնում իրենց ձմեռւայ պաշարը, աշնանային և գարնանային սերմնացուն, իսկ մնացեալը բեռներ կապած՝ քաղաք էին իջեցնում ծախելու, տալիս էին տուրքերը, տալիս էին մասնաւոր պարտքերը... Ունենում էին նրանք այդչափ բերք, մանաւանդ այդ տարին, որովհետև մինչև իրենց սահմանը այլևս մի թիզ տեղ անմշակ չէին թողել, մինչևիսկ ցանել էին Ախըրդէման մարգագետնի մի

մասը՝ պոկելով այնտեղի այլազան անուշահոտ ծաղիկները և աչք առնելով կրելու Հիւսէյն էֆէնդիի հայհոյանքները, որովհետև այդ էֆէնդին սիրում էր մարգագետինը, նրա միջի ծաղիկների հոտը և համարեա սեփականացրել էր նրա միջից արտադրւած խոտը և բանջարները...

Այս տարի քաղքիկցիք ունեցան շատ առատ բերք. հնձեցին, կալսեցին, ցորենը դիզեցին, յարդը ժողովեցին և ուրախութեամբ սպասում էին շահնային, որ գար, ցորենի տասանորդը առնէր և թողնէր իրենց մնացեալ բերքը մեծ քանակութեամբ քաղաք տանելու։

Առաջին երեք օրերում գիւղացիք ուրախ էին. նստան հաշիւ տեսան որ կունենան աւելորդ փող իրենց ընտանիքի համար հագուստ գնելու. ուստի և իջան քաղաք, նրանցից իւրաքանչիւրը գտաւ իւր ծանօթ վաճառականը, պատմեց իւր հողի առատ բերքի մասին, գնեց հագուստ և խոստացաւ փողը վճարել տաս օրից յետոյ։

Որովհետև ամենաշատը տաս օրից յետոյ շահնան կըգար, իւր տասանորդը կառնէր և թոյլ կըտար գիւղացիներին իրենց բերքը քաղաք տանելու, հոգ անգամ չէին անում, երբ տեսան որ շահնայի ծառան մի փայտէ դաջ (կնիք) ձեռքին՝ եկաւ դիզել տւաւ ցորենը և յարդը և ամեն կողմից դաջեց (կնքեց)։

Անցաւ մի շաբաթ. շահնայի ծառան թէև

գիւղի քեհեայի տանը ընկած ուտում-խմում էր, բայց դեռևս ոչ շահնայական մասն էր վերցնում և ոչ էլ թոյլ էր տալիս դէզերը շարժելու։

—Օմար չաւուշ,—ասում էին գիւղացիք,—ախր ժամանակն է ցորենը ժողովելու... Աստւած մի՛ արասցէ, եթէ անձրև գայ, մենք էլ, աղան էլ կըվնասւենք...

—Ես ի՞նչ անեմ,—պատասխանում էր ծառան,—աղային պիտի սպասենք, այդպէս է հրամանը...

Գիւղացիք կարեցին իրենց ապառիկ հագուստները, հագան (գուցէ շուտով էլ մաշէին), պարեցին, երգեցին, ամեն անգամ՝ երբ խոշոր դէզերի շուրջը պար բռնեցին՝ շնորհակալ եղան Աստուծուց և համբերութեամբ սպասեցին շահնային։

Չէ՞ որ անպատճառ պիտի գար աղան, ոչ ոք կասկած չէր տանում։

—Երևի աղան զբաղւած է,—ասում էին մի քանիսը։

—Երևի Էրզրում է գնացել,—ասում էին ուրիշները։

—Երևի հիւանդ է,—ասում էր քահանան։

—Զբօսնում է,—ժպտում էր վարժապետը։

Ճշմարտութիւնը այն էր որ Հիւսէյն էֆէնդիի բարեկամները նւագածուներով հանդերձ Էրզրումից ելել իջել էին Եահեա գիւղի վրանների տակը և լեռները թնդացնել էին տալիս Աղաբաբի

քլարինէթով և իրենց աղմուկներով։

Կանոնջի Հաջին ածում էր մեղկ եղանակներ, Թիւրք կանայք և Ալմաստը պար էին բռնել եկեղեցու կողքի այդ շքեղ պարտիզի մէջ, Աղաբաբը կլկլացնում էր իր նշանաւոր «աղամ, աղամ»-ով սկսւող և Ուսֆա կոչւող եղանակը, Մահմուդ աղան թիկն տւած բարձերի վրայ, շըրջապատւած նէրգիլէի ծուխով, ձեռքում թանձր սուրճը, գտնւում էր մի տեսակ պապշոտ արբեցութեան մէջ. պոլսեցի էֆէնդին տաքացած՝ «շարքի»-ներ էր երգում իր սիրամարգի ձայնով, կանոնջի հաջին «մէվլախանէ» եղանակով և իր զիլ ձայնով պարտիզի պատերի մօտն էր հաւաքում գիւղացիներին, որոնք պատկառանքով և գաղտագողի զւարճանում էին աղաների այդ շըքեղ քէֆովը... Եւ որովհետև երեկոյեան ժամերգութեան ժամանակն էր, գիւղական քահանան աշխատում էր աւելի շատ ցած ձայնով իր երգեցողութիւնը կատարելու աղօթատեղիի մէջ, որպէսզի միւսիւլմանների քէֆը խառնել չըկարողանայ «գեաւուրական աղօթքներով»...

Ինքը—պարտիզի տէրը, աղաների բարեհաճ կամքով, եկել նստել էր վրանի բաց դրան առջև ծնկների վրայ, գիւղացիների տները դատարկում էր՝ կարագ, սեր, մեղր և այլն բերելով. պարտիզի դրսում գիւղացիներից մէկը մի ոչխար մորթել՝ խորովածի շիշերն էր դարձնում կրակի վրայ, մի այլ կողմում գիւղացի կանայք փլաւն

էին եփում, իսկ խրճիթի կտուրների վրայից կամ պարտիզի ցած պատերից միւս գիւղացիք աշխատում էին տեսնելով գոնէ մասնակցել այդ քէֆին, որը ահա մի շաբաթ էր սկսել էր և անդադար շարունակւում էր։

Շուտով մի քանի գիւղացիք գետնի վրայ—ծառերի տակ փռեցին կարպետներ, դրին ափսէներ և ընթրիքի պատրաստութիւն տեսան ըստ հրամանի Հիւսէյն էֆէնդիի...

Պարը դադարեց, կանայք տեղ բռնեցին հիւրերի կողքին, Ալմաստը Մահմուդ աղայի մօտ. Հիւսէյն էֆէնդին հրամայեց քեհեային, որ գիւղացիներով մի պար կազմէ՝ իրենց ախորժակը բանալու համար։

Շուտով քեհեան մի խումբ գիւղացիների լեցրեց պարտիզի մէջ. Աղաբաբը գիտէր գիւղական պարերգներ ածել. շրջանը կազմւեց, և աղաները պարը դիտելով սկսեցին ուտել։

Նախ մաստիկայի գաւաթները հինգ-վեց անգամ պտտեցին սեղանի շուրջը. կլանւեց մի քանի շիշ խորոված, որից յետոյ Մահմուդ աղան ժպտելով ասաց Հիւսէյն էֆէնդիին.

—Չեմ մոռանայ այս քէֆը... ամեն ինչ կատարեալ է այստեղ...

—Էլ ուրիշ ինչ որ հրամայէք, կըկատարւի,—ասաց Հիւսէյն էֆէնդին խոնարհաբար,—միայն թէ դուք միշտ գոհ լինիք։

—Շատ գոհ եմ... տեսնում եմ որ աւելի

քէֆից, քան թէ գինուց արբել եմ... բայց,—աւելացրեց նա դէմքը թթւեցնելով,—այս կանայք այլևս զզւելի եղան...

—Եթէ կըհրամայէք, ուղարկեմ քաղաքից նորերը բերելու։

—Ո՛չ, ո՛չ...—ասաց Մահմուդ աղան և այնպէս մի ակնարկով նրան նայեց, այնպէս խորհրդաւոր մի ժպիտ ցոյց տւեց որ Հիւսէյն էֆէնդին ամեն ինչ հասկացաւ. ինքն էլ ժպտեց, բայց փոքր ինչ մտածեց և՝

—Շատ դժւար է, աղա, — ասաց լրջութեամբ։

—Հէնց դրա համար շատ քաղցր կըլինի,—ծիծաղեց աղան։

—Տեսնենք,—մռմռաց էֆէնդին մտազբաղ։

—Բայց տե՛ս,—սպառնաց մատով աղան,—սիրունը պիտի լինի...

—Տեսնենք։

—Տեսնելու բան չըկայ,—նորէն ժպտեց աղան յուզմամբ,—այսօր պէտք է գտնես...քեհեային հրամայիր...

—Վախենում եմ աղմուկ հանեն, և ձայնը փաշային հասնի։

Մահմուդ աղան ուղղւեց, նստեց. ձեռքը դրեց Հիւսէյն էֆէնդիի թևին և ասաց խրոխտ ձայնով.

—Մի անգամ ընդ միշտ գիտցիր, Հիւսէյն,

որ Մահմուդ աղան եթէ ցանկանայ, Մուստաֆա փաշան «չէ» չի ասի...

—Գիտեմ, գիտեմ, աղա՛,—շտապեց ասել էֆէնդին,—բայց...

—Ի՞նչ բայց է այդ,—դէմքը խոժոռեց աղան,—մերժո՞ւմ ես ինձ, որ այնքան լաւութիւն եմ արել քեզ։

—Շնորհակալ եմ, աղա՛... քաւ լիցի որ մերժեմ. բայց յետոյ ինձ կընեղացնեն։

—Քո նեղութիւնդ կըվարձատրեմ... կուզե՞ս որ ամբողջ Խնուսի շահնայութիւնը, նոյնն է թէ Խնուսը լիովին՝ քեզ տամ...

Հիւսէյն էֆէնդին ուրախութիւնից դողաց։

—Աղա՛,—գոչեց նա դողդոջիւն ձայնով,—ինչո՞վ եմ արժանի։

—Կամքս կատարիր, — ասաց մեծանձնութեամբ աղան,—և ամբողջ Խնուսը քոնն է...

Այդ միջոցին պօլսեցի էֆէնդին, որը սեղանից՝ ելած պարտիզից դուրս էր գնացել, մի բարձրաձայն քրքիջով ներս մտաւ պարտէզը՝ քաշ տալով իր հետ գիւղական ծերունի քահանային, որը աղաչում և արտասւում էր։

—Լռի՛ր, գեաւուր փափա՛զ...—որոտաց նրա վրայ էֆէնդին,—խօ քեզ չենք մորթելու... մի գաւաթ օղի խմիր և գնա։

Եւ քաշ տալով նրան՝ մօտեցրեց բազմոցներին։

—Էֆէնդիներ,—ծիծաղեց նա,—ձեզ մի ջէնէվէր եմ բերել...

Հրեց քահանային առաջ, յետոյ հրամայեց Ազաբաբին մի լաւ պարերգ ածել և գոչեց.

—Պարի՛ր, փափա՛զ, թէ լաւ պարես, մի ղուրուշ և մի զաւաթ օղի էլ կըտամ քեզ...

—Աստուծու սիրուն,—աղաչեց քահանան արտասւալից ձայնով,—խնայեցէք իմ հասակիս, ես պարել չըգիտեմ...

Եւ հեկեկաց։

—Զայնդ, գեաւո՛ւր... սուտ ես ասում, ինչո՞ւ ձեր եկեղեցու մէջ այն մեծ շորը վրադ ձըգած՝ պար ես գալիս միշտ... դէհ, շո՛ւտ, պարի՛ր, ապա թէ ոչ մօրուքդ ածիլել կըտամ...

—Պարի՛ր, պարի՛ր, քահանա՛, — ծիծաղեց Հիւսէյն էֆէնդին,—պարիր որ փող ստանաս։

—Էֆէնդի, գլխիդ ղուրբան,—գոչեց քահանան,—ես պար գալ չեմ իմանում...

Պօլսեցի էֆէնդու համբերութիւնը հատաւ, նա բռնեց քահանայի մօրուքից, ոտքի կանգնեցրեց, յետոյ «ա՛յ, ա՛յսպէս» գոչելով սկսեց կատաղի շրջաններ գործել տալ նրան, և երբ խեղճ ծերունին ուժասպառ գետինն էր ընկնում՝ էֆէնդիի ձեռքում թողնելով իւր մօրուքի մազերից մի մեծ փունջ,

—Տեսա՞ր...—գոչեց էֆէնդին մի ճիչ արձակելով դէպի նա,—այդպէս կըպարեն, ախմախ...

դէհ, վերկաց, այս զաւաթը դատարկիր և կորըւի՛ր այստեղից...

Եւ այս ասելով՝ տւեց նրան մի զաւաթ մաստիկա...

IV

Հիւսէյն էֆէնդիի խնջոյքը, որ տևեց ամբողջ տասը օր, վերջացաւ։ Կանոնջի Հաջին, քլարինէթ ածող Ազաբաբը, որոնք երկուսն էլ հայեր էին, լաւ ընծաներ ստանալով՝ Երզրում մեկնեցան. Մահմուդ աղան մեծամեծ խոստումներ անելով Հիւսէյն էֆէնդիին, չընայելով եահեացող գործած աղմուկին՝ գիւղը թողեց իրեն մի գիշեր զւարճացնող «գեաւուր աղջիկը» և հեռացաւ, խոստանալով միւս տարի նորից գալ այդ կողմերը։

Հիւսէյն էֆէնդին շատ ուրախ տրամադրութեան մէջ էր գտնւում, սակայն մի քանի օր հանգիստ առաւ և ապա թէ մտածեց Քաղքիկ գնալ՝ տասանորդները հաւաքելու։

Դէզերը կնքելուց ուղիղ մի ամիս յետոյ Հիւսէյն էֆէնդին իր Մուստաֆա չաւուշի հետ Քաղքիկ մտաւ։

Անձրևային եղանակները սկսւել էին, և գիւղացիք, որոնք արդէն սկսել էին տխրել և վախենալ՝ թէ ահա Խնուսի սովորական հեղեղանը-

ման անձրևները և գիւղի կողքի ս. Դանիէլ գետակը ամեն ինչ մի քանի ժամւայ մէջ կոչնչացընեն, քիչ յոյս առան, երբ շահնան եկաւ։ Իրար անցան, քեհեայի սենեակը պատրաստեցին և ուրախանում էին որ շուտով պիտի կարողանային իրենց բերքը կալերից վերցնել։

Հիւսէյն էֆէնդին քեհեային հրամայեց որ սայլերը և ձի կամ եզ պատրաստեն. յետոյ չափեց, մի կողմ դարսել տւաւ իր մասը և ամբողջ գիւղի մէջ որքան սայլ, ձի, եզ, կամ էշ կար, բեռնելով՝ իր չաւուշի հետ քաղաք ուղարկեց։

Գիւղացիք սպասում էին, որպէսզի իրենց սայլերը և աւարները վերադառնան, ուստի և իսկոյն իրենց տոպրակների ծակերը կարեցին և գիշերը հանգիստ քնեցին. միւս առաւօտ տոպրակները կըլցնէին ցորենով։

Կէս գիշեր էր արդէն, երբ յանկարծ մի աղմուկ բարձրացաւ գիւղում. ամենքը դուրս թափւեցին. լաց, կոծ տիրեց ամեն կողմ, գիւղացիք իրենց կորցրել էին։

Երկինքը սև ամպերով ծածկւել, որոտում էր, և անձրևի մի հեղեղ ծեծում էր և լցնում կալերը, իսկ ս. Դանիէլ գետակը բարձրացել՝ դէպի կալերն էր գալիս…

Ցորենի դէզերը հետզհետէ ցածանում էին, և հացահատիկներ ու յարդ խառն՝ լողում էին կալերի մէջ կազմւած լճակների երեսին…

Յուսահատութիւն տիրեց ամենքին, թիակ-

ներ բերին, տոպրակները լցնել աշխատեցին… Եւ գետը շօշափում էր դէզերը…

Հիւսէյն էֆէնդին հանգիստ քնել էր քեհեայի սենեակում…

Երբ լուսացաւ, գետը արդէն ծածկել էր կալերը։ Գիւղացիք ձեռները ծոցերին շրջապատել էին մռնչող գետակը… ոմանք իրենց մազերն էին փետում, միւսները չոքել աղօթում էին արտասուալից և տղամարդիկ տխրութեամբ դիտում էին գետնի երեսին լողացող հացահատիկները և խոտի խուրձերը, որոնց տակից ջուրը հազիւ էր երևում…

Եւ տղայք կիսամերկ ճչում և շներն անգամ միաձայն այնպէս ոռնում էին որ սարսուռ էր ազդում…

Հիւսէյն էֆէնդին այդ բոլորը տեսնելով՝ իսկոյն ձի նստաւ և քանի կարող էր շտապով՝ հեռացաւ գիւղից։

Իսկ երբ սայլերը և աւարները վերադարձան, գիւղացիք բեռնելու այլևս ոչինչ չունէին…

Ուտելու պաշար իսկ շատերին չէր մնացել, և եթէ այդ դրութիւնը շարունակւէր, եղած աւարներն էլ կըսատկէին ձմեռը, որովհետև գետը խոտերի դէզերից շատերն էլ տարել էր…

Միւս տարի եթէ մտնէիք Քաղքին, Նրա հարիւր տան փոխարէն միայն 43-ը կըգտնէիք ողջ... միւսների աւերակների մէջ թափառում են ցերեկը շները, իսկ գիշերը՝ բուերը...

Իսկ իրենք քաղքիկցիք պանդխտութեան գաւազանը ձեռք առել՝ Կ. Պօլիս էին գնացել...

ՁԻԱՐՃԱՑԱՆՔ...

I

Լուսնկայ գիշեր էր այդ օրը։ Ընթրել վերջացրել էինք, հօրս աչքերը փակւում էին, ես ու Կարապետը օդան էինք ուզում ելնել, երբ դըրսում զամփռը սկսեց կատաղի կերպով հաչել։

Հայրս վերցրեց պատին դէմ տուած ցուպը և դուրս թռաւ. մենք էլ հետևեցինք նրան։

—Աս ծո՛ւր էք...—լսւում էր շան ձայնի հետ, —սա քէօփէկին ձանը չըկտրէ՞ք... աս ի՞նչ կատաղած գազան է, ծօ...

Քիւթիւկչին էր—այն պօլսեցի երիտասարդը, որ մեր գիւղն էր եկել ընկոյզի կոճղեր գտնելու համար։

Հայրս ազատեց նրան Բառօի ձեռքից և ներս բերեց։

—Ո՛ւֆ... արաւ երիտասարդը ներս ընկնելով,—ինչ ալ խոշո՛րն է, քիչ մնաց բզկտէր ինձի։

Ապա մեզ դարձաւ ու բարևեց։ Հօրս հետ դեռ ծանօթ չէր։ Ծանօթացրի։

—Հա՛, հա՛յրդ է. բարիկուն, աղաս, ինտո՞ր ես, աղէ՞կ ես... Դէ՛հ, վեր երթանք։

Եւ ելանք։ Հոսոր միշտ ետ էր նայում՝ շան յարձակման ազդեցութեան տակ լինելով դեռ։

—Միամիտ եղիր, ասաց հայրս,—Բառօն խելօք շուն է։

—Խելօ՞ք... ամա խելօք, ըսիր ու ընցար. մազ մնաց ուտէր պիտի ինձի։ Դէ՛հ, ըսէք նայինք, ինտո՞ր էք։ Գիտնաք՝ որքա՜ն ուրախ եմ ձեզի տեսնելուս, ադամ (մարդ)։ 6 օր է պայթեցայ բէ... Ոչ ինձի կըհասկնան, ոչ ալ ես իրենց. եթէ ժամերնին չըլլար, հիչ չըպիտի կարծէի թէ հայ են... Աղւոր օդա ունիս, աղաս։

—Կնի՛կ, հաց բեր,—կանչեց հայրս՝ դէպի ներքև կռանալով։

—Հա՞ց,—ասաց պօլսեցին,—դեռ չէ՞ք ընթըրած։

—Մենք ընթրել ենք,—պատասխանեցի,—ձեզ համար է։

—Ինձի՞... Չէ, ախպար, անանկ ընթրիք մը ըրի, որ փաշան անգամ չի կրնար երազել... Ծօ աս ի՜նչ երկիր է. իւղը ջրի պէս, սէրը մածունի պէս, գինին աղւոր, անուշ... ի՜նչ բնութիւն, ի՜նչ անտառներ, ջրեր, ձոր, պարտէզներ...

—Նստեցէք, հրամցրի նրան և հօրս էլ հասկացրի որ պօլսեցին ընթրել էր։

—Ուրեմն թող գինի և մազա բերէ,—հրամայեց հայրս։

Նստեցինք մինդէրների [1]) վրայ։ Սկսւեց մի սովորական խօսակցութիւն, գինու կուռիկը (հոդէ թաս) պտտեց, և երբ երկրորդ անգամ պօլսեցին դատարկում էր նրան, թաշկինակով ճակատը սրբեց ու ասաց.

—Խիստ տաք է. ուէս Սարօի այգին աղէկ էր. հոն էինք նստեր ընթրելու. կանաչ խոտ, սիրուն զովութիւն մը...

—Մենք էլ ունինք այդպէս այգի,—ասացի ես։

—Հա՛. ապա ո՞ւր ենք նստեր հոս. հայդէ նայինք, երթանք այգին... Հոգ մի ըներ դուն, աղաս,—դարձաւ նա հօրս,—ամեն բան մենք կըփոխադրենք. դէ՛հ, ելէք երթանք...

Հայրս որ մի տեսակ ներողամիտ ժպիտով դիտում էր զւարթ երիտասարդին, թոյլ տւաւ անելու։

—Լա՛ւ,—ասաց նա ելնելով,—գնանք։

Ու ոտքի ելանք. ես մինդէրները վերցրի, Կարապետը՝ ճրագը, պօլսեցին շտապեց գինու պոզիկը վերցնել, և իջանք դէպի այգին։ Եղբայրներս ու քոյրերս քնից վեր թռած՝ հետաքրքրութեամբ դիտում էին մեր արշաւանքը։

Գնացինք ընկուզենու տակ, հոսող առւակի եզրին տարածեցինք ներքնակները, և երբ բոլորըս տեղաւորւել էինք, պօլսեցին գինի լցրեց և գոչեց.

[1]) Փոքրիկ դօշակներ (ներքնակ)։

—Ըշտէ տեսա՞ր մի, հոս մարդ կրնայ ուտել ալ, խմել ալ, բոռալ ալ։ Շատոնց է որ քէֆ մը չէի ըրեր… երգ մը պիտի երգեմ որ…

Եւ սկսեց մի զօրեղ, հնչիւն ձայնով կանչել։ Նախ մեր շունը, ապա դրացունը ոռնալըկսեցին. միւսներն էլ արձագանգ տւին նրանց, և աղմուկն ընկաւ գիւղը։

Դրացիները սկսեցին զարթնել, նախ մօտենալ այգուն, ապա ներս մտնել և ամենայն պարզութեամբ, ժպիտը երեսներին՝ տեղ բռնել հօրս կողքին։ Սա ընդունում էր ամենքի ողջոյնը, բացատրում թէ ինչպէս զւարթ մարդ էր «քիւթիւկչի» էֆէնդին ու բոլորին էլ գինով հիւրասիրում։

Շուտով երևաց նաև ռէս Սարօն։ Լուրը արագութեամբ տարածւել էր գիւղում։ Կէս ժամւայ մէջ գիւղի կէսը հաւաքւել էր մեր շուրջը։ Մթան մէջ ամեն կողմ շարժւում էին շապկանց ու կիսամերկ մանուկներ, կանանց սւերներ՝ պատերի ու ծառերի ետևից։

Շուքի միջից միառմի երևան էին գալիս երիտասարդներ էլ, որոնք վարակւելով պօլսեցու զւարթութիւնից, սկսում էին խմել. յետոյ չոր փայտեր ժողովեցին, կիտեցին, կրակ տւին ու մի մեծ խարոյկ կազմեցին ընկուզենու կողքին։

Սկսւելով մասնաւորապէս՝ քէֆը ընդհանուր կերպարանք էր ստանում։—Պօլսեցին ամենքին զւարճացնում էր, ամենքի հետ խօսում, կատակում, գինի հրամցնում և վաղեմի ծանօթի պէս նրանց վիճակի մասին հարց տալիս։

Գիւղի մէջ տարածւել էր որ մեր այգում քէֆ կար։

Խարոյկը մեծանում էր, բազմութիւնը աւելանում։

Խօսում էին, վիճում, գոռգոռում. գիւղի շները հաչում էին, և գիշերապահները միառմի մտնում էին այգին պահ մի զւարճանալու։

—Հայդէ նայինք,—գոռում էր քիւթիւկչին՝ աւելի և աւելի ոգևորւելով.—քէֆ ըրէք, բարեկամներս, վաղը ձեր ընկուզենիները պիտի գնեմ. քար ալ ըլլայ մէջը, պիտի գնեմ… խմէ՛ք… Կարապետ էֆէնդի, կենացդ. ի՞նչ ես լուռումունջ նստեր, քէֆ ըրէ…

II

Ահա այդպէս էր որ սկսեցինք զւարճանալ ամառնավերջի մի շքեղ գիշեր մեր պարտիզի ամենագեղեցիկ մի անկիւնում։

Այդտեղ էր գրեթէ ամբողջ գիւղը. ծերունիները մի կողմ հաւաքւած, կիսամթան մէջ, քահանան իրենց կողքին՝ խօսում էին, ծիծաղում։ Ասպարէզը երիտասարդներին էր. ամենքի մօտ կար պոզիկով (հողէ աման) գինի, մազա… քիչ յետոյ գտնւեց նաև սրնգահարը, և ահա ըս-

կսուեց երգ ու պար: Պօլսեցին ուրախութիւնից կորցրել էր իրան:

Պարի համար վեր թռան տաս տասնեհինգ հոգի, ձեռք-ձեռքի տուին, փողհարը մէջտեղ անցաւ: Սկսուելով ծանր, հանդարտ ու շորոր՝ ըստ սովորականին, ժողովրդական կաքաւը աստիճանաբար աշխուժանում էր, թեթևանում, ոստոստուն դառնում: Պարողները ոգևորւում էին միմեանց ձեռքից բռնած, մեծ կիսաշրջանով ցատկոտում էին նրանք խարոյկի շուրջը: Քիչ-քիչ կայտառացան ու մեծացան ոստումները. դէմքերը լուսաւորուած խարոյկի մթնաշաղախ կարմիր լոյսով, վառվռուն, ջղերը ուռած, քրտնաթոր, աչքերը շողշողուն ու շարժուն, նրանք ծռմռւում էին, ոստոստում կատաղի արագութեամբ և խռոպոտ ու ընդհատ ձայներով երգում…

Եւ այդ պարը երկարում էր, աճում ու մեծանում: Կռանում էին գլուխները, բարձրանում, մարմինները ճկւում, ոլորւում ամեն ուղղութեամբ, ոտները բարձրանում ու իջնում, և շղթան օձապտոյտ չւանի պէս ձգւում էր—սահում ճաթճթող խարոյկի շուրջը…

Ո՛չ ես էի խօսում, ո՛չ Կարապետը: Մեզ գրաւել էին էքստազի հասած կատաղի պարն ու պարողների վայրենի շարժուածքները: Պօլսեցին ապշած նայում էր. սկզբում փորձել էր մասնակցել, բայց երկու անգամ քարշ էր եկել գետ-

նի վրայ, իսկ յետոյ նրան դուրս էին շպրտել շղթայի միջից…

Եւ ահա այդ ժամանակն էր որ յանկարծ մի գիւղացի՝ յուզուած ու շնչասպառ, ցատկեց շրջանի մէջ մտաւ և արան-նրան նայելով՝ գոչեց.

—Ո՞ւր է ռէսը…

Փողհարը կանգ առաւ, պարողները դադար առին, շրջանը խորտակւեց:

Եւ մինչ ամեն ոք իր քրտինքն էր սրբում, ռէս Սարօն մօտեցաւ եկող գիւղացուն:

—Ի՞նչ կայ, Կարօ,—հարցրեց նա:

—Շո՛ւտ,—գոչեց գիւղացին,—գնանք, հարկահանը գիւղ մտաւ…

Այդ լուրը կայծակի ազդեցութիւն թողեց. մի րոպէ ամեն ինչ քարացաւ, յետոյ ամենքը վեր ցատկեցին: Համփաները [1]) իսկոյն ցրւեցին, ռէսը երկու ոստինով դուրս թռաւ այգուց, և պարողները անհետացան դէպի մութ կողմերը:

—Տղե՛րք,—կանչեց հօրեղբայրս,—շո՛ւտ խարոյկը մարեք, քանի հարկահանը չէ իմացել…

Եւ օրինակ տալու համար մօտեցաւ ճրագին ու մի շնչով հանգցրեց:

Ամեն ոք հասկացաւ թէ հօրեղբայրս ի՞նչ էր ուզում ասել: Մի րոպէի մէջ խարոյկը հանգաւ: Հայրս և մի քանի գիւղացիները եղածները ներս տարան, լռութիւնը տիրեց և հինգ րոպէից յետոյ այգում ոչ ոք չըմնաց:

[1]) Գիւղական իշխանները:

Պօլսեցին սառել էր. ո՛չ պակաս զարմացած էր նաև Կարապետը։

—Ա՞ս ի՞նչ է, ծօ,—գոռում էր քիւթիւկչին,—աս ի՞նչ խայտառակութիւն է, ինչո՞ւ ցրւեցան, ի՞նչ է եղեր... ըսէք, ճաթիմ պիտի հիմա...

Հայրս անհանդարտ նայում էր շուրջը, և երբ ամեն ինչ վերջացել էր ու լռութիւնը այնպէս տիրել որ կարծես գիւղն ամբողջ ննջում էր, հօրեղբայրս ասաց.

—Վայ է, եթէ ուէսը պատմի նրան այս քէֆի մասին. էգուց մէկին տասը պիտի տուժենք։

—Բայց ինչո՞ւ,—հարցրեց Կարապետը,—ի՞նչ ունիք վախենալու... Հարկահանը ի՞նչ իրաւունք ունի ձեզ արգելել քէֆ անելու։

Հօրեղբայրս դառնութեամբ ժպտեց։

—Իրաւունք չունի,—ասաց նա,—բայց էգուց երբ գործի սկսի, բոլորիս հոգին էլ կը հանի...

—«Քէֆ էիք անում,—կասի,—ուրեմն ունիք որ անում էք. դէհ, քանի որ ունիք, տւէք ուրեմըն»... և երևակայիր մնացածը ինքդ...

Հօրեղբայրս իրաւունք ունէր։ Դառն փորձերը սովորեցրել էին նրան այն, որ մենք իրաւունք չունինք մի՛ րոպէ անգամ մոռանալ մեր ցաւերը, մեր դահիճները. իրաւունք չունինք մի րոպէ անգամ զւարճանալ, վախենալով որ շատ ծանր ու թանգ չընստէր այդ մոռացութիւնը...

—Այո,—շարունակեց հօրեղբայրս,—դրանց

մօտ ծիծաղել անգամ ազատութեամբ չես կարող. կըկարծեն թէ հարուստ ես, և ինչ որ ունիս, ձեռքիցդ կառնեն։ Չես կարող մի մաքուր շապիկ, մի նոր կօշիկ հագնել... Ա՛հ, նոր կօշի՞կ... Անցեալ տարի չէ՞ր որ Կալօենց Առաքելը կալերի ժամանակ նոր կօշիկ էր առել ու չէր համարձակւում հագնել, որովհետև շահնան (հարկահանը) գիւղումն էր։ Ամբողջ տասն օր ոտաբոբիկ էր ման գալիս մինչև շահնայի գնալը...

—Գնանք, գնանք, մենք էլ ցրւենք, կարող են մեզ հաւաքւած տեսնել և դա էլ թանգ նըստեցնել...

Եւ ցրւեցինք, թողնելով պլպլուն՝ քիչ առաջ բոցեր արձակող և այժմ հոգեվարքի մէջ ընկած խարոյկի մնացորդը...

Ահա այդպէս էր որ զւարճացանք մենք ամառնավերջի մի շքեղ գիշեր, մեր պարտէզի ամենագեղեցիկ անկիւնում...

1897.

ՈՉԽԱՐՆԵ՜Ր...

Մի քանի ժամ ևս, և կըհասնէինք քաղաք։

Բայց ընկերս շատ յոգնել էր, գիշերն էլ թաց էր և ցուրտ։

Ստիպուեցինք կանգ առնել մի գիւղի կայարանում և գիշերել այնտեղ։ Մեզ տուին բարձրադիր օդա, հնոցի մէջ խարոյկ վառեցին, յետոյ կերակուր մատուցին և խոստացան առաւօտը կանուխ զարթեցնել։

Կերակրից յետոյ ընկերս իսկոյն քնեց, իսկ ես պահ մի պատշգամբ ելայ, կռթնեցի փայտէ սիւնին և սկսեցի շրջակայքը դիտել։

Առջևս տարածուած կար մի ընդարձակ մշուշալից դաշտ, որ փռւում էր մինչև լեռները։ Մի կատար կոնաձև դուրս էր ցցում իր ձիւնապատ գլուխը այդ լեռնակոյտի միջից, իսկ լուսնկայի լոյսի տակ կապտած ծառազարդ գիւղերը նրանց ստորոտում, կարծես լղրճւել էին թացութիւնից։ Աւելի մօտ՝ մի քանի խրճիթներ՝ թաց ու ճղփուն տանիքներով, միմեանց էին կպել մի բարձր շէնքի շուրջը։

Պատշգամբից անմիջապէս ցած՝ տարածւում էր մի ընդարձակ աղտոտ ու ցեխոտ բակ, իսկ նրա վերջին ծայրի գմբէթածածկ գաւթից լըսւում էին ուղտերի մելամաղձոտ ձայներ՝ խառն բոժոժների հնչիւններին։ Երբեմն ականջիս էին հասնում ջորեպանների խուլ աղաղակներ ախոռների ներսերից... սրճատան բացուխուփ լինող դռնից ընդհատ կերպով լսւում էին գիշերային խաղոտ խօսակցութիւններ, ապա դաշտի կողմից հեռաւոր ոռնոցներ գալիս էին միանալու դրանց, և այդ բոլորի միջից՝ որոճացող ուղտերի վզից ճօճւող զանգակներն էին, որոնք իրենց անընդհատ ու պարբերական զօղանջիւնով թմբեր էին ազդում...

Կարծեմ երկար այդպէս կռթնած մնացել էի, երբ աչքս ընկաւ մեծ ճանապարհի վրայ, ուր մշուշի միջից միառմի դուրս գալով՝ երևում էին շարժուն ստուերներ և ծանրութեամբ մօտենում կայարանին։ Հետիոտն ճանապարհորդներ էին։ Իջայ մի ցած տանիքի վրայ աւելի մօտիկից դիտելու համար։

Մի խումբ գիւղացիներ էին։ Կին, մանուկ, ծեր ու պառաւ, գրեթէ մերկ մարմինը տւած խոնաւութեան ու կծու ցրտին, ատամները կարկափելով ու ոտաբոբիկ՝ գնում էին ցեխի ու ջրբակոյտերի միջով։ Առջևից քայլում էին մի քանի մանուկներ. մէկը աղջիկ էր, յետոյ՝ երկու կին—մէկը պառաւ, ապա՝ մի քանի հասակաւոր

աղջիկներ ու երկու երեք ցուպաւոր տղամարդիկ։

Սրճատան դուռը չըբացւեց նրանց առաջ, ախոռների մէջ էլ չըթողեցին։ Վախենում էին որ բան չըգողանան։

Ու մնացին նրանք փողոցի ցեխի մէջ կըծկւած, դողդոջիւն։ Էլ առաջ գնալ չէին կարողանում, կանայք կկզեցին գետին՝ սրճատան պատի տակ, մանուկները նստեցին ցեխերի մէջ, իսկ մի ծերունի տեղնուտեղը կքւեց ճանապարհի վըրայ։

Ցած իջայ և դիմեցի կայարանապետին, պահանջելով որ նրանց տեղ տար գիշերելու։ Զարմացած ինձ նայեցին, չէին հասկանում թէ ի՛նչպէս կարելի էր յուզւել մի այդպիսի «սովորական» տեսարանի առաջ։

—Էֆէնդիները դեռ նոր են մտնում այս երկիրը,—արդարացրեց ինձ մեզ ուղեկցող զափթիէն։—Բայց քաղաք որ մտնեն, էլ չեն զարմանալ։

—Դրանք գող էլ են լինում,—աւելացրեց մի ուրիշը,—ո՞վ տեղ կըտայ դրանց։

Թշւառները լսում էին. բայց ո՛չ մի բառ չարտասանեցին, տնքում էին միայն ու հառաչում, այլ և նայում էին մեզ յուսահատ, նախատինքներից բթացած ու վիրաւորւող սրտուկների համբերատարութեամբ։

—Ո՞ր գիւղից էք,—հարցրեց նրանց կայարանապետը։

Մի գիւղի անուն տւին, չեմ յիշում։ Թուրքերից մէկը ձեռքը դէպի աջ պարզեց ու ասաց.

—Այն լեռների մէջն է։ Ամենքը ցըրւում են . . .

—Դուք է՞լ էք գանգատի գնում,—հարցրեց մի զափթիէ։

—Այո,—պատասխանեց ծերունին։

Եւ թիւրքերը միմեանց նայելով՝ ծիծաղեցին։

—Շատ կըշահէք ա՛յ...—հեգնեց հիւրընկալս։

—Այդ ի՛նչ գանգատ է,—հետաքրքրւեցի։

Նորից զարմանքով ինձ նայեցին. մի՞թէ չըգիտէի. մի՞թէ այդքան ագէտ էի այդ երկրի թշւառութիւնների վերաբերմամբ։

—Ի՞նչ պիտի լինի,—ծիծաղեց կայարանապետը։—Քամում են սրանց, ահա թէ ինչ. էլ ոչինչ չեն թողնում. տուրքերի տակ խեղդում են, սպանում բոլորին... Աստւած է վկայ, որ ո՛չ մի խնսափով մարդ չէ կարող առանց զայրոյթի տեսնել այդ բոլորը։

—Է՛լ ուտելու բան չըմնաց,—աւելացրեց մի թշւառ կին,—որ կծկւել էր պատի տակ և աջ թևովը պարուրել էր իր մերկ ու ցեխաթաթախ զաւակին։

—Ցոր էլ չըմնաց, տաւարները տարան...

—Սպանում են, տանջում... բան տտանում։

Մի րոպէ ոչ ոք չըխօսեց։

—Է՛հ,—արեց կայարանապետը,—խեղք ու-

նիք՝ քաղաք մի՛ գնաք, Հիւսէյն աղայից գանգատել չէ կարելի. իսկ գանգատելով էլ տուրքերը չէք թեթևացնիլ... ձեզանից առաջ շատերը գնացին, ո՞ւր է, այլևս տեսե՞լ էք նրանց...

Թշուառները դողդոջուն, աւելի սարսափահար այդ ճշմարիտ խօսքերից, յուսահատ հայեացքով մեզ էին նայում։

—Բայց այս ցրտում խօ կըսառեն դրանք,—գոչեցի ես,—չէ՞ որ կըմեռնեն, եթէ դուրսը մընան։

Ու երբ սպասում էի որ կայարանապետը մի ճար անէր, լսեցի որ մէկը ասում էր ետևից.

—Աւելի լաւ իրենց համար. որ ապրում են՝ հա՞մ են առնում կեանքից։

Չիմացայ ո՞վ էր ասողը. թո՞ւրք էր, քո՞ւրդ, թէ՞ հայ։ Ով որ էր, մի մարդ էր այդ խօսողը։

—Մի տեղ տուր վերջապէս,—ասացի բարկութեամբ,—ես կըվճարեմ դրա համար։

Գտան տեղ։ Փայտանոցն էր, մի կողմը դատարկ։ Այնտեղ լցրին նրանց, ու կայարանապետը գլուխը կասկածանքով շարժելով՝ հեռացաւ։ Լսեցի որ ասում էր ծառաներին.

—Լա՛ւ հսկեցէք, դրանք անշուշտ մի բան կըգողանան...։

Վեր կացէք, աղա՛, մեկնելու ժամանակ է, ձիերը պատրաստ են։

Ելանք, հագնուեցինք և կէս ժամից յետոյ ձի էինք նստում։ Աղօթարանը բացուել էր։

Կայարանապետը մօտեցաւ մեզ. վճարեցի եղած ծախսը և սենեակի համար։

—Տասը ղրուշ էլ պիտի տաք,—ասաց նա։

—Ինչո՞ւ։

—Այն աղքատները, որոնց դուք պատճառ եղաք ներս առնելու, փայտանոցում մոռացուած մի հին կարպետ են առել և անհետացել...

Վճարեցի ուզածը։

—Ես գիտէի ախր,—աւելացրեց նա,—մըրսում են և ծածկոց չունէին։

Յետոյ բարևեց և, երբ շարժւում էինք, գոչեց.

—Եթէ ճանապարհին նրանց հանդիպէք, ես ասել եմ զափթիաներին, թող ձեռներիցը խլեն կարպետը ու մի լաւ էլ ծեծեն...

—Բայց չէ՞ որ նրանք շատուոր են, կըընդդիմադրեն։

—Ընդդիմադրե՞լ... այդ ոչխարնե՞րը...

Այդ միջոցին էր որ կայարանի մի ծառան մօտ վազեց ու կանչեց իր տիրոջը։

—Օսման աղա,—գոչում էր նա,—կարպետը գտնուեց։

—Գտնուե՞ց։

—Այո... մի քիչ տեղ տարել են և երևի

վախեցել են ու թողել են պատի տակ…

Կայարանապետը նայեց ցոյց տւած կողմը, տեսաւ կարպետը ու մի մեծ քրքիջ արձակեց։

—Ոչխարնե՜րը…—բացականչեց նա։

Մտրակեցինք ձիերնիս։ Այդ բացականչութիւնը ու քրքիջն էր լսածս վերջին ձայնը։

1897.

ԿԸՇԼԱՆ [1]

I

… Երբ Ոստան հասայ, դէպի Սպիտկոյ վանքն եկող ճանապարհի վրայ ծիրանիների ստորոտում հանգչող մի երիտասարդի հանդիպեցի։ Ռուսիացի էր։ Մեր ծանօթութիւնը շուտ կատարւեց։ Նա էլ էր գնում վանքը՝ Աղթամարի կաթուղիկոսին այցելելու։ Վեհափառը մի քանի օրից ի վեր էր որ Ոստանի այդ վանքն էր եկել՝ Արտօս լեռների մէջ ամառն անցկացնելու համար։

Լաւ էր որ ընկեր գտայ. ապա թէ ոչ՝ անտանելի էր դառնալու մենակ քայլելը այդ շոգին ու փոշոտ ճանապարհով։

Խօսակցելով, ծխելով, յաճախ հանգչելով, կարողացանք երեկոյեան դէմ բաւական բարձրանալ։ Բարեբախտաբար ամպերի խոշոր կտորներ անցնում էին երկնքի վրայով և անցողակի, բայց թեթևացնող ստւերներ սփռում մեզ վրայ։

---

[1]) Թրքական զինւորների համար ձմեռային բնակարան։ Զինւորանոց։

Նախիրը վանքն էր վերադառնում, երբ մենք մի փոքրիկ ձորակ էլ կտրեցինք և հասանք Շամիրամայ առւին։

Տեսարանը շքեղ էր. արևը մայր էր մտնում. ցածում՝ Ոստանի հովիտը և հորիզոնի վրայ՝ կապուտակ ծովը, առաջներս Արտոսի լեռնաշղթան՝ կանաչագեղ ու շողշողուն, և պուրակներ, որոնք ձգւում-համնում էին մինչև բարձր գագաթները։ Ահա և վանքն իր փոքրիկ գմբէթաւոր մատուռով և կողքին գտնւող հին, ընդարձակ միակ բնակարանով։ Ապա մի ընդարձակ ծառաստան—պարտէզ, որոնց ստւերների տակով հոսում էր սքանչելի վճիտ ջրերով—Շամիրամայ առուն։

Նախիրն այդ միջոցին հասնելով՝ իջնում էր վանքի առաջ։ Ամեն կողմից լսւում էին բառաչ, մկկոց. հովւական շները հաչում էին, նախրորդները ցուպերը բարձրացրած՝ աշխատում էին ոչխարներին դէպի գոմն անել, շոշրարները (կաթ կթողները) փայտեայ կուշերով զինւած՝ վազվզում էին տաւարի մէջ։ Վանքն էին վերադառնում նաև հնձւորներ, կալւորներ, հօտաղներ, որոնք բոլորն էլ շրջակայ գիւղերի բնակիչներից էին և եկել էին գ ու բ ա ր ա յ ո վ (ձրի) բանելու վանքի համար։ Երեկոյեան՝ վանքն էր նրանց ընթրիք տալու։ Շներն իսկոյն մեր հոտը առին և խմբովին հաչելով՝ վազեցին դէպի մեզ։ Մի նախրորդ առաջ եկաւ, հալածեց գամփռներին և պատկառանօք տարաւ մինչև մառանը։

—Կաթուղիկոսը ո՞րտեղ է։

—Այգում նստել է... Ահա Ղազար հայր-սուրբը։

Մի երկար վարդապետ, որ ախոռից դուրս եկել՝ դէպի պարտէզն էր ուղղւում և որ նկատելով մեզ՝ կանգ առաւ ու սպասեց։

Մօտ գնացինք։

—Աստւած օգնական։

—Աստւած պահապան, որդիք. եկել էք ուխտի՞։

—Այո, հայր-սուրբ, եկել ենք նաև վեհափառին այցելելու։

—Վեհափառը այգումն է, առաջնորդեմ ձեզ։

Ու առաջ ընկաւ։ Շատ հեռու չէր։ Լայն առւի եզերքում, մի ուռենու հովանու տակ՝ փռել էին գորգ։ Նրա վրայ էր որ դերձակի պէս բազմել էր Աղթամարի Խաչատուր կաթուղիկոսը։ Մի միջահասակ, թխլիկ, վիզը կարճ ու կապուտաչեայ երանելի։ Ոտները ծալած, առջևը մի փնջան սուրճ, աջ ձեռքին դեղին մեծ սաթերից շինած մեղեսիկ, նայում էր հեռուները։

Երբ նկատեց մեզ, ուղղւեց, շարժւեց ու ասաց.

—Համեցէք, էֆէնդիներ։

Մօտեցանք, աջն առինք, յետոյ նստեցինք գորգի եզերքին և կաթուղիկոսի հրամանով՝ Ղազար վարդապետը ետ գնաց որ մեզ համար սուրճ պատւիրի։

—Բարի եկաք, ուխտներդ ընդունական...—այսպէս սկսեց վեհափառը,—հրամանքնիդ ռուսխացի՞ էք։

—Ո՛չ, ես, վեհափա՛ռ,—պատասխանեցի,—ես վանեցի եմ։

—Հա՞... որո՞նցմէ՞ն ես։

Հօրս անունը տուի. չէր ճանաչում, բայց լսել էր։

—Իսկ աս ադա՞ն,—հարցրեց նա՝ ընկերոջս ակնարկելով։

—Պարսկաստանցի է, անունը Կարապետ։

Այնուհետև սկսեց մի երկար խօսակցութիւն այն մասին, թէ ես ինչո՞վ եմ զբաղւում, ընկերս ինչո՞վ, թէ ինչո՞ւ ենք եկել այս կողմերը, կամ ո՞ր ճանապարհով եկել և այլն և այլն։

Քիչ յետոյ երևեցաւ մի գիւղացի՝ ձեռքին երեք փնջաններ և մի սրճաման։ Կօշիկները հանեց գորգից դուրս, պատկառանօք մօտեցաւ վեհափառին, չոքեց, դրաւ նրա առաջ փնջաններից մէկը և սուրճ լցրեց, յետոյ դարձաւ ինձ ու ընկերոջս և նոյնն արաւ։ Ղազար վարդապետն էլ եկաւ շուտով ու չոքեց վեհափառի կողքին, մի ոտք ետ։

Այդ բոլոր ժամանակում կաթուղիկոսը միշտ մի տեսակ կասկածանքով և ուշադրութեամբ էր զննում ընկերիս, իսկ ինձ վրայ սակաւ էր նայում, և երբ վարդապետը վերադարձաւ, այն ժամանակ յանկարծ ասաց.

—Հրամանքնիդ ուրիշ ժամանակ այս կողմերում եղե՞ր էք։

Կարապետը շփոթւեց մի քիչ։

—Ո՛չ,—ասաց,—այս կողմերում չեմ եղել։

—Ես էլ չեմ եղել,—պատասխանեցի ես։

—Գիտե՞ս,—դարձաւ ինձ կաթուղիկոսը,—քիչ մնաց կարծէի թէ աս աղան մեր կողմերը թափառող բոշ-բողազ ռուսխացիներէն է։

—Այդ ի՞նչ ռուսխացիներ են, վեհափառ։

—Հը՛մ, հը՛մ...—արեց կաթուղիկոսը,—ի՞նչ ըսեմ, էֆէնդիս, տարի մըն է որ խել մը բոշբողազներ ընկեր են մեր գիւղերը. քանի մ'օր առաջ ատոնցմէ երկուքը ձիերու վրայ հեծած՝ դրսի տուն եկան... Ալլահ իւչիւն [1]), գէշ մարդիկ չէին երևնար, նուէր տուին վանքին, սակայն այլանդակ խօսքեր կընէին. փառնգաւոր խօսքեր... կատղեցուցին զիս, համբերութիւն չըթողին... Անանկ չէ՞ մի, Ղազար վարդապետ,—դարձաւ նա հայր-սուրբին,—միտքդ չէ՞ թէ գիւղացիներուն ինչե՞ր էին սովրեցուցեր։

—Հրամա՛նք ես, վեհափա՛ռ... չեմ կարծեր որ ատոնք անոնցմէ ըլլան։

—Աղէկ, իհարկէ, ես ալ չեմ կարծեր... Ինչ որ է, վարդապետ, անօթի ենք, աս աղաներն ալ անօթի պիտ ըլլան, Խաթունը բան մը պատրաստե՞ր է...

---

[1]) Ճշմարիտ, Աստուած է վկայ։

—Հրամանք ես, Վեհափառ. որտե՞ղ հրաման կընեք ճաշելու. հո՞ս թէ ներսը։

—Ներսը, ներսը. ես կըսիրեմ աչքովս տեսնել Թոնրէն ելնող կերակուրներուն պուտուկները ու անոնց հոտն առնուլ։

Այս խօսքերը ասելով նա ոտքի ելաւ ու ծանրութեամբ առաջ ընկաւ։ Մի գիւղացի որ հեռւում սպասում էր, մեր ելնելուց յետոյ մօտ գնաց և ժողովեց գորգն ու բարձը։

II

Այսպէս ահա ծանօթացանք Աղթամարի կաթուղիկոսի հետ, որ երերւելով անցաւ մառանի պատերին կպած բազմաթիւ խոնարհւող և իր աջին մօտեցող գիւղացիների միջով ու մեծ տանտունը մտաւ։ Վանքի միակ սենեակը—այդ տանտունը մի ցած առաստաղով ահագին սենեակ էր, պատերը թոնիրներից արձակւած ծուխից սաստիկ սևացած։ Միայն վերևի մասն էր, թոնիրների կողքին, որ լուսաւորւած էր երկու ձէթի ճրագներով, որոնք դրւած էին միմեանցից երկու քայլ հեռաւորութեամբ կանգնեցրած ճրագկալների վրայ։ Մութ մասը, որ մի ընդարձակ տարածութիւն էր կազմում և ունէր շատ խաւար խորշեր, զբաղեցրած էր հազար մի տեսակ կարասիներով։

Այնտեղ տեսնւում էր իւղի, պանրի, ղաւուրմայի, գինու և այլ կարասների շարքեր, ալիւրի երկու մեծ դարան, դիզացած ցախ ու փուշ, մինչև իսկ աթար։ Պատերից, օճորքից, ամեն կողմ կախւած ու դրւած կային շշեր, մաղեր, աւելներ... Մի խօսքով, ինչ ունէր-չունէր վանքը, կիտած էր այդտեղ։

Կաթուղիկոսը նստեց փռւած մինդէրի վըրայ. Ղազար վարդապետը չոքեց նրա ետևից՝ կողքում, իսկ մենք տեղաւորւեցինք աւելի ցած։ Քիչ հեռու կիսամթան մէջ, պատի տակ, լուռ ու մունջ եկան նստելու հետզհետէ 10—12 գիւղացիներ, որոնք իրենց ակնարկը չէին հեռացընում կաթուղիկոսից և հետևում էին նրա իւրաքանչիւր շարժմանը։ Երբ նստեցինք, տնտեսուհին մօտեցաւ և սփռոց տարածեց։

—Հա՛, հա՛ց ենք ուտելու,—ասաց վեհափառը,—շատ աղէկ, անօթի եմ։ Ի՞նչ ունիս, Խաթուն, լաւ թան շինե՞ր ես։

Պառաւ տնտեսուհին եազմայի վերին ծայրը մինչև աչքերն իջեցրեց, ցածից էլ բերանը ծածկեց և գլխով դրական պատասխան տւաւ։

—Դէ, Աստւած օրհնէ քեզ, շուտ ըրէ... է՛, աղաներ,—դարձաւ մեզ,—ըսէք, հայրե՛ք, շատ տեղ պտտեցի՞ք...

Երրորդ անգամն էր որ նոյն հարցն էր տալիս։

—Այո, վեհափա՛ռ,—պատասխանեցի ես։

—Ս. Եղիշէի գերեզմանն էլ գնացի՞ք... Զարխափան ս. Նշան։

—Ոչ դեռ ևս։

—Հմ... է, վաղը գնացէք, տեսէք մէյմը. ս. Եղիշէի գերեզմանը ես նորոգել տւի. որ տեսնես՝ կըհաւնիս. անհաւատ ես նէ՝ չես հաւնիր... Հէ, հէ, հէ, գիտե՞ս, աղաս,—դարձաւ նա ընկերոջս,—անունդ շնորհե՞ս... մոռցայ։

—Կարապետ։

—Հա՛, Կարապետ աղա, գիտե՞ս, ես քեզի փոստ կարծեցի. ինչ որ է. անոր հայրը կըճանչընամ... հրամանքդ պարսկաստանցի՞ ես ըսիր, չէ՞...

Ու վեհափառը այդպէս կցկտուր, մէկ հարցից միւսը, մէկ մտքից միւսը ցատկելով՝ մեզ չէր նայում, այլ տնտեսուհու արածներին էր հետևում, ձեռքով ուղղում էր առջևը դրած հացը, դէն հրում սևացած կտորներն ու զննում թէ որքան սոխառած էին ածում թանի երեսի վրայ։

—Այո, պարսկաստանցի եմ,—պատասխանեց ընկերս։

—Հրամանքդ ասոր ընկերն ես, չէ՞... Խաթուն, ձուկ չունի՞ս աս երեկոյ։

Խաթունը մի բան փսփսաց մօտը նստած գիւղացուն։

—Հոգևոր տէր, — բացատրեց վերջինս,— ձուկը փլաւի համար է պահւած, բայց եթէ կըհրամայես...

—Չէ, չէ, թող աս երեկոյ ձուկ չըլլայ, թանը տուր... Ղազար վարդապետ, գինի ունի՞ս։

—Հրամանք ես, վեհափառ։

—Լաւ... հըմ, հա՛, ինչ ըսի՞ր։

Ընկերոջս էր ուղղում հարցը և գդալը ձեռք առնում։

Տաք թանը, վրան կապոյտ ծաղկի թերթերունքներով խառն սոխառած՝ մէջտեղ եկաւ։

—Ես ոչինչ չասացի, վեհափառ։

—Հը՛մ... չըսի՞ր.—ու գդալը պարզեց—ես ըսի կարծեմ... հա՛ հրամանքդ ասոր դասընկե՞րն ես։

—Ո՛չ, վեհափառ, ես ուրիշ ուսումնարանումըն եմ սովորել, Մոսկւա։

—Մոսկո՞վ. հոն ալ հայոց դպրոց կայ։

—Կար, այո, Լազարեան ճեմարանը։

—Հա՛, լսեր եմ... ապրիս, որդիս։ Դէհ, ըսկսենք... «Ճաշակեսցուք խաղաղութեամբ, օրհնեալ է Տէր ի պարգևս իւր, ամէն»... Համեցէք, մօտեցէք...

Յետոյ, երբ մի քանի գդալ խմել էր, շարունակեց.

—Հա՛, ըշտէ կուզես նէ՝ քեզի ալ տեղ մը վարժապետ ընենք, լմննայ երթայ... սակայն— և մի գդալ էլ խմեց—նայէ, չըլլայ թէ սա անհաւատական մտքերէն լեցնես տղայներուն գլուխը... հը՛մ (մի գդալ ևս)... Սատանայի գոյութիւնը ուրանաս... կրօնաւորներուն պարսաւես...

Յետոյ գդալը ձգեց և սկսեց բրդել թանի մէջ։

—Հրամանքդ ալ աղուոր ձայն ունի՛ս։

—Ո՛չ, ես ձայն չունիմ։

—Զունի՛ս... ձայնաւորութի՛ւնն ալ չի՛յտես։

—Ո՛չ, վեհափառ, չըգիտեմ։

Կաթուղիկոսը կանգ առաւ, մի ակնթարթ զարմացած դիտեց Կարապետին, ապա գդալն առաւ, մի խոշոր պատառ կլլեց ու գոչեց.

—Րօաֆ բէ [1])... ապա ի՛նչ գիտես։ Նայի՛նք... ճարտասանութի՛ւն, աստուածաբանութի՛ւն, տրամաբանութի՛ւն։

—Ո՛չ, ժպտեց Կառապետը։

Կաթուղիկոսը ապշած էր։ Գդալը օդի մէջ պահեց և դարձաւ Ղազար վարդապետին։ Իսկ սա գլուխը միայն թափահարեց և լուռ՝ դադարեց ուտելուց։

—Ես,—շարունակեց Կարապետը,— գիտեմ պատմութիւն և բնական գիտութիւններ։

—Կե՛ր, կե՛ր, թանը պաղաւ,—ասաց կաթուղիկոսը,—ատոնք բոշ-բողազ բաներ են... ատոնք գիտութիւննե՛ր են... Ա՛յ, աստուածաբանութիւն, բարոյախօսութիւն... Խաթուն, ուրիշ ի՛նչ ունիս, ձաւրէ փլա՞ւ է եփածդ... Հա՛, դէհ, բե՛ր, օրհնուիս դու...

---

[1]) Զարմանալի բան։

III

Մի քանի րոպէ այնուհետև լուռ՝ ճաշեցինք։ Հեռու—կիսամթան մէջ, սինիի շուրջը բոլորած գիւղացիք ևս դադարել էին փսփսալուց. ուտում էին և անդադար մեզ դիտում։ Եթէ կաթուղիկոսը պատահմամբ նրանց կողմն էր նայում, իսկոյն կծկւում և ուղղւում էին աշակերտների պէս, ակնարկները խոնարհեցնում։

Մինչև որ մի քանի գաւաթ չըխմեց և մի լաւ չըկերաւ, վեհափառը այլևս չըխօսեց. մենք էլ լուռ էինք։

Ջաւրէ փլաւից յետոյ գիւղացիներից մէկը շարժւեց, քէօլօզը հանեց, ձեռքին բռնած հողէ կուռիկը՝ մօտեցաւ և ասաց կաթուղիկոսին.

—Հոգևոր տէր, օրհնի՛ր... Մեզ էլ արձակիր գնանք այս գիշեր։

Կաթուղիկոսը նայեց գիւղացուն, խաչակընքեց կուռիկի վրայ և ասաց.

—Այս երեկոյ դժւար թէ գնաք, ռէս Մլօ, խօսելու շատ բան ունինք։

—Ռէսը—մի ալեզարդ և պղնձագոյն հուժկու ծերունի—բարձրացաւ չոգած տեղից։

—Աջիդ ղուրբան, հոգևոր տէր,—գոչեց նա

ղաչաւոր ձայնով,—մեր տուն ու տեղ մնացել է անտէր-անտիրական. 5—6 օր է, ո՛վ գիտէ, ինչե՞ր են պատահել գիւղում. արձակիր մեզ, այս գիշեր գնանք. լաւ գիշեր է, բաւական ճանապարհ կըկտրենք։

Վեհափառը դէմքը կնճռեց։

—Է՛, ես ի՞նչ ընեմ,—ասաց նա քիչ նեղացած ձայնով,—տէրութեան գործն է, նրա հրամանն է. մի թեթև գործ էլ չէ՝ որ շուտով պրծընենք, մտածել է հարկաւոր. մի քանի լիրայի բան խօ չէ՞, հարիւրներ են պէտք...

—Դու գիտես, հոգևոր տէր,—շարունակեց ռէսը աւելի աղաչաւոր,—վճռիր ինչ որ խղճմըտանքդ տայ, ի՞նչ արած, զուլումը պիտի տանենք. ո՞ր մէկին բան ենք ասել, որ սրան ասենք... Հրամանքդ մի բան ասա, որոշիր և արձակի՛ր մեզ՝ մեր տուն ու տեղ գնանք, մեր ցաւերին նայենք...

—Գիտե՞ս ինչ, Մլօ,—ասաց վերջապէս կաթուղիկոսը ռէսին,—թէ որ այդպէս է, լաւ, այս երեկոյ վերջացնենք ու գնացէք...

—Աստուած կարգիդ հաստատ պահէ...

—Բանը այն է,—շարունակեց կաթուղիկոսը,—որ այդ կըշլայի համար 500 ոսկուց աւելի ծախս է գնալու. դեռ չեմ ասում գերան, քար, ձրի գործաւորներ...

—Եամա՛ն, հոգևոր տէր,—բացականչեց ռէսը,—ասա որ մեր ճժերու շապիկը հանենք տանք

ու մենք էլ նրանց անօթի թողնելով՝ գանք կըշլան շինենք... Եամա՛ն, էդ ինչ զուլում է. 500 լիրա որ քամես, 10 գիւղից չի դուրս գալ։

—Ի՞նչ արած,—խօսեց կաթուղիկոսը.—ապա թողնենք որ զինուորները գիւղերը ցրուին ու ամեն ինչ քարուքա՞նդ անեն, ձեր կնիկներին անպատուե՞ն, ձեր եկեղեցիներն ախո՞ռ դարձնեն... Չէ, ինչ որ էլ լինի, պիտի կըշլան շինել...

Այդ միջոցին գիւղացիներից մէկը, որ մօտեցել էր ռէս Մլօին, խառնուեց խօսակցութեան...

—Վա՞նքը ինչ է տալիս իր կողմից,—հարցրեց նա վախվխոտ ձայնով։

Կաթուղիկոսը գդալը փլաւի վրայ դրեց, յետոյ կռացաւ և խօսողին նայեց.

—Մէկ այս կողմը նայիր, այդ ո՞վ էր խօսողը,—գոչեց նա,—այդ դո՞ւ ես, ռէս Ռկօ... չե՞ս ամաչում. վանքը ի՞նչ ունի որ ձեզ համար տայ։ Փոխանակ դուք վանքին տալու՝ նրանի՞ց էք բան ուզում... Չէ, ինչպէս երևում է՝ բոշբողազներ են մտել էլի ձեր մէջ... Կարգս վկայ որ այդ սրիկաներին ձեռք եմ տալու... էլ ոչ հաւատ թողին և ոչ էլ խոնարհութիւն...

Գիւղացիները սարսափից կծկուեցին. բայց ռէս Մլօն իսկոյն մէջ մտաւ։

—Մեղայ Աստուծոյ, հոգևոր տէր,—ասաց նա,—մի՛ նեղանար, աչքիդ ղուրբան։ Ռէս Ռկօն ջահիլ է, համբերութիւն չըգիտէ... ի հարկէ մենք պիտի վանքին տանք և ոչ թէ վանքը մեզ...

Մեռնիմ վանքի զօրութեանը... բայց քո ոտքն ենք ընկել, 500 ոսկին մի՛ բարձիր մեր գիւղի վրայ. Կարճկանը 9 գիւղ ունի, Խիզանում էլ շատ գիւղեր կան. չէ՞ որ կըշլան նրանց էլ կազատի զինուորներ պատսպարելուց... ես քո ծառան եմ, մենք քո զաւակներն ենք, հոգևոր տէր, այնպէս արա որ գոնէ 10-ական ոսկիով ազատուինք ..

—Ի՞նչ, տասը... չէ, ռէս, դա շատ քիչ է. մնացածը ես ո՞րից առնեմ։

—Ախ, հոգևոր տէր,—հառաչեց ռէսը,—որ տեսնես մեր հալը, մեր տառապանքը, այդ տասը ոսկին մեր սաղ գիւղի գինը կըհամարես։ Էլ ոչինչ չի մնացել, եղածը տանում են, նիւֆիւս [1]), թաշիր [2]), քիւրդի, պողու, համող-համողի... Ո՞ր մէկն ասեմ, աչքիդ ղուրբան. դու չէ՞ որ շատ լաւ գիտես։ Էլ բան չըմնաց. մեր կնիկները մերկ են, մեր մանուկները ցրտի դէմ ոչինչ չունին, մեր կերածը բանջար է մնացել, էն էլ եթէ չըխլեն, եթէ գտնուի. տաւարի մէջ էլ հալ չի մընացել. տաւարը որտեղից մնաց. լաւերը տարան, վատերն էլ այս ձմեռ կըկոտորուին, խոտ չունինք. ինչ որ ամբարում ենք, խլում են, վառում. գանգատում ենք—վնասւում... հոգևոր տէր, չէ՞ որ հրամանքդ էլ զզւեցիր մեր գանգատներից, մեր արտասուքից ..

[1]) Զինուորական տուրք։

[2]) Արդինաբերութեան տուրք։

Ու ծերունին կռացրեց վշտերով ծանրացած գլուխը, և աչքերը լցւեցին։

Կաթուղիկոսը ուտում էր։ Յուզւած՝ դադարել էր և գդալովս հացը ծեծում, իսկ Կարապետը զունատ՝ մէկ սրան էր նայում, մէկ նրան։

—Է՛, աղէկ, աղէկ, կա՛րճ կապիր,—արեց կաթուղիկոսը.—գիւղացի էք, որքան լաւ դրութիւն ունենաք, էլի լաց էք լինում, գանգատում, չունինք՝ ասում, մերկ ենք՝ գոռում, որ ինչ է՝ չըտաք... եղած զուլումներն էլ մէկը տասն էք շինում... այնպէս չէ՞, վարդապետ։

—Հրամանք ես, վեհափառ, — ասաց հայր սուրբը,—անցեալ տարի էլ երբ ես էի պօղի ժողովողը, էլի այդպէս ողբում էին, գանգատւում, բայց ով աւելի շատ էր լաց լինում, նա աւելի շատ էր ունենում... Ստում են, վեհափառ, ստում՝ որ չըպահանջեն։

Եւ անշուշտ մտադիր էր այդպէս շարունակել, եթէ ընկերս չընդհատէր նրան։ Կնճռոտ, դաժան ու խիստ Կարապետը դարձաւ վարդապետին ու ասաց.

—Դուք սաստիկ սխալւում էք, հայր սուրբ, մինչև իսկ...այո... մինչև իսկ ստում էք, որովհետև ինչ որ ես տեսայ, դուք էլ գիտէք։ Գիտէք որ հայ գիւղացին այլևս ոչինչ չունի այս երկրում, որ խլում են նրա ձեռք բերած յետին խիլը, որ նրա ընտանիքը մերկ է, անօթի, և որ

նա խիքը հալածուած է, յափշտակութեան զոհ դարձած… գիտէք այդ և սակայն էլի ծանրութիւն էք բարձում նրա ջարդուած ու կքուած ուսերի վրայ…։ Օ՜հ, որպիսի սիրտ ունիք…

Յուզմունքից լռեց։ Կաթուղիկոսը ապշել էր։

Ղազար վարդապետը շփոթուած՝ գդալը ցած դրեց։

—Ես աչքովս տեսայ,—շարունակեց Կարապետը քիչ լռելուց յետոյ.—ահա մի քանի ամիս է որ ման եմ գալիս այս թշուառների երկրում. աչքովս տեսայ սոսկումներ. տեսայ որ այս աշխատող, ազնիւ և մաքուր ժողովուրդը, որին հարստահարում են ու հալածում—իր աղի արցունքն իսկ կուլ է տալիս, իրաւունք իսկ չունի լալու, հառաչելու… Ես տեսայ որ նա սոսկալի ճանկերի մէջ առնուած՝ ծխում է, սպառւում, իր արնովը լացւում և որ չեն թողնում անհպելի նրա ոչ մի իրը, ոչ կինը, ոչ սրբութիւնը, ոչ կայքը… Դուք էլ էք տեսել այդ, գիտէք, շատ լաւ գիտէք, բայց… ուրանում էք, ծածկում… Եւ դա է ամենից սարսափելին…

Ու ելաւ։ Կաթուղիկոսը յուզմամբ խաչակնքեց, ընթրիքը վերջացրեց, ապա Ղազար վարդապետին մի բան փսփսաց։ Գիւղացիներից շատերը դուրս ելան, մենք էլ գնացինք դէպի բլուրը և այնտեղ լռելեայն նստեցինք մի ապառաժի վրայ։

—Այո, ուրանում են, ծածկում են…—շա-

րունակեց Կարապետը յուզմամբ,—և դա ամենասոսկալին է, որովհետև եթէ հաստատեն, իրենց գրպանն էլ ոչինչ չի մնի…

Ապա կռացաւ, նայեց լուսախառն մշուշով լիքը հովտին և գոչեց.

—Որքա՜ն թշուառ ես դու, անբաղդ ժողովուրդ, և որքա՜ն խոր են վէրքերդ…

Գիշերով հեռացանք վանքից. մեկնեցին նաև գիւղապետները։ Մի զինուորանոց շինելու համար իւրաքանչիւր գիւղի վրայ 15-ական ոսկի նոր տուրք բարձած՝ գնում էին նրանք և պէտք էր տեսնել փոշոտ ճանապարհով, տխրութեամբ ու լռելեայն հեռացող ծերունիների կքուած մէջքերը, կնճռոտ վշտալից դէմքերը, որոնք երկնքից յոյսը կտրած՝ դէպի գետին էին խոնարհուել… Նրանց ոտքերի հանած փոշին թանձր ամպերով բարձրանում էր ու լողում դէպի հեռաւոր ծովը, իսկ իրանք գնում էին, գնում, տանելով դէպի իրենց գիւղը մի նոր զուլում, մի նոր տառապանք…

1897.

ԱՐԴԱՐ ԴԱՏԱՍՏԱՆ

I

«Կ. Պօլսոյ Ադլիյէի [1]) ատեանը ամսոյս 25-ին, ժամը 10-ին հրամայում է ձեզ ներկայանալ իր դատարանը և վկայել Ա... Ց...եանի գործի մասին»...

Այսպէս էր գրուած այն թղթի վրայ, որ ներկայացրեց ինձ մի հնամաշ հագուստով «զաբթիէ» և կոպտութեամբ հրամայեց որ ստորագրէի։ Ի՞նչ արած, ստորագրեցի և որովհետև հէնց այդ օրն իսկ ամսի 25-ն էր, կէս ժամից յետոյ Ադլիյէի դատարանը մտայ։

Սա մի մեծ շէնք է Այա-Սոֆիա մզկիթի մօտ կառուցած և բովանդակում է իր մէջ օսմանեան օրէնքի տրամադրած բոլոր ատեանները—սկսած հաշտարարից (բիդայէթ) մինչև վճռաջինջ վերջնական ատեանը (թէմիզ)։

Մի երկայն նրբանցքի երկու պատերի վրայ երևում էին բազմաթիւ թանձր վարագոյրներով

[1]) Արդարադատութեան։

ծածկած դռներ, որոնց իւրաքանչիւրի վրայ մի-մի բան էր գրուած. նրանցից մէկը արտաքնոցն էր, ուր մտնում ելնում էին ջրի ամանով և թևերը սոթտած, ֆէսը ծոծրակի վրայ դրած, ոտները բոբիկ ու կուրծքը բաց էֆէնդիներ, վսեմաշուք բէյեր... Արտաքնոցի կողքին քննիչների սենեակն էր, որի մէջտեղ նստած էին մի քանի այլ տաճիկներ, մի ծունկը ծալել, փայլուն թուղթը ոլորած՝ նրա վրան դրել, առջևում նրստեցրած զանազան անձերի հարցեր էին առաջարկում և գրում, չըմոռանալով երբեմն ճաշակել մօտը դրուած սուրճից, հաց ու պանրից, խըմել ահագին ամանից ջուր, թքել մօտը դրուած հողէ ամանի մէջ, ծխել ոտների տակը դրած պապիրոսներից, կատակներ անել փոքր ինչ հեռու տեղ նստած այլ քննիչների հետ, և որովհետև այդ անընդհատ քննութիւնից ձանձրանում էին, այնչափ դիւրագրգիռ էին եղել, որ շատ անհամ իրենք առիթ տալով քննուողին մի անհանգիստ շարժում գործելու, բարկանում և սկսում էին փողոցային խօսքերով հայհոյել։

Քննիչների այդ սենեակը, ուր մտայ ես տեսնելու թէ ինչ կար այնտեղ, ամենակեղտոտ սենեակն էր. մի անկիւնում ընկած էր ցեխոտ աւելը, մի ուրիշ անկիւնում քննիչների արտաքնոց տանելիք կեղտոտ հողի ամանը, մի այլ կողմ սրճամաններ, հացի կտորներ. յատակի վրայ ամեն մեծութեան թղթի կտորներ, պապիրոսի մը-

նացորդներ, կոտրատած աթոռներ, մինդէրներ, բարձեր, հնութիւնից բոլորովին գզգզուած կապոյտ օթոցներ, և այդ բոլորի վրայ աւելացրէք պատուհանների աղօտ լոյսը խափանող փոշիապատ կարմիր կտրուած վարագոյրները, որոնցից մի քանիսը ընկել էին նստած քննիչների մէջքի վրայ և փոշիով ծածկել նրանց վերարկուները։ Քննիչներից միայն մէկը կար որ փոքր ինչ կանոնաւոր էր հագնուած—ծխում էր և մի կողմից ձևակերպական հարցեր էր առաջարկում իր առջևը նստած վախից դողացող մի հայի. իսկ միւսները կուրծքը բաց, մազերը չըսանրուած և դիզացած գլխի վրայ, երեսները կեղտոտ, կօշիկները գետնի վրայ ընկած, գոյնզգոյն գուլպաները ծակ-ծակ և այդ ծակերից երևացող ոտքերի մատները այնպէս կեղտոտ էին, որ մարդ կարծում էր թէ այդ քննիչները սև ոտներ պիտի ունենային։

Ի լրումն ամենայնի, մի վառարանի երկայն խողովակ դիմացի պատից իջնելով՝ պարզւում էր մինչև մէջտեղ և այնտեղից իջնում ուղղակի քննիչների գլխի վրայ. որովհետև գարունը եկել էր, ուստի վառարանը վերցրել էին և որպէսզի յետագայ ձմրան նորից նեղութիւն չըկրէին խողովակները տեղաւորելու, նրանց տեղն ու տեղը թողել էին, առանց մտածելու որ ծովային քամին լուսամուտից երբեմն ներս մտնելով՝ շարժում էր նրանց և թափթփում էր միջի մուրը

կամ գրասեղանների, կամ քննիչների մէջքի և կամ յատակի վրայ։

Սենեակում կային չորս քննիչներ, չորսի առջևն էլ պատկառանքով նստել էին քննւողներ և վախվխելով պատասխանում էին քննիչի ձևակերպական հարցերին, և վերջինս էլ առանց նրանց երեսին նայելու՝ կամ ուտում էր, կամ խըմում էր, կամ ծխում և կամ մի քանի խօսք գըրում իր ծնկան դրուած փայլուն թղթի վրայ ճզճըռացող եղեգնեայ գրչով, որով երբեմն էլ խառնում էր քիթը կամ ականջը…

II

Ու որովհետև նրբանցքի մէջ պատերի տակ բազմած, լուսամուտների մէջ պպզած կամ ման եկող մարդիկ ազատութեամբ երբեմն ելումուտ էին անում այդ սենեակների մէջ, ես էլ համարձակութիւն ստացայ և քննիչների սենեակից դուրս գալուս պէս մտայ նրա կողքի սենեակը, որի վըրայ ոչինչ չէր գրուած, սակայն ներսից ձայներ էին գալիս։

—Դատաստանի սրահն է այս անպատճառ, —մտածեցի ես։

Ի՞նչպէս չէ. ներս մտնելուս պէս ապշած կանգ առայ։ Սենեակի մի կողմում կապուած մի կեղտոտ թախթի վրայ ընկողմանել, նստել, պպզել և պառկել էին ծառաներ, զաբթիէներ, չա-

ւուշներ, մի տեսակ ծիծաղելի զարդերով «լիվռէ»-ներ հագած դատաստանական ծառաներ, և թախտի մի կողմում նստել էր սև սաւանով ծածկուած՝ մի սպիտակ դէմքով թրքուհի, որ խուպոտ ձայնով մի բան էր պատմում, և այդ բոլոր մարդիկ քրքիջներով ծիծաղում էին։

Երբ ինձ տեսան, թրքուհին աշխատեց սաւանի ծայրով դէմքը ծածկել, սակայն ժպտելը չըմոռացաւ. ծառաները առանց տեղներից շարժուելու՝ կողքից ինձ նայեցին, և Օսման չաւուշը, որ ընկողմանել էր մի կեղտոտ բարձի վրայ՝ գոռաց ինձ.

—Այդ դո՞ւ ես, էֆէնդի՛, համեցէք, համեցէք...

Օսման չաւուշը ծանօթ էր ինձ. երբ բէթայիթի բէխի [1]) աղջկան դաս տալու էի գընում, չաւուշն էր միշտ որ բաց էր անում բէխի դուռը և սենեակն էր բերում փոքրիկ դաշնամուրը, որի վրայ բէխի տասներեք տարեկան աղջիկը հինգ օրւայ մէջ անպատճառ կամենում էր «թաքսիմ բայաթի» եղանակը կատարելապէս ածելով՝ զմայլեցնել իր ընկերուհիներին։

—Ներողութիւն,—ասացի ես Օսման չաւուշին,—ես սխալւեցայ. կարծեցի թէ դատարանն եմ մտել։

—Չես էլ սխալւել,—ծիծաղեց չաւուշը,—

[1]) Հաշտարար ատեանի նախագահ։

իսկական դատարանը այստեղ է... արի նստի՛ր և տես թէ Նազանի էբէն [1]) ինչպէս է ճիշտ պատմում այն գործը, որ քննեց կէս ժամ առաջ և վճիռ տուեց։

—Ի՞նչ գործ է այդ, հարցրի ես։

—Ի՞նչ,—գոչեց մի զաբթիէ,—չե՞ս լսել Սադրք էֆէնդիի կնոջ գործի մասին։

—Որ ամբողջ Պօլիսը դղրդեցրեց, ծիծաղեց մի ուրիշը։

—Չեմ լսել,—ասացի ես։

—Դէհ, Նազանի էբէ՛, դիմեց Օսման չաւուշը թրքուհուն,—պատմիր ծայրից. թող էֆէնդին իմանայ. մեր բէխի [2]) աղջկան խօջան [3]) է...

—Մեր Քիւչիւք հանըմի խօջա՞ն է, գոչեց Նազանի էբէն և դէմքը բաց արեց ու ժպտեց. զազրալի դէմք ունէր այդ տաճիկ կինը, թէև մեծ-մեծ սև աչքերը փայլում էին խիտ ներկով սևացրած յօնքերի տակ. այտերը ներկով սպիտակացրած էր. բերանը լայն և առջևի բոլոր ատամները կոտրած ու սև. վերին շրթունքի վրայից երևում էին նոյնիսկ բեխեր, իսկ ծնօտի վրայ մի քանի հատ սև երկայն մազեր. ձեռքերը, որով բռնել էր յետ քաշած սաւանի ծայրերը, երկայն, պուդրայով սպիտակացրած և կմախքի նմանող մատներով ճանկերի էր նմանում... այ-

[1]) Դայեակ, տատմայր։ [2]) Նախագահ, կառավարիչ, տեսուչ, [3]) Վարժապետ։

նուամենայնիւ ունէր երկայն սև մազեր, որոնցից մի հիւսը բաց՝ կխոովին բերել ափռել էր կրծքի վրայ։

—Նա է, ասաց Օսման չաւուշը։

—Բարի եկար, էֆէնդի, խօսեց էբէն «Թէմէնդէ» անելով։

—Շնորհակալ եմ,—ասացի,—դու ո՞րտեղից ես ճանաչում բէխսի աղջկան։

—Բա՛հ, ծիծաղեց ծառաներից մէկը,—քաղաքում կին և աղջի՞կ է մնացել, որ Նազանի էբէն չըճանաչի... որքան ապօրինի ծնունդներ լինում են, Նազանի էբէն գիտէ...

—Այն էլ գիտէ, մէջ մտաւ ուրիշը,—թէ ո՛ր պալատից ո՛ր կինը իր ապօրինի զաւակը ջուրը ձգեց կամ խեղդեց և կամ ուղարկեց ձգելու Սուլթան Բայազիդի մզկիթի առջևը։

—Ուրեմն շա՜տ են լինում այդպիսիները, հարցրի ես։

—Ուզածիդ չափ, ծիծաղեց էբէն,—դեռ երէկ էր որ մի չերքէզի կնոջ տղան Սուլթան Մէճիդի ջամիի մօտ դրի...

—Լա՛ւ, լա՛ւ, գոչեց Օսման չաւուշը,—սա Սադըք էֆէնդիի կնոջ գործը պատմիր մեզ։

—Պատմեմ, ասաց էբէն հանգստութեամբ՝ տեղաւորուելով թախտի վրայ և դառնալով ինձ.—էֆէնդըմ, սրանից հինգ օր առաջ Բէօյուք-դէրէից ետ դառնալով՝ տունս էի մտնում, երբ մի երեսը ծածկած կնիկ, որ կանգնել էր դրանս մօտ,

դէմս փակեց և հարցրեց.—Նազանի էբէն դո՞ւ ես...—Ես եմ,—ասացի,—ի՞նչ ես ուզում, դու ո՞վ ես... և ձեռքս պարզեցի, որ երեսի «բուբէնտը» բարձրացնեմ, բայց նա ձեռքս ետ մղեց և ասաց.—ներս մտնենք, ես կասեմ, թէ ո՞վ եմ։ Ծիծաղեցի, ինձ հետ այդպիսի դէպքեր շատ է պատահում, կամ մի որևիցէ փաշայի կնիկ կըլինէր, և կամ մի պալատի աղախին, որ հրաւիրում կըլինէր ինձ մի ապօրինի զաւակ ջուրը ձգելու, ջամիի դուռը տանելու և կամ խեղդել-աղբանոցը ձգելու...

Սարսռեցի ես, երբէք հաւատալս չէր գալիս, կարծում էի թէ այդ տարօրինակ կինը «Հազար և մէկ գիշերներից» մի հէքիաթ է պատմում ինձ։

—Ներս մտանք,—շարունակեց էբէն ժպտելով,—կինը դէմքը բաց արեց, և ես տեսայ որ Սադըք էֆէնդիի կնոջ աղախինն էր... բոլորին ճանաչում եմ ես.. հը՞, ի՞նչ կայ, հարցրի—խանումդ չըլի՞նի նորից ուզում է այստեղ գալ... —Ո՛չ,—ասաց աղախինը,—խանումը հիւանդ է և քեզ է կանչում։—Հէնց հիմա՞։—Հէնց հիմա։ Ճարն ի՞նչ, էհրամս ծածկեցի, և աղախնի հետ Սադըք էֆէնդիի տունը գնացինք... Խանումը հիւանդ էր. մի սիրուն աղջիկ էր ծնել. տուեց ձեռքս և հրամայեց որ Սուլթան Բայազիդի դուռը տանեմ ձգեմ. ես խղճացի.—ախր խանո՛ւմ,—ասացի,—ի՞նչ կըլինի, թող այս աղջիկը քեզ մօտ

մնայ, մարդդ կըկարծի, թէ իրենն է...—Տա՛ր,—գոռաց խանումը,—ի՞նչ մուռտառ բան է որդի ունենալ. ոտքդ կըկապուի, էլ չես կարող ման գալու գնալ... Ես ի՞նչ գիտեմ, էլ ինչե՞ր չասաց։ Երկու ոսկի էլ փող տուեց, ես էլ փաթաթեցի մանկան հէրամիս մէջ, և մութ էր երբոր անցնում էի Շահզադէ Բաշիի կողմը... տեսնեմ մի գեաւուր մշակ կոտրած փայտ է շալակել, ցած է իջնում Բէզէստանի կողմը։ Այդ միջոցին էլ ետ նայելով՝ տեսայ թէ ինչպէս մէկ փոլիս ետևից գալիս էր...—Հը՛մ,—ծիծաղեցի ես,—կարծում է, թէ մի փաշայի ծպտած կնիկ եմ ու սիրեկանիս տունն եմ գնում. լա՛ւ, այդ հեշտ էր, փոլիսը ինձ մօտենալուն պէս կըճանաչէր և կըթողնէր, բայց մանուկը... Թարսի պէս պզտիկն էլ սկսում էր ճչալ. հէնց պատի տակից անցնելով՝ մանկան գեաւուրի շալակի վրայ դրի ու սկսեցի ետ դառնալ... Փոլիսը դէմս եկաւ, ճանաչեց ինձ, ես ասացի որ դայեակութեան եմ գնում. փոլիսը անցաւ, և լաւ տեսայ թէ ինչպէս շփոթուած գեաւուր մշակին բռնեց ու մանկան հետ մօտիցս անցաւ... Բայց փոլիսը սատանայ էր. տեսել էր թէ ինչպէս ես էի դրել մանուկին գեաւուրի շալակի վրայ, ուստի և ասաց.—Նազանի էբէ, այս տղան ո՞րինն է։—Սադըք էֆէնդիինն է,—ասացի ու ծիծաղելով մէկ ոսկի տուի նրան։—Լաւ,—ասաց փոլիսը, յետոյ գեաւուր մշակին դարձաւ ու գոռաց.

—Անհաւատ շուն, այս տղան ո՞րտեղից ես բերում։

Խեղճ մշակը շփոթուել էր.—վալլա՛հ, ադա՛... կմկմաց... Փոլիսը նրա վզակոթին մի քանի հատ խփեց, յետոյ հրեց նրան, մանկան գիրկը առաւ և գոչեց. — Հա՛յդէ, «փոլիս խդարէսին» [1]) երթանք... Էբէ,—ասաց ինձ մօտենալով.—Սադըք էֆէնդիի հանըմին ասա որ Ալի չաւուշի համար հինգ ոսկի պիտի ուղարկել... և հեռացաւ մըշակի ու մանկան հետ... Մնացածը գիտէք բոլորդ էլ [2])։

—Ո՛չ,—գոռաց Օմար չաւուշը,—էֆէնդին չի իմանում, ասա բոլորը։

—Էլ ի՞նչ ասեմ. գեաւուր մշակին բանտարկեցին, բայց նա էլ լսել էլ փոլիսի վերջին խօսքերը և Սադըք էֆէնդիի անունը... Կադին հրամայեց գեաւուր մշակի դատաստանը իսկոյն կտրել և հինգ տարի բանտ վճռեց նրան ու շուտով բանտարկել տուեց, որ Սադըք էֆէնդիի անունը չըլսուի... ամէնքը գիտեն, սակայն պաշտօնապէս ոչ ոք չի իմանում...

—Այսինքն չի ցանկանում իմանալ, աւելացրի ես։

—Ես ի՞նչ գիտեմ, ծիծաղեց էբէն,—ինձ էլ կանչեցին որ ասեմ թէ ծնածը քանի օրուան

[1]) Ոստիկանութեան տունը։ [2]) Այս դէպքը պատահել է 1884 թուականին։

էր, ես էլ խօ լաւ գիտէի... բայց կաղին էլ գիտէր, փօլիս միւդիրին էլ... ամենքն էլ գիտէին . . .

—Ուրեմն մշակին դատապարտեցի՞ն, հարցրի ես։

—Նոր ներսումը հինգ տարւայ բանտարկութիւն վճռեցին՝ նրան ասելով թէ մշակը մանկան տանում էր ծովը ձգելու։

—Իսկ քեզ ի՞նչ արին։

—Ի՞նձ, ոչինչ, կաղին մի կողմը քաշեց և ասաց, որ ձայնս կտրեմ. ես իմ գործս լաւ գիտեմ որ ամենքին ասեմ, էլ ո՞վ ինձ կըվստահի։

—Բաս ինչո՞ւ մեզ ասացիր, — հարցրեցի ես։

—Դու Քիւչիւք հանըմի խօջան ես, նրա համար. իսկ սրանք ոչ ոքի բան չեն ասիլ, որովհետև իրենց գործին էլ վնաս կըլինի... պաշտօնից կըզրկի կաղին... այսպէս է մեզանում. դատարաններում գաղտնիքը պահել պիտի գիտենալ...

—Իսկ Սադըք էֆէնդիի կի՞նը,—հարցրի ես։

—Երէկ տեսայ, նաւակի մէջ Բէհաթխանէ էր գնում, ուր վրան էր զարկել տւել և նուագածուներ էր բերել՝ մի քանի օր քէֆ անելու համար . . .

III

Ծառաների այդ սենեակից դուրս գալուց յետոյ փոքր ինչ դանդաղութեամբ դիտեցի ամեն կողմ պպզած հայերին ու տաճիկներին և երբ կամենում էի մի ուրիշ սենեակ մտնել, բաց լուսամուտից երևցող բակի միջի մի տեսարան կանգ առնել տւաւ ինձ։ Դէպի մեր կողմն էր գալիս մի բազմութիւն, բաղկացած ամեն տեսակ հագուստներ հագած հայերից, տաճիկներից, յոյներից, պարսիկներից, ալբանացիներից և հրէաներից։ Այդտեղ կարելի էր տեսնել փէսը ծուռ դըրած՝ լրբենի հեգնական ժպիտը դէմքին տաճիկներ, վախից գունաթափ դէմքով գլուխը ծռած հայեր, վիզը բարձր բռնող և վճռական հայեացքով, հպարտութեամբ քայլող յոյներ, կատաղի աչքերը չորս կողմ յածող՝ կոնաձև մեծ փէսերով ալբանացիներ, կարմիր ներկած մատներով և ձեռքերով միմեանց հետ բարձրաձայն վիճող պարսիկներ և վերջապէս գծուծ հագուստներով հրէաներ, որոնք քծնում էին այդ բազմութեան առջևից և ետևից գնացող երկու հետևակ սուարիների շուրջը։

Իսկոյն հասկացայ որ «փօլիս իդարէսիից»

դատարան էին բերում բոլոր հրաւիրուածները, լինէին նրանք վկաներ, ամենաչնչին պատճառներով դատի հրաւիրուածներ և կամ նոյնիսկ հետաքրքրութեան համար փօլիս իդարէսին մտնող անձեր։ Բոլորին առաջնորդում էր մի զինուոր, որը ներս մտաւ, յետոյ դրան մօտ կանգնելով՝ համրեց ետևից մտնողներին և առաջնորդեց նրանց դէպի մի խարխուլ խրճիթ, որ երևում էր բակի աջ կողքում իր վանդակապատ քարուքանդ և հնութիւնից սևացած լուսամուտով և հնադարեան կաղնեայ դռներով։

Երբ հասան այդ խրճիթի դրան մօտ, կանգ առին, և զինուորը ձեռքի բանալիքով դուռը բաց արեց. ես հետաքրքրութեամբ մօտ գնացի, և որովհետև այդ բազմութեան մէջ երևում էին նաև երկու եւրոպական գլխարկներով, շատ մաքուր հագնուած անձեր, կամաց մօտեցայ նրանց և հարցրի տաճկերէն.

—Դուք հա՞յ էք։

—Հայ ենք...

—Դուք ի՞նչ գործ ունիք այստեղ։

—Մենք...

Բայց չկարողացան վերջացնել, որովհետև զինուորը կոպտութեամբ բռնեց նրանց թևից և գոչեց.

—Մտէք ներս, խօսելու ժամանակ չէ։

Յետոյ երբ նրանց ներս կոխեց, նայեց ինձ և ասաց.

—Դո՞ւ ինչու չես ներս մտնում. պէ՞տք է որ քեզ էլ հրեմ։

Ե՞ս,—գոչեցի զարմացած,—ես սրանց հետ չէի։

—Այդ ո՞րին ես խաբում. հայդէ, ներս մտիր...

—Բայց...

—Զօք սէօլէմէ...—որոտաց զինուորը, յետոյ բռնեց թևիցս և այնպէս հրեց ինձ ներս որ գընացի ընկայ մի հրէայի վրայ, որը մի վայ արձակեց... Դուռը ետևիցս փակւեց, ես գտնւում էի այդ բազմութեան հետ մի մութ, կեղտոտ, աղբով լիքը սենեակում։ Փոքր ինչ հեռու կանգնած էին երկու հայերը, իսկ միւսները ծխում էին։ Կատաղեցի, ուշքի եկայ և վազեցի դէպի դուռը. բայց դուռն արդէն փակւած էր և զինուորը դրսից կողպէք էր դնում նրա վրայ։

—Բա՛յց։ գոչեցի ես,—ես սրանց հետ չէի։

—Զա՛յնդ, գոռաց դրսից զինուորը, — ինձ Մահմէդ աղա կասեն, քանի՜ քեզ պէս յոպոյներին եմ կոխել այդ «կափու ալթիսին...» [1])

—Թանդ կընատի քեզ այդ, ասացի,—ըէիսին կասեմ, հոգիդ կըհանէ։

—Օհօ,—քրքջաց զինուորը,—ըէիսին էլ ես ճանաչում։

---

[1]) Այդ տեսակ «դռան ետևի» բանտեր տաճկական ամեն դատարաններում կան և կոչւում են «դռան ետև»։

—Բա՛ց, ասում եմ,—գոչեցի ես,—ես նրա բարեկամն եմ...

—Իրա՛ւ... երբւանի՞ց ես բարեկամ... էֆէնդը՛մ, Մահմէդ աղան յիմար չէ, գիտէ որ բէխսը բարեկամի ինչ լինելը չի իմանում... ափսոս առաջ չիմացայ որ դու բէխսի բարեկամն ես, թէ չէ կըտանէի ուրիշ բանտ...

Ստիպւեցայ լռել, թէև բարկութիւնից դողում էի։

—Ոսկոր ձգիր առջևը,—այդ միջոցին փըսփսաց մէկը ականջիս։

Ետ նայեցի, հայերից մէկն էր։

—Ահա՛,—ասաց նա, — հինգ-հինգ ղուրուշ մենք կըտանք, հինգն էլ դու տուր և թող երեքիս էլ թողնէ դուրսը կանգնենք...

—Բայց դո՞ւք ինչ գործ ունէիք սրանց մէջ,—հարցրի ես նրան։

—Մենք վկայ ենք կանչւած մի դատի համար։

—Վկա՞յ... և սրանք վկաներին էլ են բանտարկում։

—Իհարկէ,—ծիծաղեց հայը,—այ պատմեմ քեզ սրանց օրէ՞նքը թէ սովորութիւնը։ Բերում են մի թուղթ, ստորագրել տալիս և քեզ էլ քաշ տալիս փօլիս իդարէսին։ Այնտեղ կօշիկներդ հանում ես բակում կանգնած մի զինւորի մօտ և կօշիկներդ պահելու համար էլ 1 ղուրուշ փող ես տալիս (և եթէ ետ դառնալու ժամանակ կօ-

շիկներդ թռած լինին, չըզարմանաս). բոբիկ ոտներով քեզ տանում են փօլիս միւդիրի մօտ մի մեծ սենեակ, ուր պատերի տակ մի-մի արկղիկներ և փռւած անկողինների մօտ պպզել են գրագիրներ և ճզճզացնում են, իսկ ինքը միւդիրը նստել է մի խարխուլ սնդուկի վրայ—ամենաբարձր տեղը, ֆէսը ծոծրակի վրայ դրել, քեզ է նայում դաժանութեամբ, յետոյ զինւորին է դառնում և հարցնում թէ ո՞վ էի ես... Զինւորը ասում է, իսկ միւդիրը այդ միջոցին քեզ չափում է ոտքից մինչև գլուխդ...

—Երևի առաջին անգամն էր որ մտաք այստեղ, միջահատեցի ես նրան։

—Այո՛, առաջին անգամն էր... Նրա համար լաւ էլ նկատեցի ամեն ինչ։

—Շարունակեցէք, շատ հետաքրքիր էք պատմում։

—Լա՛ւ... Երբ զինւորը բացատրում է քո ով լինելդ, միւդիրը գըչի կոթով ականջն է խառնում և յանկարծ դառնալով քեզ՝ գոչում է.

— Ի՞նչպէս համարձակւեցիր կօշիկներով ներս մտնել։

—Բայց...—թոթովում ես,—ախր կրկնակօշիկներս հանել եմ...

—Լո՛ւր,—որոտում է քեզ վրայ նա,—ինչպէս ես համարձակւում պատասխանել...

—Ախր...—ասում ես,—յատակը փռւած էլ չէ...

—Անհաւատ, խնդրը, Թէրէս,—որոտում է նա,—այդ անհաւատին կ ա փ ո ւ ա լ թ ի ս ի ն ձըգիր, մինչև կանչենք...

Աշխատում ես պատասխանել, բայց միւդիրը աչքերը ոլորում և կոչում է.

—Հայդէ, ս ի ք տ ի ր [1]), ասքեար, դրա վզակոթին...

Եւ զինւորը մի հարուած է տալիս վզակոթին, յետոյ քեզ դուրս հրում և հրելով տանում մինչ կօշիկների տեղը, և երբ այնտեղ կօշիկներդ հանում ես, հրելով քեզ տանում է մի փոքրիկ խրճիթ, դուռը բաց անում, կոխում է ներս և փակում այնտեղ... այժմ էլ գտնւում ես մի ցած առաստաղով՝ երկու մարդու կանգնելու չափ մի տեղ, որը մի կոտրտած ապակիներով ցած լուսամուտից է միայն լուսաւորւում. այդ սենեակում բացի մաքրութիւնից ամեն ինչ կայ... դեռ այս մեր կանգնած տեղը ողորմութիւն է նրա առջևում... յատակը հող և վրան դէզ-դէզ սենեակի աւլած աղբերը և աւելցուկները, ամեն կողմ թացութիւն և նոյնիսկ մարդկային աղբեր... ինչ արած, այնտեղ բանտարկւածներին չեն էլ թողնում բնական պիտոյքների համար դուրս գալու, ստիպւած ես կանգնած տեղդ լցնել և թրջել... Նստարան իսկ չըկայ... հոտը անտանելի է... մի անկիւնում կծկւել նստել է մի

[1]) Կորիր։

ինչ-որ սևադէմ դէվրիշ, որին ընկերացրին քեզ։ Դէվրիշը իր փայլուն աչքերով այդ մութ անկիւնից քեզ է նայում, յետոյ վեր է կենում և միգով նկարներ է գծում յատակի վրայ, յետոյ կրծում է իր ձեռքին բռնած սեխի կճեպը, մօտենում լուսամուտին, դարձնում է իր հնութիւնից կեղտոտ շապկի օձիքը, բաց է անում կուրծքը և սկսում է միջատներ կոտել... Զզւում ես, աշխատում ես մի մաքուր անկիւն հեռանալ, բայց ոտքերդ ընկնում են մարդկային աղբերի կոյտերի մէջ... և բոբիկ ես... ձեռք քաշիր գուլպաներիցդ... Յոգնում ես, ուզում ես նստել՝ չես կարող տեղ—չըկայ... կռթնում ես պատին... պատը թաց, կեղտոտ, կարծես աղբով ծեփած լինի... և այդ բոլորը կրում ես երբեմն ժամերով, մինչև որ միւդիր էֆէնդին յիշէ քեզ և հրամայէ ներս տանել սենեակը...։ Գալիս է զինւորը, բաց է անում դուռը, քեզ դուրս է քաշում և ներս մտցնում միւդիրի մօտ... և ահա քո ոտներդ գարշելի հետքեր են ձգում անցածդ ճանապարհի վրայ... Միւդիրը չէ նկատում, սակայն գրագիրները նկատում են, քիթերնին են պահում, հայհոյում են... միւդիրը կատաղում է, ինքը իր ձեռքով մի քանի հատ հասցնում է վզակոթիդ, եւրոպական գլխարկովդ սրբում ոտներդ, յետոյ քիթը բռնելով՝ մի քանի հարցեր է առաջարկում և գոռում [1]).

[1]) Անձամբ ստուգել ցանկացողները թող բարեհա-

—Հայդէ, սիքտիր, մուրտա՛ր...

Եւ զինուորը քեզ տանում խառնում է բակի մի անկիւնում մի ուրիշ աւելի կեղտոտ, բայց մեծ սենեակում միմեանց վրայ լցուած բազմութեան մէջ..: Այս այսպէս է... Յետոյ քեզ բերում են այստեղ... Նայիր ինքդ, հաւանո՞ւմ ես այս նախագաւիթն, ուր սպասում են բոլոր վըկաները, հրաւիրուածները և շատ անգամ հանդիսատեսները՝ դատարան մտնելուց առաջ...

Ես չորս կողմս նայեցի։

Մի բաւական մեծ խրճիթ էր այդ և, ինչպէս ասացի, հնադարեան կաղնեայ դռնով և վանդակապատ անփեղկ միակ լուսամուտով։ Պատերը և առաստաղը այնպէս սև էին որ դժուարանում էին որոշել թէ ինչո՞վ է ծեփուած. խոնաւութիւնից ցեխ էր կազմուել սենեակի վերին կողմը, իսկ մի անկիւնում դիզուած էր զանազան իրերից կազմուած աղբի կոյտը, որի վրայ կռացած՝ քրքրում էին երկու հրէաներ, հետաքրքրութեամբ դիտում էին կտրուած թղթերը, ժողովում էին ամեն երկաթի կտոր, շորի մնացորդ և նոյնիսկ կոտրած տաճկական գրիչներ ու գրպաններն էին կոխում։ Յոյները տաքութեամբ վիճում էին մի անկիւնում, ալբանացիք կատաղի աչքերով միւսներին էին նայում, իսկ

ճեն մի գործ ունենալ տաճկաց դատաստանատներում և այն ժամանակ կըտեսնեն որ մեր նկարագրածը դեռ ևս շատ մեղմ է։

պարսիկները պպզել պատի տակ՝ գետնի ցեխից բուրգեր, պատեր և տներ էին շինում և ցեխոտ ձեռքերնին հագուստի փէշերով սրբում. իսկ մի արաբացի աշխատում էր օդի միջից անցնող ճանճերը բռնել և երբ յաջողւում էր, կտրում էր խեղճ կենդանիների թևերը և ապա դնելով պատի վրայ՝ ժպիտը երեսին դիտում էր նրանց օրօրուելով քայլելը...

Օդը այնպէս ապականուել էր այդ բազմութեան արտաշնչութիւնից, որ ինքզինքս ձգեցի լուսամուտի մօտ, ուր և ինձ միացան խօսակիցներս։

—Իսկ այստեղից մեզ ո՞ւր կըտանեն, հարցրի ես նրանց։

—Չըգիտեմ, ասաց մէկը, — կարծում եմ որ դատաստանի սրահը կըմտցնեն։

Այդ միջոցին զինուորը մօտեցաւ լուսամուտին և իմ անունս տուեց։

Երբ դուռը բացուեց և ես դուրս գնացի, մի ուրիշ զինուոր բռնեց թևիցս և գոչեց.

—Հայդէ, վեր գնանք, քեզ ուզում են։

Սանդուխների մօտ կրկնակօշիկներս հանեցի և պահ տւի կօկապահին՝ վարձը կանխիկ վճարելով, իսկ սրահի դրան առջև հասնելուս պէս՝ զինուորը կանգնեցրեց ինձ և պահանջեց որ կօշիկներս էլ հանեմ...

—Գուլպայո՞վ մնամ։

—Իհարկէ, այդպէս չէ կարելի ներս մտնել։

Այստեղ ևս մի կօշկապահ կար, կօշիկներս էլ նրան պահ տւի. յետոյ ինձ մտցրին մի փոքրիկ խուց, անունս գրեցին, և երբ ես շւարած կանգնել էի՝ մի գրագիր բռնեց թևիցս, բաց արեց մի դուռ և ինձ ներս մղեց այնտեղ։

Ես գտնւում էի դատաստանի սրահում։

IV

Քառակուսի մեծ սենեակ էր՝ մէջտեղից երկուսի բաժանւած փայտէ ցանկով. մի կողմում պատաձև սեղանի շուրջը նստել էին վեց անձինք. գլխի կողմը նստողը կօշտ գծագրութեամբ, սպիտակ փաթթոցով, երկայն վերարկուով նախագահն էր, որը մի ձեռքը դրել էր իր աջ կողմում դրւած օրինաց գրքերի վրայ, ձախովը դարձնում էր համրիչի հատերը ու շրթունքները շարժում լռութեամբ—աղօթում էր նստած տեղը։ Նրա աջ կողքին բազկաթոռի վրայ նստել էր արբեցողի աչքերով և մուշտակ հագած մի նիհար ու գունաթափ էֆէնդի, մի ծունկը բարձրացրել, նրա վրայ էլ դրել էր թուղթը և գրում, իսկ միւսները մի-մի թղթի կտոր ձեռքերնին կամ կարդում էին և կամ բարձրաձայն յօրանջում ու բերաններն այնչափ մեծ բանում որ խռչափողի ծակերը տեսնւում էին։ Այդ սրահումն ևս պատից դուրս պարզւած կար մի վառարանի խողովակ, որը եկել կռանում էր դէպի նախագա-

հի գլուխը։ Պատերի վրայ ամեն կողմից կախւած կային տոպրակներով թղթեր, իսկ յատակի վրայ թափւած թղթի կտորները եթէ հաւաքէին՝ մի կողով կլցնէր, որի կէսը կլինէր պանրի կտորներ պապիրոսի մնացորդներ, թիւրքաց եղեգնեայ գրչի կտրւածքներ և այս-այն կողմը լուսամուտից փչող քամուց թռչկոտող՝ եղեգնի միջից դուրս եկած օձանման միջուկներ... մի անկիւնում ընկած էր մի ոտը կտրած հնամաշ բազկաթոռ, իսկ միւս անկիւնում ցցւած էր եղեգնեայ գրիչների 5—6 հատ տրցակներ։.

Երկրորդ մասը, ուր տարան մեզ և մեր ետևից փակեցին ցանկի վանդակը, սենեակի ամբարն էր. այո, ամբարն էր, որովհետև այստեղ սկսած կտրտած փայտերից, աւելից, վառարաններից, չայնիկներից մինչև հնամաշ գորգեր, կարպետներ, թղթեր, արձանի կտորներ՝ դարսւած և խառնիխուռն ձգւած էին ամեն կողմ, այնպէս որ մեզ մնում էր կամ կանգնած մնալ կպած ցանկին և կամ նստել այդ կոյտերի վրայ։

Ու ես նստեցի մի գորգի վրայ ու այնտեղից սկսեցի դիտել դատաստանի երկճիւղեան այդ սրահը և վեց դատաւորներին։

Ցանկի դրան, սեղանի մօտ և սենեակի դռանը կանգնել սպասում էին գծուծ հագուստներով և տաբօրիկ գինւորներ։

Ծիծաղելի էր, ճշմարիտ, տեսնել այդ թեք

ընկած, դերձակի նման չոքած, յօրանջող, քնելու պատրաստ դատաւորներին, տոպրակազարդ պատերը, դարևոր կեղտից սևացած առաստաղը, աղբով ծածկուած յատակը, անկիւններում դիզուած տրցակներն ու կոտրած աթոռները և ի լրումն ամենայնի մեզ՝ ցանկի ետևից նայող յանցաւորներիս, մե՛զ, որ տեղ էինք բռնել փայտերի, գործերի և զանազան իրեղէնների կոյտերի ծայրին ու այնտեղից սպասում էինք որ մեզ հերթով սեղանի մօտ կանչեն…

Այդ միջոցին յանկարծ դատարանի լուսամուտից երևցող Այա-Սօֆիայի մինարէից լսուեցաւ մի զիլ ձայն, որ գոռում էր.

—Ալլահ աքպէր…

Կէսօրուայ ազանն էր այդ, մահմէդականաց երկրորդ աղօթքի ժամանակը։

Սրահի դատաւորները իսկոյն դադարեցին յօրանջելուց, նախագահը ծանրութեամբ վեր կացաւ աթոռի վրայից, քայլեց դէպի դուռը և անցաւ զինուորի բաց արած դռնից դէպի մի ուրիշ փոքրիկ սենեակ, որի դուռը չըկողպեց զինուորը, և մենք տեսանք թէ նախագահը ինչ արեց այնտեղ։

Նա ձեռքը երեսին քսեց ծանրութեամբ, յօրանջեց, յետոյ դռան մօտ պպզեց, այնտեղ դըրուած ջրով լուաց երեսը, երկու մատներով թրջեց սափրած գագաթը, թևերը վեր քշտելով դէպի արմունկը՝ թաթախեց ջրի մէջ, յետոյ ոտների

գուլպաները հանեց, ջուր քսեց բթամատի և ցուցամատի միջանցքին և այդ բոլորը անելուց յետոյ նա չոքեց սենեակի մէջտեղում փռուած մի կարպետի վրայ և սկսեց աղօթել։

Սրահի միջի անդամներն էլ դուրս գնացին և սրահը դատարկուեց. զինուորը վրայ քաշեց ցանկի դուռը, կողպէք դրեց վրան, փակեց կադիի սենեակի դուռը, յետոյ սրահից դուրս եկաւ, նըրա դուռն էլ կողպեց և մենք մնացինք բանտարկուած դատաստանի սրահում։

Պիտի ասեմ որ ցանկի ետևում կային աւելի քան քսան անձինք և նոյնիսկ երկու կանայք, որոնք սաւանի մէջ փաթաթուել՝ կծկուել էին մի անկիւնում։

Բոլորը սկսեցին խօսակցել, յետոյ մի-մի նստելու տեղ գտան, իսկ ես ոտներս նախ պարզեցի, յետոյ մէջքս էլ, ապա թևս գլխիս տակ դրի… կամաց-կամաց աչքերիս կոպերը փակուեցան և քնեցի…

Չըգիտեմ, որքան ժամանակ էր որ քնել էի, երբ մի խռպոտ ձայն դիպաւ ականջիս. ես վեր թռայ, շարժեցի թմրած թևս և ուզեցի տեսնել թէ ո՞վ էր այդ խոզի ձայն հանողը։

Պարոն նախագահն էր, որովհետև դատաւորները արդէն եկել, իրանց տեղն էին բռնել, դատաւորութիւնը արդէն սկսել էր, և նախագահը փաթոթը ծռած, դէմքը կատաղի, հայհոյանքի լուտանք էր որ թափում էր սեղանի մօտ կանգ-

նած երկու անձերից մէկի գլխին.

—Գեաւո՜ւր, խընզը, Թէրէս…—գոռում էր նա,—ինչպէս ես համարձակւում քո արած յանցանքը այս միւսիւլմանի, «հախկ դինը» պաշտող մարդու վրայ բարդել և նրան դատի էլ ենթարկել…

—Վալլա՜հ, աղա…—ասում էր խեղճը գլուխը քորելով,—ախր նա գլուխս պատռեց, ահա տեսէք… և նա ցոյց էր տալիս ճակատի վրայ բացուած լայն վէրքը, որի վրայ արիւնը թանձրացած մի կարմիր թաղանթ էր կապել։

Դէպքը այս էր, ինչպէս որ յետոյ հասկացայ.

Բալըք բազարում մի Թիւրք մտնում է մի հայ կերակուր եփողի խանութ և «չքէմբէ շոռվասի» 1) է ուզում 40 փառայի. հայը լցնում է մի աման և դնում է նրա առջև, սակայն միտքը ուրիշ տեղ եղած լինելով՝ մոռանում է հաց բըրդել մէջը. Թիւրքը բարկանում է և ամանը կերակրով շպրտում է հայի գլխին. բարեբախտաբար կերակուրը ողողում է միայն հայի հագուստը, իսկ ամանը մի մեծ վէրք է բաց անում ճակատի վրայ… Թիւրքը այդ քաջագործութիւնը անելուց յետոյ ուզում է փախչել, սակայն հայը մի ոստիկան է կանչում և Թիւրքին բռնել տալիս։ Ոստիկանական վարչութիւնը բարւոք է հա-

1) Փորի կաշիից շինած մի սուպ։

մարում հային էլ Թիւրքի հետ բանտարկել մինչև դատի օրը, և ահա նրանց բանտարկւելուց մի ամիս յետոյ գործը սկսւում էր… Այդ դատն էր, որին մենք ներկայ լինելու պատիւը ունեցանք։

Թիւրքը յայտնել էր թէ հայը իրեն ապտակել էր, ուստի և ինքն էլ կերակրի ամանը շըպրտել էր նրա գլխին, որովհետև բարկութիւնից իրեն չէր կարողացել զսպել. բացի դրանից սեպուհ պարտաւորութիւն էր համարում յայտնել որ «անիծալ գեաւուրը վէրքը ստանալուն պէս համարձակւել էր մոռանալ իրեն և հայհոյել մարգարէին ու «հախկ դինը»…

Այս վերջին յայտնութիւնը սաստիկ զայրացըրել էր դատաւորներին և նախագահը պարզ էր համարել դատարկել հայի գլխին իր հայհոյանաց տոպրակը…

—Լո՛ր,—որոտաց հայի վրայ նախագահը,—գիտե՞ս ինչ մեծ յանցանք ես գործել – «քիւրէգի» 1) արժանի յանցանք… Ես զարմանում եմ, Թէ մեծն Աստուածը, փառաւորեալ մարգարէն ինչպէս իսկոյն չի արմատահան արել այդ պիղծ լեզուդ… Բայց Աստուած անիմանալի է և նրա մարգարէն իմաստուն, նա թողնում է իր չերմ հաւատացեալներին՝ պատժելու իրենց հայհոյողին… Ինչ էք ասում, տեառք դատաւո՛րք, – դարձաւ նա անդամներին,—մի՞թէ արժանի չէ այս

1) Թիապարտութիւն։

գեաւուրը յաւիտենական բանտարկութեան...

Խեղճ հայը աշնան տերևի պէս գունաթափ՝ դողում էր. նա երերեց և կմկմաց.

—Ախր սուտ է ասում, ես չեմ հայհոյել, վկայ ունիմ...

- Ո՞վ են վկաներդ,—հարցրեց դատաւորներից մէկը։

—Երկու վկայ ունիմ։

—Երկու չի կարելի,—գոռաց Նախագահը,—երեք պիտի լինին և նրանցից երկուսը միւսիւլման... ունի՞ս այդպիսի վկաներ...

Ո՛չ, բոլորն էլ հայ են... խանութումս տաճիկ չըկար այն ժամանակ...

Դատաւորներից մէկը ժպտեց. ես էլ ժըպտեցի, որովհետև միամիտ հայը չըգիտէր, որ տաճիկ վկայ գտնելու համար պիտի նախ ոչընչացնել տաճիկ դատաւորները, որոնք ամեն ջանք գործ են դնում, որ տաճիկ վկաները ատեան չըհանուեն, երբ վկայութիւնը յօգուտ մի հայի է։

Խեղճ հայի բանը բուրդ էր, որովհետև օր չէր լինում որ տաճիկները մեղապարտութիւնից ազատւելու համար հայհոյանաց յանցանք չըբարդէին հայերի վրայ. և միշտ այդ կերպով յաջողում են թէ դատապարտութիւնից ազատւել և թէ հային միշտ յանցաւոր հանել ու բանտարկութեան և տուգանքների ենթարկել...

Այս այսպէս է. հետաքրքրւողը կարող է ըստուգել։

Քիչ յետոյ հային վեց ամսւայ բանտարկու-
թիւն վճռեցին. խղճում էին...

V

—Գնա՛,—ասացին ինձ, երբ վկայութիւնս
տւի. և ես դուրս գնացի սրահից, կօշիկներս հա-
գայ ու ցած իջայ սանդուխներից։
Երկայն նրբանցքից անցնում էի, երբ այն-
տեղի լռութիւնը, դռներից մէկի առջև ժողոված
բազմութիւնը ինձ դրդեց մօտենալու։
Այդ դրան վրայ գրած էր «Եղերնադատ
Նախնական ատեան»։
Դրան վարագոյրը ետ էր քաշւած և մի հոծ
բազմութիւն՝ միմեանց վրայ խռնւած դիտում էր
ներս։ Կարողացայ թևերի տակով ներս մտնել և
այս անգամ ես գտնւում էի փոքր ինչ աւելի
մեծ, մաքուր, մեծ լուսամուտներով մի սրահի
մէջ։ Կարմիր վարագոյրները ծածկւած լինելով՝
մի խորհրդաւոր լոյսի մէջ տեսայ բարձր ամբիո-
նի վրայ եռանկիւնի կանաչ սեղանը, որի գլխին
նստել էր նորից մի սպիտակ փաթթոցաւոր «կա-
դի» և նրան շրջապատել էին հինգ-վեց շատ կո-
կիկ հագնւած պաշտօնեաներ։
Կանոնաւոր մի սրահ էր, ատեանի առջևում
մի վանդակ կապած, սրահի մէջ նստարաններ,
դրան ճակատին սուլթանի «Թուղրան», ատեանի
երկու կողքին փաստաբանների համար բարձր սե-

զաններ և վերը՝ ամբիոնի մի անկիւնում զանազան դեսպանների համար աթոռներ, որոնց մեկի վրայ նստել էր պարսկական գլխարկով պարսից դեսպանի հայ թարգմանը։

Խոր լռութիւն էր տիրում սրահում և «Քաթիբ-էֆէնդին» [1]) ոտքի կանգնած՝ կարդում էր ձեռքին բռնած թուղթը, իսկ դատաւորները կամ խազխզում էին իրենց առջևը դրած թղթերի վրայ և կամ ժողովուրդն էին դիտում։

Ես տեղ բռնեցի մի նստարանի վրայ և դիտում եմ։

Տասնհինգ րոպէ տևեց այդ «լահիհէն» [2]), որից յետոյ նախագահը գոչեց.

—Հիւսէյն Խալիլ-օղլի և Ահմէդ Նազիմ էֆէնդին թող առաջ գան։

Ատեանը մտան մի հաստափոր պերճ հագնըւած տաճիկ և նրա ետևից մի կեղտոտ դէմքով, կտրտած հագուստով պարսիկ, որի մի թևը վըզից անց կացրած թաշկինակի մէջ էր դրած. այդ պարսիկը նմանում էր մի մշակի, իսկ թիւրքը մի հարուստ բէյի։

Եւ այդպէս էլ էր. թիւրքը Հիսար-Բուրնիի կաշիի գործարանատէրն էր, իսկ պարսիկը նրա ամենահասարակ գործաւորներից մեկը։

Բոլորիս հետաքրքրում էր այն, թէ ինչ դատ ունէր այդ ցնցոտ պարսիկը նշանաւոր գործարանատէր Ահմէդ Նազիմ էֆէնդիի դէմ։

[1]) Գրագիր։ [2]) Տեղեկագիր։

Բանից դուրս եկաւ, որ պարսիկի թևը մի մեքենայի տակ էր ընկել և մինչև արմունկը ջախջախուել և այդ այսպէս էր եղել։

Ամսի 2-ին Ահմէդ Նազիմ էֆէնդին իր գործարանին այցելութիւն էր գնացել. մօտենալով շոգեշարժ մեքենային, տեսել էր, որ ռեգուլատորը լաւ չէր բանում (այնչափ տեսել էր, որ փոքր ինչ հասկանում էր)։ Հրամայում է իր մօտ կանչել գերմանացի մեքենագործին, սակայն մինչև նրա գալը նա դառնում է մեքենայի մօտից այդ ժամանակ անցնող պարսիկ մշակին և հրամայում է որ մեքենան իւղէ։ Պարսիկը տեսած լինելով՝ թէ ինչպէս են իւղում, առնում է եղամանը և մօտենում է մեծ անիւին...

—Այդտեղ չէ, յիմար,—գոչում է էֆէնդին և հրում է պարսիկին դէպի ռեգուլատորը, բայց պարսիկը այդ բուռն հրելուց քիչ է մնում ընկնի, ուստի կռթնում է մեծ անիւի առանցքին. առանցքը վայրկենապէս յետ է մղում նրա թևը և ձգում դէպի մեքենայի թևը, որը և դառնալու ժամանակ այնպէս խփում է նրա թևին, որ մինչև արմունկը ջախջախւում է։

Պարսիկին տանում են հիւանդանոց, ուր նրա թևը կազդուրւում է, բայց մնում է հաշմանդամ։ Հիւանդանոցից դուրս գալուց յետոյ նա դիմում է էֆէնդիին և խնդրում է նրան գոնէ ճանապարհածախս տալ Պարսկաստան դառնալու, բայց (պարսիկի ասելովը) էֆէնդին հրամայում

է, որ նրան վռնդեն. ծառաները գլորում են նրան Եալը-ի պատշգամից [1]) դէպի ծովը, ուր նա հազիւ կարողանում է խեղդուելուց ազատուել՝ կառչելով ափումը ցցուած նաւակը կապելու ցցին։

—Եւ,—աւելացրեց պարսիկը, — պատշգամում էֆէնդին ու իր խանումը կանգնել՝ քրքիջներով ծիծաղում էին ինձ վրայ...

Պատմեց պարսիկը և լռեց։

—Վկաներ ունի՞ս,—հարցրեց նախագահը պարսիկին։

—Այո՛, ունիմ...

—Շա՛տ լաւ, գնա՛ դուրս մինչև կանչեմ։

Պարսիկին դուրս արին, նախագահը ծառային հրամայեց ներս բերել վկաներից մէկին։ Ներս եկաւ մի ուրիշ պարսիկ, որ նոյն կեղտոտ ու կտրտուած հագուստն ունէր, սակայն դեռ ևս կոտրած թև չունէր, թէև նոյն գործարանի գործաւորներիցն էր։ Դատաւորը հարցրեց նրա անունը, արհեստը, հայրենիքը, տարիքը և մի րոպէ լռելուց յետոյ յանկարծ հարցրեց.

—Դու ո՞ր դէպքի վկան ես՝ թև կոտրելո՞ւ թէ Եալըի տեսարանի...

—Եալըի տեսարանի. ահա այսպէս եղաւ. մենք երկուսս...

—Լռի՛ր,—գոռաց նրա վրայ կադին,—դեռ

[1]) Ոսֆորի վրայ դէպի ծովը պարզուած պատշգամներով շէնքեր են ամառուայ բնակութիւնների համար։

ես քեզ չըհարցրի դրա մասին. երբ հարցնեմ, այն ժամանակ պատասխանի՛ր։

Պարսիկը լռեց և գլուխը խոնարհեցրեց։

—Ի՞նչպէս եղաւ,—հարցրեց կադին փոքր ինչ լռութիւնից յետոյ։

Լսողների ծիծաղը շարժեց կադիի այդ ընթացքը. պարսիկն իսկ ապշութեամբ նայեց և կմկմաց.

—Աղա, հարցնո՞ւմ էք։

—Ի հարկէ, յիմար, չե՞ս լսում, որ հարցնում եմ։

—Կարո՞ղ եմ պատասխանել։—Բարձրացաւ ընդհանուր ծիծաղ, իսկ պարսիկը ապուշ աչքերով բոլորին էր նայում։

—Պատասխանի՛ր,—գոռաց դատաւորը։

—Այսպէս եղաւ. երբ Հիւսէյնին հիւանդանոցից բաց թողին և մենք նրա թևը մի թաշկինակով կապեցինք վզին, ելանք գնացինք Ահմէդ էֆէնդիի տունը, որ փող ուզենք Հիւսէյնի համար, երթայ իրեն. այնտեղ հայր ունի, մայր ունի, երկու էլ տղայ ունի, իմ հարևանս է, ես տեսել եմ և ճանաչում էի նրան...

—Դէպքը պատմի՛ր,—միջամտեց նրան դատաւորը։

—Պատմում եմ, էֆէնդի...

—Որ գնացիք էֆէնդիի մօտ, ի՞նչ եղաւ։

—Էֆէնդին գոռաց ու մեզ վռնդեց. ես փա-

խայ մտայ նաւակը, իսկ Հիւսէյնին ծառաները շուռ տւին ծովի մէջ, հազիւ...

—Լաւ,—միջամտեց նորէն կադին․ — Երբ էր այդ։

—Մի երկու շաբաթ առաջ։

Կադին գրագրին դարձաւ և հրամայեց գրել։

—Երեկո՞յ էր թէ առաւօտ։

—Երեկոյ էր։

—Ժամը քանիսի՞ն։

—10-ը կըլինէր․ ո՞վ գիտէ, կարելի է 11-ն էլ։

—Մո՞ւթն էր։

—Երբ տուն էի վերադառնում՝ մթնում էր։

Տիրեց փոքր ինչ լռութիւն, որոյ ընթացքում կադին ժպտելով միքանի խօսք փսփսաց իր կողքի դատաւորի ականջին և ապա նոյն ժըպիտով Ահմէդ Նազիմ էֆէնդիին—նստարանի վըրայ փառաւորապէս բազմած և հեգնօրէն ժըպտող գործարանապետին նայեց և դառնալով նորէն պարսիկին՝ հարցրեց․

—Եալըի պատշգամը շա՞տ բարձր էր ջրից։

—Շատ բարձր չէր։

—Քանի՞ արշին կար։

Պարսիկը փոքր ինչ մտածեց և յետոյ ասաց․

—Երկու-երեք արշին կար։

—Նաւակը ձե՞րն էր։

—Այո, բայց նաւակը հեռու էր կապած և նաւավարը պիտի մօտ բերէր, երբ կանչէինք։

—Ինչո՞ւ ցամաքային դռնով չըգնացիք։

—Ուզեցինք ծովի կողմով գնալ։

—Էֆէնդիի կինը ի՞նչպէս էր․ բարձրահասա՞կ էր։

—Ո՛չ շատ,—ասաց պարսիկը,—բայց գեղեցիկ էր և...

—Լռի՛ր,—գոռաց նրա վրայ կադին,—այդ մասին երբ չեմ հարցնում, մի՛ պատասխանիր... Գնա՛, լաւ...

Մի ժամից յետոյ վճիռ տրւեց այսպէս․

«Նկատելով՝ որ վկայ Մուրատը ասում է, թէ երեկոյ էր և ինքը Խալիլը քննութեան ժամանակ ասել էր կէսօրից յետոյ․

«Նկատելով՝ որ վկան ասում է, թէ ժամը 10-ից 11-ը կըլինէր, իսկ ինքը Խալիլը 9-ից 10-ը․

«Նկատելով՝ որ եալըի բարձրութեան մասին վկան երկու-երեք, Խալիլը 4 արշին էր ասել և կառավարութեան կողմից չափւած լինելով 1½ արշին է երևացել․

«Նկատելով՝ որ Ահմէդ Նազիմ էֆէնդիի կնոջ համար վկան ո՛չ շատ բարձրահասակ, ինքը Խալիլը բարձրահասակ է ասել, իսկ ստուգւած է, որ միջահասակ է․

«Նկատելով՝ որ և այլն...»։

Այնքան «նկատելով»՝ որ սկսեցի սոսկալ, թէ այդչափ «նկատելովները» ո՞րտեղից գոյացան յանկարծ։

Ի վերջոյ վճռւեց․ Ահմէդ Նազիմ էֆէնդին բոլորովին արդար, իսկ վկայ Մուրատը իր սուտ

վկայութեան համար մի ամսւայ բանտարկութեան։

Ցանկարծ ուռածափոր գործարանատէրը ոտքի ելաւ, փոքր ինչ մնչաց և ասաց զօրեղ ու բարձրաձայն շեշտով.

—Էֆէնդիներ, արդարադատութիւն եմ խնդրում ցնկուտ պարսկի դէմ, որ համարձակւեց ինձ—Ահմէդ Նազիմ էֆէնդիիս դատաստան քաշ տալ և ժամերով նստեցնել այս տախտակեայ նստարանի վրայ... Ամէն ինչ մեր մէջ քանդւել է. ո՛չ տէրն է իր ծառան ճանաչում և ոչ էլ ծառան իր տիրոջ. ոչ մշակն է աղային ճանապարհ տալիս և ոչ հասարակ գործաւորը բէյին. չնչին, անարգ ծառան համարձակւում է ոտնջալ էֆէնդիների և բէյերի դէմ... Կադի՛ էֆէնդի, յանուն արդարութեան պահանջում եմ խիստ պատժել այս ցած պարսիկին, որ համարձակւում է «զաթը փադիշահան» էֆէնդիներին դատարան քաշ տալ... Իսկ եթէ դուք չէք անիլ այդ, ես կըդիմեմ աւելի բարձր տեղեր և այնուհետև թո՛ղ բոլորը հասկանան, որ հեշտ չէ մեզ նման մարդոց բերել և այսպիսի լերկ տախտակեայ նստարանների վրայ ստիպել նստելու...

Լռեց, ֆէսը ծռեց, ժողովրդի վրայ մի հըպարտ ակնարկ ձգեց և մի ոտը յառաջ ձգելով՝ սպասեց։

Կադին իր կողքի դատաւորների հետ փոքր ինչ խօսեց և ապա ասաց գրագրին.

—Նկատելով՝ որ Խալիլը նախատել է Ահմէդ Նազիմ էֆէնդիին՝ աւելացրո՛ւ, գրա՛գիր, որ արդարութեան ատեանը վճռում է Խալիլի որդի Հիւսէյնի համար մի ամսւայ բանտարկութիւն և 1 ոսկի տուգանք... Ատեանը փակւած է...

Այս ասելուց յետոյ, կադին ոտքի ելաւ, ձեռքը քսեց մօրուքին, ծիծաղեց և մեզ լսելի լինելու չափ բարձր ձայնով ասաց իր ընկերներին, բայց այնպէս, որ կիսովին էլ դէպի ժողովուրդն էր դարձել.

—Փա՛ռք Աստուծոյ և Նրա փառաւորեալ մարգարէին, աշխարհը կարող է վկայել, որ այս դատը բոլորովին արդար կերպով վճռւեց...

Խ Է Ր Ա Ն

I

Հօրս անունը մահտեսի Փիլոս էր, մօրս անունը «Ծօ կնիկ...»։ Այդպէս էր կոչում նրան հայրս. մենք էլ միայն «Մարէ» անունը գիտէինք։

Երկու եղբայր ունէի. մէկը մեռաւ, միւսը կենդանի է. Կուրծօթի մէջ հողեր ունի։ Երկու էլ քոյր ունիմ. մէկը պսակուել է, միւսին դեռ նոր պիտի պսակեն։

Անունս «Հայրապետ» դրեց քահանան, իսկ տան մէջ կրճատեցին և այն օրւանից էլ «Հայրապետ» չկայ, այլ «Խէրան» բոլորի համար, իսկ ծնողներիս համար «Ճեօչ աղա»[1]), որովհետև նրանց անդրանիկն եմ։

Մանկութեանս օրերը չեմ յիշում և դժուարանում եմ յիշողութեանս մէջ ամփոփել և մտաբերել, թէ ինչ չարութիւններ եմ արել և կամ մինչև քանի տարեկան հասակս բոբիկ ոտներով վազվզել եմ մեր փողոցի ծառերի տակից վազող առուակների մէջ։

[1]) Մեծ աղա։

Մեր տունը գտնւում է Վանի «Զաղլի-փողան» կոչւող փողոցում։

Երբ տասներեք տարեկան դարձայ, ինձ հանեցին Նորաշէնայ դպրոցից, գնացի հօրս արհեստը—ոսկերչութիւնը սովորելու այնքան կարգացող, ինչպէս որ էի դպրոց մտնելու ժամանակ։

Փոքր ինչ այբ-բէն գիտէի, այն էլ հիմա մոռացել եմ. միայն երկու բան կայ, որ չեմ մոռացել—այբ գիրը և Սաղմոսի մէջ այս խօսքերը՝ «տուր զօրութիւն ծառայի քո...»։

Մի տարի ոսկերչութիւն արի, յետոյ, երբ հայրս թողեց արհեստը և սկսեց առևտուր անել, ես էլ նրա հետ գիւղէ գիւղ, վրանից-վրան և քուրդերի օբաներից-օբա էի մտնում, ուր մենք անում էինք ամեն ինչ. դերձակութիւն — եթէ քուրդը վճարում էր, բժշկութիւն—եթէ մէկը հիւանդանում էր և կօշկակարութիւն—եթէ մէկի կօշիկը պատռել էր։ Հայրս կաթսայ կլայկել էլ գիտէր. աման կլայկելիս ես էի, որ, աւազը լցրած կաթսայի մէջ, ոտներովս տրորում էի։

Քիչ-քիչ քուրդերի լեզուն սովորեցի, նրանց բնաւորութիւնների հետ էլ ծանօթացայ. նոյն իսկ մտերմացայ շատերի հետ այնքան, որ հայրս զարմանում էր և ամեն տեղ պատմում, թէ իր «Խէրանը» իրեն յաջորդ պիտի լինի փոքր ինչ յետոյ։

Այդպէս էլ եղաւ։

Մի անգամ Աբաղայի մէջ ման գալու ժա-

ժամանակ հայրս մի քուրդի հետ փողի համար կռուեց, քուրդը սրով խփեց նրա թևին և երբ քաղաք գնացինք ու հայրս երկու ամիս հիւանդ պառկելուց յետոյ ոտքի ելաւ, այլևս թևը չէր կարողանում շարժել։

Կանչեց իր մօտ և,—երբէք չեմ մոռանայ, —ասաց.

«Խէրան, ես՝ այլևս ոչ դերձակութիւն անել և ոչ էլ կլայկել կարող եմ. էլ չեմ էլ ուզում այդ անօրէնների մէջ մտնել... սակայն, մայրդ, քոյրերդ հաց կուզեն. դու բաւական մեծացել ես,—գնա մտիր քուրդերի մէջ, աշխատիր և հաց բեր մեզ։ Որչափ որ գիտես, սակայն հօրդ խօսքերը լաւ լսիր. քեզ ուզում եմ ասել, թէ ինչպէս կարող ես քուրդերի հետ վարուելով, մտնել նրանց գրպանի մէջ և դրանով նրանց քեզ գերի դարձնել... Այդ բանի համար երկու ձև կայ. առաջինն է—լինել նապաստակի նման վախկոտ, ենթարկուել նրանց ծաղրածութիւններին և իբր մի խեղճ և չնչին արարած ստրուկի նման լզել նրանց ոտները և սակայն այդպիսի ժամանակ հնարներ մտածել նրանց գրպանը դատարկելու... Կան հայեր, որոնք այդպէս են կարողանում առևտուր անել քուրդերի հետ և կան քուրդերի ցեղեր, որոնց հետ հայը միայն այդպէս կարող է առևտրական յարաբերութիւնների մէջ մտնել. այդ ցեղերն են՝ Հասնանցիներ, Ջալալցիներ և Արդոսցիներ։ Երկրորդ ձևն է՝ լինել համարձակ,

անվախ, ճշմարտախօս, խոստմնապահ և ճշտապահ. գրաւել քաջ քուրդերին իր կողմը, էլ-աղաների աչքին սիրելի դառնալ, գործել և համարձակ աշխատանքի գինը պահանջել կրկնակի... Մի խօսքով՝ լինել մի այնպիսի հայ, որոնցից շատ քիչ կան և որոնց քուրդերը պատւում են կոչելով «դիւանէ» (խենթ)... Մի խօսքին տասը պատասխան տալ... եթէ հայհոյում են—հայհոյել իրենց. եթէ կամենում են խփել՝ անվախ լինել և ծաղրել նրանց բարկութիւնը, ապա բարեկամանալ և նրանց գրպանները դատարկել...

«Այս երկու ձևերից որը կուզես՝ ընտրիր քեզ համար, ապա թէ ոչ՝ կուզես դու էլ եղիր Սարօյենց մուխսի Մարկոսի նման, այսինքն մասնակցիր նրանց աւազակութիւններին, քաղաքի միջից լուրեր տար նրանց, թէ այս ինչ հայը այսչափ ոսկի ունի, այս ինչ գիւղի մէջ այսչափ տաւար կայ, յետոյ նրանց հետ գիւղը ոտնակոխ անելու գնա և քո բաժինդ ստացիր. եթէ նրանք մի հայ են սպանում, դու երկուսը սպանիր... կամ թէ էլ-աղաներին սիրելի եղիր, ցոյց տալով՝ թէ որտեղ կայ մի գեղեցիկ հայ աղջիկ և կաւատութիւն արա...

«Այլևս դու գիտես, որդի, մենք հաց ենք ուզում. գնա ինչ կերպ կուզես արա, միայն թէ մեզ հաց տուր...»։

Այս ասելուց յետոյ հայրս երկար երեսիս նայեց, օրհնեց ինձ և ասաց.

—Գնա՛… Աբաղայի դաշտը ամենից մօտն է, Տէր ընդ քեզ…

II

Բերկրի գիւղաքաղաքից դէպի հիւսիս գնալով՝ միքանի ժամից յետոյ, երբ իջնում ես միքանի բլուրներից, առջեւումդ տարածւում է Աբաղայի ընդարձակ դաշտը, որի միջից Բանդիմահի գետը կտրելով անցնում և Բերկրիի մօտից թափւում է Վանի լիճը:

Շատ գեղեցիկ է Աբաղայի դաշտը իր բարձրահասակ խոտերով, իր գոյնզգոյն ծաղիկներով և իր փոքրիկ, ջրաշատ բլրակներով… Ամառը միշտ այդտեղ կարելի է տեսնել կոյտ-կոյտ քրդերի «օբաներ», որոնց իշխում է մի բլրակի ստորոտում բազմող, Հիւսէյն-աղա կոչւող էլ-աղասին (ցեղապետ):

Հիւսէյն աղան ունի աւելի քան 2000 ոչխար, կով, ձի. բնակւում է իր Մահմուդ աղա որդուց մի ժամ հեռու և իր Սուլէյման աղա որդու հետ միքանի շքեղ վրաններում, որոնք կանգնեցրած են գետափում, դալար և բարձրահասակ խոտերով շրջապատւած հրապարակի մէջտեղ:

Երբ մտայ այդտեղ, Հիւսէյն աղան իր Սուլէյման աղա որդու հարսանիքն էր անում: Հրապարակում պար էին բռնել, «զուռնա-նաղարայի» ձայնով «գօնդ» խաղացող տղամարդիկ և կանայք՝ շքեղ զարդարւած: Դաշտի ամեն կողմից երևում էին իրենց ձիաւորներով գունդագունդ հասնող գիւղապետներ, որոնք իրենց երկար նիզակները ձեռներին և կարմիր կօշիկներ հագած՝ թողնում էին, որ զով քամին խաղացնէր շղարշեայ սպիտակ, թեթև վերարկուները… Գետափում ստատում էին բազմաթիւ նժոյգներ: Լեռներից դէպի ցած էին վազում ոչխարի հօտերը՝ մեծ փոշի հանելով… Մի կողմում վառւած մեծ խարոյկի վրայ կախւած էին 4—5 հատ մեծ կաթսաներ և քուրդ կանայք թևները սոթտած կտրտում էին արդէն մորթւած հինգ-վեց ոչխարների միսերը և մաքրում էին մեծ պղնձէ ափսէների մէջ լցրած բրինձը:

Երեկոյեան ընթրիքն էր պատրաստւում: Բոլոր գիւղապետները հասել, Հիւսէյն աղայի ձեռքը համբուրել և նստել էին նրա շքեղ վրանի մէջ փռւած գորգերի վրայ:

Ինքը Հիւսէյն աղան բազմել էր վրանի վերին կողմը ծնկների վրայ, կողքին չոքել էր մի դէրվիշ, որը մեղեսիկի հատիկները դարձնելով՝ անդադար աղօթքներ էր մրմնջում, իսկ վրանի մէջ կլոր կերպով փռւած նեղ գորգերի վրայ պատկառանքով տեղ էին բռնել գիւղապետները և ընդունում էին ցեղապետի դէպի իրենց ձգած գլանիկները ու ծառայի հինգերորդ անգամ ներս բերած դառն ս[illegible]ը, որ մի մեծ ամանով եռում

էր վրանի դրսումը շինած «օջախի» վրայ։

Իմ գալս ոչ ոքի ուշադրութիւնը չըգրաւեց։ Իշս հանդարտութեամբ մի կողմը քաշեցի, ցած բերի նրա վրայից մեծ պայուսակս, որի մէջ ամեն ինչ կար, և գնացի նստելու Հիւսէյն աղայի վրանի ետևում միքանի քուրդերի մօտ, որոնք անդադար սուրճ էին խմում և խօսում հարսանիքի մասին։

Այդ նստած տեղից ես կարողացայ մի բացւածքից Հիւսէյն աղայի վրանի մէջը նայել և լըսել այնտեղ եղած խօսակցութիւնները։

Հիւսէյն աղան նախ բոլոր գիւղապետներին հարց տւաւ, թէ ինչպէս էր ժողովուրդը, ինչպէս այդ տարւայ ոչխարների ծնունդը, յետոյ իր մօտը նստած մի ֆէսաւոր տաճկի դառնալով՝ ասաց տաճկերէն, բայց՝ ի հարկէ՝ քրդական արտասանութեամբ.

—Այս տարի, էֆէնդի, իմ ժողովրդի վիճակը վատ է և դժւար թէ կարողանամ փաշայի որոշած նոր տուրքը վճարել։ Ինչպէս ինքդ լսեցիր գիւղապետներից, ոչխարը քիչ ծնունդ է տւել և ժողովուրդը նեղւում է... Իրաւ, չըգիտեմ, թէ ինչ անեմ... փոքր ինչ լաւ ժամանակ չէք եկել... եթէ հարսանիքը վերջանար։

—Ես կըսպասեմ,—խօսեց տաճիկը լըջութեամբ։

Բոլոր գիւղապետները հրացայտ աչքերով միմեանց և ապա ցեղապետին նայեցին, որ դէմ-

քը խոժոռեց և պահ մի լռութիւնից յետոյ դարձաւ վրանի դռան մօտ կանգնած ծառային.

Ահմէ՛դ,—ասաց նրան,—էֆէնդիի վրանը եթէ պատրաստ է, առաջնորդի՛ր նրան այնտեղ։

Ասաց և սկսեց մի-մի հատ գլանիկ նետել գիւղապետներին, որոնք պատկառանքով վերցրին և ծառայի մօտեցրած կրակից վառեցին։

Տաճիկը ոտքի ելաւ, հպարտութեամբ բարեւեց և դուրս գնաց։

Երբ նա դուրս գնաց, Հիւսէյն աղան փոքր ինչ շարժւեց տեղից և՝

—Պէտք է վճարել, ի՞նչ ես կարծում, Մահմէդ աղա,—դարձաւ նա իր որդուն, որ խաղում էր իր ատրճանակի արծաթէ դունդի հետ։

—Հա՛յր,—ասաց Մահմէդ աղան,—ես չեմ կարող, նոյնպէս և այս գիւղապետները, իսկ դու—չըգիտեմ։

—Ե՞ս,—ժպտեց Հիւսէյն աղան,—մինչև որ դուք չըվճարէք, ես ո՞րտեղից կարող եմ տալ տաճկին։

—Չենք կարող վճարել...—ասաց մի գիւղապետ։

—Եւ ինչո՞ւ վճարենք,—գոչեց մի ուրիշը.—ի՞նչ պարտական ենք. անցեալ օրն էլ նա, փաշան, լուր էր ուղարկել, թէ պէտք է յանձնենք իրեն Ջալալին...

—Ի՞նչ,—ընդհատեց նրան ցեղապետը.—Հիւսէյնը ոչ Ջալալ կըտայ նրան և ոչ էլ ան-

ցեալ տարւայ աուրքից մի կոպէկ աւելի. շատ նեղացնի, գիտէ՝ թէ ինչ կարող եմ անել...

—Այո,—գոչեց ցեղապետի որդին,—Պարս- կաստան կանցնենք։

—Լռեցէք,—ասաց ցած ձայնով ցեղապետը,—այսօր կամ վաղը լուր եմ սպասում Պօղոս կարաբաշից, տեսնենք թէ նա ինչ կանէ... Վայ գայ մեր հ[illegible]որդին, եթէ Պօղոս կարաբաշը կարողանայ ազատել իմ Հասօին...

Պօղոս կարաբաշը, քուրդերի այդ սիրելին, պիտի ազատէր Հիւսէյն աղայի կրտսեր որդուն։

Այդ այն նշանաւոր աւազակն է, որը Բերկրիի մէջ, օրը ցերեկով, այրել էր մի գիւղ, առևանգել կանանց և մի առ մի մորթել գիւղացիներին։

Հիւսէյն աղայի և գիւղապետների այդ խօսակցութիւնից յետոյ, վրանից դուրս եկան բոլորը. ցեղապետը գնաց կանաչ խոտերի վրայ իր երեկոյեան «նամազը» կատարելու. Մահմէդ աղան վրանից դուրս գալուն պէս ապտակեց մի քանի ծառաների, որոնք թողել էին իր նժոյգին անցնել գետի միւս կողմը, և գիւղապետների հետ փոքր ինչ խօսելուց յետոյ՝ նկատեց ինձ ու մօտեցաւ։

Նա ինձ առաջ տեսել էր. սուր յիշողութիւն ունէր, ճանաչեց, ուսափ ժպտելով՝

—Խէրան,—ասաց,—բաց պայուսակդ, տեսնեմ ինչ ունիս հետդ։

Լռութեամբ բացի և ցոյց տւեցի ասեղներ, թելեր, յուլունքներ, հայելիներ, կանացի զանազան զարդեր, գոյնզգոյն ապակէ մանեակներ, կեղծ ոսկիներ... յետոյ ցոյց տւեցի նաև կտաւէ շապիկներ, «սալթաններ» 1), «զպուններ» 2), շաքար, սուրճ, ծխախոտ, թէյ և այլն...

Նա մէկ-մէկ նայելուց յետոյ ժպտելով ասաց.

—Սրանց մէջ գեղեցիկ բաներ շատ կան, բայց ինձ համար ոչինչ չկայ... այ, վաղը գնա մեր «օբան», այնտեղ մեր կանայք քեզանից շատ բան կառնեն, կարծեմ, կլայկելու ամաններ էլ կունենան...

Եւ դարձաւ գնալու, սակայն յանկարծ մի բան յիշելով՝

—Խէրան,—դարձաւ նա ինձ,—հայրդ ո՞ւր է։

—Պառկել է, այլ ևս չէ կարող գալ,—պատասխանեցի ես։

—Խե՛ղճը...—ասաց նա և հեռացաւ։

—Իսկ ես ուրախութիւնից չըգիտէի ինչ անել. ինքս մի պատճառ էի փնտռում նորից մըտնելու Մահմուդ աղայի վրանները, ուր գտնւում էր այն սիրուն փոքրիկ աղջիկը, որ ամեն անգամ ժպտում էր ինձ և հետս երկար խօսում, երբ վրաններն էի գնում։

1) Մահուդից կարած մի կարճ բաճկոն է, որը հագնում են երկար արխալուղի վրայ. առհասարակ կարւում է դա կապտագոյն մահուդից։ 2) Երկար արխալուղ։

Այդ սիրուն աղջիկը Մահմուդ աղայի քոյ-րացուն էր և՝ չըգիտեմ ինչու՝ նրան կոչում էին «Ֆլա», այսինքն «հայ»...

Այդպէս էին կոչում նրան եղբայրը, եղբօր կինը և հարճերը, նոյնպէս և ամենքը, որոնք ճանաչում էին նրան։

Չեմ մոռացել Ֆլայի այս խօսքերը, որ նա մի անգամ ասաց ինձ.

—Ջէյրան, ես ֆլա եմ, դու էլ ֆլա ես... ինչո՞ւ երկուսս էլ ֆլա ենք, երբ ես Հուսէյն ա-ղայի աղջկացուն եմ, իսկ դու մի անծանօթ տղայ։

Այդպէս ուրեմն, ես Մահմուդ աղայի օբա-ները պիտի գնայի Ֆլային վերջին անգամ տես-նելուցս չորս տարի յետոյ։

Ապրանքներս ժողովեցի և նորից պայուսա-կիս մէջ լցրի։

Շուտով մթնեց։ Դեռ ևս քուրդերը երկար պարեցին ընթրիքից յետոյ, իսկ ես փլաւը կե-րայ, սուրճը խմեցի և պայուսակս գլխիս տակը դնելով՝ քնեցի։

III

Միւս օրը առաւօտեան շուտով էշիս վրայ դրի պայուսակս և ճանապարհ ընկայ դէպի Մահ-մուդ աղայի վրանները։

Կէս ժամից յետոյ այնտեղ հասայ և երբ օբաներն էի մտնում, յանկարծ մի քուրդ բար-ձրահասակ օրիորդ մօտեցաւ ինձ և՝

—Վա՜յ, Խէրա՜նն է,—ասաց ու փախաւ։

Ֆլան էր. ո՜րչափ մեծացել և սիրունացել էր։ Մի վայրենի գեղեցկութիւն ունէր, որը իս-կոյն մի հաճելի սարսուռ ազդեց ինձ և՝ այդ տը-պաւորութեան տակ՝ մոռացայ պայուսակս ցած առնել։

Ինձ մօտեցան քուրդ կանայք, տակնուվրայ արին ունեցածներս, ընտրեցին, ցորեն ու իւղ բերին, փող տուին, բայց ես մեքենայօրէն միայն տեսնում և զգում էի այդ բոլորը և աչքերս Ֆլային էին փնտրում։

Շուտով նա էլ երևաց, ընտրեց յուլունքներ և ժպտելով ասաց.

—Ֆլա՜, ես փող չունիմ, ապա ի՞նչ անեմ։

—Փող մի՛ տալ, ասացի ես։

Ժպտեց, յուլունքներից մանեակը վիզը անց-կացրեց, յետոյ վրանը մտաւ և այնտեղից մի

փոքրիկ տիկ՝ «մայիսեան ծաղիկ» կոչուող՝ իւղ քաշ տալով, բերաւ դրեց ինձ մօտ։

Նրան նայեցի՝ ժպտում էր անմեղ հրեշտակի պէս և գոչում.

—Ցլայի մանեակը փլան տւեց և Ցլան փլային իւղ տւեց...

Սկսեց երգել և այդ բառերը, երգի նման անդադար կրկնելով, վրանների մէջ անհետացաւ։

Քուրդ կանայք ինձ լաւ հիւրասիրեցին, բայց Ցլային այլևս չըտեսայ մինչև երեկոյ։

Հազիւ թէ մթնել էր, որ վրանը հասաւ մի քուրդ ձիաւոր, որ բռնել էր մի ամենապատուական արաբական նժոյգի սանձից։

Այդ նժոյգը Հիւսէյն աղայի որդուն—Նոր փեսացուին ընծայ էր ուղարկւում աղջկայ հօր կողմից։

Քուրդը աւելի լաւ էր համարում գիշերով նժոյգին ճանապարհ չըտանել, որ դաշտի տըղմուտների մէջ չըկեղտոտւէր, ուստի և նա յայտնեց, որ գիշերը Մահմուդ աղայի վրաններում կըմնայ և միւս օրը կըշարունակէ իր ճանապարհը։ Շքեղ թամբի կապերը արձակելուց յետոյ, թամբը նժոյգի վրայ թողեց, որ գիշերը բաց օդում կենդանին չըմրսէր. յետոյ նիզակը ցցեց վրանի առաջ, հրացանը կռթնեց վրանի սիւնին ու փաթթափւելով թաղեայ անթև վերարկուի մէջ, մեկնւեց գետնի վրայ։

Թէև բաւական մթնել էր և ես էլ փաթթաթ-

ւած վերարկուիս մէջ ուզում էի քնել, սակայն դեռ վրանների մէջ լոյս կար։

Մի գեղեցիկ լուսընկայ գիշեր էր։

Ցլային մոռանալ չէի կարողանում. մտածում էի նրա վրայ. մի յիմար միտք էր ծնել իմ մէջ, որ որչափ կամենում էի ցրել՝ անկարելի էր լինում։

Մտածում էի թէ՝ Ցլան անհոգ չէր դէպի ինձ... Մի՞ թէ կարելի էր մտածել մի այսպիսի բան... Սակայն ի՞նչ անեմ, չուզելուցս առաջ արդէն սկսում էի կարծել, թէ Ցլան ինձ վրայ է մտածում այժմ։

—Է՛հ, մռմռացի,—Խէրան, տուներդ վերմակիդ համեմատ պարզէ...

Յանկարծ վրանների մէկի միջից մի մեղմ և անոյշ ձայն լսւեց։

Երգում էին այնտեղ և երգողը մի կին էր։ Ո՜րչափ լաւ էր երգում նա և ո՛րչափ սահուն կերպով նա կարողանում էր դուրս բերել քրդական երգերի յատուկ տիպը—կոկորդի երկար խաղը և ձայնի վայրկենական ուժգնութիւնն ու մեղմութիւնները...

Սկսեցի լսել.—երգում էին «Սարէ սիփանէ» [1]) երգը։

Կէս ժամ տևեց այդ երգը։ Երգողը պատ-

---

[1]) Այդ քրդական նշանաւոր երգի թարգմանութիւնը կարելի է կարդալ հայր Սրուանձտեանի «Համով-Հոտով» աշխատութեան մէջ։

մում էր թէ՝ ինչպէս Խզէ-Զարէին լեռը տարաւ իր սիրականը, թէ ինչպէս՝ հակառակ աղջկայ խնդրանքի՝ երիտասարդը նետահար արաւ եղնիկին և ապա երբ ուզում էր բռնել նրան, գլորւեց անդունդը... և խեղճ Խզէ-Զարէն ինքն իրեն էլ գլորեց նրա ետևից... Ու երկու ծաղիկներ բուսան նրանց մեռած տեղը...

«Այնտեղ են,
«Միշտ կան»։

Ասաց երգողը և լռեց... Մի խորին լռութիւն տիրեց։ Ես գտնւում էի երգի ազդած տըխուր տպաւորութեան տակ և մոռացել էի թէ՝ ուր էի։

Ինձ երիտասարդն էի կարծում, որը գնում և քուրդերի վրաններից փախցնում էր Խզէ-Զարէին։

Նստեցի և չորս կողմս նայեցի. նժոյգը խըրխնջաց, սակայն նրա մօտ պառկող քուրդը անշարժ քնում էր. նրան չէր զարթեցրել այդ հրեշտակային երգն անգամ։

Հետզհետէ ճրագները մարեցին։

Այդ միջոցին շարժւեց վրանի շորը և մի երկար ստւեր յայտնւեց նրա առջև։ Ես բարձրացայ, չըգիտեմ ինչու՝ սիրտս տրոփել սկսեց. թիկն տւի և սկսեցի նայել։

Ստւերը յառաջացաւ դէպի երկար խոտերը, յետոյ մի պտոյտ գործեց վրանի առջևից և գը-

նաց իջնելու դէպի մի զառիվայր, որը տանում էր ջրի կողմը։

Այժմ հետաքրքրութիւնս զրաւեց. ստւերը մի կին էր. հետաքրքրում էր ինձ թէ՝ ո՞ւր գընաց այդ կինը։

Զգուշութեամբ սողալով խոտերի միջից, կանգ առայ դէպի ջուրը տանող զառիվայրի գըլխին։ Այնտեղից կարողացայ տեսնել, թէ ինչպէս քուրդի կինը նստած մի քարի վրայ, կզակը աջ ձեռքին յենած, դէմքը լուսնին դարձրած՝ անշարժ դիտում էր և արտասուքի կաթիլներ՝ հոսելով նրա սիրուն աչքերից՝ ընկնում, փայլում էին երկարահասակ խոտերի թերթիկների վրայ։

Ֆլան էր։ Ես զարմացայ։ Այդ չարաճճի, թափառուն աղջիկը, այդ զւարթ դէմքով գեղեցկուհին, այժմ, հեռու, առանձնացած, արտասւում էր։ Ի՞նչ էր նրա ցաւը, մտածեցի ես յուզւած։ Վէր կացայ և մեղմ քայլերով մօտ գնացի։ Խոտերի խշրտոցը սթափեցրեց նրան։ Նա դարձաւ, նախ զարմանքով շարժւեց, յետոյ դողաց և՝ նկատեցի, գունաթափւեց։

—Խէրա՛ն, — բացականչեց նա դողդոջուն ձայնով։

Կանգ առայ։

—Նստի՛ր, ասաց նա տխրութեամբ,—դու չե՞ս վախենում։

—Ինչի՞ց, Ֆլա՛։

—Կամաց խօսի՛ր. եթէ զարթնի Գեօզալը,

այս անգամ էլ մազ չի թողնիլ վրաս։

—Մի՞թէ Գեօզալը ծեծում է քեզ։

—Ա՛խ, շա՜տ… մրմնջաց նա և լռելով՝ մատի վրայ փաթաթեց «կապոյտ ծաղկի» մի ծղօտ, արմատախիլ արեց ու դէն շպրտեց։

—Այո՛, շարունակեց նա մելամաղձոտութեամբ,—ինձ չարչարում են, որովհետև իմ մայրըս փլա էր…

Այժմ միայն հասկացայ, թէ ինչու Հիւսէյն աղայի կինը իրեն սիրելի անունով էր կնքել իր աղջկան։

—Խէրա՛ն,—դարձաւ նա ինձ (նրա աչքերը փայլում էին կատաղութեամբ). — Խէրա՛ն, դու փլա չե՞ս։

Ես լռեցի. չըգիտէի ինչ պատասխանել.

—Ես գիտեմ, որ վախկոտ փլաներից չես, —ասաց նա յուզուած, յետոյ փոքր ինչ լռեց, իր շուրջը մի ծանր հայեացք ձգեց և շարունակեց մեղմութեամբ.

—Սիամանդօն էլ փլա էր…

—Ի՞նչ Սիամանդօ, կմկմացի ես։

—Այն, որ Խզէ-Ջարէին փախցրեց Սիփան։

Յետոյ մի այնպէս հայեացք ձգեց վրաս, որ կարծես երկինքը բացուեց առջևս. . .

. . . .

Էլ ինչ ասեմ, էֆէնդի, Փլանը սիրում է եղել ինձ և շատ ժամանակից ի վեր… Միայն այն ասեմ, որ նոյն գիշեր ինձ կարելի էր տեսնել մի

արաբական նժոյգի վրայ, ձիուս գաւակին Փլային, ձեռքիս մի արիւնոտ նիզակ՝ Արագայից հեռու՝ Կոտոլի սահմանների վրայ, ուր ես իջայ իմ թանկագին բեռովս…

. . . Առաւօտեան դէմ ես մենակ էի, էֆէնդի, մենակ մի դիակի հետ, որ այժմ հանգչում է հեռու—Արագայի հորիզոնի վրայ գտնուող բլուրի կատարում։

Քուրդերը վրայ տւեցին, ես շամփրեցի շատերին, իմ հրացանս գլորեց հսկաներին, սակայն մի գնդակ, մի անիծեալ կապարի կտոր եկաւ խլելու ինձնից իմ Փլային։

Նա մեռաւ իմ գրկում քուրդերի դիակների և արիւնի լճակների կողքին։ Նրա վերջին համբոյրը դեռ այստեղ շրթունքներիս վրայ է։ Նրա վերջին գգուանքը անդադար «վրէժ» է կանչում և նրա գերեզմանը բլուրի վրայից առաջնորդում է ինձ սրի տակ տալու այս գարշելի աւազակային ցեղերին, որոնք խլում են մեր կանանց, ուտում են մեր հացը, հայհոյում են մեր կրօնը, պղծում են մեր պատիւը և ծիծաղում են մեզ վրայ…

Այնտեղ հանգչում է իմ Փլան և ես երդուել եմ նրա գերեզմանի բոյսերը ոռոգելու քրդական արիւնով։ Երդուե՛լ եմ…

IV

Այո՛, էֆէնդի, այս բոլորը պատահեց և ամէն մի աբաղացի քուրդ կարող է պատմել Խէրանի ով լինելը և թէ՝ ո՛ւր գնացին Սուլէյման աղայի [illegible]անեկան ընծան ու աննման Ձիան, որոնց յափշտակողին փնտռելու համար ողջ Աբաղան ոտքի ելաւ և միայն այսչափ օգուտ ունեցաւ դրանից, որ իմացաւ թէ՝ յափշտակողը մի ֆլա է (հայ է) և Խէրան է կոչւում։

Դրանից յետոյ շատ անցքեր անցան։ Եղբօրըս, վրէժխնդրութեան համար, սպանեցին քուրդերը, իսկ ես Մահմուդ աղայի երկու սիրական թիկնապահներին կտոր-կտոր արի ի վրէժ եղբօրս սպանման... Հիւսէյն աղան կամայ թէ ակամայ վճարեց տուրքը, Սուլէյման աղան սպանեց իր երկրորդ կնոջը, Խէրանը ծերացաւ և նրա թևերը յոգնեցին քուրդ սպանելուց։

Ոչինչ չէր զսպում իմ աշխոյժը։ Ինձ համար մի տեսակ զւարճութիւն էր դարձել իմ պատւական նժոյգովը նետի պէս սլանալ ընդարձակ դաշտերի մէջ, թռչել խրամների վրայից, սլանալ զառիվեր բլրակների գագաթների վրայ և այնտեղից նայել ամէն կողմ երևացող միմիայն քուրդերի սև-սև օբաների կոյտերին... Նիզակս ճօճեցնելով վազել մի այծեամի ետևից և Մարթինի հրացանովս հեռու երևացող մի որսի զարնելով՝ գլորել նրան բարձրահասակ խոտերի մէջ, ուր ինքս երբեմն պառկում-ննջում էի՝ ձիուս սանձը թևերիս մէջ առած և հրացանը ձեռքումս...

Այդ իմ զբօսանքն էր։

Ոչինչ չէր կարող արգելք լինել ինձ, երբ մի խումբ քուրդերի վրայ էի յարձակւում. հրացանիս գնդակներով գլորում էի նրանցից մի քանիսին, նիզակովս շամփրում ուրիշներին, կեռսուրս շողացնելով փախուստի էի դարձնում միւսներին ու կանգնում-դիտում, թէ ինչպէս է ջարդւած այն ահ ու սարսափ ազդող քուրդը, որը կատու է դառնում, երբ տեսնում է, որ իր գլխին զարնող կայ... Վա՜յ այն քուրդին, որ համարձակւի անցորդներին նեղացնել կամ մի գիւղ մտնել և մի հրացանով դողացնել բոլոր գիւղացիներին։ Այդպիսին իմ ճանկերից չի պրծնում, որովհետև բոլորը ճանաչում են վրէժխնդիր Խէրանին...

Այդ էլ իմ կատաղութիւնն է։

Իսկ երբ անցորդների հետ մի գիւղ էի իջնում, խորոված գառը առջևս և գինու տիկը կողքիս էր գտնւում։ Երբ փորս կշտանում էր և գինին թրջում էր կոկորդս, ո՛վ կար Խէրանից աւելի զւարճախօս, կատակաբան և ամբողջ խմբին զւարճութիւններ մատակարարող... Պատ-

մում էի իմ կեանքեց անցքեր, ծիծաղեցնում էի՝ պատմելով քրդերի վախկոտութիւնը, եթէ նրանք մի ընդդիմադրողի են հանդիպում և անգութ հպարտութիւնը, երբ նրանք մի անզէն մարդ են ձեռք ձգում...—Հաւատացի՛ր, որ քրդերը այդպէս են. ես այս րոպէիս կապացուցանեմ. լսի՛ր պատմեմ մի դէպք։

Անցեալ տարւայ մի օր, Մանազկերտի գիւղերից մեկումն էի գտնւում—իմ քուրդ «քիրվէի» [1]) տանը։ Երեկոյ եղաւ և մենք հազիւ թէ հացներս կերել էինք, որ ներս մտան երկու հայ ճանապարհորդներ և գիշերւայ իջևանելու տեղ խնդրեցին։

Իմ քիրվէն, ի պատիւ ինձ, հրաւիրեց նրանց իր մօտ։ Ցոյց չըտւի իմ ազգակիցներիս, թէ հայ եմ. ուշադրութեամբ զննեցի նրանց անհանգիստ դէմքերը, ծիծաղեցի նրանցից մէկի վախկոտ հայեացքների վրայ և հետաքրքրւեցի թէ՝ ո՛ւր էին գնում և ինչ վաճառք էին տանում։

—Աղա՛,—խօսեց նրանցից մէկը, որը վանեցու նման էր հագնւել, այսինքն կարճ և լայն շալվար, երկար «գպուն» կարւած Վանի «մանուսայից» [2])

[1]) Հայերից շատերը ունին մի-մի բարեկամ քուրդ, որոնց անուանում են «քիրվէ», որը բառական նշանակութեամբ «քաւոր» է նշանակում։

[2]) Մի կտոր է, որի վրայ գործւում են միշտ ուղղահայեաց գծեր կարմիր գոյնով. կտորը վարդագոյն է լինում. ամենալաւ և յայտնի մանուսան՝ Հալէբի մանուսան է։

և Վանի «աբա» կոչւող բրդէ կտորից մի երկար վերարկու.—աղա՛,—ասաց նա,—ես մի վաճառական մարդ եմ և «բաստեղ» [1]) եմ տանում Մանազկերտ. իսկ իմ ընկերս վարժապետ է։

«Վարժապետ» բառը նա քրդերէն «կարդացող» թարգմանեց։

—Քրդերէն գիտէ՞ այդ կարդացողը։

—Ո՛չ, նա հայերէն, տաճկերէն և ուրիշ լեզուներ գիտէ միայն... բայց շատ հպարտ տղայ է. հէնց միշտ ասում է թէ՝ ինչո՛ւ պիտի վախենաս քրդից, երբ զէնք ունիս։

Դէմքս խոժոռեցի, արիւնը գլխիս խփեց և քիչ մնաց, որ այդ վաճառականի վիզը ոլորէի։

—Ա՛, ասացի զպելով ինձ,—հրացա՞ն ունիք ուրեմն։

—Ո՛չ,—կմկմաց գունաթափ վաճառականը.—այս յիմար ընկերս մի լաւ հրացան ունի, որի վրայ հէնց ձեռքը խփում և ասում է թէ՝ «ողջ կենայ սա, քրդերը կըդողան սրանից...»։

Հիացմամբ նայեցի վարժապետին, որը լռութեամբ ծխում էր և մտածում։ Ա՜յնպէս լուրջ, այնպէս հանդարտ էր նրա դէմքը, որ քիչ մնաց սկսէի նրա հետ հայերէն խօսել։

Երբ հացը կերանք և ուզում էինք քնել, վարժապետը դուրս գնաց և փոքր ինչ յետոյ

[1]) Սալորից կամ թթից շինած լաւաշաձև քաղցրեղէն, որը գործ են ածում կերակուրների համար։

ներս մտաւ մի կարճ ասեղնաւոր հրացան ձեռքին, որ և կամենում էր գլխի տակ դնել…

—Զօ տիրացո՛ւ, գոչեց նրան վաճառականը հայերէն,—քեզ հազար անգամ չասացի՞ թէ՝ այդ զէնքը մի հանիլ դուրս. հիմա քո յիմարութեամբ մեզ փորձանքի մէջ ես ձգելու… Շո՛ւտ, ինձ—փորձւածիս լսիր. եթէ քուրդը հրացանդ ընծայ ուզէ, տո՛ւր, թէ չէ…

—Զա՛յնդ կտրիր, գոչեց վարժապետը,—երբ չես լսում ինձ, քո գործիդ խառնուիր միայն…

Եւ հրացանը գլխի տակը դրեց։

Ես, որ լսեցի ամեն ինչ, դարձայ վարժապետին և քրդերէն խնդրեցի, որ հրացանն ինձ տայ նայելու։

Վաճառականը թարգմանեց նրան իմ խնդիրքը և աւելացրեց.

—Շո՛ւտ տուր և ասա որ իրեն մատաղ ես անում զէնքը։

—Ցո՛ւհ… մռմռաց միայն վարժապետը.—ասա քրդին, որ հրացանս կըտամ իրեն նայելու, միայն թէ թո՛ղ իրենն էլ ինձ տայ նայելու։

Եւ այդպէս էլ արեց. իր հրացանի փամփուշտը հանեց, իսկ ես փամփուշտը առանց հանելու ժպտելով ցոյց տւեցի իրեն և հրացանս ձեռքը տւեցի։

—Քա՛ջ մարդ է և վեհանձն, ասաց վարժապետը։

Այդ միջոցին դրսից մի աղմուկ լսեց։

Թմբուկների, մարդկանց, ձիերի և շների ձայները միմեանց խառնելով ականջ էին խըլացնում։ Բոլորս դուրս թռանք զէնքերը ձեռքներիս։ Մի պայծառ լոյս էր սփռւած «մաշալաներից [1]), որ կրում էին մի դաս գծուծ հագուստներով և փաթոթներով «փախի» կոչւող շէյխական զինւորները, որոնք թմբկահարելով ու կոկորդ պատռելու չափ գոռալով՝ գիւղն էին մտնում։

Հասկացայ որ գիւղ էր մտնում քրդի մի շէյխ, առաջնորդւած այդ դժոխային երաժշտութեամբ և այդ խայտառակ ամբոխով…

—Անպատճառ մեր տանը կիջնի շէյխը,—ասաց իմ քերվէն և շտապով ներս վազեց պատրաստութիւն տեսնելու. իսկ վաճառական հայը համարեա լաց լինելով ասում էր հայերէն.

—Վա՜յ մեզ, կորուեցանք, վա՜յ մեզ. ի՞նչ անենք. ա՜խ, վա՜րժապետ, սև լինէր այն ժամը, երբ համաձայնեցի քեզ հետ ընկերանալ… քրդերը հրացանը տեսան և այժմ մեզ երկուսիս էլ կտոր-կտոր կանեն…

—Կորի՛ր,—գոչեց նրան վարժապետը բարկութեամբ.—եթէ շատ ես վախենում, գնա՛ մըտիր խրճիթը և մի մկան ծա՛կ փնտռիր պահուելու…

Քիչ մնաց ծիծաղէի, բայց զսպեցի ինձ և ասացի վարժապետին.

[1]) Չէթով կամ նաւթով վառւող կերոններ։

—Խորհուրդ եմ տալիս քեզ ինձնից չըհեռանալ... հրացանդ լցրու և միշտ թևիդ վրայ ունեցիր...

Վաճառականը թարգմանեց խօսքերս։

—Շնորհակալ եմ,—ասաց վարժապետը.—վեհանձն ես և ես քեզ վրայ վստահ եմ...

Եւ իսկոյն հրացանն առաւ և անուշադրութեամբ փողը դէպի վաճառականը անելով, փամփուշտը դրեց մէջը։

Էլ չըկարողացայ ծիծաղս զսպել, տեսնելով թէ ինչպէս վաճառականը մի՝ «ամա՜ն» գոչելով փախաւ հրացանի փողի առջևից և գոռաց.

—Լեզապատառ եղայ. քո... վարժապետ ես, ինչ «գ խ կ ու մ» (գահըըմար) ես...

Վարժապետն էլ ծիծաղեց և հրացանը ուսին ձգեց։

Քիչ յետոյ երևաց շէյխը՝ նստած մի ձիու վրայ, դէմքը քօղով ծածկած։ Նրա ձիու աջ ու ձախ կողմերից գնում էին բազմաթիւ՝ փաթոթ կապած և գզգզւած հագուստներով «փախիներ» և մօլլաններ, որոնք սակայն զինւած էին ատրըճանակներով, դաշոյններով ու նիզակներով։

Շէյխը ինքը մէջքին կրում էր մի արծաթեայ գլխով ատրճանակ ու մի կեռ դաշոյն, իսկ ձիու ասպանդակի կաշու միջից անց էր կացրած երկայն նիզակը, որից և ամրացրած էր պողպատեայ ու դեղին զամերով զարդարւած մի մեծ վահան։

Ամբողջ այդ խումբը կանգ առաւ քիրվէիս դրան առջև. ամենքը ետ քաշւեցին և քիրվէս, որը մօլլա էր, առաջ անցաւ, նախ չոքեց-համբուրեց գետինը, յետոյ բարձրանալով համբուրեց շէյխի քղանցքը և թևը տալով ծանրաշարժ շէյխին, մի ձեռքով ասպանդակը բռնեց, աջ ձեռքը ծալեց և իջեցրեց նրան ձիուց։

Այդպէս նրա թևը մտնելով, քիրվէս ու մի ուրիշ մօլլա ներս տարան շէյխին խրճիթը. այնտեղ նստեցրին մի գորգապատ փափուկ օթոցի վրայ, իսկ իրենք չոքեցին սենեակի պատերի տակ փռւած փսիաթների վրայ։ Ես, վարժապետը և, նրա ետևում ծածկւել աշխատող վաճառականը քաշւեցինք ու խրճիթի հեռու անկիւնում նստեցինք. ես՝ վաճառականի բաստեղների տոպրակների վրայ, վարժապետը՝ իմ կողքին, իսկ ինքը—վաճառականը մտած տոպրակների ետևը, երբեմն միայն հազիւ ցոյց էր տալիս գըլուխը։

Շէյխը օրհնեց տանտիրոջ, փոքր ինչ աղօթք մրմնջաց և իսկոյն ձեռնարկեց ուտելու սեղանից, որ արագութեամբ պատրաստւեց նրա առաջ։

Հացից յետոյ նրա ուշադրութիւնը մեր կողմը դարձաւ և նա իմ քիրվէիս հարցրեց, թէ այնտեղ—տոպրակների վրայ նստողները ո՞վքեր են։

Քիրվէս շւարեց,—դժւար էր նրան ասել, թէ հայեր էինք,—ուստի ես շտապեցի և քուրդերէն ասացի շէյխին, որ ես ջալալցի մի քուրդ

եմ, իսկ ընկերս տաճիկ պաշտօնեայ է, որը Մանազկերտ է գնում։

Հետաքրքիր շէյխը հարցրեց, թէ ինչ կար տոպրակների մէջ։

—Թուղթի բաստեղ,—ասացի ես։

—Բ՞նն է,—հարցրեց։

—Ո՛չ,—ասացի և ծիծաղելով ցոյց տուեցի թաղնուած վաճառականի վրայ, որ սկսել էր դողի, այս գեաւուրինն է։

—Գեաւուրները միշտ լաւ բաներ ունին,—ծիծաղեց շէյխը.—նրանց ունեցածները բոլորն էլ ընտիր են... Ապա տեսնենք այդ բաստեղը։

—Շէյխդ իմ,—ասացի ես,—գեաւուրը շատ մեծ պատիւ պիտի համարի իրեն, եթէ սուրբ ձեռքովդ հաճես իր ունեցածից փոքր ինչ ճաշակել... շատ համով քաղցրեղէն է...

Հազիւ թէ շէյխը, մօտենալով տոպրակներին, նրանց բերանը բանալ տուել և բաստեղից մի կտոր ճաշակելուց յետոյ տեղն էր նստում, որ փախինների և մօլլաների ահագին բազմութիւնը թափուեց տոպրակների վրայ, կամենալով ճաշակել այն բանից, որին ձեռք դիպցրեց և որից հաճեց ուտել մեծ շէյխը։

Վաճառականի դրութիւնը շատ վատ եղաւ. կէս ժամից յետոյ անպատճառ տոպրակները կըդատարկուէին։ Խղճացի վանեցու այդ դրութեան վրայ և փակելով տոպրակների բերանը՝ գոչեցի.

—Փախիններ և մօլլաներ, ճաշակողը պիտի վճարէ։

Ամենքը ապշած կանգ առան. Նրանց շատ զարմանալի թւաց «վճարել» բառը, որովհետև մինչև այդ ժամանակ ոչ ոք նրանցից ոչ մի բանի համար չէր վճարել։

Պահ մի լռութիւն տիրեց սենեակում. քիրվէս գունաթափուեց, վաճառականը թրջուած մըկան պէս դողում էր, իսկ վարժապետը ժպտելով գգւում էր իր հրացանի փողը։

—Այո,—կրկնեցի ես։ Այս խեղճ մարդը վճարել և գնել է, ինչու ձրի տայ և գուցէ իր վերջին ապրուստիցն էլ զրկուի և դրանով շէյխի խղճի վրայ ծանրանայ մի բեռ ևս։

Յանկարծ փախիններից մէկը մռմռաց.

—Ինչեր է խօսում այս քեաֆիրը...

Բարկացայ, ձեռքս սրիս տարայ և դառնալով փախիններին, գոչեցի.

—Ո՞վ է այդ շունը, որ համարձակուեց իր կեղտոտ բերանը բանալ...

Քիրվէս առաջ նետուեց. զգաց, որ գործը վատ ընթացք էր ստանում։

—Աղա,—գոչեց նա ինձ,—թող ուտեն, ես կըվճարեմ։

—Հա, հա, հա,—ծիծաղեցի ես,—փախին և մօլլան ուտեն, քիրէ՞ն վճարէ. ո՞ր ղուրանի մէջ է գրուած այդպիսի օրէնք։

Փախիներից մէկը առաջ նետուեց և ձեռքը տոպրակներին տանելով, ասաց.

—Մեր մեծ շէյխինն է այս, որովհետև նա ձեռք տուեց սրան։

—Լաւ,—ասացի,—ապրանքը գեաւուրի է. ուստի բարեպաշտ շէյխը պիտի բարեհաճի անիծել այս ապրանքը։

Եւ շէյխին նայեցի։

Նրա դէմքը բարկութիւն էր արտայայտում։ Ոտքի ելաւ, քօղով դէմքը ծածկեց և խռպոտ ձայնով գոռաց.

—Մա՛հ գեաւուրներին...

—Մա՛հ գեաւուրներին,—մռնչեց ամբոխը։

Եւ բոլորը սուրերը քաշեցին։

Զգացի, որ բարկութիւնից շրթունքներս դողացին. ես ևս քաշելով երկայն սուրս և դառնալով մօտեցող ամբոխին՝ գոռացի.

—Լսեցէք, շէյխ, փախիներ և մօլլաներ... դեռ ևս ո՛չ մի շէյխ և նրա շները չեն կարողացել Խէրանի դէմը կանգնել... հեռո՛ւ գնացէք, ապա թէ ոչ Խէրանը մէկ-մէկ կըբըրդէ ձեզ... Ես Խէրանը լինեմ և դուք սո՛ւր քաշէք ինձ վրայ։

Մի քայլ առաջ գնացի, դարձայ ապշած ուսուցչին և—վարժապե՛տ,—ասացի հայերէն,—ես Հայ եմ և Խէրանն եմ, հրացանդ բանեցո՛ւր, եթէ կարող ես։

Շողացրի սուրս և ցատկեցի դէպի շէյխը։

Մի շփոթ տիրեց սենեակի մէջ. ճրագը հանգ-

գաւ. չգիտէի, թէ ո՛ւմ էի զարնում, միայն թէ զարնում էի... Սենեակը լցուեցաւ ծուխով. գընդակ էր, որ արձակւում էր... ոռնոցներ, հայհոյանք, ատրճանակի արձակման ձայներ պահ մի խլացրին ականջս... Յետոյ յանկարծ, լռութիւնը տիրեց սենեակում և երբ զգացի, որ այլ ևս սըրիս առջև ո՛չ ոք չկար, մի լուցկի քաշեցի և չորս կողմս նայեցի։

Սոսկալի էր տեսարանը։

Շէյխը արիւնաթաթախ ընկել էր օթոցի վըրայ, սուրս կտրել էր նրա աջ ականջը և թևի գլուխը... մի քանի դիակներ երևում էին այս-այն կողմ. վարժապետը լռութեամբ և ժպտելով մի փամփուշտ էր դնում հրացանի մէջ, իսկ տոպրակների ետևում անզգայ ընկած էր վաճառականը։

Այլ ևս ոչ ոք չըկար սենեակում, սակայն դրսից լսւում էին ոռնոցներ, ատրճանակի ձայներ, որոնք հետզհետէ դադարեցին։

Չըկարողացայ ծիծաղս զսպել, երբ քիրվէս գունաթափ ներս մտաւ։

—Բոլորը փախան,—ասաց նա,—շատ մարդ կոտորեցիր. անունդ սոսկացրեց նրանց... Այնպէս փախչում են, որ ետևներիցը չի կարելի հասնել...

—Եւ ատրճանա՞կ են արձակում,—հարցրեցի ես ծիծաղելով։

—Այրած սրտի մխիթարանք...—ասաց վար-

ժապետը։ Յետոյ ձեռքը ինձ պարզեց և ասաց հայերէն.

—Խէրա՛ն, լսել եմ անունդ, տեսայ և քեզ... Քաջ ես...

Քիչ-քիչ ուշքի բերինք վաճառականին և ես առաջին անգամ լինելով, խօսեցի նրա հետ հայերէն.

—Շո՛ւտ,—ասացի նրան,—ունեցածդ ժողովի՛ր և հեռացի՛ր գիւղից։

Զարմացած պահ մի երեսիս նայեց, յետոյ վեր կացաւ և սկսեց ունեցածները ժողովել և երբ կամենում էր դուրս գնալ, մէկէն կանգ առաւ ու հեգնութեամբ ժպտելով, ասաց.

—Հա՛, յիշում եմ, հա՜յ ես եղել... Հը՛մ...

Կարծես թէ մի բռունցքի հարուած եղան այդ խօսքերը և իջան գլխիս։ Շշմեցի և լռութեամբ վարժապետին նայեցի։

—Յիմար է,—ասաց դառնութեամբ վարժապետը.—ուշադրութիւն մի՛ դարձնիլ նրա խօսքերին...

—Յիմարը դո՛ւ ես,—գոչեց վաճառականը յոխորտալով.—շատ մի՛ խօսիլ, թէ չէ ատամներդ փորդ կըթափեմ...

Վաճառականը քաջացել էր։ Թէև քիչ մնաց կատաղէի, բայց զսպեցի ինձ և գոչեցի.

—Շո՛ւտ, փալաս-փուլուսդ ժողովի՛ր և կորի՛ր այստեղից։

Ինձ նայեց հեգնութեամբ. ձին բերեց, բառ-

նաց, նստեց վրան և երբ հեռանում էր,—երբէ՛ք չեմ մոռանալ,—ասաց արհամարհաբար.

—Հա՛յ է եղել...

Եւ հեռացաւ։

Քիչ մնաց լաց լինէի։ Հրացանիս մէջ մի փամփուշտ դրի և կամեցայ ուղղել դէպի գնացող վաճառականը, բայց վարժապետը հասկանալով միտքս, բռնեց հրացանի փողը և ասաց.

—Մի՛, Խէ՛րան, հինգ հոգի ունի, որոնց կերակրողը ինքն է... խղճա՛ այդ հինգ մանուկներին, որոնք իրենց հօրեղբօր պէս չըպիտի լինեն գուցէ...

Դառնութեամբ իջեցրի հրացանը։

Խիստ տխրութիւն պատեց ինձ։ Ձիս հեծայ և երբ վարժապետն էլ հեծնում էր՝ հարցրի.

—Ո՞ւր պիտի գնաս։

—Դո՞ւ ուր պիտի գնաս։

—Ո՛ւր որ Աստուած առաջնորդէ, ասացի։

—Թոյլ կըտա՞ս, որ հետևեմ քեզ։

Նրան նայեցի. ժպտում էր և այդ ժպիտը խիստ դուրեկան էր։ Ձեռքս նրան պարզեցի և ասացի.

—Գնա՛նք ..

V

Առաւօտեան դէմ Մանազկերտ հասանք։

Վարժապետը իջնելուն պէս, գնաց բերդի հայերէն մի քանի մնացած արձանագրութիւնները կարդալու. իսկ ես մտայ հայերի բնակուած խանը այնտեղի սրճատնում մի սուրճ խմելու։

Երբ ներս մտայ, բոլորը ոտքի ելան, սրճագործը վազեց դէպի ինձ և քրդերէն հարցրեց, թէ ի՞նչ էի կամենում խմել։

—Սուրճ,—ասացի ես նոյն լեզուով։

Բոլոր նստողները հայեր էին, որոնք ինձ քուրդ կարծելով, վախվխելով ինձ էին նայում և ցած ձայնով խօսակցում։

Երբ ներս էի մտնում, նրանք բարձր ձայնով էին խօսակցում միմեանց հետ, իսկ այժմ հազիւ լսելի ձայնով սկսեցին խօսել։

Պատկառո՞ւմ էին, թէ՞ վախենում։

Հազիւ թէ սուրճը բերանս էի տարել, որ յանկարծ մէկը ձայնը բարձրացրեց և գոչեց.

—Ի՞նչ էք վախկոտների պէս փսփսում... Ինչի՞ց էք վախենում, որ այդպէս ցած ձայնով էք խօսում։

Յետոյ—տարօրինակ բան—մի քրքիջ արձակեց, յանկարծ հեգնական մի կերպարանք ստա-

ցաւ և դառնալով դէպի ինձ, գոչեց արհամարհական շեշտով.

—Ա՛խպէր, ո՞րտեղացի ես։

Զարմացայ. ո՞րտեղից իմացան, որ հայ էի։ Բայց յանկարծ երբ տեսայ սրճատան մի անկիւնում հեգնօրէն ժպտող վաճառականիս, պատասխանեցի.

—Ալուրցի եմ։

—Հա՛, հա՛, հա՛... գոչեց նա,—իմացայ որ ալուրցի պիտի լինես...

—Ծօ, ծօ, նայեցէ՛ք,—դառնալով նա միւս հայերին,—ալուրցին տեսէք ինչպէս «եալանչի փէհլվանի[1]) պէս քրդի հագուստ է հագել...

—Վա՜յ,—գոչեց մէկը նոյնպէս հեգնութեամբ,—հրացան էլ ունի։

—Եամա՜ն,—ասաց երրորդը,—ձեռքից առէք, յանկարծ ինքն իրեն կըխփի...

—Չէ, կոռադար[2]) կանի,—ծիծաղեց չորրորդը.—ով գիտէ փամփուշտ էլ չունի։

—Բիթ բազարից[3]) է առել,—գոչեց սրճագործը և մօտենալով հրացանիս, յետոյ երեսիս նայելով յարեց,—քանի՞ փարայ[4]) ես առել այս։

—Ջօ,—գոչեց միւսը,—սուրճի փողը առ...

Ապշած էի այդ հեգնութիւնների կոյտի տակ

---

[1]) Ղարախաղի խրտուիլակը։ [2]) Զահրումարի նոյնանշանն է միայն այստեղ։ [3]) Այն շուկան, ուր փչացած և հին բաներ են ծախում։ [4]) Այստեղ նշանակում է ամենափոքրիկ մի դրամ. արհամարհական ձև է։

ընկնելով և գուցէ դեռ շատ ծաղրէին ինձ, եթէ այդ միջոցին ներս չըմտնէր վարժապետը, որ ծանրութեամբ մօտեցաւ, նստաւ կողքիս և հարցրեց.

—Սուրճ խմեցի՞ր...

—Վա՜յ,—գոչեց մէկը այն կողմից,—ալուրցին պատուելի[1]) էլ ունի...

—Ծ ո՛ ւ ռ[2]) ես, ինչ ես,—գոչեց երկրորդը,—էդ պատուելին ալուրցու աղաների պատուելին է...

Վարժապետը նախ ապշած ամենքին նայեց, յետոյ դէմքը խոժոռեց և գոչեց.

—Է՜յ, աղաներ, էֆէնդիներ, այդ ո՞րին էք ծաղրում...

Փոխանակ պատասխանի, բոլորն էլ քրքիջ արձակեցին։

Վարժապետը ցատկեց տեղից, բռունցքի մի ուժգին հարւածով տապալեց իր մօտը նստող առաջին ծիծաղողին և հրացանը կոթից բռնելով՝ մի փամփուշտ դրեց նրա մէջ և գոչեց.

—Ատամներդ ծածկեցէք, թէ չէ... բոլորն էլ մէկ-մէկ դուրս կըթափեմ այս բոպէիս...

Բոլորը դադարեցին ծիծաղելուց, փամփուշտը տեսել էին։ Ես սթափւեցի իմ ապշութիւնից, լըջացայ, ոտքի ելայ, լռութեամբ սուրճի փողը տւի և ծանր քայլերով մի անկիւնը նստած՝ վա-

---

1) Պատուելի թէև կոչում են բողոքական ուսուցիչներին, բայց և կոչում են հին և ծեր անօգուտ ուսուցիչներին։ 2) Խենթ։

նեցի վաճառականին մօտեցայ և նրան նայեցի։

Վաճառականը գունաթափ ետ-ետ քաշւեց։

Վարժապետը մօտեցել էր ինձ։

—Բոլորի պատճառը սա է,—ասացի նրան դառնալով։

—Ա՜խ,—գոչեց վարժապետը.—նորէ՞ն դա...

Ձեռքս մօտ տարայ վաճառականին։

—Մի՛,—գոչեց վարժապետը թևս բռնելով,—հինգ որբեր ունի...

Գլուխս կախեցի, հրացանս առի և դէպի դուռն ուղղւեցի։ Երբ դռանը հասայ, կանգ առի, դարձայ և գոչեցի վաճառականին.

—Զգուշացի՛ր, երրորդ անգամ Խէրանի ձեռքից չես ազատւի։

Եւ դուրս գնացինք։

Գիւղի խանութներից մէկի առջև իջանք, հրամայեցինք խանութպանին մեզ համար ձւաձեղ շինել և ձիու սանձը բռնած՝ նստեցինք խանութի առջևում դրւած փայտեայ նստարանի վրայ։

Քիչ յետոյ ձւաձեղը պատրաստ էր. սկսեցինք ուտել լռութեամբ, բայց մեզ չըթողին որ «հալալ» հաց ուտենք, որովհետև յանկարծ մի ձիաւոր ատրճանաւոր կանգ առաւ խանութի առաջ, իջաւ ձիուց և մօտենալով մեզ, հարցրեց կոպիտ ձայնով.

—Ո՞րտեղացի էք։

—Վանեցի,—պատասխանեցի ես։

—Ձեր անցագի՞րը։

—Համբերի՛ր հաց ուտենք. համեցէ՛ք դուք էլ։

—Կերէ՛ք,—գոչեց նա.—բայց և ուտելուց յետոյ հետևեցէք ինձ միւթասարիֆի[1]) մօտ։

—Ինչո՞ւ,—հարցրեց վարժապետը։

—Խօսք պէտք չէ,—գոռաց բարկութեամբ ոստիկանաւորը...

Յանկարծ աչքս մի կողմ դարձնելով՝ տեսայ փոքր ինչ հեռու, մի խանութի առջև կանգնած հայ վաճառականիս, որը մի ոստիկանաւորի հետ խօսում, հեգնօրէն մեզ էր նայում և ցոյց էր տալիս։

Այլ ևս անկարող եղայ համբերել։

—Վարժապե՛տ,—ասացի,—նայի՛ր։

Եւ ցոյց տւի վաճառականին։

Նա նայեց, տխրութեամբ մտածեց և ասաց.

—Արա՛ ինչ որ կուզես...

—Ծոցումս մի քսակ ոսկի ունիմ,—ասացի դողդոջուն ձայնով,—վաղը կուղարկեմ Վան դրա եղբօր որդւոց, իսկ դա անարժան է այլ ևս ապրելու... Քուրդից վատ է...

—Հէնց դա է մեր ցաւը...—մռմռաց ուսուցիչը։

—Շո՛ւտ արէք,—գոչեց ոստիկանաւորը հեծնելով,—գնա՛նք։

—Վարժապե՛տ,—ասացի ընկերիս,—ձիդ հեծիր և որչափ կարող ես քեզ պաշտպանիր միա՛յն. չըխփես մեռցնելու համար...

[1]) Գաւառապետ։

Վարժապետը հեծաւ։ Ես դանդաղութեամբ մօտեցայ ձիուս, հեծայ և դառնալով ոստիկանաւորին, ցոյց տւի հայ վաճառականին և՝

—Սա՛ մատնեց մեզ, — ասացի, հրացանս բարձրացրի, նշան առի և գունաթափ արձակեցի...

Հայ վաճառականը գոռաց, թևերը պարզեց և ընկաւ գետին։—Քշի՛ր, վարժապե՛տ,—գոչեցի ես ձիուս կողերը խթելով և մենք նետի արագութեամբ անհետացանք բլուրնիվեր արշաւելով...

Մի քանի գնդակներ եկան անցնելու մեր կողքերից, որոնք շատ հեռուից անցան և միայն գետնից փոշի հանեցին...

Վատ նշան էին առնում այդ զօրքերը...

Դրանից յետոյ անցան չորս երկա՛ր տարիներ. միշտ ցաւում եմ, որ մի հայ եմ սպանել, բայց վարժապետը համոզում է ինձ, որ լաւ արի։

Քանի՜-քանի անգամ իմ ազգակիցների կողմից այդպէս արհամարհանքներ եմ կրել, երբ իմացել է, որ քուրդ չեմ, այլ հայ։

Վարժապետը միշտ ինձ հետ է։ Նա փոխեց ինձ. ցոյց տւեց մի նպատակ և ես այլ ևս նախկին հովի պէս սլացող և աննպատակ կռուող ու թափառող Խէրանը չեմ...

Պատմեց Խէրանը, ծխեց իմ ներկայացրած գլանիկը, հեծաւ ձին և ժպտելով ասաց.

—Ժամանակ է ճանապարհ ընկնելու, լաւ գիշեր է։

Ով Իգդիրից Վան գնացել է, կամ Թափառել է Աբաղայի մէջ, կամ մտել է Կոտոլի կողմով Մուսա աղայի իշխանութեան կողմերը և կամ հետաքրքրուել է՝ նա լսած կլինի Խէրանի մասին, որ շատ անգամ, իր անբաժանելի կեղտոտ հագուստով և հնամաշ ֆէսով լռակեաց վարժապետի հետ՝ կարավանի առջևն է ընկնում և անց է կացնում վտանգաւոր տեղերից։

1889.

ԾՈՎԻ ՎՐԱՅ

I

Դէպի Աղթամար էինք գնում աշնանային մի զով գիշերով։ Գիւղից ելած, ծովափի աւազների մէջ կանգ էի առել և սպասում էի քահանային, որի հետ խօսք էինք տուել միասին ճանապարհորդելու։

Վերջալոյսն էի դիտում Վանայ ծովի վրայ։ Ջուրը լերդ կանաչ էր կտրել. կոհակները միմեանց հրելով հեռանում էին դէպի խորքերը և փրփուրի գծեր կազմում. հեռւում երևում էին եզերքների գիւղերը, ծառաստանները. մի այլ կողմում Աղթամար կղզու կէսն էր, հորիզոնի մի կողմի վրայ՝ Կտուց անապատը, իսկ միւսի՝ Առտէր կղզին, որ մի մեծ սև թռչունի նման՝ երբեմն կարծես ընկղմում էր ջրի մէջ և երբեմն դուրս ցցում իր ժայռոտ լերկ գանգը։

Մայր մտնող արեգակն այդ միջոցին աղօտ ճառագայթներով խաղում էր ջրերի հետ ու լայն լուսաւոր ուղի գծում մինչև ափը. Նրա դէմքը

նման էր հրաշէկ գնդակի, որ հետզհետէ ընկըղմում էր փրփրալից սև ջրի մէջ և լուսաւորում գլխի վրայի ամպերը, նրանց եզերքներին վարդագոյն աննման ժապաւէններ կազմում և դիմացի մի այլ ամպի էլ բոցավառ ու անշարժ խարոյկի տեսք տալիս։

Նաւավար Թորոսն այդ միջոցին նաւակի քիթը ցցել էր աւազի մէջ և մի քանի գիւղացիների օգնութեամբ նաւակն էր մտցնում ոչխարները։

Մինչ այդ՝ արեգակը հետզհետէ ընկղմում էր, ամպերը մեղմացնում էին իրենց բոցը, լուսոյ շառաւիղը աղօտանում էր, ծովը թանաքի գոյն ստանում, կոհակները մեծանում էին, փոսփորային կայծեր արձակում և միմեանց մղելով գալիս շառաչիւնով փուլում էին ոտերիս տակ։ Եւ Առտէրը թաղնւում էր խաւարի մէջ, Կտուցը անորոշ կերպարանք ստանում ու եզերային ծառերը և գիւղերը նմանում էին մռայլ ստուերների։

Մի ձայն սթափեցրեց ինձ։ Քահանան էր. ձեռին բռնել էր մի մեծ կապոց, ապա մի հողէ գինու աման։

—Գնա՛նք, որդի—ասաց նա—նաւ մտնենք։

Ու մտանք։ Պատրաստ էր։ Քահանան քըղանցքը ծալելով ոլորեց, մէջքի վրայ ցցեց, կապոցն ու գինին ցած դրաւ ոտերի մօտ, յետոյ, երբ ես կռթնած կայմին՝ նայում էի սև ջրերին,

դարձաւ դէպի արևելք և կարդաց.

—«Տէր, ուղղեա զգնացս մեր...

Եւ այդ խուլ աղօթքը, խառնւելով կոհակների շառաչիւնին, նաւակի ծփման ու Թորոսի՝ պարբերաբար խարխուլ նաւակից շերեփով ջուր դուրս թափելուն, մի խոր տպաւորութիւն էր սփռում շուրջը։

Բարձրում, գիւղի մէջ, տեղ-տեղ պլպլում էին ճրագներ, հեռուն—անտառի ծայրում երևում էին նախրորդների և ածխագործների կրակները. իսկ անտառի ստորոտները ընկղմել էին խաւարի մէջ։

Վերջապէս շարժւեցինք։ Թորոսը դադարեց ջուր դուրս թափելուց, հրամայեց առագաստ պարզել և թռաւ ափի վրայ, որպէս զի նաւակը ջուրը մղէ։

Ծովի տարածութեան հորիզոնից սկսում էր երևալ լուսնի կէսը՝ արծաթազօծ կողերով հայելու նման՝ և լոյսի մէջ ողողել գողդոջուն ջուրը։

—Սիրուն է, չէ՞, մեր ծովը,—ասաց քահանան.—մարդ նայելուց չէ կշտանում... Բայց շատ էլ կատաղի է անիծածը... Աստուած անի որ փոթորիկ չբարձրանայ...

Յետոյ դարձաւ նաւավարին և գոչեց.

—Թորոս, փոթորիկ կունենա՞նք։

—Չէ, տէր-հայր։

Մէջքը դէմ էր արել նաւակին. ասաց, այժ

տւաւ, սահեցրեց դէպի ջուրը և ապա ցատկեց նրա մէջ ու դարձաւ նաւաստիներին.

—Առագաստը... աղաղակեց նա։

Ու նաւակը շրջան գործեց, պատռեց ջուրը. առագաստը արագութեամբ բարձրացած՝ ուռաւ, մենք ծուեցինք մի կողմի վրայ ու առաջ սլացանք։

—Եա՛ Նարեկայ սուրբ ճգնարան, ասաց Թորոսը, քչօլօզը հանեց, խաչակնքեց, յետոյ նորից դրեց և որպէս թէ խօսքը կիսատ էր թողել, դիմեց քահանային.

—Չէ, տէր-հայր, Աստծու ողորմութիւնով փոթորիկ չենք ունենալ. բայց ալէկոծութեան խօսք չունիմ... քիչ-միչ...

Նաւակը սլանում էր և հետքերի վրայ պայծառ գիծ թողնում. երբեմն կողը այնքան ծռում էր, որ ձեռքս կոխում էի ջրերի մէջ և թոյլ տալիս որ մատներիս ծայրերից կաթկաթեն շողշողուն շիթեր։

Կղզիները անհետացել էին. խաւար խորքի մէջ ափն էր, այսինքն, Նեմրովտ և Գրգուռ լեռների կոյտը և հեռւում Սիփանը՝ իր ձիւնափայլ կատարով։ Փչում էր ծովային զով, գրեթէ ցուրտ քամի։

Քահանան ցրտից սկսել էր դողալ, մէկ-մէկու վրայ գինու բաժակ էր դատարկում ու մրմռում.

—Կարծես ցուրտ է, հը՞... չե՞ս ուզում, վարժապե՛տ։

Ու ինքն էր խմում։ Ես էլ խմեցի. մի բաժակ էլ Թորոսը կոնծեց, յետոյ բարձրացաւ դէպի մեզ իջնող ցանցաձև հովանոցը և ծածկեց նրան մի կտաւով։

—Խմեցէ՛ք,—բացականչեց քահանան տաքացած.—«կե՛ր, ա՛րբ և ուրախ լե՛ր»... ա՛ռ, ա՛ռ սա փոխինդից... մի տաղ էլ ասա լսենք. կարդացւոր մարդ ես, ազգային տաղեր շատ կըգիտենաս...

Եւ ես նայելով իմ հայրենի ծովին, յիշեցի հայ բանաստեղծի խօսքերը՝

«Ջա՜յն տուր, ո՛վ ծովակ...

Ու երգեցի. ձայնս տարածւում էր ջրերի վրայ դէպի հեռուները և կարծես դողդողում էր թարմ օդի բարձրերում։

Ծովի ալիքները մեծանում էին, նաւակը սկսում էր մեծապէս շարժուել։ Քիչ յետոյ քահանան պառկեց, իսկ ես մի տեսակ անշարժութեան մէջ, աչքս լուսնի շողքի տակ սրթսրթացող կապոյտ ջրերի վրայ յառած՝ խորասուզուեցի երազների մէջ...

Թորոսի ձայնը սթափեցրեց ինձ.

—Կըմրսես, վարժապե՛տ,—ասում էր նա.—քնի՛ր. հիմա մեծ ալէկոծութիւն կըսկսի։

—Քունս չէ տանում, իսկ ալէկոծութիւնը սիրում եմ։

—Ուրեմն այստեղ ինձ մօտ արի՛, որ ալեկոծութիւն տեսնես... Նստելու տեղ կայ. բայց ծածկոցդ վերցրո՛ւ, որ մէջը փաթաթուես։

Վերցրի ծածկոցս և Թորոսի կողքին տեղաւորուեցի։

II

—Կատաղի ծով ունինք,—խօսեց Թորոսը.—անցեալ տարի հէնց այս կողմերումն էր, որ մի Աւանցու նաւակ ընկղմեց ու մօտ 40 հոգի խեղդեց։

—Քառասո՞ւն...

—Մէջն էլ մի քահանայ կար ու երկու կանայք։ Աղթամար ուխտի էին գնում խեղճերը... Տե՛ս, վարժապե՛տ, քիչ դէպի աջ նայի՛ր, այդ ալիքները տեսնո՞ւմ ես, մեծանալու-մեծանալու են և ծովը օրօրեն... ըհը՛, եկան... չըվախենաս...

Հեռուից, իջնելով ու ելնելով, թանձր կանաչագոյն մի քանի խոշոր կոհակներ, հաւաքուելով ուրիշ շատերի հետ մեծացան ու յուղուած՝ սրացան դէպի նաւակը. մի ընդհանուր շարժումով ջրերը նաւակի չորս կողմից ետ քաշուելով՝ փոսացան, ապա նորից դիզացան եկող կոհակների հետ և երբ նաւակը շիւղի պէս նրանց կատարի վրայ էր թռնում, պայթիւնով ճայթեցին նրա կողին ու ջրի մի լեղի անձրև տեղացին մեզ վրայ։

—Այս առաջինն է,—ասաց Թորոսը և ղեկը դարձրեց։—Դեռ սա ի՞նչ է որ,—շարունակեց նա.—ա՛յնպէս սոսկալի սարեր են կազմում, ա՛յնպէս կատաղաբար, երկու աժդահաների նման միմեանց վրայ գահավիժում ու թաւալում, որ Աստուած մի՛ արասցէ, եթէ նաւակի մէջ ընկնի, փշուր-փշուր կըլինի... բայց փոթորիկ չենք ունենալ... Հրամանքդ առաջին անգա՞մն ես մեր ծովի վրայ...

—Առաջին անգամն է։

—Շնորքը կըտեսնես մի քիչ... Անցեալ օր էր որ տակովս անցաւ 5 նաւակ. բոլորն էլ ցորեն ու ոչխար բարձած, մի ամբողջ գիւղի տունը գրեթէ աւերեց, ունեցած-չունեցածը ջուրը թափեց...

—Ծախելո՞ւ էին տանում։

—Այո՛, Վան էին գնում... Նաւավարներից երկուսը ազատուել են, միւսները խեղդուել։

—Ձե՞ր գիւղերից էին։

—Ո՛չ... Ալջավազից էին. լուրը երէկ բերին մեզ... Բայց, վարժապե՛տ, չէ՞ որ ալջավազցոց ցաւերն էլ մերինների նման են. մեր սիրտն էլ են դաղում նրանց դժբաղդութիւնները... Անցի՛ր ձախ կողմս, որ էլի չըթրջուես։

Անցայ ձախ կողմը. նորից մի ալիք պայթեց նաւակի կողի վրայ և լւաց նրա ցռուկը։

—Այո՛,—շարունակեց Թորոսը,—ծովն անգամ զուլումանում է մեզ։ Սրանից տաս օր ա-

ռաջ հարկահանի ցորենաբարձ նաւակները ճանապարհ ընկան։ Մի զարմանալի բան էր... Առաջին օրը ծովը փոթորիկից տրաքում էր. բայց յանկարծ հանդարտեց և անիրաւութեամբ հաւաքուած ցորենը տեղ հասաւ անփաս։ Այդ դէմքըծուռ մուռտառին տեսնո՞ւմ ես...

—Ո՞վ։

—Լուսինը... Այնպէս լուսաւորել սկսեց, որ կարծես թէ ծաղրում էր մեզ։ Իմ նաւակը բերնէ-բերան լցրել էին... Ոստան իջանք. մի հատիկ իսկ չըկորսուեց. հարկահանի ոտքը ուրախութիւնից գետնին չէր դիպչում...

—Դիպուած... ասացի ես։

—Դիպուա՞ծ... գոչեց Թորոսը բարկութեամբ և աջ ձեռքի թիակը դէմ տուաւ.—դիպուա՞ծ... Ինչո՞ւ այդ դիպուածը քոռանում է, երբ մե՛ր արդար քրտինքն է մէջտեղ գալիս, երբ մեր ցորենն է գնում, մեր ոչխարները... Չէ՛, վարժապե՛տ, մենք մի անիծուած ազգ ենք...

—Այդպէս մի՛ խօսիր, Թո՛րոս, մենք ի՞նչ ենք արել, որ անիծուած լինենք։

—Չըգիտեմ, հաւատա՛ որ չըգիտեմ... Ապա ինչո՞ւ ամբողջ տարին տքնում ենք, սիրտ ենք մաշում, դողում ենք, երբ երկնքի վրայ ամպ չըկայ. ուրախութիւնից գժւում, երբ անձրև է գալիս, ահագին կռիւներ ենք սարքում միմեանց մէջ՝ մի հատ ցորենի համար, մեր բերանից կտրում ենք, մեր երեխայոց մերկ թողնում, ա-

րևի տակ ճենճերւում, խանձւում ենք, ձեռքներս կոշտացնում... Ցանում ենք, հաւաքում, աշխատում ենք մի խիլ անգամ չըկորցնել և յետոյ... Յետոյ գալիս են մի սիւրու գայլեր, խփում մեր գլխին և մեծ մասը տանում. իսկ միւսը երբ ուզում ենք գործածել—ծովն է կուլ տալիս... Է՜հ...—արեց, յուզմամբ դարձրեց զեկի բռնատեղին և նայեց լուսնին։

—Ձեզ ո՞վ է ասում տուէք, ինչ որ ուզեն,—ասացի ես.—եթէ մեծ մասը չըտաք, այս փոքր մասի՝ ջրի մէջ կորսուելը—որ պատահմամբ է լինում և ոչ միշտ—ձեզ շատ չի վշտացնիլ։

—«Չըտա՛լ, չըտա՛լ»... Մի քանի տարի է որ քեզ նմանները այդպէս են գոռում... Չըտա՜լ... Ինձնից աւելի համարձակ, ինձնից աւելի ընդդիմադրող չըկայ գիւղում... Եւ ինձնից աւելի վնասուողն էլ չըկայ։ Գիւղացիք անգամ ինձ անվարւեցող են կոչում, նախատում են... անունս «ծուռ» են դրել. հարկահաւաքին էլ ասում են. «բանի տեղ մի՛ դնիլ, Թորոսը հանաք է անում»... Եւ հարկահանն էլ ինձ «կատակով» աւելի է նեղացնում, ինձնից աւելի վերցնում, յետոյ նոյն տեսակ «կատակով» նաւակս լցնում ու հրամայում որ ձրի փոխադրեմ... Աստուած է վկայ, քանի՜-քանի անգամ ուզեցի նաւակը ընկղմել, ցորենն էլ ու շահնային էլ ջուրը թափել, ինձ էլ հետը, բայց... այս անիծած կրծքի տակ սիրտ կայ, խիղճ կայ...

Եւ երկու ուժգին հարւած տւեց կրծքին, որից դուրս թռաւ մի խոր հառաչ։

—Իմ ձեռքս չէ՞,—շարունակեց նա.—ա՜յ, որ ղեկը այսպէս դարձնեմ, ալիքները դէմ կըգան ու կըփշրեն ամեն ինչ. ո՞վ կիմանար... Ես էլ լողալով կամ կազատւէի կամ ոչ... շատ էլ ազատւելու պէտք չունէի, կըմեռնէի, այդ աւելի լաւ էր... Բայց վերև Աստւած կայ, որ դատում է մեզ, այստեղ խիղճ կայ... Ո՞ր մէկին էլ ջրով անես, ո՛ր մէկի հաւաքածը ծովը թափես. ինչո՞ւ... դրանով կազատւե՞նք այդ անիրաւներից... Այս ալիքները տեսնո՞ւմ ես. հաւատացած եմ որ եթէ նաւակիս միջի ուխտարները Մկրտիչ աղայինը—վաշխառուինը—չըլինէր և ինձ կամ մի գիւղացու պատկանէր—խաղոյն նաւակը շուռ կըգար կըփշրւէր... Բայց անիրաւ ապրանք է, և պիտի տեսնես, ողջ տեղն է հասնելու... Մի պապիրոս չունի՞ս, վարժապետ...

Ծխեցի ու տւի։ Վառեց, բուռն շնչով մի քանի անգամ ծխեց և դէմքը խոժոռ, վշտերով ակօսւած, լուսնի տխուր փայլի տակ դէպի հորիզոնը ուղղած՝ մնաց լուռ և մտախոհ...

Ու նաւակը սլանում էր, ճեղքում սև ջրերը և ծփում մեծ ալիքների վրայ...

1897.

ԱՐԵԱՆ ԲԾԵՐ

I

Խնուսի լեռների մէջ, մի բարձրաւանդակ կանաչ տափարակի վրայ, գինեբրուկների արմատը գգւող վճիտ առւակի եզերքին հանգչելու իջանք։

Մթնանում էր։ Գարնանային ցուրտ երեկոյ էր։

Վերարկուները գետնի վրայ տարածեցինք, չոր մացառներից խարոյկ կազմեցինք ու պայծառ, բայց անլուսին երկնքի տակ ընկողմանած՝ քիչ շունչ առինք։

Հովիտ էր, բարձրաւանդակ փոքրիկ հովիտ, որ իր մի եզրով դահաւանդ էր կազմում դէպի դաշտը, իսկ միւս բերանը բաց էր անում դէպի ահռելի անդունդ, ուր ջրվէժ առ ջրվէժ ոստոստում-վիժում էր գարնանային հեղեղներից մեծացած մի պղտոր գետակ։

Դէմ առ դէմ լեռը սանդուխաձև ենելով մարում էր մշուշի մէջ. նրա կրծքի վրայ, դէպի

դաշտը կռացած՝ սևին էին տալիս անտաշ մանր քարերից բաղկացած շէնքերի մնացորդներ, որոնք այժմ անտէր՝ փուլ էին եկել, գլորւել դէպի ցած ու քարադէզեր կազմել։

Այդտեղ էր ահա որ հանգչել էինք ուզում։

Երբ քիչ տեղաւորւեցինք ու հաց կերանք, մեզնից մէկը, որ սրինգ էր ածում, նստեց ու սկսեց նւագել։ Թիկն տւած, հայեացքս փուլ եկած շէնքերի աւերակներին, լսում էի մելամաղձոտ գիշերերգը, որ խուպոտ հեկեկանքներով հայրենիքի աղէտներն էր արտասւում, նրա թշւառութիւնը ողբում...

Իսկ լեռը, քանի գնում էր, ստւեր էր մեծացնում ու հովտի կէսը մթութեան մէջ առնում։ Երբեմն հեռւից լսւում էր բուի տխուր վայիւնը, ապա յանկարծ, դաշտի կողմից ականջիս էին հասնում հեռաւոր—անդնդային ոռնոցներ, որոնք քստմնեցուցիչ շեշտերով օդն էին պատռում։ Խարոյկը մի կողի վրայ պլպլում էր, ճաթճթում էր ու հետզհետէ իջնում ու աղօտանում. կչկչան առւակն էլ կարծես երբեմն լռում էր ու թագնւում և երբեմն շշուկով դուրս նետւում-գալարւում դէպի հեռուն և իր հետքերի վրայ մի տխուր մրմունջ տարածում...

Յանկարծ մեզ հետ վերցրած գամփռը սկսեց կատաղի կերպով հաջել և յարձակւել հովտի մութ կողմի վրայ։

Սրինգը լռեց, ընկերս վեր թռաւ և հրացան

ի բռին՝ առաջ գնաց գամփռի ետևից, իսկ մենք հեռացանք խարոյկի լոյսից և մթան մէջ սպասեցինք։

Ճանապարհի վրայից լսւում էին ձայներ, ճիշտ կըլինէր ասել—հառաչներ, լաց... Կարծես մանուկներ էին, որոնք ճչում էին, աղիողորմ կերպով ողբում։

—Ո՞վ է այն, կանչեց ընկերս։

Եկողները կանգ առին ու լռութիւն տիրեց։

Մանուկներին՝ թւում էր որ սաստում էին լռելու. մինչև իսկ ձեռներով փակել էին ճգնում նրանց աղաղակող բերանը։

—Գիւղացիներ են,—ասաց ուղեկիցներից մէկը—կին ու տղայ ունին հետները։

—Իսկ եթէ քիւրդեր են և գիւղերից թալան են տանո՞ւմ,—առարկեց մի ուրիշը։

—Լոյսի եկէք, ո՞վ է,—գոռաց մեր գլխաւորը—լոյսի մէջ եկէք, ապա թէ ոչ՝ կըհրացանեմ։

Այն ժամանակ խմբից բաժանւեցին մի քանի հոգի և առաջացան դէպի լոյսը։

Գիւղացիներ էին, հայ գիւղացիներ, մէջքերի վրայ կապած տոպրակներ, կքւած նրանց տակ։ Գունատ էին, փոշոտ, մանաւանդ ցեխոտ. հազիւ կարողանում էին ոտքի վրայ կանգնած մնալ։

—Եամա՜ն, աղաներ, ձայնեց իսկոյն նրանցից մէկը,—տեսնում եմ որ հայ էք, թողէք այս գիշեր ձեր կողքին ցած ընկնենք, հանգստանանք,

կոտորեցինք քաղցից, յոգնութիւնից… սաղ օրը քայլում ենք։

—Ո՞ւր էք գնում, հարցրի ես, և ո՞րտեղից էք գալիս։

—Ես գիտե՞մ,—ասաց ծերունին և լռեց, միւսը խօսեց նրա փոխարէն։ Մի երիտասարդ էր խամրած աչքերով և թոյլ կեցուածքով, ոյժ չըկար վրան։

—Մենք էլ չըգիտենք,—ասաց նա.—ցածի գիւղերից ենք, գնում ենք այնտեղ, ուր մեզ չեն սպանիլ, չեն չարչարիլ։

Դաշտից էին, այն գիւղերից, որոնց երէկ էր, որ քիւրդերը այրել, կոտորել ու աւերակ էին դարձրել։ Խնուսի փշրուած, արիւնով կարմրած դժբաղդ գիւղերից էին. ո՞վ գիտէ, գուցէ միակ ողջ մնացածները, որոնք լեռներն էին ընկել յուսահատ ու հալածուած…

—Էլ բան չըթողին,—շարունակեց խօսողը—ողջ դաշտը արիւնի մէջ է. ամեն ինչ հիմնայատակ արին… Եւ դեռ այրում էին, կոտորում…

—Ա՜խ, երանի մենք էլ մեռնէինք…—մըրմնջաց ծերունին տխուր ու խոր հառաչով։

Մթան մէջ մնացողները տեսնելով որ իրենց առաջնորդներին վնաս չենք հասցնում, իրանք էլ մօտեցան ու մտան լոյսի մէջ և այդ ժամանակ աչքս ընկաւ մի ողեխարշ տեսարանի վրայ։

Ոտաբոբիկ ու կիսամերկ կանայք՝ ցեխաթաթախ ծնկներով ու շորերով, աղտոտ, մի-մի

ծծկեր մէջքերին, մի-մի մերկ լակոտ էլ փէշերից կախ՝ գալիս էին ջրերի միջով։ Կարծես անկողնից էին հանել այդ բոլոր մերկ թշուառներին և քշել, ցեխն արել։ Ու մէջքի վրայի մանուկները գնգում էին, քարշ եկողներն այլ ևս արցունք չունէին, հեկեկում էին, խուլ ձայներ արձակում և նրանց ոտները, կպած քարերի ու փշերի, արիւնոտուել էին, յօշոտուել, մարմիններն էլ բծաւորուել, ցեխից սևացել…

Ահա և տղամարդիկ, անզէն, անգլխարկ, կիսամերկ, ցեխոտ ու արիւնոտ խլել են, ինչ որ կարողացել են՝ մի վերմակ, մի կապոց, մի բուռ հաց կամ ալիւր և մազապուրծ փախել կոտորածից։ Չեն խօսում. ոչ ձայն է մնացել և ոչ էլ սիրտ։

Պահ մի մտածեցի հարցուփորձ անել, տեղեկանալ թէ ինչ դրութեան մէջ է դաշտը, թէ ո՞րքան էին յարձակուողները, ինչ թողին անաւեր, ո՞վ կենդանի մնաց… բայց աւելորդ բան. մի՞թէ գուշակել դժուար էր։

—Ի՞նչպէս ազատուեցաք,—հարցրի ծերունուն, երբ բոլորն էլ նստել էին։

—Հրաշքով…—մրմնջաց նա։ Ճահիճն անցանք. մինչև կէս-մէջք ցեխի մէջ, մութն էր՝ չըտեսան մեզ… Աւտօն մնաց. շատ էր խրուել, չըկարողացաւ ելնել… չըգիտեմ ի՞նչ եղաւ…

—Իսկ գի՞ւղը…

—Վառւում է. . Կրակը մեծանում, գնդակ-

ները սուրում էին, ճիչերը մեզ հասնում... Կըրակի լոյսով տեսնում էինք փախչողներ, ընկնողներ, հարւածողներ... Ու փախանք, սոսկումից ետ էլ չէինք նայում...

Տեղ տւինք նրանց մեր կողքին։ Ինչ որ ուտելու ունէինք, նրանց բաժին հանեցինք, ծածկոցներ ճարեցինք կանանց ու մանուկների համար և երբ միմեանց վրայ թափւած քնեցին, բոլորս տխուր էինք, լուռ ու ճնշւած. ամենքս դէպի խոր—Մնուսի դաշտն էինք նայում, ուր մի անորոշ կարմիր լոյս լուսաւորւում էր հեռաւոր տարածութիւնը և ո՜ւր, ով գիտէ, այդ պահուն ո՜րպիսի հրդեհ կար, ո՜րքան դիակ, ո՜րքան արիւն...

Եւ երբեմն, այդ տիրող լռութեան մէջ, արիւնալից խորքերից անդնդային սրտապատառ աղաղակներ էին հասնում մեր ականջին, որոնք թրթռում էին օդի մէջ և որպէս մշտատև բայց անօգուտ բողոք՝ գնում էին մարելու երկնքի խորութեան մէջ...

II

Երկու օր յետոյ դաշտ իջանք, հալածւածներին դրինք մի ճանապարհի վրայ և մենք գնացինք ուրիշ ճանապարհով։ Ստիպւած էինք այդպէս անել։

Յետոյ կտրեցինք երկիրը, անցանք ծխացող,

աւեր գիւղերից. մեր քայլերի առաջ, մեր անցքերի վրայ շատ տեսանք եղկելի խմբեր, որոնք սոսկումը կրծքերում փախչում էին ցանուցրիւ, խուսափում ընդհանուր սարսափից՝ կորցրած ինչքը, սիրելիները, կորցրած խելքն ու միտքը։

Մի ամբողջ ամիս ուրիշ ոչինչ չէինք տեսնում. մեր ջղերը սկսել էին միշտ նոյն սոսկումներով վարժւել։ Ինձ վրայ այնպէս ցնցող ազդեցութիւն էին թողնում այդ տեսարանները, որ կորցրել էի հանգիստ, ախորժակ, քուն և խօսելու կարողութիւն ու գնում էի դիակների միջով, քայլում արիւնի մօտով, փլատակների կողքով՝ որպէս երազի մէջ...

Բայց ահա վերջապէս սահմանագլուխը, որից յետոյ այլ ևս շունչ էի առնելու։ Ուրախ՝ որ ազատւել էի այն բոլոր տեսարաններից, մի տեսակ հաճոյքով փաթաթւեցի վերարկուիս մէջ և վերջին գիշերը պատրաստւեցի անցկացնել այդ սպանդանոցային երկրի հողի վրայ։

Հազիւ թէ աչքերս փակել էի և թեթև կերպով ննջել, որ մի նոր ուժով պատկերացան մտքիս մէջ բոլոր տեսածներս՝ հաւաքւած, միմեանց կցւած ու թափօրի պէս անցնելով առջևիցս...

Գիշերը մութն էր ու լուռ։ Ցածում միայն, լեռան ստորոտի մօտ գտնւող շամբի եղէգներն էին շշնջում թախծալից և մէկ-մէկ էլ մի ինչ-որ գիշերային թռչուն՝ պատռում էր օդը և նրա

բարձունքներում մի սուր խազ նետելով՝ սլանում-անցնում։ Շուրջս տարածուած քնում էին ընկերներս սև կոյտերի նման, իսկ գլխաւորը գլուխը դրած մի քարի վրայ, հրացանը գրկած և ծածկած գիշերային խոնաւութեան դէմ՝ անձայն ննջում էր։

Քնել չէի կարող այլ ևս, կոշմարը դրդուել էր ինձ և ականջիս միջից չէր կտրւում ցնցող ողբերի յիշատակը։

Եւ ահա յանկարծ, այդ լռութեան և ամայութեան մէջ կարծեցի լսել մի ճիչ, որ նմանում էր մանկան լացի։ Ակամայ դարձայ։ Ձայնը աւելի պարզ լսել սկսեց, սուր շեշտի բարձրացաւ ու մէկէն լռեց։

Գլխաւորն էլ երևի լսել էր, որովհետև ոստիւնով վեր թռաւ ու գոչեց.

—Ո՞վ էր այն։

—Դու է՞լ լսեցիր,—հարցրի ես։

—Լաց էին լինում, կարծես...—ասաց նա։

Ու նստեց։ Նրան էլ երևի տանջում էին կոշմարներ։ Ձայնն էլ չլսուեց, երևի երկուսս էլ երազել էինք միայն, այդպէս ժամանակ և այդպէս ամայի տեղում ո՞վ կարող էր լինել։

—Կուզե՞ս ճանապարհ ընկնենք,—ասացի գլխաւորին.—եթէ գիշերով գնանք, վաղն առաւօտ սահմանը կանցնենք։

—Ո՛չ,—ասաց նա,—տղերքը յոգնած են, թող քնեն։ Դո՛ւ ինչու չես քնում։

—Չեմ կարող. ինձ թւում է թէ շուրջս էլի կոտորում են, այրում։

Գլխաւորը մռայլ՝ գլուխը քարի վրայ դրաւ և աչքերը փակեց։

Բայց հազիւ թէ մի վայրկեան լուռ էինք, որ ցնցուեց, վեր թռաւ ու ասաց.

—Ո՛չ, երազ չէ սա... Լաց են լինում այնտեղ—հեռու... լսում եմ ահա նորից։

Եւ ցոյց տուաւ բլրակի միւս կողմը։

Ես չէի լսում։

—Ականջդ գետնին դիր։

Կռացայ ու կպայ գետնին։ Մի թոյլ ճիչ, կարծես անդունդների խորքից գալով, խաղեցրեց ականջս։

—Այո, ասացի—լալիս են. մանկական ձայն է։

Ու երկուսս էլ ելանք։ Գլխաւորը զարթեցրեց ընկերներիցս մէկին, պատմեց եղածը, խընդրեց զգոյշ քնել և երկուսս միասին գնացինք դէպի ձայնը։ Երկար չփնտռեցինք. քանի մօտ էինք գնում, որոշ կերպով լսւում էր լացի ձայնը. հատած ու ժանգոտ մանկական ձայն, որ լուռ գիշերուայ մէջ սարսուռ էր ազդում։

Բլուրը շրջելուն պէս, առւակն ի վեր գնալով, հասանք մի կանաչ հարթութեան։

Մի քամհեցուցիչ տեսարան փակեց մեր ճանապարհը։ Ջրի եզրին, արեան լճակների մէջ, խողխողուած ընկել էին միքանի գիակներ... Ապա, քիչ հեռու երկու կանայք, մէկը սպանուած

պառաւ, միւսը երիտասարդ՝ ուշագնաց և սոսկալի դրութեան մէջ, տանջած ու ձգած և դրանց կողքին երկու մանուկներ, որոնցից 3—4 տարեկան աղջիկը ընկած մօր կրծքի վրայ՝ հեկեկում էր, իսկ միւսը, մի տասնամեայ տղայ, կանգնած սարսափահար, դողում էր ու գժուածի պէս գոռում, ճչում...

Կնոջն ուշքի բերինք և մանուկների հետ տարանք մեզ մօտ։ Բոլորը զարթել էին, բոլորի կրծքից դուրս թռաւ մի խոր ցաւակցական ու սոսկումի բացականչութիւն։

Կրակի լոյսով տեսայ կնոջը։ Իր գունատութեան մէջ գեղեցիկ էր նա. բայց ո՜րքան վշտալից, ո՜րքան տանջուած։ Յիշեցի խսկոյն, որ տեսել էի թէ՛ նրան և թէ մանուկներին։

Մի վայրկեան չըմտաբերեցի թէ որտեղ։ Ընկերներիցս մէկը աւելի շուտ յիշեց։

—Ա՛խ,—գոչեց նա,—Խնուսի լեռների մէջ հանդիպած թշւառներիցն են։

Նրանք էին. նոյն երիտասարդ կինը և իր մանուկները։ Միայն դրանք էին մնացել այն մեծ խմբից, որոնք ճողոպրել էին Խնուսի գիւղերից։

—Ուրեմն մի ամիս է որ թափառում էք,—հարցրի։

—Այո՛,—ասաց կինը,—ուզում էինք սահմանն անցնել, ազատ հողի վրայ ենել... հասել էինք, բայց երէկ մեզ վրայ տւին մի խումբ ու կոտորեցին...

Յուզմունքից շարունակել չըկարողացաւ և արտասուեց։ Արտասուք չունէր. դէմքն էր ծռմռկում սրտաճմլիկ կերպով և խռպոտ ձայներ հանում։

—Ի՞նչ պիտի անես այժմ,—հարցրի։

—Չըգիտեմ... Ինչո՞ւ չըթողիք մեռնէինք այնտեղ. այժմ ես էլ ի՞նչպէս ապրեմ, ի՞նչ երեսով արև տեսնեմ...

Մանուկները կպել էին նրան ու հեկեկում էին։

Կռացաւ ու ջղաձգութեամբ սկսեց համբուրել աղջկան։

—Տարէք մեզ, տարէք-ձգէք, ուր որ կուզէք,—շարունակեց նա.—ես կեանք չեմ ուզում, բայց սրանց համար կապրեմ, կըգործեմ... տարէք մեզ...

Յետոյ կծկւեց ու էլ չըխօսեց։

Կրակը մարեցինք, ելանք ձի հեծանք. մեզնից մէկը գաւակն առաւ կնոջը, միւսները մանուկներին։ Ամբողջ գիշերը ճանապարհ գնացինք և լուսածագին սահմանն անցանք ու դրինք նրանց մի գիւղի մէջ։

Թշւառ կինը ջերմի մէջ էր. ստիպուած էինք գիւղացոց խնամքին յանձնել նրանց և անցնել։

Ահա այդպէս էր որ երկրորդ անգամ հանդիպեցի այն խմբին, որից ողջ էին մնացել միայն մի ըկւած կին և երկու որբուկներ...

Անցան ամիսներ։ Կովկասը լցւում էր լացի երկրից դուրս հոսող գաղթականներով ու փախստականներով. ամեն մի քաղաքի դռների, եկեղեցիների առաջ երևում էին ցնցոտիներով խմբեր—կին, մարդ, որբեր, որոնք ձեռք էին պարզում, հաց խնդրում, պատսպարան հայցում։

Ո՛ր քաղաք որ մտնում էի՝ թշւառ հայրենակիցների էի հանդիպում։ Մարդիկ, որոնք իրանց երկրում տասնեակ աղքատներ էին կերակրում, այժմ նստած ձրի ճաշարանների նստարանների վրայ, գլուխները կախ՝ որ չըճանաչւէին, արտասուքը կուլ տալով ուտում էին մի կտոր հաց՝ անօթութիւնից չըմեռնելու համար։

Ո՛ր եկեղեցու առջևից որ անցնում էի, դըռների առաջ տեսնում էի ծանօթ դէմքեր, կանայք, մանուկներ, ողորմելի, գլուխնին ծռած, աղաչւոր և մուրացկանութեան դիմելուն համար ամօթից ու ցաւից կարմրած, զգետնած...

Ահա և բարեգործական ընկերութեան մի գրասենեակ։ Քանի՛-քանի տասնեակ տղամարդ ու կին, մեծ մասամբ թշւառացած, ընկճւած, շւարած ու մոլորւած, կիտւել են փակւած դըռան առաջ, կուչ եկել պատի տակ և սպասում են ճաշ կամ մի քանի կոպէկ ստանալու համար... Եւ ահա դուրս է գալիս քարտուղարը. բոլոր ընկճւածները պատկառանօք ետ են քաշւում, աղերսագին՝ ուռած պարոնին նայում, աղաչում են, հաց խնդրում, իրանց խնդիրների

պատասխան հայցում և լսում են քարտուղարի կաչաղակային ճիչը.

—Գնացէք, կորէք այստեղից. ի՞նչ էք գահլէս տանում. գնացէք գործեցէք...

Այո, «ազգասէրի» գահլէն էլ է գնացել այդ աղերսներից, թշւառութիւններից. նա այլևս կոպտութեամբ վռնդում է ընկած եղբօրը, որ ոչ մի ժամանակ ետ չէ դարձրել հայցողին՝ այն օրերում, երբ ունեցել է, երբ կարողացել է օգնել։

Շատ բան տեսայ. աւելի խօսք և բառեր լսեցի իբր ցաւակցութիւն նրանց դրութեան, քան գործ և օգնութիւն...

Եւ ահա մի օր, երբ անցնում էի մի մեծ դռան առջևից, լսեցի բակից մանկական երգի ձայն։ Ներսում ժողովւել էին ծառաներ, աղախիններ և անցորդներ, պատշգամներից կռացել էին ժպտուն և զւարթագին սիրուն աղջիկներ ու պարոններ. զւարճանում էին մի սրտաճմլիկ տեսարանով։

Երկու մանուկ էին. մէկը հասակաւոր տղայ, միւսը 5 տարեկան աղջիկ։ Երկուսն էլ գրեթէ ոտաբոբիկ, ցեխի մէջ և ցրտի դէմ մի ամառնային շորով պատսպարւած։ Տղան դողդողալով երգում էր մի քրդական երգ, մի տխուր, մելամաղձիկ պար, իսկ աղջիկը կրկնում էր նոյնը և ոստոստում, դառնում իր վրայ։ Պարում էր. արտասուքը հոսում էր նրա աչքերից՝ մրսած այտերն ի վար. ձեռքերը կծկել էր թևերի տակ,

վեր ու վար էր անում ոտները, կանչում, ողբում ու պարում։

Մօտ գնացի. տղայի ձայնը զարթեցրեց իմ մէջ տխուր յիշողութիւններ։ Ճանաչել էի։

Խնուսի լեռների փախչող խմբից մնացած որբերն էին։ Բայց ու՞ր էր նրանց մայրը. չէ՞ որ խօսք էր տուել ապրել և անտէր չըթողնել իր զաւակներին։

Հարցրի։ Մեռել էր. չըգիտէին ինչից. գիտէին որ մեռել էր և իրանք ընկել էին սրա-նրա ձեռքը, քաղաքից-քաղաք և այժմ ստիպւած էին հաց ճարել։ Նրանց երգ էին սովորեցրել և ուղարկել մուրալու։

Եւ որբուկները ցատկռտում էին, երգում, պարում ու... արտասւում։

1898.

ԵՐԿՐԻ ՁԱՅՆԸ

I

Արևը սաստիկ կիզիչ էր մանաւանդ նաւահանգստի վրայ, ուր նրա տաքութիւնը պատերի մէջ մթերւած՝ անդրադառնում-այրում էր վրայի աշխատաւորներին։

Նրանք կրում էին։ Սև քրտինքը աղբիւրի պէս ծորում էր սևացած դէմքերի վրայից։ Վագոնի մէջ մտած, Մկօն ու Ակօն կարճ բահերով վերցնում էին մարգանէցի կոյտից, լցնում կողովների մէջ, դրսի կողմից մի ու մի առաջ էին գալիս ուրիշները, շալակում կողովները, ու տախտակեայ կամուրջից շոգենաւ վազելով, դատարկում էին այնտեղ։

Այդ բոլորը կատարւում էր սև, թանձր փոշու մի ամպի մէջ։ Կուլ էին տալիս նոքա ածխային փոշի։ Ոմանք տապից կիսովին մերկացել, մերկ մասն էլ լաւ սևացած, ուրիշները մուր թքելով... աշխատում էին, արագ աշխատում...

Քսան հոգի էին. մի թուրք կապալառուի մշակները։ Բոլորն էլ թիւրքահայեր։ Թողած

տուն ու տեղ, կին ու որդի, վաղուց էր որ նրանք այնտեղ էին և մարգանեցի փոշի էին կուլ տալիս։

Մկօն էլ նրանց հետ էր, իր հօրեղբօրորդի Ակօի հետ։ Մեծ շոգենաւը կաթսան վառել, շոգի էր ճնշում. բեռնւել էր. մի ժամ ևս և մտադիր էր դուրս գնալ դէպի ծովը։ Պատեանը սարսռում էր շոգու ճնշումից, իսկ լայն ծխնելոյզը թանձր ծուխ էր ժայթքում։ Նաւի կամուրջի վրայ կանգնել էր անգլիացի գեր նաւապետը, ծխամորճը բերնի անկիւնին, յափրացած աչքերով դիտում էր մշակների աշխատանքը և հազիւ ուրեմն շարժում էր գործում՝ տեսնելու համար թէ շատ էր մնում ամբարի լցւելուն։

Նաւահանգստի ներսում ջրերը խաղաղ էին. քարէ նաւամատոյցի վրայ կենդանութիւն կար։ Դէմ առ դէմ, աւազոտ ափին ձկնորսները վահանաձկեր էին փռել արևի դէմ, իսկ նոցա գլխի վրայ թռչունները խուլ ճիչեր արձակելով՝ իջնում-բարձրանում էին։

Թիւրքահայերն աշխատում էին. պարբերական արագ և միակերպ աշխատութիւն։ Չէին խօսում։ Հազիւ երբեմն լսւում էր ընդհատ բառեր, կարճ, կտրուկ հրամաններ, որոնք ուղղւում էին մշակներին՝ քիչ հեռու կանգնած վերակացուի կողմից։

Այդ բոլորը կատարւում էր պատի այն մասում, ուր երկաթուղու գիծը հասնելով, շոգե-

նաւի համար վագոններով մարգանեց էր բերել կանգնեցրել։ Պատի վերևի մասը դատարկ էր։

Երբ բաւական կրել էին, Ակօն կանգ առաւ և դառնալով հօրեղբօրորդուն՝ ասաց.

—Կարծեմ կէսօրը մօտ է։

—Հա՜... արեց միայն Մկօն և գործը շարունակեց։

Շոգենաւից քիչ հեռու խարսխել էր յունական մի առագաստանաւ. նրա մէջ, նաւապետի ընտանիքը այժմ բազմել էր հովանոցի տակ և ճաշում էր. կերակուրի հոտը բուրում-հասնում էր մինչև աշխատաւորները։ Իսկ մարգանեցի սև փոշին հոսում էր դէպի մշակների բերանը, քթածակերը։ Երբեմն թքում էին, սևացած թևերով սև ճակատի սև քրտինքը սրբում, որ ծորում էր մինչև մարմնի խորքերը։

—Պարտքիցդ շատ է մնացել,—հարցնում էր այդ միջոցին Ակօն Մկօին, կամենալով մի բան խօսել։

Ակօն տրամադիր չէր, բայց ցուցամատը աղեղնաձև ծալեց և նորանով աչքից ձախ ցած հոսեցրեց քրտինքը, և երբ ճակատը քիչ սպիտակել էր, ասաց.

—Դեռ կայ... քսան մանէթ էլ կայ։

Ակօն լռեց և բահը մղեց մարգանեցի մէջ։

Խեղճ Մկօ. մինչև երբ պիտի կարողանար այդ գումարը վճարել։ Չէ՞ որ քսան ռուբլին վճարելու ընթացքում նրան ապրել էր պէտք.

տուն փող ուղարկել... Ուրեմն էլի պարտք պիտի անէր, էլի պիտի հաշիւներ ունենար։ Խեղճ Մկօ։

Այդ մտածելով, Ակօն նայեց Մկօի սև դէմքին։

—Կուզես իմ օրականից քիչ վերցրու. խօսեց նա պահ մի յետոյ։

—Դու քի՞չ պէտք ունիս,—մռմռաց Ակօն.—Սրապիօն աղայի անհատնում պարտքդ մոռացե՞լ ես։

Եւ երկուսն էլ միաժամանակ բահերը խրեցին մարգանէյցի կոյտի մէջ։

Այդ միջոցին հեռւում կանգնած մի շոգենաւի վրայից լսեց նախ զանգակի և իսկոյն յետոյ սուլումի ձայն։

—Կէսօր, գոչեց մէկը ցածից։

—Կէսօր... ասացին միմեանց ետևից ամենքը և տեղնուտեղը ցած ձգեցին կողովները։

Յոգնել էին, սաստիկ յոգնել։ Ցած դրին կողովները և նրանց կողքին էլ նստան։

—Հաց ուտենք, ասաց Ակօն։

—Անօթի չեմ,—առարկեց Մկօն.—բայց գնանք, նաւամատոյցի վերին ծայրը ելնենք. սիրում եմ ծովին նայել, դիտել հեռո՜ւ. շա՜տ սիրուն է տեսարանը, ծայր չունի...

Աչքերը տրորեց, թեւով մի այտը սրբեց ու դուրս թռաւ վագոնից՝ վերի պատի վրայ։ Ակօն հետևեց նրան։ Ամեն կողմ, իրենց կողովների

մօտ նստոտել էին և հանգստանում սև թշուառները։ Մէկը ընկողմանած մարգանէյցի կոյտի վրայ, միւսը՝ մէջքի վրայ փռւած այրող արևի մէջ, տաք քարերի վրայ, մի ուրիշը թիկն տւած վագոնին... Ջուր չըկար լւացւելու. ծովը խոր էր, ջուրն էլ աղի։ Սովորած էին սև մնալ ու իրենց մի կտոր ցամաք հացը սև ակռաներով խածնել ու փոշու հետ կուլ տալ։

Վագոնի մի անկիւնից Ակօն հանեց թաշկինակով կապած հացը. երկու եղբօրորդիները հեռացան դէպի նաւամատոյցի ծայրը. հով տեղ չըկար. արևի տակ, կիզիչ քարերի վրայ նստեցին և պահ մի լուռ, սկսեցին ուտել։

II

Ալիքները գալիս ռումբի պէս պայթում էին՝ խփւելով կարծր պատին։ Հեռւում մի քանի փոքրիկ առագաստանաւեր բուռն կերպով օրօրւում էին և կայմի ծայրով ջուրը համբուրում։ Ալիքներից կազմւող փրփրային գծերը միմեանց հրում, միմեանց վրայ ելնում, փոքրերին կլանում, մեծից կլանւում, ի մի էին ձուլւում և գալիս ծեծում էին ամբարտակը։

Այդ մռնչիւնի միջոցներում լսւում էին ծիծառների ձայներ և շոգենաւի ճնշւած շոգու նուրբ սուլումը։

—Ցած չէ գնում,—ասաց Մկօն կուլ տա-

լով հացի մի կտոր.—բողազս անապատի պէս չոր է։

—Փոշին է արել. իմն էլ այդպէս է. կուզե՞ս՝ ջուր բերեմ։

—Ո՛չ, նստի՛ր. ջուրը շա՛տ տաք է։

Եւ շարունակեցին ուտել։

—Ո՛րքան շքեղ է ծովը,—խօսեց դարձեալ Մկօն քիչ յետոյ՝ աչքը ծովի հորիզոնին ուղղած։

—Այո՛... բայց ալէկոծութիւն կայ։

—Այդ ոչինչ. շոգենաւը դրանից չի վախենալ։

Ակօն քիչ լռեց, յետոյ խորունկ շեշտով ասաց.

—Ի՛նչ լաւ կըլինէր, եթէ մեզ էլ տանէր շոգենաւը։

Մկօն ծիծաղեց։

—Ո՞ւր տանէր,—ասաց նա.—Եւրոպա՞, Պօլի՞ս։

—Տրապիզօնի մօտից է անցնելու։

—Կանգ չի առնիլ այնտեղ։

—Կըկանգնի. առաւօտեան ես ղեկավարին հարցրի. թուրքերէն գիտէր։

—Է՛, ինչո՞ւ հարցրիր. միտքդ ի՞նչ էր։

—Հէնց ա՛յնպէս,—ժպտեց Ակօն.—ուրախացայ, որ Տրապիզոն կանգ է առնելու։

Մկօն կտրեց մի շերտ հաց, յետոյ տխրութեամբ և մեղմ ասաց.

—Երեխայ ես, Ակօ՛։

—Ի՞նչ անեմ... Չէ՞ որ Տրապիզոնից են երկիր գնում։ Երկրի ձայնը խօսեց իմ մէջ... Ի՛նչ լաւ կըլինէր, եթէ այդ շոգենաւը մեզ վերցնէր, իր ամբարների մէջ կոխէր, այդ մարգանէցի հետ թէկուզ ներս լցնէր, միայն երկիր տանէր մեզ...

—Լաւ կըլինէր. այո՛... շա՛տ լաւ... բայց պարտքե՞րը... բացի դրանից, երթայինք երկիր, ի՞նչ անէինք...

—Է՛հ, ասաց յուզմամբ Ակօն—Աստուա՛ծ է վկայ որ այստեղ աւելի վատ ենք ապրում... Որ մեզ նեղացնող չըլինի այնտեղ, որ հարկերը, պարտքերը չըլինին, մեր երկրի բանջարեղէնը միայն կըկերակրի մեզ ողջ տարին...

—Այո՛, բայց հարկերն էլ կան, պարտքերն էլ և ապա՝ կոտորած, արիւն, թալան...

Լռեցին գլխիկոր երկուսն էլ։

Ցածրում միւսները ճաշել էին և պարզւել վագոնների հովանու տակ։ Ամէն ինչ համարեա լռել էր։ Մկօն սրբեց բերանն ու ելաւ։

—Ծողովի՛ր հացը. ուզում եմ քիչ քնել. ջարդւած եմ։

Ասաց ու պարզւեց պատի վրայ։ Լայն պատ էր. մէջքը դարձրեց արևին, երեսը՝ ծովին։

Ակօն հացը հաւաքեց, քիչ հեռու գնաց և նոյնպէս պարզւեց գետին։

Լսւում էր միմիայն ծովի շշուկը, շոգենաւի դողալը և հեռուն, անտառոտ լեռներից ու ձորերից, ճահիճների մէջ կռկռացող գորտերի ձայ-

ներից կազմուած խուլ աղմուկների համերգը, որ գալիս շշնջալով ընկղմում էր ծովի շշուկի մէջ։ Բնութեան մրմունջն էր. անորոշ, բայց օդը լցնող մրմունջ։

Մկօն ծովն էր դիտում։ Աչքը կապուտակ անհունութեան, մտքով գնում էր աւելի հեռու, անցնում էր ծովի հորիզոնը և դեռ աւելի հեռու, շա՜տ հեռու…

Եւ նա տեսնում էր։

Տեսնում էր այնտեղ, ծովի, սարերի և ձորերի ետևում, շա՜տ, շա՜տ հեռու, մի սքանչելի դաշտի վրայ իր գիւղը, որի հորիզոնն էր Տաւրոսի լեռը, շրջապատն էր՝ Մշոյ ծաղկաւէտ ու գեղածիծաղ դաշտը իր անուշ զեփիւռով, ճլլան թռչուններով, պարզ, ականակիտ վտակներով։ Սողոսկում էին այնտեղ զզզուն ջրեր ամեն կողմից, փայլում արծաթի պէս, շողշողում արևի տակ, միմեանց գալարւում օձերի նման, համբուրում, գգւում գինեբբուկների և շուշանների, կեանք տալիս բազմազան բանջարեղէնների։ Սխտորուկն ու սպիտակ-բանջար, երինջն ու մանդակ, բողկն ու աւելուկ, կովու-ճակտեկն ու սիբեղ՝ բուսած էին շուշանի, կակաչի ու մեղրածծուկի, մեռնածաղկի և գետնի վարդի անուշահոտութեան մէջ…

Եւ ծածանւում, օրօրւում էր կանաչ արտերի ամբողջ տարածութիւնը, քամին սուրումկացնում էր նրանց պարարտ գլուխները…

Մարգագետնի, մարդահասակ խոտերի մէջ արածում էին պարարտ կովեր, դմակալից ոչխարներ, թռչկոտում էին կայտառ այծեր, միմեանց գլուխ բռնում ուլեր և գառնուկներ… Հովիւն իր թաղիքի հետ փռել էր խոտերի մէջ, հօտը շներին պահ տուել, ինքը գլուխը անուշահոտ ծաղիկների վրայ դրել, քթածակերը օդի բուրմանը տուել, զեփիւռից հովահրած՝ քնել էր բարձրահասակ խոտերի հովանու մէջ…

Այնտեղ էլ կէսօր էր, արևը տաք։ Հօտաղները վերադառնում էին, մանուկները ոտաբոբիկ վազվզում են աղբիւրից տուն. կանայք գոյնզգոյն հագուստներով տներից ել ու մուտ են անում. խրճիթների երդիկներից անօսր, համարեա աննշմարելի ծուխ է բարձրանում. կերակուրների հոտը սփռել է ամեն կողմ…

Պարտիզի մի ծառի տակ ահա Մարիամը փռել է սփռոցը կանաչ խոտերի վրայ, անուշահոտ ծաղիկների կողքին. վճիտ առւակը հոսում-անցնում է նրանց մօտից, եղերքների շուշանն ու նարգիզը օրօրւում են փոքրիկ քամուց, որ շարժում է նաև ծառի ճիւղերը և նստողների գլխին սփռում ծաղիկների վերջին թերթերունքները։

Ամառնամուտ է, Մշոյ սքանչելի, դրախտային ամառնամուտը։ Ո՜րպէս երգում են արտոյտն ու դեղձանիկը, սարեկն ու ծիծեռը. ինչպէս օդը լի է անբաւ ծաղիկներից գոյացած անուշահո-

տութեամբ։ Հոտ է արտադրում խոտ ու ծառ, նոյն իսկ ջուրն ու հողը. ամեն ինչ բուրում է, անո՜ւշ բուրում…

Եւ այդ բոլորի մէջ նստել է նա մէջքը ծառին տուած։ Գաբօն ու Ռկօն—որդիները, ցեխոտ ձեռներով ու երեսներով, հողաթաթախ ոտներով ու մազերով, բայց ուրախ-զւարթ ճիչերով մօտ են վազում, հայրիկի մօրուքի հետ խաղում, ծնկների վրայ նստում։ Գաբօն իր ցեխից շինած տունն է ուզում ցոյց տալ հայրիկին, Ռկօն ուզում է իր փոքրիկ մարգի մասին խօսել… Իսկ Մարիամը, իր կինը, առողջ կարմիր թշերով, անկեղծ ժպիտը դէմքին՝ մօտենում է նրան, համբուրում է, դնում է նրա առաջ տախտակեայ մեծ կուշի մէջ լցրած «թանապուրը»՝ երեսին նարգիզի և կապոյտ ծաղիկի թերթերունքներով խառն անուշ սոխառածը փռած… Վանայ ձուկը իր անոյշ հոտով լայնացնում է նրա ռնգունքը, սոխ ու գինձ, սամիթ ու կոտեմ, բողկ ու նանա՝ դիզացած են սփռոցի վրայ՝ մի մեծ կտոր բանջարով պանիրի կողքին։

Եւ նա կտրում է հացը, երեսը խաչակնքում, ուտում է թանապուրից, ճաշակում ձկնից, ձեռքի ափովը առուակից ջուր է վերցնում, պապակած կոկորդը թրջում…

Ո՜րպիսի անուշահամ ջուր. օ՜հ, ո՜րքան քաղցր է նա։ Եւ խմում է անյագութեամբ։ Ծարաւ է, շա՜տ ծարաւ…

… Զարթնեց ու բարձրացաւ։ Սև ձեռքով քնաթաթախ՝ սրբեց ճակատը, անորոշ հայեացքով ծովի անհունութիւնը նայեց, ապա պառկեց նորից ու փակեց աչքերը։

Նորից երկրումն է, նորից իր գիւղում, պարտէզի մէջ, կնոջ, որդիների մէջտեղ։

… Յանկարծ աղմուկը ընկնում է գիւղը։ Ցած է ձգում գդալը։ Մարիամը գունատ՝ վեր է թռնում, երեխայքը կպչում են մօրը։ Ի՞նչ կայ, ի՞նչ է եղել։

Ոչինչ. հարկահանն էր, գիւղ էր մտել, տուրք էր ժողովում և մտրակներով, սւիններով ժողովում…

Է՜հ, այնուհետև էլ ի՞նչ կեանք, էլ ի՞նչ նշանակութիւն ունի այդ սիրուն երկրի տեսքը, կկկլացող առուակները. էլ ինչի՞ւ այդքան սքանչելի, անուշաբոյր ծաղիկներ, էլ ինչի՞ւ գով քամին, պարարտ արտեր, գեր տաւար… Էլ ինչի՞ւ կին, որդիք… Չէ՞ որ այդ բոլորը վերցնում, ապականում, կոխոտում, պղծում, քանդում են հարկահաններ, վաշխառուններ, քիւրդեր, աղաներ…

Էլ ինչի՞ւ այդ բնութիւնը, երբ նրա վայելողները իրենք չեն, այլ ա՜յնպիսիները, որոնք ո՛չ աշխատում են, ո՛չ գործում, ո՛չ նրա յարգը գիտեն և գալիս յափշտակում են, պղծում ու աւերում…

Էլ ինչի՞ւ պարտէզ մշակել, երբ նրա արդիւնքը հարկահանի կոկորդն է անցնում. ինչի՞ւ

արտ ցանել, երբ նրա ցորենը շահնայի գրպանն է ուռեցնում. ինչո՞ւ մարգագետինը խնամել, երբ նրա խոտը տուրքի է գնում, իսկ կովն ու տաւարը քիւրդի խնջոյքին ծառայում։ Ինչո՞ւ ուրեմն տուն ու տեղ շինել, երբ նրանք մի խումբ կանոնաւոր կամ անկանոն հաճոյքները լուսաւորելու համար այրւելու էին։ Ինչո՞ւ, մի խօսքով, աշխատել ու տքնել, երբ ո՛չ աշխատանքիցդ մասըն ունիս և ոչ էլ քրտինքիդ տէրն ես... Ինչո՞ւ ուրեմն աշխատել, ինչո՞ւ...

Էլ ի՞նչն է կապում իրեն այդ բնութեան, այդ երկրի հետ։ Հո՞ղը.—չէ՞ որ չեն թողնում նրան առանց պղծելու, օջա՞խը.—չէ՞ որ բոլորի կրակը մարեցին. տաւա՞րը.—չէ՞ որ ո՛չ նրա կաթըն էր իր բերանը ժանում և ոչ էլ կարողանում էր խնամքների փոխարէնը ստանալ. եկեղեցի՞ն.—մնաց մի եկեղեցի, որ չըքանդւէր։ Ի՞նչը ուրեմն, կի՞նը, որդի՞քը... Ինչպէս իմանար որ մինչև այժմ իր կնոջ չեն բռնաբարել, չեն առևանգել և որդոց գլուխները ջախջախել՝ քարերի խփելով...

Ի՞նչն էր կապում նրան ուրեմն այդ երկրի հետ... Ինքն էլ չըգիտէր։ Մի բան քաշում է նրան այնտեղ. թէկուզ ո՛չ մի սեփականութիւն չունենար, թէկուզ իր գլխին կանգնած՝ խփէին ու ձեռքիցն առնէին իր իւրաքանչիւր բոպէի վաստակը...

Բայց նա կուզէր իր հայրենի երկրի մէջ

գտնւել, իր դաշտի ջուրը խմել, իր պարտիզի ծաղիկները հոտոտել, իր լեռների խոտերով կերակրւել, իր կնոջ ու որդիների հետ տանջւել...

Մի ձայն, մի խոր, հոգու լարերը հնչեցնող, ալիքները գալարող, սիրտը արիւնոտող ձայն կանչում էր նրան։ Երկիրը կանչում էր. երկրի ձայնը անընդհատ հնչում էր ականջին. ծովը, քամին, ծառը, բոյսը, նոյն իսկ սև փոշին բերում էր այդ ձայնը, մղում նրա հոգու, ջղերի մէջ...

Այո՛, գնալ, գնալ այնտեղ, գնալ իր հողի վրայ տանջւել, իր երկրի մէջ շնչել, ա՛յնտեղ մեռնել, միա՛յն այնտեղ...

Վերկացաւ նորից։ Քնել չէր յաջողւում նրան. քրտինքը ծորում էր, ծորում և նա, աչքը ծովին, ալիքներն էր դիտում, ականջը ձայնին պարզում, երկրի քաղցր, գրաւող, կոչող ձայնին...

Տանջւե՞լ... Այո՛, ի հարկէ. այնտեղ տանջանք կայ։ Բայց մի՞թէ այստեղ սակաւ էր տանջւում։ Սև փոշու մէջ կրում է, կրում. կէսօրին՝ տաք արևի տակ մի կտոր ցամաք հաց ուժով մղում-անց է կացնում չորացած կոկորդը, երեկոյեան մի աման կեղտոտ ու անհամ կերակուր ուտում սև և մութ սրճատանը, մենակ, տխուր՝ պառկում է հոտած օդի մէջ, հիւանդութիւն և ախտ շնչում...

Աշխատածը ի՞նչ է.—մի քիչ փող. դրանով

ո՛չ միայն վեց ամիս կրած հիւանդութեան ժամանակուայ պարտքը պիտի վճարել, այլ և ուղարկել երկիր՝ վաշխառուին մեղմացնելու, ընտանիքին հաց տալու...

Տանջուել, այո՛, կնոջ ու որդոց կարօտը քաշել... Ի՞նչ էր շահել այստեղ.—չէ՞ որ երկու տարի շարունակ տանջուել էր, ուրիշների գրպանը լեցրել, իսկ ինքը մաշուել էր, տքնել, ո՛չ կանոնաւոր կերել և ոչ էլ խմել։

Ինչո՞ւ այս բոլորը. ինչո՞ւ դատապարտուած լինել միշտ տանջուելու. մի՞թէ իրենց վիճակուած է այդ. բայց ինչո՞ւ, ի՞նչ մեղք են գործել, որի՞ն զրկել, որի՞ հացը կտրել, ո՞ւմ կողոպտել...

Ա՜հ, կողոպտե՞լ, գողանա՞լ... Չէ՞ որ միմիայն կողոպտող, զրկող և գողացողներն են, որ կարողանում են ապրել, հարստանալ, առանց տանջանքի կեանք վարել և իրենց պէս հարիւրաւոր թշուառների բանեցնել փոշիների մէջ..

Չլինե՞լ արդեօք այդպէս. կողոպտել, զրկել, զոհերի ճիչը երկինք հասցնել, չարագործութեան սիւների վրայ պալատներ կանգնեցնել...

Ո՛չ. ամեն մարդու բանը չէ այդ. դա մի առանձին արհեստ է, կաթի հետ ծծւող և հոգու հետ ելնող արհեստ... Իսկ իրենք—նա և իր նմանները դատապարտուած են նրանց զոհը դառնալու, նրանց երջանկութեան հիմքը կազմելու...

Պառկեց նորից։ Աչքերը փակւում էին. ա՜խ, եթէ կարողանար մի րոպէ քնել, մոռանալ բոլո-

րը։ Բայց արևը տաքացնում էր նրա գլուխը և քնելը անհնար դարձնում։ Նեղւում էր, անախորժ քրտինքով ծածկւում... Թևը աղեղ շինեց, շարժեց անդամները, գլուխը թևերի մէջ առաւ և էլի սկսեց մտածել։

... Ուրեմն, այնտեղ անհնար էր ապրել, այստեղ էլ... էլի, երբեմն թւում է, որ այնտեղ լաւ է։ Գիտես՝ որ երբ այն ինչը մօտ է գալիս—խփելու է. պատրաստւում ես, կամ մէջքդ ես դէմ անում կամ բռունցքդ... Իսկ այստե՞ղ։ Սողոսկում են քրտինքիդ մօտ և երբ կարծում ես թէ աշխատել ես մի բան, մէկ էլ տեսար՝ չըկայ, ոչինչ չըմնաց... Եւ շա՛տ աւելի տանջւում ես, քան այնտեղ... Էլ ինչո՞ւ ապրել ուրեմն. արդեօք Աստուած նրանց աւելորդ չէ՞ր ստեղծել...

Յանկարծ ցատկեց, նստեց և կռացաւ դէպի ջուրը։ Անդունդը, երերուն անդունդը քաշում, կարծես կանչում էր նրան։

Բայց շուտով սթափւեց. մի մեծ ալիք բարձրացաւ և ջրի բուռն հոսանքով լուաց նրա գլուխը։

—Ինչե՞ր էի մտածում,—ժպտաց նա.—մի՞թէ ուզում էի ինձ ջուրը ձգել։ Ինչո՞ւ.—ձկներին կերակո՞ւր... Ի՜նչ ծիծաղելի ճակատագիր. ո՛ր կողմդ դառնաս, մեռած կամ կենդանի՝ կերակուր ես ուրիշների...

Ջուրը քիչ զովացրած լինելով նրա գլուխը, այս անգամ նա քիչ մնաց ննջէր, բայց էլի մտա-

քը գնաց երկրին, էլի ալիքները հնչեցին և երկրի ձայնը ականջին հասցրին...

Յիշեց որ երկրից վատ լուրեր էին գալիս, սոսկալի բաներ էին պատմում։ Արդեօք ի՞նչ դրութեան մէջ էր այժմ իր գիւղը։ Ամեն ինչ անշուշտ աւելի քան երբէք՝ տակն ու վրայ. ոչ մշակութիւն կլինէր, ոչ տաւար մնացած, ոչ արտ, ոչ կայք... Խլում են, թալանում, այրում և սպանում... Կենդանի՞ է արդեօք Մարիամը և ո՞ր քիւրդի հարեմում. իսկ Ռկօ՞ն, Գաբօ՞ն, ո՞ր թփի տակ արդեօք իրենց վերջին շունչն են արձակում... Իսկ ծերունի մա՞յրը...

Եւ այդ բոլորի հետ, իրենք այս կողմը, տանջւում են, պակաս արիւնոտ հաց չեն ուտում, պակաս չեն թալանւում, մեռնում...

Ուժգնութեամբ ելաւ նստեց և արիւնոտ աչքերը պտտեցրեց չորս կողմը։

—Ինչո՞ւ ուրեմն,—մտածեց նա ուժգնութեամբ,—ինչո՞ւ այս բոլորը չըկրել գոնէ ա՛յնտեղ, երկրում, իւրայինների մօտ... Ինչո՞ւ այնտեղ, նոցա հետ չըտանջւել. ինչո՞ւ չըգնալ իրենց հողի վրայ տքնել, երկրի օդը շնչել և այնտեղ էլ մեռնել...

1894.

ԱԲԱՂԱՅԻ ԴԱՇՏՈՒՄ

I.

Ընդհանուր մի նիզակախաղի առիթով—որ յաճախ էր տեղի ունենում Աբաղային իշխող քիւրդ ցեղապետ Մուսա աղայի վրանների առաջ—ամեն կողմից գալիս հաւաքւում էին դաշտի միւս մանր ցեղապետները, ինչպէս նաև Մուսա աղայի որդի Մահմուդ աղան, որ վրան խփել—բնակւում էր դաշտի հիւսիսային բլուրների ստորոտում։

Լուսաբացից սկսած, ամեն կողմից խումբ առ խումբ երևում էին ձիաւորներ, հեծած աշխոյժ, կատաղի նժոյգների, ցեղապետնին առջևից, նիզակների սուր ծայրերը փայփլեցնելով օդի մէջ, սպիտակ շղարշեայ թիկնոցները հովին տւած։

Նժոյգները խրխնջում էին ու կայտառում բարձրահասակ խոտերով և ծաղկաւէտ մարգերի մէջ քայլելով. ձիաւորները զւարթ, ոգևորւած առաջիկայ զինախաղով, բարձրագոչ վիճում էին

և ճգնում տեսնելու թէ դաշտի այս-այն կողմից երևեցող խմբերը ո՛ր միւդիրի կամ ո՛ր ցեղի մարդիկն էին։

Արևը դեռ չէր ծագել, սակայն, արևելքից մի լոյծ ու շքեղ կարմրութիւն սկսում էր տարածւել հորիզոնի բարձրերում, սպիտակ ցանուցրիւ ամպերի եզերքներին։ Մշուշը, որ բաց-մանիշակագոյն էր դարձել այժմ, սկսում էր երևան հանել իր միջից բլուրները, մացառոտ գետափը։ Եւ գետը, ոլորապտոյտ, հոսանուտ արծաթի նըման՝ գալարւում-կտրում էր դաշտն ու մի ծայրով անհետանում դէպի հեռաւոր խորքերը։

Մշուշի ցրւելու հետ հեռւից երևում էին գոյնզգոյն, աւելի սև և կապոյտ հագուստներով, կարմիր կամ ճերմակ նժոյգներ հեծած այլ խմբեր ևս, որոնք արշաւակի կենդրոնանում էին դէպի Մուսա աղայի տաղաւարները։

Թարմ, սքանչելի զեփիւռով միասին, օդը լի էր դաշտից ելած բազմատեսակ, գոյնզգոյն ծաղիկների արբեցուցիչ բուրմունքով, լի նաև հարիւրաւոր թռչունների դայլայլով։ Մարդահասակ խոտերի մէջ փայլփլում էին զգզուն վտակներ, թաւալւում բլուրներից, ցայտում, շիթերով գարգարում կանաչ թաւշեայ մարգագետինները։

Մուսա աղայի երեք մեծ վրանների առաջ վառւող կրակի ծուխը անսոր բարձրանում տարածւում էր դաշտի կողմը և կարծես նշան էր ներկայանում հասնող խմբերի։ Եւ Աբաղայի մեծ

ցեղապետը լւացւած, աղօթքն արած՝ նստել էր վրանի առաջ։ Հարիւրաւոր ոչխարներից բաղկացած հօտը փոշի հանելով և բառաչելով՝ դէպի բլուրն ի վեր էր գնում, մինչ մի խումբ քիւրդեր էլ զբաղւած էին վրանից քիչ ցած պարզւած հարթ տարածութիւնը մաքրելու՝ նիզակախաղի համար։

Ծերունի էր Մուսա աղան, 60-ից անց, սակայն դեռ միմիայն ալեխառն էին մազերը։ Ծնօտը ածիլած, ընչացքը հաստ ու երկար, գոռոզաբար ոլորւում, ծայրերով ցցւում էին դէպի ականջները։ Երկարահասակ ու լայնալանջ, կրում էր նա նուրբ կապոյտ սաւէ վերնազգեստ, հէլէպի կարմիր մետաքսից զբուն (բաճկոնակ), գլխի ասեղնագործ քէօլօզը ոլորուն մետաքսեայ եազմաների միջից պարզում էր իր փնջաւոր գագաթը, ոտներին կրում էր ցեղապետական, մաքուր օծած կարմիր կօշիկներ։

Նրա առաջ, ցած աթոռակի վրայ դրել էին սուրճ, կաթ, կարագ ու մեղր, և երկու քիւրդ քիչ հեռու կանգնած, պատկառանօք սպասում էին աղայի հրամաններին։

Եւ մինչ հեռաւոր խմբերը մօտենում էին, բլուրների ետևից սկսում էին երևալ արևի առաջին սառը շողքերը, որոնք գալիս լողանում էին ցօղալից խոտերի մէջ և տարածւում-ոսկեզօծում ընդարձակ դաշտի ծաղկաւէտ տարածութիւնը…

II

Ամենից առաջ գետեղը հասաւ Մահմուդ ա-
ղան իր շրախմբով։ Միւս խմբերը կենդրոնացան
այնտեղ և այդպէս, մեծ ցեղապետի որդին, հա-
րիւրի չափ ձիաւորներով շրջապատուած, վրան-
ների առաջ եկաւ։

Մուսա աղան ժպիտը դէմքին ձեռքը պար-
զեց իր հսկայ որդուն, թողեց որ համբուրէր, ին-
քն էլ շրթունքները կպցրեց նրա ճակատին և
հրաւիրեց նստելու կողքին։

Ամենքն խկոյն, պատկառելի հեռաւորու-
թեան վրայ կանգ առած՝ ցած թռան ձիերից.
կարմիր կօշկաւորները առաջ անցան, նրանց հե-
տևեցին միւս ցեղապետները և Մուսա աղայի
երկու կողմը շարւելով կիսակլոր՝ նստեցին մօտ
տասը մանր-մունր ցեղապետներ ու միւդիրներ։

—Գալուստներդ բարի,—խօսեց Մուսա ա-
ղան քաղցր և ուրախ ժպիտով.—ի՞նչ կայ, ի՞նչ
չըկայ դաշտում. ի՞նչ նորութիւններ կասես մեզ,
Մահմուդ աղա։

Որդին իր հաստ մարմինով շարժւեց տեղու-
մը, ժպտեց, քիչ լռեց և ասաց.

—Ի՞նչ պիտի լինի... Ուտում ենք, որսում,
քնում ենք—զւարճանում... Մզտօն միայն քաղա-
քից երէկ լուր բերաւ որ Վանայ փաշան Բեր-
կրի է ուզում գալ... Մէկ էլ որ, ֆլաները (հայ-
երը) էլի՜ խմբով, ամեն բան թողնում են և
ջուսի հողը անցնում...

—Հա՛,—վրայ տւաւ Մուսա աղան.—ես էլ
լուր ունիմ։ Հանգիստ չեն թողնում նրանց, ի
հարկէ կերթան... Լօ, երկրագործին տուրքերի
թեթևութիւն է հարկաւոր... երկրագործին փող
ճրտեղից է, որ փողով տուրքը տայ...

—Դէհ, մենք էլ այդ լաւ գիտենք, կորբան
տամա (քեզ մատաղ), ասաց մի ցեղապետ,—փող
չենք առնում մենք։ Ցորեն, գարի, տաւար...

—Ֆլաները աշխատաւոր են, ես ու իմ Աս-
տուածը,—ձայնեց այն կողմից մի ուրիշ ցեղա-
պետ.—լաւ գործում են, լաւ էլ տուրք տալիս...
Զօրպէտք է վախեցնել այնքան, որ մեր հողերը
թողնեն ու գնան։

—Ֆլան շատ վախկոտ է,—ասաց Օսման ա-
ղան.—կամ պիտի հնազանդի կամ թողնի փախ-
չի։ Մեր դաշտի նապաստակը նրանից սրտոտ
է... Իմ հողից էլ 10—15 տնւոր փախել են.
ուշ իմացայ թէ չէ՝ ո՞վ կըթողնէր. եղին էլ կը-
թողնեն որ աշխատանքից փախչի՞...

Եւ այսպէս, ցեղապետներից իւրաքանչիւրը
մի-մի կարծիք յայտնեց հայերի մասին։—Մէկը
գովեց նրանց հաւատարմութիւնը, միւսը գոււ

որ այդ հաւատարմութիւնը ծնում է նրանց մէջ վախից, երրորդը յայտարարեց որ հայը չարքաշ է, անասունից աւելի դիմացկուն, մի ուրիշն էլ առարկեց թէ՝ էշն էլ չարքաշ է, որովհետև տոկում են։ Վերջապէս մի քանիսները պնդեցին որ հայը համբերող է առհասարակ ու այդպէս է ծնւում բընականից, ինչպէս որ եզը բնականից ծնւում է լուծի համար։

Այստեղ Մուսա աղան, որ մինչև այդ լուռ լսում էր, արհամարհական ժպիտը դէմքին՝ կարդաց իր վճիռը։

—Հայը,—ասաց նա.—հաւատարիմ է, որովհետև վախենում է. չարքաշ է, որովհետև ստեղծւել է միայն ծառայելու համար և դիմացկուն է, որովհետև ծեծի սովոր է։ Բայց,—աւելացրեց նա հեգնութեամբ.—հայը ունի այնպիսի յատկութիւններ, որ քիւրդը չունի...

—Հէ՛մ... կանչեցին զարմացած մի քանիսը.—քիւրդը չունի՞...

—Չունի,—պնդեց ցեղապետը։—Հայը, օրինակ, սատանայ է, խորամանկ է. նրան խաբելը հեշտ չէ։ Եւ դրա համար էլ, ո՛րքան ճնշւում է, որքան կողոպտւում, ա՛յնքան խոնարհ է դառնում, գծուծանում և... հարստանում... Քիւրդը չունի այդ յատկութիւնը. քրդի սիրտը լեզւի ծայրումն է և ձեռքիս ափի նման լերկ, առանց ծածկոցի։

Թէև ցեղապետի դէմքից ու ձայնից երևում

էր որ նա ծաղրով և արհամարհանքով էր ասում այդ բոլորը, բայց Մահմուդ աղան տաքացաւ։

—Ի՞նչ... բացականչեց նա,—մի՞թէ իմ հայրը երկու-լեզւանիութիւնը լաւ յատկութիւն է համարում... Հայի խորամանկութիւնն էլ նրա գծուծութեան արդիւնքն է, ահա՛ թէ ինչ։ Ազնիւ, մաքուր սիրտ ունեցող մարդը պէտք չունի խորամանկութեան... Ես երբէք չէի կամենալ հայի նման հպատակ ունենալ. ասորին շա՛տ աւելի լաւ է։

—Ասորին մեզ խաբել չէ կարող,—ժպտեց Մուսա աղան, զւարճանալով որ որդին տաքանում էր։ Հայը մեզ միշտ խաբում է՝ երբ հնազանդ է, նո՛յնպէս խաբում է՝ երբ համբերող է... Այո՛, շատ էլ ախորժելի չէ հայ հպատակ ունենալը. բայց ասորին էլ մի բան չէ... Ես կըկամենայի միշտ քիւրդերի ցեղապետ մնալ. քիւրդը ազնիւ է, քաջ և մաքուր սիրտ ունեցող...

Արևն արդէն բարձրացել էր այժմ և սկսում էր դուրս գալ բլուրների ետևից։ Վրանների առաջ սփռւած ստւերը կարճանում էր և հեռու կանգնած քիւրդերը սկսել էին անհամբեր դառնալ։

Բայց Մահմուդ աղան, որ տաքացել էր, գոչեց.

—Լաւ, աղաներ։ Խօսք չըկայ որ քիւրդից լաւ ազգ չըկայ աշխարհիս երեսին։ Բայց, տես-

նենք, եթէ այնպէս լինի որ Աստուած մեզ առաջարկի, թէ «էլ-աղասիներ, ահա ձեզ հայ, թուրք և ասորի, ընտրեցէք թէ ո՛րին հպատակ կըվերցնէք»,—ի՞նչ կասէք, ո՞վ ո՛րին կըգերադասէ։

—Երեքն էլ,—ծիծաղեց մի ցեղապետ և սրճի բաժակը ծառային պարզեց.—երեքն էլ եկամուտ բերող ապրանքներ են։

—Այդ չեղաւ,—միջամտեց Մուսա աղան,—իմ որդին ասաց որ պիտի երեքից միայն մէկը ընտրել... Ես իմ կողմից՝ ոչ մէկին չեմ վերցնել այդպիսի դէպքում. երեքն էլ ոչինչ ցեղեր են։

—Ա՛յդ էլ չեղաւ, հա՛յր,—ժպտեց Մահմուդ աղան.—եթէ ստիպեն որ անպատճառ մէկն ու մէկը վերցնես...

—Ես թուրքին կընտրեմ,—խօսեց կարմիր կօշկաւոր մի ցեղապետ.—ինչքան էլ չըլինի՝ նախ հաւատակից է, յետոյ՝ աւելի մաքուր ազգ է և մանաւանդ... սիրուն կանայք ունեն։

—Ասենք ասորիներն էլ սիրուն կանայք ունեն, հայերն էլ,—առարկեց Ջաֆար աղան,—բայց տակի մնացած երկուսից ես ասորին կընտրեմ, թէև նա մի քիչ ըմբոստ է... Սիրում եմ ես անսանձ ձիերի, կռւող, դէմ դնող անասունների զսպել, քան մի ոչխարի հետ գործ ունենալ, ոչխարի, որ խփելու համար դեռ փայտ չըբարձրացրած, մէջքը դէմ է տալիս և լեզուն կախում...

—Ի հարկէ,—ասաց Օսման աղան.—ինչի՞

նման է, որ միշտ խօսքդ լսեն և դու խփելու, բարկանալու և ծեծելու հաճոյքը չունենաս... Ինչի՞ նման է, օրինակ, հանդարտ տղան, որ միշտ լսում է քեզ, հնազանդ է, համակերպող, համբերող... Ջէ, ի հարկէ, ասորին լաւ է։

Եւ երբ բոլորը ծիծաղում էին Օսման աղայի, խեղկատակօրէն ասուած այդ խօսքերի վրայ, մի ծերունի ցեղապետ, որ մինչև այդ լուռ էր, ասաց յանկարծ.

—Ջահել էք, աղաներ։ Ճիշտ է, հայը մեղկացնող է, զէնքերդ անգործ, սուրդ ժանգոտ թողնող, բայց կերակրող է։ Հայն է, որ ամենից աւելի անտրտունջ տալ գիտէ։ Ինչ որ ուզենաս՝ կըտայ—ստացւածք, հոգի, պատիւ... Ի՛նձ թողէք հային. Թափած ատամներ ունեցող գայլի պատառ է...

Այս անգամ Մուսա աղան էլ բարձրաձայն ծիծաղեց, յետոյ ոտքի ելաւ ու ասաց.

—Բաւական է, չարժէ խօսել... սկսենք նիզակախաղը։

Եւ մինչ իրարանցումն սկսում էր քիւրդերի մէջ, արևը հասել ողողում էր վրանները իր պայծառ ճառագայթներով։ Ցողի և ջրային շողիները նոր մշուշով քողաւորում էին դաշտի մեծ տարածութիւնը։ Փչում էր զով քամի, որ վեհափառօրէն օրօրում էր խոտերի կատարները, կըռացնում դէպի միմեանց, սուրալով սահում նըրանց գլուխների վրայից և գալիս էր ծածանելու

նիզակախաղի ելած քիւրդերի բարակ թիկնոց-ները…

III

. . . .

… Բայազիդից Թէփէրիզի վրայով Վան գնացողի համար մի կատարեալ դրախտ է թւում Աբաղան, երբ 10—12 ժամ անընդհատ լերկ ժայռերի հրաբուխից գոյացած լեռնակոյտերի և սև ու ժանգոտ սարերի միջով քայլելուց յետոյ, յանկարծ բացւում է նրա գեղատեսիլ տարածու-թիւնը, ուր գոյնզգոյն ծաղիկներ, մարդահասակ խոտ, գետ ու փչող զով քամին յաջորդում են միմեանց։

Կարծես դժոխային չորութիւնից ու տապից ելել՝ մտնում ես դրախտային բուսականութեան և զովութեան մէջ։ Ոտներիդ տակից սկսած Թաւիշ կանաչը, քանի դաշտը իջնում է, ստա-նում է խոտային անտառի մեծութիւն, ուր ձիա-ւորը կարող է թաղւել՝ առանց երևալու։ Վտակ-ները, շօշափելով շքեղ ափերը՝ սահում-սողոս-կում են կապոյտ ու դեղին մեծ արտերի միջով, գետը ոստոստում է խոխոջիւնով՝ վերջին ժայ-ռերի գլխով և մեղմիկ ծորում դէպի մացա-ռուտները…

Սև, լերկ ժայռերի մէջ տիրող ահաբեկ լը-ռութեան՝ սուր կերպով յաջորդում են՝ բնու-

թեան շշուկը, թռչունների ճռուողիւնը այս-այն կողմ ցրւած նախիրների բառաչները։ Այստեղ կեանքն է, մինչ քիչ առաջ տասը ժամ անընդ-հատ քայլում էիր 'խորին լռութեան մէջ, վախե-նալով ինքդ էլ ձայն հանել։

Այստեղ դէմքդ զւարթանում է, թոքերդ լայնանում, սիրտդ հրճւում. կամենում ես դու էլ կանչել, երգել, աղմկել…

… Ու մենք, որ ոչ մի րոպէ չէինք կանգ առել այն լուռ ու մռայլ լեռների մէջ, որ շտա-պում էինք արագ անցնել այն դաժան, վախ ազ-դող ամայութիւնից, երբ Աբաղայի ծայրը հա-սանք, ազատ շունչ առինք։ Առանց իրար յայտ-նելու, միահամուռ զգացմունքով ցած թռանք ձիերից, թողինք նոցա 'լայնացած ռնգունքով, զալար խոտին վազելու և փռւեցինք մարգագետ-նի վրայ, անուշահոտ գինեբբուկների կողքին։

Այստեղ կարծես գարուն էր, թէև յուլիսի մէջ էինք։ Այստեղ մշտական թաց ու վտակնե-րով ջրւած հողի մէջ՝ գարնանային ծաղիկներ էին բուսնում միշտ։

Մի վճիտ աղբիւր, սև սարերից դուրս բըղ-խելով՝ գալիս պսպղում էր մեր առաջ ու գնում տարածւելու դէպի դաշտի խոտերը։

Ու երկա՜ր մեզնից ոչ ոք չըխօսեց։ Ակնարկ-ներս ցածում փռւող դաշտին, բերաններս փչող զով քամուն, անշարժ՝ վայելում էինք բնու-թիւնը։

Բայց, ոչ մի մարդկային ձայն։ Դա անսովոր էր ինձ համար։ Չէր երևում ոչ մի քիւրդ, որից այնքան վխտում էին դաշտի ամեն կողմում՝ տարիներ առաջ։

Մի՞թէ այս այն Աբաղան չէր, որ Մուսա աղան, իր հպատակ ու բարեկամ մանր, բազմաթիւ ցեղապետները, նրա որդիները՝ բազմաթիւ հետևորդներով՝ դարձրել էին շէն ու լի ամարանոց։ Այն Աբաղան, որի հէնց այս բարձրից նայելով, ամեն կողմ ցոյց էր տալիս գոյնզգոյն վրանների կոյտեր. աջ կողմը, հօրիզոնի բլուրների կողքին, աղայի կարմրագոյն տաղաւարն էր, դաշտի ամեն ուղղութեամբ արշաւում էին ձիաւորներ, մարգագետինների վրայ կայտառում էին ձիեր և ամեն կողմից լսւում էին աղմուկներ— երբեմն էլ մի ձգւած լօ-լօի հեռաւոր մեղեդի, հովւի սրնգի դայլայլը...

Այժմ և ոչ մէկը։ Շատ հեռու միայն, սևին էին տալիս մի քանի վրանանման բաներ, գետեզրում, դանդաղ, գլուխնին կախ՝ հինգ-վեց կովեր, և, հազիւ ուրեմն, ուժգնութեամբ կռացող խոտերի շարժումները վկայում էին, որ անցնում է մի ձիաւոր կամ կայտառում մի ձի...

Տարօրինակ կերպով ճնշւում էր սիրտս այդ ամայութեան առաջ։ Նստում եմ, ելնում, աշխատում եմ, դիտակով լինի, որոնել Մահմուդ աղայի վրանները, Մուսա-աղայի մեծ տաղաւարը, բլուրների վրայ արածող հարիւրաւոր ոչխարնե-

րից կազմւած հօտերը գոնէ... Ծգնում եմ խոտերի շարժումներից թւել դաշտի մէջ եղած կենդանութեան մնացորդները. բայց գտնում եմ միայն ամայութիւն, անշարժութիւն՝ մարդահասակ խոտերի անտառի մէջ և դատարկութիւն՝ մի ժամանակ վրաններ գտնւող բացւածքներում։

—Աբաղան չէ՞ այս,—հարցնում է ընկերս, որ առաջին անգամն է մտնում այդ կողմերը։

—Չըգիտեմ,—ասում եմ շւարած—դաշտը նոյնն է, բայց միջի կենդանութիւնը չըկայ։ Կարծես սառել է Աբաղան։

Ու հեծնում ենք, լուռ իջնում դէպի դաշտը։

—Այսպէս եթէ գնայ,—խօսեց ընկերս—գիշերելու տեղ չըպիտի գտնենք. իսկ դու ասում էիր որ այս դաշտը լի է վրաններով, լի բնակիչներով։

—Սառել է Աբաղան. մրմնջում եմ ճնշւած։

Այդպէս է. սառել է կենդանի դաշտը։ Մի ամբողջ ժամ քայլեցինք, թաղւեցանք խոտի անտառի մէջ, կտրեցինք գոյնզգոյն մարգեր, անցանք վճիտ վտակներ, ելանք ու իջանք բլուրներ և սակայն ոչ ոք մեր դէմը չըդուրս եկաւ, ոչ մի քիւրդի քէօլօզ չըտեսանք, եթէ չըհաշւենք մի քանի նախրորդների, որոնք մեր անցնելիս՝ ցցւում էին հեռւում և անշարժ՝ մեզ նայում մինչև անհետանալը։

Հօտեր իսկ չըկային։ Նախրորդների շուրջը, մարգերի վրայ մի քանի տասնեակ ոչխարներ,

գլուխներն միմեանց մէջքի՝ նիրհում էին. մի քանի զոյգ շներ՝ հազիւ մի աչքն էին բաց անում մեզ հետևելու և մացառուտների մէջ մի քանի կովեր՝ որոնք և ոչ իսկ նայում էին մեր կողմը։

—Ո՞րտեղ ենք գնում, հարցնում է ընկերըս—վերջ չունի այս դաշտը։

—Այդ հեռուի վրանները։

Այնտեղ, մի խումբ ցած, սև, խղճուկ վրաններ էին երևում միայն. ընդամենը 5—6 հատ, ծածկած բրդեղէն գործւածքներով կամ թաղիքով։ Մնում էր այնտեղ գնալ գիշերելու, եթէ միայն ընդունէին մեզ։

Չըգիտէի իսկ ի՞նչ էին։ Քիւրդեր կըլինէին—դա պարզ էր. բայց ի՞նչ քիւրդեր. մնացորդ ո՞ր ցեղի և ո՞ւմ մարդիկ արդեօք։

Ու մի ժամ յետոյ, անցնելով մի առւակից, մտնում էինք վրանները։ Նախ շները մեզ դիմաւորեցին, յետոյ երևացին մի քանի մերկանդամ սևամորթ մանուկներ, մի երկու քիւրդ կանայք և վերջապէս, մեր առաջն ելաւ մի նիհար ծերունի, որ կասկածոտ աչքերով զննեց մեզ, թողեց իջնենք ձիուց ու անշարժ՝ կանգնած մնաց իր վրանի առաջ։

—Բարև, ծերո՛ւնի, գոչեցի ես—հիւր չե՞ք կամենալ։

—Համեցէք, ասաց նա։

Եւ, նկատում էի, մեր զէնքերն էր զննում բաւական կասկածանօք, մեր դէմքը դիտում.

կարծես փնտռում էր գիտենալու՝ թէ ի՞նչ էինք մենք։

IV

. . . Եւ երբ հիւրասիրել էր մեզ, տխուր և մռայլ եզեդի քիւրդ ծերունին հարցրեց մեր գընալու տեղը։

—Վան. ասացի ես։

Գլուխը երերցրեց։ Վանում կեանքը լաւ դրութեան մէջ չէր. աղմուկ կար, արիւն էր հոսում. աւելի լաւ կանէինք չըգնալ այնտեղ, եթէ միայն մենք եւս «կայծը վառ պահելու վառօդի հատիկներ» չէինք։

—Չեմ հասկանում, ծերո՛ւնի, ասացի—ի՞նչ ես ուզում ասել։

—Դուք հայեր չե՞ք։

—Ոչ, ռուս ենք։

Լռեց։ Պարզ էր, որ չէր հաւատում։

Վաղուց ’ի վեր եզեդի քիւրդերի այդ խումբը բնակւելու էր գալիս Աբաղայում, երբ շոգերը սկսում էին Բայազիդի կողմերում։ Վան չէր եղել, ոչ. բայց անցնողներից լուրեր ունէր։ Իրենք կռիւ, արիւն չէին սիրում. խաղաղ ապրող ցեղ էին և չէին կամենալ խառնւել ուրիշի գործերում։

Առ հասարակ հիւրընկալս սակաւախօս էր, մռայլ և տխուր. գրեթէ չէր ժպտում։ Վրաննե-

րումն էլ մռայլ էր տիրում. ոչ մի աշխուժութիւն, ոչ մի աղմուկ կամ շարժողութիւն։

—Ի՞նչ է եղել Աբաղային. հարցրի վերջապէս—հինգ վեց տարի առաջ եղել եմ այս կողմերում, հիւրասիրւել Մուսա աղայի մօտ։ Արդեօք այդ «էլ-աղասին» և նրա որդիները, Մահմուդ աղան կամ Օսման և Ջաֆար աղաները այլ ևս Աբաղա չե՞ն գալիս ամառը։ Այժմ կարծես ամայի, դատարկ է Աբաղան։

Տարօրինակ կերպով ինձ նայեց ծերունին պահ մի, յետոյ ասաց.

—Այո, դատարկ է, ինչպէս դատարկ է լինում փշերից մաքրւած արտը՝ մինչև ցանելը... Բայց իմ աղան չըգիտէ՞ թէ ինչեր են կատարւում այս և մեր երկրի ուրիշ դաշտերի վրայ։

Եւ երբ ասացի որ ոչինչ չըգիտեմ Աբաղայում եղածներից, ժպտեց, լուռ մտածեց մի րոպէ և ասաց ծանրութեամբ.

—Թէ իմ աղաները կուզեն, ես նրանց մի երգ կըերգեմ։ Այդ երգը ես լսել եմ մի քիւրդ երգչից, որ անդադար ման է գալիս աշխարհից—աշխարհ ուր քիւրդ կայ և երգում է իր երգերը։

Յետոյ ելաւ, հրաւիրեց մեզ նստելու քիչ հեռու, կանաչ խոտերի վրայ։

Արևը մայր էր մտնում. ամայի դաշտը մըթնում էր հետզհետէ և աւելի լուռ կերպարանք ստանում. դադարել էին թռչունների ձայները,

մշուշի մէջ թաղնւում էին հեռաւոր կատարները և բլուրները։

Եւ երբ տեղաւորւել էինք, ծերունին սկսեց երգել։ Ու նրա դողդոջիւն ձայնը, որ չունէր ոչ մի ել և էջ, հնչում էր միաձայն՝ թարմ օդի մէջ տխուր և հանդարտ՝ նման քըդական սրնգի խըռպոտ շշուկին։

. . . «Դաշտերից, սարերից ու անտառներից հեռու,—սկսեց նա—չըգիտեմ ո՛ր երկրում, ո՛ր թագաւորի հողերում, ապրում էր մի ոչխար, որ մի օր յանկարծ առիւծի փոխւեց...

«Ոչխար ո՞վ չի տեսել։ Գլուխը կախած՝ ուտում է և ոչ ոքի չէ վնասում. կռւից միշտ խուսափում է և երբ մորթելու են տանում, դանակի տակ իսկ ձայն չէ հանում...

«Մեզ շատ է պատահել ոչխար մորթել։ Եւ միշտ, երբ աչքերս ընկել է մորթւողի աչքին, կարծես ոչխարը ասել է մեզ.—«Ինչո՞ւ էք տանջում ինձ, չէ՞ որ աշխարհս մեծ է, դուք էլ կարող էք ապրել, ես էլ. չէ՞ որ ձեզ արգելք չեմ լինում կեանք վարելու, ձեզ չեմ վնասում. ընդհակառակն միշտ կաթ ու իւղ եմ տալիս, բուրդ հասցնում. ինչո՞ւ էք ինձ մորթում, ոչընչացնում»...

«Եւ միշտ, որպէս նրան պատասխան, արդարացրել ենք մեզ, թէ՝ ուտել ենք ուզում, պիտի քեզ մորթենք, որովհետև մեր ատամները միս ծամել, ձեռքերնիս յօշոտել են ուզում...

«Ու մորթել են անխնայ, մտածելով որ ոչխարն ու եզը, տաւարն ու փլան (հայը) ստեղծուել են մեզ կերակրելու, մեզ ծառայելու...

«Այդպէս էին համոզուած Մուսան ու Մահմուդը, Օսմանն ու Ջաֆարը, Օմարն ու Շարաֆը... Եւ որովհետև այդպէս էին համոզուած, ոչխարը առիւծ դարձաւ և նրանց պատառոտեց...

... «Զննե՞լ էք երբէք վառօդը՝ մօտից։

«Սև, աղտոտ, փոքրիկ մի հատիկ է նա։ Նետի՛ր ուր կուզես, տրորի՛ր ոտքիդ տակ, փակի՛ր ամանի մէջ—ոչնչով չի ցոյց տալ իր զօրութիւնը։ Խոնարհ, փոքրիկ, կծկուած իր համար՝ միշտ կըմնայ և ոչ ոքի վնաս չի տալ։

«Բայց, փորձի՛ր մէկ այդ խոնարհ հատիկի սրտին մօտեցնել մի կայծ, փորձի՛ր այդ կայծը բաց թողնել մանաւանդ մի խումբ, միմեանց կողք-կողքի տուած հատիկների մէջ և ի՞նչ կըտեսնես...

«Դիմացի՛ր այն ժամանակ, եթէ կարող ես։ Ո՛չ թէ միայն քեզ, ո՛չ թէ Մուսաներ կամ Շարաֆներ, այլ լեռ ու անտառ կըցրուի, փոշի կըդարձնի և գլխիդ կըփլեցնի...

... «Ու ոչխարը առիւծ դարձաւ, բաշն ու պոչը ցնցեց, ոստնեց, ճիրանները պարզեց, ու որքան տանջող ունէր, մէ՛կ-մէկ պատառոտեց, մէ՛կ-մէկ տրորեց...

«Ու կայծն ընկաւ վառօդի մէջ, հատիկները կողք-կողքի տւին, կայծը փայլեց շանթի նման,

յետոյ ծուխն ելաւ, լեռ ու ձոր քարուքանդ արեց և ինչքան գայլ կար՝ տակովն արաւ, ինչքան բորենի կար՝ ցան ու ցրիւ տւաւ...

«Այդպէս է լինում, երբ կայծաքարին երկաթով ամուր են խփում, երբ հարուածը սրտի խորն է թափանցում։

«Այդպէս է լինում, երբ մոռանում են որ ոչխարը կարող է մի օր առիւծի փոխուել և այդ առիւծը ճիրաններ ունենալ։

«Այդպէս է լինում, երբ վառօդի հատիկները կողք-կողքի են տալիս և տանջանքների կայծը ընկնում է նրանց սրտի մէջ»...

Երգեց ծերունին ու լռեց։

—Երգը գեղեցիկ է, ասացի ես.—երգը հրաշք չէ պատմում։ Բայց, ի՞նչ ես կարծում, ծերո՛ւնի, երկա՞ր արդեօք կայծը կըմնայ իր ընկած տեղում...

—Չըգիտեմ. ասաց նա մտախոհ—այսքան միայն գիտեմ, որ քանի վառօդը չէ վերջացել, կայծը չէ հանգչում։ Կրակը դատարկ տարածութիւն չէ սիրում...

Յետոյ ելաւ, դէպի վրանը քայլեց և երբ հասել էր, կանգ առաւ, դարձաւ ու աւելացրեց.

—Եզեդին էլ մի երգ ունի, լսե՞լ էք... Նա այսպէս է սկսում.

... «Կռանը սալին, կռանը սալին,
ո՛չ դատարկ գետնին» ...

Դաշտը մթնում էր, մշուշը սևանում, քամին սաստկանում։

Հեռու, շա՛տ հեռու, երևի սև, ժայռոտ լեռներից, գուցէ գայլը կամ գուցէ մենակ մնացած ոևէ գազան՝ տխուր ու երկար՝ ոռնում էր մըթութեան մէջ և երկնքի վրայի աստղերը մի առ մի վառւում-ցոլում էին պապղուն փայլով, դողդոջուն լոյսով...

1903.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Բարի մարդ	5
Ջէլէբ	55
Լալօ	136
Աւազակները բռնւում են...	165
Շահնա	187
Ջւարճացանք...	211
Ոչխարնե՛ր...	220
Կըշյան	227
Արդար դատաստան	244
Խէրան	280
Ծովի վրայ	319
Արեան բծեր	329
Երկրի ձայնը	343
Արագայի դաշտում	359

Այս գիրքը տպագրւում է 1903 թ. Ապրիլ 12-ին Աստրախանում կայացած Հայկական երեկոյթի արդիւնքովը։

Տպագրութեան ծախսը, հեղինակի վարձատրութեան հետ միասին, եղել է 740 րուբլի։

Գրքի ծախելուց գոյացած արդիւնքովը կը տպագրւին դարձեալ ուրիշ հայ հեղինակների գրւածքներից։

Հրատարակիչներ

1904 օգոստոս
Աստրախան

ՀՀ Ազգային գրադարան
NL0264703

60047

ԳԻՆՆ Է 1 Ր.